Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

241
U-992

2241
2242

2010

ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆ

ՊԱՏԵՐԱԶՄ

241
U-99

23

ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆ

ՊԱՏԵՐԱԶՄ

ԳՈՐԾ ՄԵԾԱՐԳՈՅ ՀՕՐ

ՏԵԱՌՆ ԼԱՒՐԵՆՏԻՈՍԻ ՍՓՈՒԲՕԼԻ

ԹԷԱՏԻՆԵԱՆ ԿՍԲԴԷՆ

Յիտալականէն Թարգմանեց

ԳԵՐԱՊԱՅԾԱՌ ՅՈՎՍԷՓ Վ. ՖԵՐԱՀԵԱՆ

ՄԻՍԲԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱԹՈՌՈՑՆ

ԿԻԼԻԿԻՈՅ

ՎԵՆԵՏԻԿ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

—

1882

11201

Յիշատակ

ՀԱՆԳՈՒՅՑԵԱԼ ՀՈԳԻՈՅ ՀՕՐ

ԴԵՐ· ՅՈՎՍԵՓԱՅ Վ· ՓԵՐԱՀԵԱՆ

ՊԵՏԱԿԱՆ· ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
Մեսրոպ Մաշտոցի անվան
63855-67
749-39

ԱԶԴ ԹԱՐԳՄԱՆՉԻՆ

Հոգևորական պատերազմը թէ և պըզտիկ գիրք մըն է, բայց հոգեսէր հեղինակը նախ գործքով գործածելուն՝ և յետոյ գրելուն և Ի լոյս հանելուն տպագրութեամբ, առաջնորդ և վարժապետ եղաւ շատ եբեւելի արանց սրբութեանը. որոնց մէջ արժան է յիշել Սուրբ Փրանկիսկոս Սալեզացին։ Ասիկայ իր գրոց շատ տեղուանքը կ'ապսպրէ ամէնուն այս ոսկեղինիկ գրքին ստէպ ընթերցումը։ Արդէն յայտնի է Ջերմեռանդ կենաց ըսուած գրքին մէջ Բ. մասին տասներորդ գլուխը ըրած գովեստը։ Նոյնպէս իր հոգելից թղթոց մէջ կը յորդորէ աստուածապաշտները ուշով միտք դնելու յիշեալ գրքին կարևոր իմաստներուն։ Ասանկ 340ներորդ թղթին մէջ կը գրէ տիկնոջ մը. Կարդա՛ և նորէն կարդա՛ Հոգևորական պատերազմը, ասի-

կայ քու սիրելի և պատուական գիրքդ ըլ-
լայ, որն որ բացայայտ է և բոլորովին 'ի
գործ ածելի։ Դարձեալ ուրիշ տեղ մըն ալ
կ'ըսէ, 18 տարի է որ գրպանս կը կրեմ
Հոգևորական պատերազմ կոչուած գիր-
քուկը, և ամէն անգամ կարդալուս օ-
գուտ մը կը քաղեմ։

Այսանկով այս երևելի սուրբը կը համ-
զեր ուրիշները այս պատուական գրքին
ընթերցմանը, ուսկից գտնեն պիտի հոգ-
սերք երկնից մանանան, և որով կրթեն
պիտի իրենք զիրենք արիութեամբ յաղ-
թելու մեծ արուեստին մէջ, և քիչ ատե-
նէն սորվին պիտի կատարելութեան հզո-
րագոյն միջոցները ձեռք բերելու։

Այո՛ ասիկա հոգեկան զինանոց է, ուս-
կից հնար է զէնքեր առնուլ քաջութեամբ
անձնական կիրքերը, և մոլեկան ունակու-
թիւնները նուաճելու։ Եւ ինչպէս Մեծին
Աղեքսանդրի վրայ կ'աւանդեն, թէ պա-
տերազմի քաջալերուելու համար շարու-
նակ հետը կը տանէր Հոմերոսին Եղիա-
կանը, այդպէս այդ նոր ընկճողն և յաղ-
թողն ո՛չ Արևելքին՝ այլ իւր անձին, տաս-
նութը տարուան չափ իր գրպանը կրեց
յիշեալ գրքոյկը աւելի քաջանալու 'ի պա-
տերազմի անձնական կրից դէմ։

Նոյնպէս մեծապէս կը յարգէր այս

Գիրքը Երանելին Անդրէաս Ավելինո, որն
որ ընդունեց իր կարգին մէջ յիշեալ Հեղի-
նակը, և կը կարծուի թէ նոյն սրբոյն յոր-
դորմամբն և հրամանովն տպած ըլլայ։ Շատ
հերկնցնելու համար խօսքս՝ հերիք կը սե-
պեմ ազդ ընելու թէ անթիւ անհամար
վարդապետներ և իմաստուններ, ինչուան
Քահանայապետներ անգամ, ամէն ա-
տեն, ամէն տեղ մեծ յարգ ցուցուցին
այս գրքին, որն որ համառօտ, բացայայտ
և կարգաւոր տեսութեամբ յինքեան կը բո-
վանդակէ Հոգևորական կենաց կատարե-
լութեանը հասնելու պէտք եղածը, ուր որ
այլք մեծամեծ հատորներով հազիւ կա-
տարեր են։ Այս է իրօք գեղեցիկ զոհար-
ներու պատուական շարքը, ասիկա հոգւոյ
անմահ դեղարանը, որով կը բժշկուին վի-
րաւորները և կը զօրանան։

Գանք թարգմանութեանց և տպագրու-
թեանց. որոնք շատ համարում աւելցուցին
այս գրքին, որն որ ամէն Ազգերէն ճանչ-
ցուած է, Իտալիա, Գաղղիա, Գերմանիա,
Սպանիա, Հռովմ, Նէապոլիս և Վենետիկ
շատ անգամ տպուած է, և թարգմանուած
է Լատիներէն, Գաղղիերէն, Գերմանե-
րէն, Անգլիարէն, Սպանիացւոց լեզուս,
և Արաբերէն, Հայերէն ևս գրաբար լե-
զուով թարգմանուած և տպուած է։

Բայց այն ժամանակին աղաւաղեալ ոճովն գրուելուն՝ պատշաճ դատեցի հիմայ նորէն թարգմանելու աշխարհաբար լեզուով, որպէս զի ամէնքը դիւրաւ կարենան հասկընալ, յուսալով որ հաճելի երևնայ մերիններուն այս թարգմանութիւնը, և այս ոսկեղէն գրքին իմաստներէն օգուտ քաղելով ամէն աստիճանի և կարգի հոգեսէր անձինքն, փառք տան Աստուծոյ, և չմոռնան զաշխատօղն իրենց արժանաւոր աղօթքներուն մէջ։ Իսկ 'ի վերջ Գրքիս Հայկազն սուրբ Դաւթի ճգնաւորին հարազատ պատմութիւնը յօրինեալ իբր յաւելուած գրի, 'ի ճշգրիտ օրինակ քրիստոնէական անձնուրացութեան, պատուական գրքիս իմաստներուն համաձայն, որով բարեսէր ընթերցողք նաև ասոր առաքինութեանցն նմանելու ջանք ընեն։

ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

« Ո՛չ ոք պսակի, եթէ ոչ ըստ օրէնի մարտիցէ »։
Բ. Տիմ. Բ. ե.

ԳԼՈՒԽ Ա.

Թէ ինչ բանի վրայ կը կայանայ քրիստոնէական կատարելութիւնը, և թէ զանի ձեռք բերելու համար հարկ է պատերազմիլ, և առ պատերազմին չորս կարևոր իրաց վրայ։

Թէ որ ուզես, ով որդեակ սիրեցեալ 'ի Քրիստոս, կատարելութեան ծայրը հասնիլ ու Աստուծոյ մտենալով՝ իրեն հետ հոգւով միանալ, (գործ մը՝ որմէ աւելի մեծ և ազնիւ բան չի կրնար մէկը ըսել կամ մտածել) առաջ պարտական ես ճանչնալ թէ ինչ բանի վրայ կը կայանայ ճշմարիտ և կատարեալ հոգևորական կեանքը։ Ինչու որ շատերը առանց ուրիշ բան մը մտածելու՝ զրին զանի վարուց խստութեան, մարմնոյ մահացուցման, խարազն հագնելուն, ճաղկանքներուն, երկարատև հսկմանց, պահք պահելուն, և ուրիշ նման խստութիւններուն և

մարմնոյ աշխատանքներուն մէջ։ Այլ՝ և մանաւանդ կնկտիք, կը համարին թէ առաջ գնացած ըլլան երբոր ստէպ ձայնաւոր աղօթքներ ընեն, շատ պատարագներ տեսնեն, և երկար ժամերգութեանց ներկայ գտնուին, եկեղեցիները յաճախեն, և շատ անգամ սրբութիւն առնեն։ Շատ ուրիշներն ալ (որոնց մէջ կը գտնուին երբեմն մէկ քանի սքեմաւոր վանականներէն), կը կարծեն թէ կատարելութիւնը բոլորովին դասը յաճախ երթալէն, լուութենէն, միայնութենէն, և կանոնական կրթութենէն կը կախուի. և ասանկ՝ որը աս, և որը այլ նման գործողութեանց վրայ հիմնուած կը համարի կատարելութիւնը։ Բայց իրը ասանկ չէ, վասն զի յիշուած գործողութիւնները ինչպէս երբեմն միջոց են եռանդը ստանալու, և երբեմն եռանդեան պտուղն են, այդպէս հնար չէ՛ ըսել թէ ասոնց վրայ միայն քրիստոնէական կատարելութիւնը, և աստուածպաշտութեան ճշմարիտ հոգին կը հաստատուի։ Ներկայ խիստ զօրաւոր միջոց են եռանդ ձեռք բերելու անոնց՝ որոնք աղէկ և խելօք զանոնք կը գործածեն, ընդարձակ անձին չարութեան և տկարութեան դէմ ուժ և զօրութիւն առնելու համար, մեր հասարակ թշնամիներուն յարձակմանց և խաբէութեանց դէմ դիմելու, ան հոգևոր նպաստներով օգնուելու, որոնք ամէն Աստուծոյ ծառաներուն, մանաւանդ Նորընծայ նուիրուածներուն՝ պիտանացու են։ Պըտուղ ալ են եռանդեան տիրապէս հոգևոր անձինքներու, որոնք մարմինը կը չարչրկեն, վասն

զի իր Արարիչը բարկացուց, և որպէս զի հլու հպատակ բռնեն անոր ծառայութեանը. կը լռեն և առանձնացած կեանք կը վարեն, որ և իցէ՝ նաև թեթև իսկ Աստուծոյ թշնամանքէն փախչելու, և երկինքը կենակից ըլլալու համար. մտադիր կը կենան աստուածային պաշտօնին, և բարեպաշտութեան գործքերուն, կ՚աղօթեն ու մեր Փրկչին կեանքը ու չարչարանքը կը մտածեն, ոչ հետաքրքրութեան և զգայական ախորժանաց համար, այլ անձին սեպհական չարութիւնը, և Աստուծոյ բարութիւնը և ողորմութիւնը եւելոք ճանչնալու համար, միշտ աւելի աստուածային սիրոյն բոցովը վառուելու, և իրենք զիրենք ատելու համար, իրենց անձուրացութեամբը ու խաչը ուսերնին չպկելովին Որդւոյն Աստուծոյ ճամբուն հետեւելով. յաճախ ամենասուրբ խորհուրդներուն կը մատենան աստուածային մեծվայելչութեան փառքին համար, Աստուծոյ հետ աւելի հաստատ կերպով միանալու, և ոսկերիմ թշնամեաց դէմ նոր զօրութիւն մը ընդունելու համար։

Բայց անոնց՝ որոնք վերը ըսուած արտաքին գործողութիւններուն մէջ բովանդակ իրենց հիմը կը դնեն, կրնան երբեմն յայտնի մեղքերէն աւելի կործանման առիթ տալ, ոչ թէ իրաց ինք իրենց պակասութեանը պատճառաւ, (որոնք ամէնքը սուրբ են և մաքուր), այլ զանոնք գործածողին չարութեանը համար, քանի որ անոնց միտակ ուշադիր ըլլալով՝ սրտերնին անկարգ հակմանց, և սատանային գաղտնի ուրոգայթներուն ձեռքը կը թողուն, որն որ տես-

նալով զասոնք արդէն չիտակ համբէն դուրս չեղած, կը թողու զանոնք ոչ միայն ախորժանաք շարունակելու յիշեալ կրթութիւնները, այլ և իրենց ընդունայն խորհրդոցն համեմատ երկնից դրախտին զուարճութեանց մէջ ժուռ գալու, ուր կը կարծեն թէ վեր ելած են հրեշտակական դասակարգութեանց քով, և թէ ներս յանձինս զԱստուած կը զգան. որոնք երբեմն կը գտնուին բոլորովին ընկղմած զանազան մտածութիւններու մէջ, որոնք լեցուն են բարձր, հետաքրքիր և զուարճալի մասամբ, և գրեթէ աշխարքը և ստեղծուածները մոռցած՝ զիրենք ինչուան երրորդ երկինքը յափշտակուած կը կարծեն: Այլ թէ ասոնք որպիսի սխալմունքներու մէջ պատած պաշարուած են, և թէ որչափ հեռու կը գտնուին այն կատարելութենէն՝ զոր մենք փնտռելու վրայ ենք, դիւրաւ իրենց վարքէն և բարքէն հնար է հասկընալ: Վասն զի ասոնք կ'ուզեն որ ամէն բանի մէջ, ըլլայ մենք, ըլլայ պզտիկ՝ ուրիշներէն աւելի նախադաս ըլլան և գերազանցեն. պինտ գլուխ են, և ամէն ուզածներնուն վրայ յամառ, և իրենց յատուկ գործքերնուն մէջ կոյր ըլլալով՝ փութաջան և մտադիր են ուրիշներուն խօսքերը և գործքերը դիտելու և բամբասելու: Ուր եթէ դուն քիչ մը իրենց դպչիս և պարզ համբաւնուն վրայ՝ զոր կը կարծեն թէ ունին, և կ'ուրախանան ուրիշներուն քով ասանկ սեպուելնուն, ու արդելուս ան ջերմեռանդութիւնները՝ զորս պարզ սովորութեամբ մը կը գործածեն, կ'այլայլին ու սաստիկ կը խռովին: Եւ թէ որ Աստուած

տուած, զիրենք ճշմարիտ ծանօթութեան և կատարելութեան ճամբուն բերելու համար, վրանին վշտեր և հիւանդութիւններ խրկէ, կամ թոյլ տայ հալածանաց (որոնք ամենևին առանց իրեն հաճոյական կամ թոյլատրական կամաց չեն գար, և իր ծառայիցն հաւատարմութեանը փորձաքար են), ան ատենը յայտնի կ'ընեն իրենց սուտ և աւազուտ հիմը, և հպարտութենէն ապականած ու ուրուած ներսի դիերնին, վասն զի ամէն դէպքերուն մէջ թէ ձախորդ, և կամ թէ յաջողակ որ ըլլան, չեն ուզեր համակամութեամբ՝ Աստուծոյ ձեռաց ներքևը խոնարհիլ, կամակար հպատակելով միշտ արդար, թէ և գաղտնի, Աստուծոյ դատաստաններուն, և ոչ անոր Որդւոյն օրինակին համեմատ, որն որ 'ի չարչարանս խոնարհեցաւ, ամէն ստեղծուածներէն վար կը խոնարհին, սիրելի բարեկամներու տեղ բռնելով հալածիչները, աստուածային բարութեանն գործիքներու պէս, և իրենց մահացուցման և կատարելութեան և հոգւոյ փրկութեան գործակիցներու պէս:

Այսոր համար ասոյգ է որ այսպիսիները ծանր վտանգի մէջ ընկած կը գտնուին, ինչուորներին իմանալի աչքերնին մթընցած ունենալով և անոնցմով նայելով իրենց անձանց և արտաքին գործոցն վրայ, որոնք բարի են՝ կատարելութեան շատ աստիճաններ իրենց յատուկ կ'ընեն, և առով ուռած ուրիշները կը դատեն, և չկայ մէկ մը որ զիրենք յաղթութիւն գարձնէ Աստուծոյ արտաքոյ կարգի ձեռնտուութե-

նէն զատ։ Ըստ որում՝ առելի դիւրին կը դառ-
նայ և 'ի բարին կուգայ յայտնի մեղաւոր մը
քան թէ գաղտնին և առերևոյթ առաքինու-
թեանց քողովն ծածկուողը։ Ուրեմն դուն կը
տեսնաս յայտնապէս, որդեակ իմ, թէ վերը ը-
սած բաներուն վրայ, ինչ կերպով որ քեզի ցու-
ցուցի, հոգևորական կեանքը չի հաստատուիր։
Որն որ պիտի գիտնաս թէ չի կայանար ուրիշ
բանի մը վրայ, բայց եթէ Աստուծոյ բարու-
թիւնը և մեծվայելչութիւնը և մեր ունչութիւնը
ճանչնալուն, և ամէն չարեաց միտելնուս,
և Աստուծոյ սիրոյն վրայ, և զմեր անձն ատել-
նուս, հրու հպատակելնուս վրայ ոչ միայն Ա-
ստուծոյ, այլ նաև անոր սիրոյն համար բոլոր
ստեղծուածներուն. կամքերնիս մերկացընել-
նուս, և իր աստուածային հաճոյքին կատա-
րեալ յանձնելնուս վրայ. ու ասկէ 'ի զատ,
պէտք է որ աս ամէն բանը ուզենք և ընենք
տակ Աստուծոյ փառացը համար, և անոր միայն
հաճոյքը, և թէ վասն զի ինքը անանկ կ'ուզէ,
և արժանի է որ մենք զինքը օրհնենք և պաշ-
տենք։

Ա՛յ է սիրոյ օրէնքը՝ նոյն իսկ Աստուծոյ մա-
տով դրոշմուած իր հաստատիմ ծառաներուն
սրտերուն մէջ, աս է մեզմէ պահանջած անձ-
ուրացութիւնը. աս է անոր քաղցր լուծը, և
թեթև բեռը. աս է հնազանդութիւնը, որուն
օրինակաւ և բանիւ կը յորդորէ զմեզ մեր Փրր-
կիչը և վարդապետը։ Եւ որովհետև դուն փա-
փաքելով հասնելու կատարելութեան ծայրը՝
չարունակ ինքզինքդ նեղը խօթելու պարտա-

կան ես, արիութեամբ նուաճելու և բնաջինջ
ընելու համար ամէն յօժարութիւններդ թէ
մենծ եղեր են և թէ պզտիկ. հարկաւ պէտք է՝
որ ամէն յօժարութեամբ հոգւոյ պատրաստու-
իս աս պատերազմին, վասն զի պակը չի տրու-
իր, եթէ ոչ կարիճ պատերազմողներուն։

Որն որ ինչպէս որ քան զայլն ամենայն ա-
ւելի դժուարին է (վասն զի մենք մեզի դէմ
պատերազմելովնիս՝ մեր անձէն իսկ պատե-
րազմ կը քաշենք), ասոնկ ատացած յաղթու-
թիւնը ուրիշ ամէնէն առելի փառաւոր և Ա-
ստուծոյ յաւէտ ընդունելի պիտի ըլլայ։ Ինչու
որ եթէ դուն միտդ դնես ոտքի տակ առնել և
մեռցնել քու բոլոր անկարգ յօժարութիւն-
ներդ, ցանկութիւններդ և կամքդ, թէ և պըզ-
տիկ ըլլան, Աստուծոյ մեծագոյն պաշտօն ու
հաճութիւն կը մատուցանես, քան թէ անոնց-
մէ մէկ քանին յօժարութեամբ սրտիդ մէջ կեն-
դանի պահելով՝ արիւն թափելու չափ քեզի
ձաղկէիր, և նախնի ճգնաւորներէն և անապա-
տականներէն առելի պահք պահէիր, կամ բիւ-
բաւոր հոգիներ առ Աստուած դարձընէիր։
Վասն զի թէպէտ և ըստ ինքեան առելի հաճոյ
է Աստուծոյ հոգւոյ դարձը, քան թէ կամքի մը
մահացուցումը, 'ի վերայ այսր ամենայնի պար-
տական չես զլխաւորաբար ուզելու կամ գործե-
լու բան մը, եթէ ոչ ինչ որ Աստուած որոշակի
քեզմէ կը պահանջէ և կը խնդրէ։

Եւ անշուշտ ինքը առելի կը հաճի, որ դուն
աշխատիս ջանաս կիրքերդ մահացնելու, քան
թէ նաև անոնցմէ մէկը 'ի քեզ կենդանի թող-

լով գիտութեամբ և կամք՝ ինչ և իցէ բանի մէջ անոր ծառայէիր, նաև մեծ և երևելի որ ըլլար։

Արդ՝ որովհետև հիմայ տեսար, որդեակ իմ, թէ ինչ բանի վրայ կը հաստատի քրիստոնէական կատարելութիւնը, և թէ զայն ստանալու համար պարտական ես անձիդ դէմ շարունակ և խստագոյն պատերազմի ձեռք զարնելու, պէտք է որ քեզի չորս բան հոգաս ապահով և կարևոր գէնքի մը պէս յաղթութեան մրցանակը առնելու համար, և աս հոգևոր ճակատամարտին դաշտին մէջ յաղթող ելլալու։ Անոնք են, ինքիրեն չվստահանալը, յԱստուած վստահանալը, կրթութիւն և աղօթքը։ Որոնց ամէնուն վրայ Աստուծոյ օգնութեամբը դիւրին համառօտութեամբ մը պիտի խօսինք։

ԳԼՈՒԽ Բ.

Ինքիրեն չվստահանալուն վրայ։

Որդեակ իմ, քու անձիդ վրայ չվստահանալը այնչափ աս պատերազմին մէջ քեզի հարկաւոր է, մինչ զի առանց ասոր ստոյգ բան է, թէ ոչ միայն չի պիտի կրնաս բաղձացած յաղթութեանը հասնելու, այլ և ոչ իսկ ամենափոքր կիրբդ նուաճելու։ Եւ աս բանը աղէկ մը մտքիդ մէջ հաստատէ, ինչու որ մենք սաստկութենով ապականեալ բնութենէն դիւրաւ կը հակինք մեր անձանց վրայ մնոտի համարումը ունենալու,

ուր իրաք ուրիշ բան չելլալովնիս, բայց եթէ ոչ ինչ մը, կը կարծենք որ բան մը ենք, և բնաւ առանց հիման՝ պարապ տեղ մեր զօրութեանը վրայ յանդգնութեամբ կ'ապաւինինք։ Ապակութիւնը շատ դժուար է ճանչնալ, և Աստուծոյ աչքին առջևը շատ անհաճոյ է, որ կը սիրէ և կ'ուզէ մեզմէ աս ստուգագոյն ճշմարտութեան հաւատի ծանօթութիւնը, թէ ամէն շնորհք և առաքինութիւնք անորմէ միայն մեզի յառաջ կուգան, որն որ աղբիւր է ամէն բարիքներու, և թէ մեզմէ ոչ ինչ բան մը, ոչ իսկ բարի խորհուրդ մը իրեն հաճոյական կրնայ ծագիլ։

Եւ թէպէտ այս շատ հարկաւոր ինք իրեն չյուսալը նաև գործ ելլայ անոր աստուածային աջոյն, զոր սովորութիւն ունի շնորհելու իւր մտերիմ սիրելիներուն, երբեմն սուրբ ազդեցութիւններով, երբեմն խիստ ձաղկանքներով, և սաստիկ և գրեթէ աննուաճելի փորձութիւններով, և ուրիշ միջոցներով՝ որոնց մեր միտքը չի հասնիր, այսու ամենայնիւ ուզելով ինքը որ մենք մեր կողմէն մեր պարտքը ընենք, ահա աչքիդ առջևը կը դնեմ չորս եղանակներ, որոնցմով գլխաւորաբար վերին օգնութեամբ նպաստ առած, կարող ելլաս ստանալ աս ինք իրեն չվստահութիւնը։

Նախ՝ մտածել և ճանչնալ քու նուաստութիւնդ և ոչնչութիւնդ, և թէ ինքիրմէդ բարի բան մը չես կրնար ընել, որով արժանի ելլաս երկնից արքայութիւնը մտնալու։ Երկրորդ՝ ստէպ եռանդուն և խոնարհ աղաչանաց նայնը

ՀՍՍՌ Գրքերի Պետական Գրադարան
ZUUՌ-Արա ՍՍՌ

Աստուածմէն խնդրել, ինչու որ անոր զարգանք է։ Ու զայն ստանալու համար նախ պէտք է ոչ միայն անկէ զուրկ զբեղ համարիս, այլ նաև բոլորովին անկարող քեզմով զայն ստանալու։

Աստնկ շատ անգամ կենդանի հաւատքով աստուածային մեծվայելչութեան առջև քու անձդ տարածելով, թէ իր բարութեանը համար զայն ընդունիլ պիտի քեզի, և յարատևութեամբ անոր սպասելով բոլոր ան ժամանակը, զոր անոր նախախնամութիւնը պիտի տնօրինէ, առանց երկբայութեան ընդունիս պիտի։

Երրորդ եղանակն է զքեզ վարժեցընել վախնալու անձէդ, սեպհական դատաստանէն, մեղքի սաստիկ բերմանէն, անհամար թշնամիներէն, որոնց չես բաւական պզտիկ դիմադարձութիւն մը ընելու, անոնց երկար ատեն պատերազմելու վարժութենէն, և խարէութիւններէն, 'ի հրեշտակ լուսոյ ձևանալէն, ու անթիւ հնարքներէն ու որոգայթներէն, զորս առաքինութեան իսկ ճամբուն մէջ գաղտուկ մեզի կը լարեն։

Չորրորդ եղանակն է, որ երբ պակսութեան մը մէջ քեզի իյնալ պատահի, ան ատեն աւելի խորունկը մտիր և մտածէ աղէկ ուշադրութեամբ քու անձիդ ծայրագոյն տկարութիւնը, թէ անոր համար Աստուած թոյլ տուաւ իյնալդ, որպէս զի աստուածային ազդեցութեամբ խրատուած՝ առաջուցմէ աւելի պայծառ լուսով մը զքեզ աղէկ մը ճանչնալով, սորվիս քու անձդ արհամարհել շատ անարգ բանի մը պէս, և ուղես նաև այս կերպով մարդիկներէն սեպուիլ, և միանգամայն արհամարհուիլ. վասն զի առանց աս կամքի չի կրնար առաքինական չվստահութիւն գտնուիլ, որն որ ճշմարիտ խոնարհութեան և յիշեալ փորձուած ծանօթութեան վրայ իր հիմը ունի։ Ինչու որ յայտնի բան մըն է, թէ ով որ կ'ուզէ երկնային լուսոյն և անստեղծ ճշմարտութեան հետ միանալ, պէտք է որ անձը ճանչնայ, զորն որ աստուածային զթութիւնը հասարակօրէն հպարտներուն և իրենց վրայ յոյսերնին դնողներուն անկմանց ձեռօք կուտայ, արդարութեամբ թոյլ տալով որ պակսութեան մը մէջ իյնան, ուսկից կը կարծեն կարող ըլլալ զիրենք պաշտպանել, որպէս զի ասանկով անձանց չափը ճանչնալով, սորվին ամէն բանին մէջ իրենց անձանց վրայ չվստահանալու։ Բայց այսպիսի ողբալի մէջոց մը Աստուած սովոր չէ գործածել, եթէ ոչ երբոր ուրիշ քաղցր միջոցները, գորս վերը ըսինք, ան օգուտը չեն բերեր, զոր անոր աստուածային բարութիւնը կը գիտէր։ Որն որ այնչափ թոյլ կուտայ որ մարդը շատ կամ քիչ իյնայ՝ որչափ մենծ կամ նուազ է իր հպարտութիւնը, և սեպհական համարումը, անանկ որ ուր բնաւ անձնահաճութեան հետք չեն երևնար, հոն և ոչ սպրդելու կասկած մը կը մնայ, ինչպէս որ սուրբ Կոյսն Մարիամ ասոր օրինակը եղաւ։ Այնպէս որ իյնալու ատենդ՝ շուտ արտորա աչացդ մտօք անձիդ խոնարհ ճանաչմանը, և եռանդնոտ աղօթքով Աստուածմէ խնդրէ որ անձդ ճանչնալու և բնաւ վրադ չվստահանալու ճշմարիտ ոյսը քեզի շնորհէ, թէ որ չես ուզեր

նորէն ինչալ, և գուցէ աւելի մենծ կործանման փոսին մէջ։

ԳԼՈՒԽ Գ.

Աստուած վստահուբեանը վրայ։

Ինքիրեն չվստահութիւնը, թէպէտև այս պատերազմիս մէջ ինչպէս որ ըսինք, շատ կարևոր է, սակայն թէ որ անի մինակ մեզի նիզակակից ունենանք, կը հարկադրինք կամ փախչելու, կամ թշնամիներէն յաղթուելու, և ասոր համար ասկէ 'ի զատ պէտք ունիս և առ Աստուած կատարեալ վստահութեանն. անորմէ մինակ յուսալով և սպասելով որպիսի և իցէ բարիք, օգնութիւն և յաղթութիւն։ Եւ ինչպէս որ մեզի, որ ո՛չ ինչ ենք, արժան չէ՛ մեր քովէն բան մը խոստանալ բայ յանկմանց, որով բոլորովին մեր անձին վրայ չվստահանալու ենք, այդպէս մեր Աստուծմէն անշուշտ ստանանք պիտի ամէն չքեղ յաղթանակ, միայն թէ իրեն օգնութիւնը ընդունելու համար, մեր սիրտը կենդանի վստահութեամբ անոր վառուի։ Այս ալ չորս եղանակով հնար է ստանալ։

Նախ՝ Աստուծմէ խնդրելով զայն։ Երկրորդ մտածելով և հաւատոյ աչքով զննելով Աստուծոյ ամենակարողութիւնը, և անսահման իմաստութիւնը, որուն անհնարին բան մը չըկայ և ո՛չ դժուարին, և իր բարութիւնը անչափ ըլլալով՝ անճառելի կամքով պատրաստ կը կենայ

ժամէ ժամ և վայրկենէ վայրկեան տալու մեզի այն ամէն բանը, որուն պէտք կ'ունենանք հոգևոր կեանքին, և կատարեալ կերպով մեր անձին յաղթելու, վստահութեամբ մը իրեն կարող բազկին դիմելով։ Եւ ինչպէս կարելի է, թէ մեր աստուածային հովիւը, որն որ երեսուն և երեք տարի մոլորած ոչխարին ետևէն վազելով և կոչելով քովը բարձր աղաղակներով, ինչուկ որ ձայնը կորեցաւ, և այնքան դժար և վշտաձամբով, ինչուան որ թափեց իւր բովանդակ արիւնը, և կեանքը զոհեց 'ի սեղան խաչին, հիմայ երբոր ինքնին ոչխարը իր ետևէն երթայ հպատակելով իր պատուիրանքներուն, և կամ անոր հնազանդելու յօժարութեամբ, (թէ և երբեմն տկար ըլլայ) զինքն կոչելով և աղաչելով, որ նոյն ինքն չի դարձնէ անոր իր գթոտ վագութ աչուքները, իրեն չի լսէ, և աստուածային ուսերուն վրայ զինքը չի շալկէ, ուրախութեան տօն կատարելով բոլոր իր դրացիներովը և երկնից հրեշտակներով։ Եւ թէ որ մեր Փրկիչը ետ չի կենար և չի դադրիր մեծ փութով և սիրով փնտռելու և գտնելու աւետարանական դրամին մէջ օրինակ բերած կոյր և համր մեղաւորը, ինչպէս հնար է որ ձեռքէ թողու լքանէ զայն որ մոլորած ոչխարի մը պէս կը մայէ, և կ'աղաղակէ իր հովուին։ Եւ ո՞վ կը հաւատայ երբէք թէ Աստուած որն որ շարունակ մարդուն սիրտը կը զարնէ ներս մտնալու բաղձանքով, և հոն ընթրիքը ընելու, մասնակից ընելով զանի իր պարգևացն, երբոր մարդը իրեն սիրտը բանայ, և զինքն հրաւիրէ, ինքն գոցէ ականջները, և չուզէ հոն մտնել։

Երրորդ եղանակը աս սուրբ վստահութիւնը ձեռք բերելու համար՝ մտօք ստուգածաչունչ գրոց ճշմարտութեան դիմելն, ուր շատ տեղ մեզի յայտնի կը ցուցնէ, թէ Աստուած յուսացողը ոչ երբէք ամչցաւ։ Չորրորդ եղանակը, որ պիտի ծառայէ անձիդ վրայ մէկտեղ անապաւինութիւն ստանալու և Աստուծոյ վստահութիւն, ասիկայ է։ Երբոր առջևդ ընելիք գործ մը կ'ելլէ, և ձեռք զարնես պատերազմի մը և յաղթելու անձիդ, նախ քան առաջադրելդ կամ բացորոշելդ ատ բանը ուզել ընելու, նայէ մտքիդ աչքովը անձիդ տկարութեանը, և քու վրադ ամենևին վստահ չըլլալով, դարձիր յետոյ նայելու Աստուծոյ կարողութիւնը, իմաստութիւնը և անոր բարութիւնը, և զայն բըռնելով 'ի խարիսխ քու յուսոյդ, միտքդ դիր գործելու, և կարճութեամբ պատերազմելու, և այս պատրաստական զէնքով վառուած, և աղօթքով, ինչպէս որ իր տեղը ըսենք պիտի, պատերազմէ, և յետոյ գործքիդ ձեռք զարկ։ Եւ թէ որ այս կանոնը չի պահես, թէպէտև քեզի երևնայ թէ ամէն բան Աստուծոյ վստահանալով կ'ընես, մեծապէս կը խաբուիս, վասն զի մարդուն ընդարձակ է ինքնահաճութիւնը, և անանկ բարակ կերպով՝ որ գաղտուկ մեզի կ'երևայ թէ կ'ապրինք միշտ անապաւինութեամբ մեր անձանց վրայ և վստահութեամբ առ Աստուած, զոր կը համարինք թէ ունինք։ Որպէս զի ինքնահաճութենէն փախչիս որչափ որ հնար է, և ինքն իրենդ չյուսալով և Աստուած վստահանալով գործես, պէտք է որ քու տկարութեանդ

մտածութիւնը, Աստուծոյ ամենակարողութեան մտածութիւնն իր առջևէն երթայ և այս երկուքը միանգամայն մեր գործքերուն առաջնորդեն։

ԳԼՈՒԽ Դ.

Թէ ինչպէս հնար է գիտնալ թէ մարդը կը գործէ ինքն իրեն չապաւինելով, և վստահանալով Աստուած։

Երբեմն կ'երևնայ ինքնահաճ ծառային թէ ստացած ըլլայ անձին վրայ չվստահութիւնը և առ Աստուած ապաւինութիւնը, բայց կը խաբուի։ Եւ այս բանին ազէկ ցուցումը՝ ինչպէդ փորձով հասկընաս պիտի։ Արդ եթէ դուն իյնալու ատենդ տակնուվրայ կ'ըլլաս, կը տրտմիս և զքեզ յուսահատածի մը պէս կը տեսնաս առաջ երթալու բարեգործութեան մէջ, ստոյգ նշան է թէ դուն քու վրադ վստահ էիր, և ոչ Աստուած։ Եւ թէ որ տրտմութիւնը և յուսահատութիւնը մեծ ըլլան, աւելի անձիդ, և քիչ Աստուծոյ կ'ապաւինէիր. ինչու որ ստոյգ ըլլալով թէ մեծաւ մասամբ ինք իրեն վստահ չեղողը և Աստուծոյ ապաւինողը իյնայ նէ, չզարմանար, և չի տրտմիր և չցաւիր, գիտնալով որ այդ բանը իրեն կը հանդիպի իր տկարութեան պատճառաւ և Աստուծոյ վրայ քիչ վստահութիւն ունենալուն. մանաւանդ թէ ալ անձին վրայ վստահ չըլլալով՝ մեծագոյն խոնարհութեամբ

Աստուծոյ վրայ յոյսը կը դնէ, և ամէն բանէն աւելի կործանման առիթ եղող մեղքը և անկարգ կիրքերը ատելով, զԱստուած վշտացընելուն վրայ մեծապէս ցաւելով խաղաղ և անվրդով ցաւով մը՝ յետոյ կը տանի յառաջ իր գործքը, և մեծասիրտ արութեամբ և հաստատուն մտօք առաջ վազելով կը վազնտէ իր թշնամիները մինչև ցմահ։ Կ'ուզէի որ աղէկ մտածէին այս բաները իրենք զիրենք առ հոգևորս բռնող անձինքները, որոնք երբոր յանցանքի մը մէջ սահին, չեն կրնար և չեն ուզեր հանդարտիլ, և երբեմն չէ թէ աւելի ուրիշ բանի մը համար, հապա իրենք զիրենք ազատելու համար անձկութենէն և տաղնապէն՝ որ անձնասիրութենէն յառաջ կուգայ, չերևնար իրենց այնչափ երկայն ատեն մը, որչափ երբոր երթան գըտնելու հոգևոր հայրերնին, որուն քով պարտական էին երթալու գլխաւորաբար մեղքին արատէն սրբուելու, և ահաւոր խորհրդոյն զօրութեամբը նոյն մեղքին դէմ ուժ առնելու համար։

ԳԼՈՒԽ Ե.

Շատերուն սխալին վրայ, որոնք երկչոտութիւնը առաքինութիւն կը համարին։

Շատերը ևս յայտմ կը խաբուին, որոնք երկչոտութիւնը և անհանդարտութիւնը, որ մեղքին ետևէն կ'երթայ, (վասն զի ահաւորութիւն մը հետը ընկերակից կ'ունենայ), առաքինութիւն կը սեպեն, չի գիտնալով թէ անիկայ յառաջ կուգայ իրենց գաղտնի հպարտութենէ մը ու կարծելով, իրենց անձանց և յատուկ կարողութեանց վստահութեան վրայ հիմնուած, որոնց վրայ (իրենք զիրենք բանի մը տեղ բռնելով) չափէ դուրս յոյսերնին դրած էին, անկման փորձէն իմանալով թէ իրենց կը պակսէին, կը խռովին և կը զարմանան նոր հանդիպած բանի մը պէս, և կը վհատին տեսնալով գետինը կործանուած ան նեցուկը՝ որուն վրայ պարապ տեղ վստահութիւնին կրթնցուցած էին։

Այս բանը խոնարհին չի հանդիպիր, որն որ իր վստահութիւնը միայն Աստուծոյ վրայ դնելով, և անձին վրայ ամենևին չապաւինելով, երբ որ և իցէ յանցանքի մը մէջ սահի, թէպէտ և կը ցաւի, բայց չի խռովիր և չի զարմանար, գիտնալով որ առ ամէնը իրեն կը հանդիպի իր թշուառութենէն և անձնական տկարութենէ, զորն որ ճշմարտութեան լուսովը ինքնին պայծառ կը ճանչնայ։

ԳԼՈՒԽ Զ.

Ուրիշ ազդարարութիւնաց վրայ մեր անձին չապաւինելը և առ Աստուած վստահութիւնը ստանալնուս համար։

Որովհետև մեր թշնամիներուն յաղթելու բովանդակ զօրութիւնը գլխաւորաբար յառաջ կուգայ մեր անձին վրայ չվստահանալէն, և Աս-

տուծոյ ապաւինելէն, նորէն քու առջևդ քանի մի աղաղաղութիւններ կը դնեմ, որպէս զի Աստուծոյ շնորհով զանի ձեռք բերես։ Ուստի գիտնալու ես և հաստատուն բռնելու ես, թէ ոչ ամէն պարգևները բնական որ ըլլան կամ ստացական, ոչ ամէն ձրիական շնորհները, և ոչ բովանդակ աստուածաշունչ գրոց հմտութիւնը, ոչ երկար ատեն Աստուծոյ ծառայութիւնը, և ասոր մէջ ըրած սովորութիւնը, մեզի Աստուծոյ կամքը կատարել կուտան, թէ որ որպիսի և իցէ բարի և իրեն աչաց հաճոյ՝ մեր ընելիք գործին մէջ, և որպիսի և իցէ փորձութեան մէջ՝ զոր կը դիտենք նուաճել, և որ և իցէ վասանգի մէջ՝ որմէ փախչիլ կ'ուզենք, և որպիսի և իցէ խաչին մէջ զոր անոր կամքին համեմատ պիտի շալկենք, պաշտպանութիւն չի գտնէ մեր սիրտը և չի զօրանայ Աստուծոյ մանաւոր օգնութեամբը, նաև թէ որ ինքնին ձեռք չիտայ այս ամէնը գործելու։ Անանկ է նէ պէտք է մեզի որ բովանդակ մեր կենաց մէջ ամէն օր ամէն ժամ և ամէն վայրկեան ըսած առաջադրութիւնը նորոգենք, ինչու որ այս կերպով ոչ երբէք ճամբով մը կամ խորհրդով մը կրնանք մեզի վստահիլ։ Իսկ Աստուծոյ վստահութեան կողմանէ, գիտցիր թէ շատ դիւրին է Աստուծոյ թշնամեաց յաղթելը, քիչուոր եղեր են՝ բազմաթիւ եղեր են. կարիճ և վարժ ըլլան, կամ տկար և նորակիրթ։ Ուստի որչափ որ մէկը մեղաւոր ըլլայ, աշխարքին ալ բոլոր յանցանքներով բեռնաւորուած, և պակասաւոր ըլլայ որչափ որ մտքով ըմբռնել հնար է, և որչափ որ

ձեռքէն կուգար նէ ձեռք զարկած ըլլայ որ և իցէ միջոցներուն և կրթութեանց՝ մեղքը թողլու համար, և բարիք գործելու, և կարող եղած չըլլայ պզտիկ բարիք մը ստանալու, մանաւանդ թէ յաւէտ չարիքներով բեռը ծանրացած ըլլայ, այսու ամենայնիւ այնպիսին պէտք չէ որ յոյսը Աստուծմէ կտրէ, և ոչ իսկ մէկ դի թողու հոգևորական զէնքերը և կրթութիւնները, այլ շարունակ կտրճութեամբ պատերազմի. վասն զի պէտք է որ գիտնաս, թէ այս հոգևորական պատերազմին մէջ չի տուժիր եթէ ոչ ան որ պատերազմելէն և Աստուծոյ վրայ յոյսը դնելէն կը դադրի, որուն օգնութիւնը ամենեին չի պակտիր իր պատերազմօղներուն, թէպէտև երբեմն թոյլ կուտայ որ վիրաւորուին, միայն թէ կտրիճ ըլլան պատերազմելու. ինչու որ հոս է բոլոր նպատակը, ուր և վէրքերուն դեղը պատրաստ է և աղդու՝ պատերազմօղներուն, որոնք վստահութեամբ դԱստուած կը փնտռեն և անոր օգնութիւնը, և իրենց չյուսացած ժամանակը՝ ստոկած դտնեն պիտի թշնամիները։

ԳԼՈՒԽ Է.

Դրրուբևան վրայ և նախ մտքին՝ զոր տգիտութենեն և հետաքրքրութենեն զգուշացընենք պիտի։

Եթէ մեր վրայ չապաւինելը և Աստուծոյ վստահանալը՝ որ այս պատերազմին մէջ այնչափ

հարկաւոր են, միմիանակ ըլլան նէ՝ ոչ միայն մեր վրայ յաղթութիւնը չենք տանիր, այլ և զանազան չարեաց մէջ գահավէժ կ'իյնանք, ուստի ասոնցմէ 'ի զատ կրթութեան պէտք ունինք, որ վերը նշանակածներէն կարգով երրորդն է։ Այս կրթութիւնը գլխաւորաբար պէտք է գործածել մտաց և կամաց հետ։ Մըտաց կողմանէ՝ երկու բաներէն՝ որոնք սովորութիւն ունին անոր դէմ կռուելու, պարտական ենք զայն զգուշացընել։ Առաջինն է տգիտութիւն, որ զանի կը մթընցնէ, և կ'արգիլէ անորմէն ճշմարտին ծանօթութիւնը, որն որ իր յատուկ առարկան է։ Ուստի կրթութեան ձեռք լուսաւորելու և պայծառացընելու ենք զանի, որպէս զի կարող ըլլայ տեսնալ և աղէկ նկատել ինչ որ իրեն պէտք ըլլայ անկարգ կիրքերէն հոգին մաքրելու համար, և զանի սուրբ առաքինութիւններով զարդարելու։

Այս լոյսը երկու եղանակաւ հնար է ստանալ։ Առջինը և ամէնէն հարկաւորը աղօթքն է, աղաչելով սուրբ Հոգին որ հաճի մեր սիրտերուն մէջ զայն տպաւորելու։ Այս բանը միշտ կ'ընէ, եթէ ճշմարտութեամբ խնդրենք միայն զԱստուած, և ջանանք անոր սուրբ կամքը ընելու, և եթէ ամէն բան մեր սեպհական դատման հետ՝ մեր հոգևոր հարց դատաստանին տակը ձգենք։ Երկրորդ եղանակը՝ է այն շարունակ կրթութիւնը, որով խորունկ և չիփչիտակ ամէն իրաց վրայ մտածենք՝ գիտնալու համար թէ որոնք բարի են և որոնք չար. ինչպէս որ սուրբ Հոգին կ'առաջնորդէ, և չէ՛ թէ ինչպէս

դրսանց կ'երևնան, զգայութեանց կը ներկայացուին, և ինչպէս որ աշխարքս կը դատէ։ Այս խորհրդածութիւնը ըստ պատշաճի կատարելով, լաւ մեզի ճանչնալ կուտայ, թէ ոչինչ՝ ունայնութիւն և կեղծիք բռնելու է կոյր և ապականեալ աշխարքին ամէն սիրածը և բաղձացածը, որոնց զանազան կերպերով և միջոցներով ետևէն կ'իյնայ. թէ աշխարքին փառքը և փափկութիւնները ուրիշ բան չեն՝ եթէ ոչ ունայնութիւն և հոգւոյ տառապանք. թէ աշխարքին մեզի տուած անարգանքը և նախատինքը՝ ճըշմարիտ փառք կը ծնանին, և նեղութիւնները՝ զուարթութիւն. թէ թշնամեաց ներելը և անոնց բարիք ընելը մեծանձնութիւն մըն է, և Աստուծոյ հետ մեծագոյն նմանակցութիւններէն մէկն է. թէ աւելի կ'արժէ աշխարհը արհամարհել՝ քան թէ անոր տէր ըլլալը. թէ յաժար կամքով Աստուծոյ սիրոյն համար ամէնէն նուաստ ստեղծուածներուն հնազանդիլը՝ մեծամեծ իշխաններուն հրամայելէն աւելի ազնիւ և փառաւոր գործ մըն է. թէ մեր վրայ խոնարհ համարումը՝ ամենայն բարձրագոյն գիտութիւններէն աւելի յարգել պէտք է, և թէ յաղթելը և յատուկ ցանկութիւններնիս որչափ որ պզտիկ ըլլան մեռցընելը, շատ ամուր քաղաքներուն տիրելէն, զէնքով վառեալ զօրաւոր բանակներ նուաճելէն, հրաշք գործելէն, և մեռելներ կենդանացընելէն աւելի գովեստի արժանի են։

ԳԼՈՒԽ Ը.

Թէ ինչուն համար իրերը մեզմէ ուղիղ չեն քննուիր, և զանոնք ադէկ ձանչնալու համար գործածելիք եղանակին վրայ։

Պատճառն՝ որուն համար ամէն վերը ըսուածները ուրիշ շատ իրաց հետը մէկտեղ մեզ մէ ուղիղ չեն քննուիր, այս է, վասն զի անոնց առջի երևնալուն՝ կամ սէր կամ ատելութիւն անոնց կը կապենք, որով միտքը պաշարած՝ ալ ուղիղ զանոնք չի բռնէր ինչպէս որ են։ Դուն որպէս զի՝ի քեզ տեղիք չի գտնայ սա խաբէութիւնը, ուշադիր եղիր որչափ որ աւելի կրնաս, մաքուր բռնելու քու կամքդ և որ և իցէ անկարգ ցանկութենէն ազատ։ Եւ երբոր աչքիդ առջև որ և իցէ առարկայ ընծայուի, մաքիդ աչքովը անոր նայէ, և հասուն խորհրդով մըտմտա զանի, ատելութենէն շարժելէդ յառաջ, թէ որ իրը մեր բնական յօժարութեանց հակառակ ըլլայ, կամ սիրելէն՝ եթէ քեզի բերկրութիւն ազդէ, ու ետքը որոշէ զայն ուզելու և կամ անտրմէ խորշելու։ Ինչու որ ան ատենը միտքը դեռ՝ի կրից պաշարուած չըլլալով՝ ազատ և պայծառ է, և կրնայ ճշմարիտը ճանչնալ, և թափանցել շարիքին ներսը, որն որ կեղծ ու պատիր հեշտութեան պատկերին տակ պահուրտած է, նաև շարութեան քօղով ծածկուած բարւոյն խորունկը մտնել։ Բայց թէ որ

կամքը առաջուց միտած է իրը սիրելու կամ ատելու, ալ միտքը չի կրնար զայն ադէկ ճանչնալ, ինչու որ մէջ տեղ մտած յօժարութիւնը զանի կը մթընցնէ, անանկ որ եղածէն տարբեր իրը կը բռնէ, և իրը այնպիսի կամքին ներկայացընելով զայն՝ կամքը առաջուցմէ աւելի ետանդեամբ կը շարժի զանի սիրելու և կամ նոյնը ատելու, ամէն կարգի և խելքի օրէնաց հակառակ։ Այս կիրքէն միտքը աւելի կը պաշարուի, և անանկ մթընցած նորէն իրը կ'երևցնէ կամաց եղածէն աւելի սիրելի կամ ատելի։ Անոր համար եթէ ըսած կանոնս չի պահուի, (որն որ աս ամէն կրթութեանց մէջ մեծապէս հարկաւոր է) աս երկու կարողութիւնները միտք և կամք անանկ աղնիւ և գերազանց՝ միշտ թշուառաբար պտուտ ճամբան կը քալեն խաւարէն, աւելի թանձր ու կպչուն խաւարին երերալով, և մոլորութենէ՝ի մեծագոյն մոլորութիւն։

Հապա, որդեակ իմ, ամենայն արթնութեամբ զգուշացիր ամէն անկարգ բերմունքէն յոր և իցէ իրս, զորոնք դուն յառաջագոյն չի քննես և չի ճանչնաս մտաց լուսով ինչպէս որ ճշմարտապէս են, և գլխաւորաբար ընդհանուր աղօթից լուսովը և քու հոգևոր հօրդ դատաստանովը։ Զոր կ'ուզեմ թէ դուն երբեմն պահես աւելի արտաքին քանի մի գործքերուն մէջ որոնք բարի և սուրբ են, քան թէ ուրիշ բանեբուն մէջ. վասն զի այն գործքերուն մէջ առանկ բարի ըլլալնուն, մեր կողմէն աւելի վտանգ կայ խաբէութեան և անընտրողութեան, քան թէ

ուրիշներուն մէջ։ Ուստի ժամանակի, տեղոյ և չափու պարագայի մը համար, կամ հնազանդութեան կողմէն՝ կրնան երբեմն քեզի ոչ փոքր վնաս առթել. ինչպէս որ շատերուն վրայ դիտենք, որոնք գովելի և սուրբ կրթութեանց մէջ իրենք զիրենք փառնդի մէջ ձգեցին։

ԳԼՈՒԽ Թ.

Միւս բանի մը վրայ՝ որմէ միտքը զգուշացընելու է, որպէս զի կարող ըլլայ բարի ընտրողութիւն ընելու։

Միւս բան մըն ալ կայ, որմէն պարտական ենք միտքը պաշտպանելու, որ է հետաքրքրութիւն, ինչու որ մենք լեցնելով զանիկայ վնասակար, պարապ և անպատեհ խորհուրդներով, անյարմար և անընդունակ կ'ընենք զանի յաւէտ մեր ճշմարիտ մահացուցման և կատարելութեան պատկանածը հասկընալու։ Որուն համար պէտք է որ դուն մեռելի պէս դառնաս բոլորովին ամէն երկրային անկարևոր իրաց հետաքրքրութեանը նկատմամբ՝ թէ և օրինաւոր ըլլան։ Միշտ ճնչէ միտքդ որչափ որ ձեռքէդ կուգայ, և ջանք ըրէ զանի աղքատ ցուցընելու։ Աչխարքին նոր լուրերը և փոփոխութիւնները պզտիկ եղեր են կամ մեծ, այնպէս քեզի ըլլան որպէս թէ բնաւ չըլլային, և թէ որ առջևդ ընծայուին՝ դուն անոնց հակառակ կեցիր, և քեզմէ հեռու վանեցէ։ Բաղձալու ա-

տենդ երկնային բաները խմանալ, ջանա պարկեշտ և խոնարհ ըլլալու, չուզելով ուրիշ բան գիտնալ՝ եթէ ոչ զՔրիստոս խաչելեալն, անոր վարքը և մահը և ինչ որ քեզմէ կը խնդրէ։ Բոլոր մնացածը քեզմէ հեռացուր, որով Աստուծոյ շատ հաճելի կ'ըլլաս, որն որ իր սիրելեաց կարգը կ'ընդունի անոնք՝ որ կը փափաքին և կը խնդրեն իրմէն ան բաները, որոնք բաւական են իր աստուածային բարութիւնը սիրելու, և իր կամքը կատարելու։ Ուրիշ ամէն խընդրուածք և հետազօտութիւնք՝ անձնասիրութիւն են, հպարտութիւն և սատանայի որոգայթ։

Այդ՝ եթէ դուն աս խրատներուն հետևիս՝ շատ թակուրդներէն կը պրծիս. վասն զի խոբամանկ օձը տեսնալով որ հոգևորական կենաց միտք դնողներուն կամքը սաստիկ է և զօրաւոր, կը նայի անոնց միտքը թապլտրկել, որպէս զի անով թէ ասոր և թէ անոր տիրէ։ Ուստի սովորութիւն ունի շատ անգամ անոնց բարձրը, ազդու և հետաքրքիր խորհուրդներ աղդելու, մանաւանդ սրամիտ և խելացի եղողներուն, որոնք զիւրաւ կը հպարտանան, որովհետև ընկղմած ըլլալով բերկրութեան և այնպիսի մասանց ճառին մէջ, որովք ստութեամբ կը համոզուին զԱստուած վայելելու. կը մոռնան իրենց սիրտը մաքրելու, և մտադիր կենալու իրենց անձանց ճանաչմանը և ճշմարիտ մեռելութեանը։ Այսանկ հպարտութեան որոգայթէն բռնուելով՝ կուռքի պէս կը պաշտեն իրենց միտքը։ Այսկէ կը հետևի թէ քիչ քիչ ասորմէն չը-

զգուշանալովին՝ կը կարծեն որ կարօտ չեն ուրիշին խորհրդին և առաջնորդութեանը, արդէն սորված ըլլալով ամէն դիպուածին մէջ դիմելու իրենց կուռքին՝ այս է սեպհական դատմանը։

Մեծապէս վտանգաւոր և դժուարաւ բժշկելի գործ մըն է ատիկայ, որովհետև աւելի վտանգաւոր է մտքին հպարտութիւնը՝ քան թէ կամքին, ինչու որ կամքին հպարտութիւնը բուն մտքին յայտնի ըլլալով՝ դիւրութեամբ օր մը հնազանդելով որուն որ պէտք է, կրնայ բժշկուիլ։ Բայց դարման մը գտնել. այլ ով որ հաստատուն միտքը կը գտնէ թէ իւր կարծիքը ուրիշներէն լաւագոյն է, որմէ և ինչպէս բժշկուելու դեղ պիտի գտնէ. ինչ կերպով ուրիշներուն դատաստանին ինքը զինքը պիտի ենթարկէ, զորն որ այնչափ բարի չի բռնէր որչափ իր կարծիքը։ Եթէ ատ հոգւոյն աչքը որ միտքն է որով ճանչնար պիտի և դարմաներ ամբարտաւան կամքին աւելի մօտ վերքը, տկար է և կոյր և նայն իսկ հպարտութեամբ լեփլեցուն, ոչ կրնայ զանի առողջացընել։ Եւ թէ որ լոյսը՝ խաւար կը դառնայ, և կանոնը՝ մոլար, մնացածը ինչ պիտի ըլլայ։

Անոր համար կանխաւ դուն հակառակ կեցիր ասանկ վտանգաւոր հպարտութեան, դեռ ոսկրներուդ ծուծը չի թափանցած։ Թթացուր քու մտքիդ սրութիւնը, դիւրաւ քու կարծիքդ ուրիշին դատաստանին ներքևը ձգէ, յիմար եղիր Աստուծոյ սիրոյն համար, և ահա Սողոմոնէն աւելի իմաստուն կ'ըլլաս։

Գ. ԼՈՒԽ Ժ.

Կամքին կրթութեանը վրայ և վախճանին՝ որուն մեր անձին ներքին և արտաքին գործքերը ուղղել պէտք է։

Կրթութենէն 'ի զատ, որով ջանաս պիտի միտքդ հրահանգելու, անանկ կանոնելու ես քու կամքդ, որ չթողլով սանձարձակ իւր ցանկութեանցն, ամէն բանին մէջ համաձայն գտնուի աստուածային հաճութեան։ Եւ ապէկ միտք դիր, թէ մինակ բաւական չըլլար քեզի ուզել և հոգալ Աստուծոյ աւելի հաճոյական բաներ, այլ աւելի պարտական ես ևս զանոնք ուզելու և կատարելու, որպէս թէ Աստուծմէ շարժեալ, և մնայ առաջուան պէս դիտմամբ անոր միայն հաճոյ ըլլալու։ Այսոր մէջ ալ վերի ըսածէն աւելի բնութեան հետ մեծ հակառակութիւն մը կ'ունենանք, որն որ անանկ ինքիրեն հակած է, որ ամէն բաներուն մէջ և երբեմն աւելի բարի և հոգևոր բաներուն մէջ՝ կը փնտռէ իր դիւրութիւնը և զուարճութիւնը, որովք կը զբաղի, և անոնցմով համագամ ուտելիքի մը պէս առանց կշտանալու կ'արծի։ Անոր համար երբոր մեր առջևը կ'ելլեն, շուտով զանոնք կը զննենք, և կ'ուզենք չէ թէ Աստուծոյ կամքէն շարժեալ և կամ դիտմամբ անոր միայն հաճոյ ըլլալու, այլ ան բարւոյն և զուարճութեանը համար, որ Աստուծոյ հրամայածը

ուզելէն յառաջ կուգայ։ Այս խաբէութիւնը այնչափ աւելի ծածուկ է, որչափ որ ուզուած իրը ինքիրմէ բարեգոյն է։ Որով նոյն իսկ զԱստուած սիրելու մէջ՝ անձնասիրութեան խաբէութիւններ սովորութիւն ունին ներս սկըզբուելու, շատ անգամ աւելի նայելով անձնական մեր շահուն և բարիքին, որուն կը սպասենք, քան թէ Աստուծոյ կամաց. որն որ միայն իր փառքին համար կը հաճի և կ'ուզէ որ մենք զինքը սիրենք, բաղձանք և հնազանդինք իրեն։

Զքեզ զգուշացնելու համար այս որոգայթէն՝ որ կատարելութեան ճամբան կ'արգիլէ, և վարժեցնելու համար ամէն բան ուզելու և գործելու իբր շարժեալ յԱստուծոյ և մաքուր դիտաւորութեամբ զինքն միայն պատուելու և գոհ ընելու, (որն որ ամէն մեր գործքին և խորհրդին մենակ ինքն սկիզբն և վախճան կ'ուզէ ըլլալ) այս եղանակը բռնես պիտի. երբոր Աստուծմէ ուզած իր մը առնլեդ կ'ելլէ, զանի ուզելու մի յօժարիր, միտքդ նախ առ Աստուած չի վերցուցած, տեսնելու համար թէ իր կամքն է արդեօք որ դուն զայն ուզես, վասն զի ինքն անանկ կ'ուզէ և անոր միայն հաճոյ ըլլալու համար։ Անանկ քու կամքդ այս կամքէն շարժեալ և մղեալ, կը հակի զանի ուզելու իրրև Աստուծմէ ուզուած, և միայն զինքն հաճելու համար և պատուելու։ Նմանապէս ուզելովդ Աստուծմէ չուզուածը մերժել, մի՛ հերքեր զանոնք, անոր աստուածային կամքը մոբիդ աչքովը նախ չնկատած, որն որ կ'ուզէ թէ դուն անկէ հրաժարիս իրեն հաճելի ըլ-

լալու համար։ Բայց գիտնալու ես որ նուրբ բնութեան խարդախութիւնները քիչ ճանչցուած են, որն որ միշտ փնտռելով ծածուկ պատրուակաւ ինքզինքը, շատ անգամ կարծել կուտայ, որ 'ի մեզ նշանակած շարժառիթը և վախճանը, Աստուծոյ հաճելի ըլլալու համար է, և ասանկ չէ։ Ուստի յաճախ կը պատահի որ շահասիրութեան համար ուզածնիս կամ չուզածնիս մեզի կ'երևնայ զանի ուզելու կամ չուզելու Աստուծոյ հաճոյ կամ անհաճոյ ըլլալու համար։ Այս խաբէութենէն փախչելու համար բուն և յատուկ դեղը սրտի մաքրութիւնն է, որն որ կը հիմնի (որուն բոլոր այս պատերազմը կ'ուզղի) հին մարդը մերկանալուն և նորը հագնելուն վրայ։

Դարձեալ քեզի ճար մը գտնելու նայէ, անձնասիրութեամբ լեցուած ըլլալուդ, քու գործքերուդ սկիզբը պատրաստ կեցիր որչափ որ կըրնաս ամէն դիտաւորութիւնդ մաքրելու, ուր որ տեսնես թէ անձնասիրութիւն կայ, և մի՛ ուզեր ո՛չ գործել և ո՛չ մերժել բան մը եթէ նախ այն բանին շարժիչը և մղուիչը Աստուծոյ մաքուր և պարզ կամեցողութենէն չզգաս։ Թէ որ ամէն գործքերուն՝ և մանաւանդ հոգւոյ ներքին և արտաքին գործքերուն մէջ, որոնք շուտ կ'անցնին, չես կրնար միշտ գործնականապէս զգալ այս շարժումը, գոհ եղիր զանի ունենալու խրատչիւրին մէջ զօրութեամբ, միշտ հաստատուն դիտաւորութիւն ունենալով ամէն բանի մէջ միայն քու Աստուծոյդ հաճելի ըլլալու։ Բայց միջոց մը կամ երկար ժամանակ

տեսող գործքերուն մէջ, ոչ միայն սկիզբը աղէկ է որ 'ի քեզ այս շարժառիթը արթընցնես, այլ պարտական ես ստէպ զանի նորոգելու և ինչուան վերջը արծարծելու, ապա թէ ոչ անձնասիրութեան ուրիշ որոգայթի մը մէջ կընալու վտանգ կայ, որ ինք իրեն աւելի հակամետ ըլլալով քան թէ Աստուծոյ, շատ անգամ սովորութիւն ունի ժամանակի մէջոցով մը առանց ընտրութեան փոխել տալ մեղի նպատակները և այլայլել վախճանները։ Աստուծոյ ծառան աս բանին լաւ մտադիր չի կենալով, շատ անգամ մինակ իր տեսուն Աստուծոյ հաճոյ ըլլալու դիտաւորութեամբ կը սկսի բան մը գործել, բայց յետոյ կամաց կամաց գրեթէ առանց իմանալու անանկ կը թողու որ իր զգայութիւնը անով բերկրի, ինչուան մոռնալով Աստուծոյ կամքը՝ այնպէս կը խոտորի և կը յարի զգացած բերկրութեանը, և անկէ իրեն բուսած շահին և պատուոյն, որ եթէ նոյն իսկ Աստուծան գործքին արդեւք մը դնէ հիւանդութեամբ մը կամ դիպուածով մը կամ ստեղծուածի մը ձեռօք, ինքն չափէ դուրս կը խռովի և տակնուվրայ կ'ըլլայ, և երբեմն կը մրմռայ աս կամ ան բանին վրայ, կը թողում ըսելու երբեմն ալ Աստուծոյ վրայ։ Շատ յայտնի նշան մըն է թէ իր դիտաւորութիւնը բոլորովին Աստուծոյ չէր ուղղեալ, այլ կը ծնանէր փտած արմատէ և աւրուած ու խանգարած հիմէ մը։ Վասն զի ով որ Աստուծմէ կը շարժի և անոր մինակ հաճոյ ըլլալու, ալ չի խնդրէր աւելի աս կամ ան բանը, այլ կը խնդրէ միայն զայն ունենալու թէ որ

Աստուծոյ կամքը ուզէ որ ինքն ունենայ ան բանը, և ինչ կերպով և երբ իրեն հաճոյ ըլլայ նէ, և զայն ունենալով և կամ ոչ՝ միակերպ գոհ կը կենայ և հանդարտ, զի որ և իցէ կերպով իր դիտմանը կը հասնի և կը ստանայ իր վախճանը, որն որ ուրիշ բան չէր՝ եթէ ոչ Աստուծոյ հաճելի ըլլալը։

Ուստի ինք զինքդ ժողովէ, և մտադիր կեցիր միշտ աս կատարեալ վախճանին քու գործքերդ ուղղելու։ Եւ թէ որ երբեմն (քու հոգւոյդ տրամադրութեանը համեմատ) ջանք ընես բարին գործելու դժոխքի պատիժներէն փախչելու համար, կամ արքայութեան յուսովը, այս բանին մէջ ալ կրնաս քեզի կարգել 'ի վերջին վախճան՝ Աստուծոյ հաճութիւնը և կամքը, որն-որ չուզէր որ դուն դժոխք երթաս, այլ իւր արքայութիւնը մտնես։ Բնաւ մէկ մը չի կրնար լիովին ճանչնալ թէ որչափ զօրութիւն և արդիւնք ունի այս շարժառիթը, որովհետև որ և իցէ փոքր և չնչին ըլլայ իր մը դիտմամբ Աստուծոյ միայն հաճոյ ըլլալու և իր փառքին համար, աւելի կ'արժէ (ինչպէս խօսքիս կարգը կը բերէ ըսելու) անսահմանաբար, քան թէ ուրիշ մեծագոյն և աղէկ արժօղ իրերը, որոնք առանց այս վախճանին եղած ըլլան։ Որով աւելի հաճելի է իրեն դահեկան մը՝ աղքատին տրուած՝ դիտաւորութեամբ միայն անոր աստուածային մեծվայելչութեանը հաճելի ըլլալու, քան թէ ուրիշ դիտաւորութեամբ, նաև վայելելու երկնից բարիքը (որն որ ոչ միայն զուտ բարի վախճան մըն է այլ ծայրագոյն ցանկալի) մէկը զրկէր ինքզինքը բոլոր իւր ունեցածէն՝ որչափ որ շատ ըլլային։

Այս կրթութիւնը՝ ամէն բան գործելու դիտաւորութեամբ միայն՝ Աստուծոյ հաճելի ըլլալու, սկիզբը դժուարին կ'երևնայ, այլ շիտակ և դիւրին ըլլայ պիտի գործածութեամբ, և շատ անգամ Աստուծոյ փափագելովն և անոր միայն 'ի խորոց սրտէ կենդանի ըղձիւ հառաչելովն՝ իրեւ առ ամենակատար և միակ բարին մեր, որն որ ըստ ինքեան արժանի է որ ամէն արարածները զանի խնդրեն պաշտեն և ամէն բանէն վեր սիրեն: Անոր այս անսահման արժանաւորութեան մտածութիւնը, որչափ աւելի խորունկ և միանգամայն ստէպ ըլլայ, այնչափ աւելի եռանդագին և յաճախ ըլլան պիտի վերը ըսած կամայ ներգործութիւնները, և ասանկ մեծագոյն դիւրութեամբ և աւելի շուտով ունակութիւն կը ստանանք ամէն մեր գործքերը ընելու Աստուծոյ փառքին և սիրոյն համար, որն որ միայն արժանի է:

Վերջապէս կը յորդորեմ զքեզ այս աստուածային շարժաւիթը ստանալու, զորն որ վերը ըսածէս 'ի զատ անդադար աղօթքով Աստուծմէն խնդրես, և մտածես ստէպ անհամար բարերարութիւնները զոր Աստուած մեզի ըրաւ և կ'ընէ անդադար զուտ սիրոյն համար և առանց իր շահուն:

ԳԼՈՒԽ ԺԱ.

Մէկ քանի խորհրդածութեանց վրայ, որոնք կարդը կը յորդորեն ամէն բանին մէջ Աստուծոյ հաճութիւնը ուզելու:

Աւ աւելի կամքդ զրդելու համար մեծ դիւրութեամբ ամէն բանին մէջ ուզելու Աստուծոյ հաճութիւնը, և անոր պատիւը, ստէպ միտդ բե՛ր թէ ինքը յառաջուց զանազան եղանակներով զքեզ պատուեց և սիրեց: Ստեղծման ատենը զքեզ ոչընչէն ստեղծելով իր պատկերին նման, և մէկալ բոլոր արարածները քու ծառայութեանդ: Եւ փրկագործութեան ատենը խաբելով ոչ հրեշտակ մը, այլ իր միածին Որդին զքեզ ազատելու համար, ոչ թէ ապականացու ոսկւոյ և արծաթոյ գնով, այլ իր պատուական արեամբը և իր դառնակսկիծ և նախատալից մահուամբը: Եւ ամէն ժամ, ամէն վայրկեան թշնամիներէն զքեզ կը պահպանէ. իր շնորհքովը քու պատերազմդ կը պատերազմի, միշտ պատրաստ դրեր է քու պաշտպանութեանդ և կերակրիդ իր սիրելի Որդին սեղանոյն խորհրդին մէջ, ասիկայ մի՛ թէ Աստուծոյ անսահման քեզի ցուցցած սիրուն և պատուոյն անպատմելի նշան մը չէ, անանկ որ չիկայ մէկ մը որ կարող ըլլայ հասկընալ՝ թէ որչափ ամենազօր Տէրը կը յարգէ զմեզ ազքատքս՝ ողորմելով մեր նուաստութեանը և թշուառու-

թեանը, և ընդ հակառակն որչափ և ինչ պարտական ենք ընել անոր բարձրագոյն մեծվայելչութեանը՝ որ այնքան և այնպիսի իրեր մեզի համար ըրաւ։ Զի եթէ աշխարհիս իշխանները երբոր յարգութիւն կ'ընդունին ևս և աղքատ և ցած մարդիկներէն՝ այսու ամենայնիւ պարտական կը ցուցընեն իրենք զիրենք փոխարէնը դարձընելու. ինչ պէտք է որ ընէ մեր Նուաստութիւնը տիեզերաց երկնաւոր Թագաւորին հետ, որ զանի չքեղացուց փառքով և պատուով և մեծապէս սիրեց։ Վերի ըսածէս 'ի զատ ամէն բանէն վեր միշտ հաստատուն մտքիդ մէջ բռնէ, թէ աստուածային մեծվայելչութիւնն, ինքն ըստ ինքեան անսահմանաբար արժանի է պատուոյ և ծառայութեան միայն իրեն հաճութեանը համար։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Ի մարդն զտնուած զանազան կարգաց վրայ, և իրարու հետ ունեցած պատերազմին վրայ։

Թէպէտև այս պատերազմին մէջ հնար է ըսել թէ 'ի մեզ երկու կամք կը գտնուին, մէկը բանին, որուն համար բանաւոր կ'ըսուի և վերին, միւսը զգայութեան, որ ստորին և զգայական կը կոչուի, զորն որ սխորժակի, մարմնոյ, զգայութեան և կրից անուններով սովորութիւն է նշանակել, սակայն մենք մարդ ըլլալովնիս բանին ձեռքովը, երբ զգայութեամբ միայն կ'ուզենք բան մը, ուղղապէս մեզմէ այն բանը բընաւ ուզուած չիմացուիր, ինչուան որ վերին կամաց ձեռքնոյնը ուզելու չի յօժարինք։ Ուստի բոլոր մեր հոգևորական պատերազմը գլխաւորապէս յայսմ կը կայանայ, որ բանաւոր կամքը իբր միջին տեղը ունենալով աստուածային կամքին մէջ՝ որ անոր վրան կը կենայ, և զգայութեան ստորին կամացն, անդադար մէկէն ու մէկալէն յարձակմունք կը կրէ, անանկ որ ասոնցմէ ամէն մէկը կը ջանայ իր կողմը զինքը քաշելու և հնազանդութեան լուծին տակը դնելու։ Բայց մեծ դժուարութիւն և աշխատանք կը կրեն, մանաւանդ սկիզբը չար ուսնակութեամբ սովորեալները, երբոր կ'առաջադրեն լաւագոյն վիճակի փոխել իրենց անկարգ վարքը, և աշխարքին և մարմնոյն մեռնելով՝ իրենք զիրենք կուտան Յիսուսի Քրիստոսի սիրոյն և ծառայութեանը։ Վասն զի իրենց վերին կամաց քաշած հարուածները աստուածային և զգայական կամքէն, որոնք միշտ չորս դիէն կը պատերազմին անոր դէմ, սաստիկ և զօրաւոր են, և խորունկը կը թափանցեն ոչ առանց ծանր նեղութեան։ Որն որ չի պատահիր արդէն առաքինութեանց և մոլութեանց մէջ ունակացեալներուն, և ատանկ կը դիտեն շարունակելու իրենց վարքին ընթացքը. վասն զի առաքինի եղողները դիւրաւ կը հաւանին աստուածային կամքին, և մոլիները առանց ընդդիմութեան զգայականին կը նետուին։ Այլ թող մէկ մը պարապ տեղ չի կարծէ ատանալու քրիստոնէական հշմարիտ առաքինութիւնները, և ոչ ըստ ար-

ժանուին Աստուծոյ ծառայելու, թէ որ չուզէ իրաք ճնշել իր անձը, և համբերել նեղութեանց, որ ոչ միայն մեծամեծ՝ այլ նաև փոքրագոյն հեշտութիւններէն հրաժարելէն կը զգացուի, որոնց առաջ իր սիրտը երկրաքարշ ցանկութեամբ կպած էր: Եւ այս բանէն կը հանդիպի որ շատ քիչերը կը հասնին կատարելութեան կէտին, վասն զի աշխատանքով մեծամեծ մոլութիւնները նուաճելէն ետքը, ալ անկից վերջը չեն ուզեր իրենք զիրենք նեղը խօթել շարունակելով քաշելու խոցուածները և աշխատանքը, որոնց փորձը կ'առնուի զրեթէ անհամար պղտիկ անձնական բաղձանքներու և կիրքերու դէմ կենալու ատենը, որոնք միշտ անոնց վրայ զօրանալով՝ կ'իշխեն և բռնութեամբ կը տիրեն իրենց սրտերուն վրայ: Անոնց մէջ կը գտնուին ոմանք որոնք թէ և ուրիշին զրկանք չեն տար, այլ չափը անցած անոնց իրաւամբ ժառանգածին աչք կը տնկեն. թէ և ապօրինաւոր միջոցներով պատիներ չի փնտռեն, այլ զանոնք ինչպէս որ պարտական էին չեն ատեր, և չեն դադրիր բաղձալէն, և երբեմն ուրիշ զանազան ճամբաներով անոնց ետևէն իյնալէն: Թէ որ պատուիրած ծոմը կը բռնեն, այլ չեն ճնշեր իրենց որկորը աւելորդ ուտելէն և փափուկ համով կերակուրներ ախորժելէն. և չափաւոր և ժուժկալ ապրելու ատեննին ետ չեն կենար իրենց քմաց հաճոյական քանի մի գործքերէն, որ մեծ արգելք կը դնեն Աստուծոյ հետ միանալուն և հոգևորական կեանքին. թող թէ ատոնք շատ վտանգաւոր են որ և իցէ անձին որչափ որ սուրբ ըլլայ,

և աւելի վտանգաւոր անկէ քիչ վախցողին, ասոր համար ասոնցմէ որչափ որ հնար է ամէն մէկը պէտք է որ մեծապէս զգուշանայ և փախչի:

Այսպիսի բաներէն ևս յառաջ կուգայ, որ անոնց ուրիշ բարի գործքերն ալ կը կատարուին հոգւոյ գաղութեամբ մը, պըլըշտիկած շահախնդրութեամբ մը և գաղտնի անկատարութիւններով, և իրենց անձանց համարմունքով և բաղձանքով աշխարհին առջևը գովելի և յարգելի ըլլալու: Այսանկները ոչ միայն փրկութեան ճամբուն մէջ յառաջադէմ չեն ըլլար, այլ ետ ետ դառնալով՝ անցեալ չարիքներուն մէջ նորէն սահելու վտանգի մէջ են, վասն զի չեն սիրեր ճշմարիտ առաքինութիւնը, և ապերախտ կը գտնուին առ Աստուած, որն որ սատանային բռնութենէն զիրենք ազատեց, և ակէ 'ի զատ տգէտ են և աչքերնին կուրցած է տեսնալու վտանգը որուն մէջ կը գտնուին. մինչդեռ փուճ տեղ կը կարծեն, որպէս թէ իրենք ապահով վիճակի մէջ ըլլան: Եւ հոս խաբէութիւն մը կը յայտնուի որքան անծանօթ՝ այնքան աւելի վնասակար, իբր զի հոգևորական կենաց մտադիր եղողներէն շատերը, պէտքէն աւելի անձնասէր ըլլալով (թէ և ճշմարիտ սիրոյն սահմանը չեն գիտեր) շատ անգամ ձեռք կը զարնեն իրենց քմաց համաձայն եղած կրթութեանց, մէկ դի թողլով ուրիշ կրթութիւնները, որոնք աղէկ մը կը դպչին իրենց յօժարութիւնները, և զգայական ախորժակներն, որոնց դէմ ամենայն իրաւամբք պատերազմին ճիգը դարձընել պէտք էր: Հապա, որդեակ իմ սիրեցեալ 'ի Քրիս-

տոս, կը խրատեմ ու կը յորդորեմ զքեզ սիրելու դժուարութիւնը և աշխատանքը, որ հետը կը բերէ յաղթութիւնը, վասն զի հոս է բոլոր նպատակը. և անանկ ստոյգ և շատով յաղթութիւնը պիտի ըլլայ, որչափ աւելի ստատկութեամբ սիրես պիտի դժուարութիւնը, զոր նոր սկսողներուն կը ցուցընէ առաքինութիւնը և պատերազմը. և թէ որ դուն դժուարութիւնները և աշխատալի պատերազմը յաղթութիւններէն և առաքինութիւններէն աւելի սիրես, շատ շատով ամէն բան կը ստանաս:

ԳԼՈՒԽ ԺԴ.

Զգայուրեան շարժմանց դէմ պատերազմողու եղանակին վրայ, և կամաց ընելիք ներգործուրեանց վրայ առաքինուրեանց ուսնակուրիւնները ստանալու համար:

Ամէն անգամ որ բանական կամքդ մէկ կողմէն զգայութեան յօժարութենէն կը պաշարուի, մէկալ կողմէն աստուածային կամքէն, մինչ ամէն մէկը իրեն կը ջանայ յաղթութեան մրցանակը գրաւելու, որպէս զի ամէն բանին մէջ աստուածային կամքը 'ի քեզ զօրաւոր ըլլայ, շատ կերպերով անձդ կրթելու պարտական ես: Նախ երբոր կը պաշարուիս զգայութեան շարժմունքներէն, որոնք քեզի դէմ պատերազմ բանան, ուժգին ընդդիմութիւն ընելու պարտական ես, որպէս զի վերին կամքը ա-

նանց չի հաւնի: Երկրորդ դադրին նէ, նորէն գրգռէ 'ի քեզ զանոնք, որպէս զի մեծագոյն ստատկութենով և զօրութեամբ զանոնք ամնձես: Յետոյ երրորդ պատերազմի զանոնք նորէն կոչէ, յորում վարժիս պիտի զանոնք քեզմէ վռընտելու արհամարհութեամբ մը և դարշութեամբ: Պատերազմի այս երկու յորդորիչները ամէն մեր անկարգ ախորժակներու ատեն պէտք է որ գտնուին, 'ի բաց առեալ մարմնական խայթմունքներուն ատեն, որոնց վրայ ուրիշ տեղ խօսինք պիտի:

Վերջապէս քու ամէն գէշ բերմունքներուդ դէմ՝ հակառակ ներգործութիւններ ընելու ես: Հետագայ օրինակով մը ամէն բան քեզի աւելի բացայայտ կը պարզեմ: Թէ որ անհամբերութեան կիրքեր վրադ յարձակին, եթէ լաւ միտք դնես, զգաս պիտի որ անոնք անդադար վերին կամքը կը զարնեն կը դպչին որպէս զի անոնց զիջանի և հաւնի: Եւ դուն առջի կրքութեան ձեռաք ստէպ նորոգելով առաջադրութիւնդ, զէմ կեցիր իւրաքանչիւր շարժման, որչափ ձեռքդ կուգայ նէ ջանա՛ որ քու կամքդ անոնց հաւնելու չիզիջանի: Եւ այս պատերազմէն ետ կենալու չէ, ինչուան որ թշնամիդ ալ յոգնած և կիսամեռ և բոլորովին նուաճուած չի տեսնաս: Բայց տես դու, որդեակ, ստատնային չարութիւնը: Որ իմանալու ատենը թէ մենք ստատկութենով զէմ կեցեր ենք կրից յարձակմունքներուն, չէ թէ մինակ կը լռէ և կը դադրի զանոնք 'ի մեզ գրգռելէն, հապա գերազանցները ան ատեն հանդարտեցընելու կը ջա-

նայ. չըլլայ թէ կրթութեամբ ստանանք այնպիսի կրից հակառակ եղած առաքինութեան ունակութիւնը. և ասկէ 'ի զատ, որպէս զի սնափառութեան և հպարտութեան որոգայթին մէջ ձգէ զմեզ, ճարպկութեամբ մը մեզի կարծել տալով թէ քաջ գինուորի մը պէս շուտով թշնամին ոտքերնուս տակը առինք: Ասկէ դուն երկրորդ պատերազմին անցնիս պիտի, միտքդ բերելով և բորբոքելով 'ի քեզ անհամբերութիւն պատճառող խորհուրդներուն յիշատակը, անանկ որ զգայական մասին մէջ անոնցմէ գըրգռուած ըլլալդ զգաս, և ան ատենը նորոգելով դուն ստէպ առաջադրութիւնդ առջինէն աւելի մեծածայն զօրութեամբ, անոնց չարժմունքները նուաճէ: Եւ թէպէտ մենք մեր թշնամիները կը վանենք, գիտնալով թէ անով բարիք կ'ընենք և Աստուծոյ հաճելի կ'ըլլանք, 'ի վերայ այսր ամենայնի զանոնք բոլորովին չատելնուս համար, վասնզի մէջ ենք անոնցմէ ուրիշ անգամ յաղթուելու. անոր համար երրորդ յարձակմամբ անոնց դէմ դնելու ես, և զանոնք չէ թէ միայն դիմադարձ կամքով քեզմէ հեռու վանելու, հապա ցակոտ կամքով ալ, ինչուան որ ատելի և գարշելի ըլլան քեզի: Վերջապէս առաքինութեանց ունակութեամբ հոգիդ զարդարելու և կատարեալ գործելու համար, ուղղակի անկարգ կիրքերուդ ներհակ եղած ներքին ներգործութիւններ ընելու ես. օրինակի համար, կատարելապէս համբերութեան ունակութիւնը ստանալ ուզելու ատենդ, թէ որ մէկ մը գքեզ արհամարհելով անհամբերութեան ա-

ռիթ տայ, պատերազմին վերը ըսած երեք եղանակներուն հրահանգը քեզի հերիք չէ, այլ պարտական ես ուղել՝ միանգամայն և սիրել ընդունած նախատինքները, նորէն նոյն եղանակով և նոյն անձէն նախատուելու բաղձալով, պատրաստ կենալով և առաջադրելով աւելի ծանր արհամարհանք ալ կրելու: Այս է պատճառը որուն համար այն ներհական ներգործութիւնները առաքինութեանց մէջ մեզի կատարելագործելու համար հարկաւոր են, վասն զի ուրիշ ներգործութիւնները որչափ որ շատուր ըլլան և զօրաւոր, հերիք չեն խլելու մոլութիւն բուսցընող արմատները:

Ուստի օրինակս շարունակելով՝ թէպէտև արհամարհուած ատենիս՝ անհամբերութեան կրից չիհանեցինք, մանաւանդ թէ անոնց դէմ վերը ըսած երեք եղանակներով վառուցինք, բայց թէ որ մենք զմեզ չի կրթենք շատ և անդադար ներգործութիւններով նախատինքները սիրելու, և անոնց վրայ ուրախանալու, բնաւ չենք կրնար զմեզ ազատել անհամբերութեան ախտէն, որ մեր անձին վրայ համարումն ունենալնուս համար, արհամարհանքը ստելուն վրայ կը հիմնի: Իսկ ախտակիր արմատը կենդանի մնալով, միշտ դառն ճիւղեր կ'արձակէ, անանկ որ առաքինութիւնը շատ կը նուազի, մանաւանդ թէ երբեմն բոլորովին կը մարի, և ասկէ 'ի զատ նորէն իյնալու վտանգին մէջ կը գտնուինք առջևնիս եղած ամէն առիթներուն մէջ: Ուստի կը հետևի թէ առանց վերը ըսած ներհական ներգործութեանց՝ ոչ երբէք կրնանք

առաքինութեանց ճշմարիտ ունակութիւնը ըստանալ:

Այս ալ գիտցիր, որ այնպիսի ներգործութիւնները անանկ պէտք է որ յաճախ և բազմաթիւ ըլլան, որ կարող ըլլան բոլորովին սխտակիր ունակութիւնը ջնջելու, որն որ ինչպէս շատ մոլեկան գործքերով մեր սրտին վրայ տիրապետեց, այնպէս ալ շատ ներհական ներգործութիւններով արմատէն զանի խլել պէտք է, և անոր տեղ առաքինական ունակութիւնները տընկել. մանաւանդ թէ կ'ըսեմ որ առաքինական ունակութիւնը ստանալու համար՝ աւելի բարի գործքեր կը պահանջուին, որովհետև անոնք՝ առանց պէս օգնութիւն չեն գտներ մեղքով ապականած բնութենէն: Մինչուկ հիմայ ըսածներէս 'ի զատ ասս ալ կ'աւելցնեմ որ եթէ անատեն գործածած առաքինութիւնդ ասանկ պահանջէ, պարտական ես ես ներքին ներգործութեանց համաձայն՝ արտաքին ներգործութիւններ ընելու, ինչպէս ըսած օրինակիս համեմատ՝ հեղութեան և սիրոյ խօսքեր գործածելով, և ըստ կարի հաճեցնելով զքեզ նեղողները, և կերպով մը հակառակ կեցողները: Եւ թէպէտ և այս ներքին և արտաքին ներգործութիւնները ըլլան կամ երևնան քեզի հոգւոյ տկարութեան անակից մը, անանկ որ զանոնք գործելու զգաս քու ամէն յօժարութիւններուդ դէմ, այսու ամենայնիւ երբեք պէտք չէ որ կերպով մը զանոնք մէկ դի թողուս, ինչու որ որչափ որ տկար ըլլան, զքեզ պատերազմին մէջ հաստատուն և անյողդողդ կը պահեն, և յաղթութեան համբան քեզի կը դիւրացընեն:

Դու արթուն կեցիր խելքդ գլուխդ ժողված պատերազմելու, չէ թէ մինակ մեծ և զօրաւոր յօժարութեանց դէմ, հապա իւրաքանչիւր կրից պզտիկներուն և տկարներուն դէմ ալ, վասն զի ասոնք ճամբայ կը բանան մեծամեծներուն, ուսկից մեր մէջը մոլեկան ունակութիւնները կը ծնանին: Իսկ ոմանց անհոգ կենալէն այս սխորժակները արմատէն իրենց սրտէն խլելու և կարելու՝ պատահեցաւ որ նոյն կիրքերուն մեծամեծները յաղթելէն վերջը, չկարծած ատենները՝ նոյներէն պաշարուեցան, և առջինէն աւելի կոտորածով և չարաչար բեկմամբ նոյն թշնամիներէն յաղթուեցան: Դարձեալ կը յիշեցընեմ՝ քեզի որ մեռցընես և սանձես երբեմն քու սխորժակներդ նաև աւելորդ բաներուն մէջ, թէ և օրինաւոր ըլլան, վասն զի ասորմէ քեզի շատ օգուտներ կը ծնանին, և ասով միշտ աւելի կը տրամադրուիս անձիդ յաղթելու ուրիշ բաներուն մէջ, փորձութեանց յարձակումներուն մէջ զօրաւոր և հմուտ սխրեան կ'ըլլաս, սատանային զանազան դարաններէն կ'ապրիս, և Աստուծոյ հաճոյական պաշտօն կ'ընծայես:

Ո՛վ որդեակ իմ, յայսնապէս քեզի կ'ուզեմ խօսիլ, եթէ հաստատուն և անյողդողդ կենաս քեզի սրբեցուցած եղանակիս համաձայն՝ զքեզ բարեկարգելու՝ և յաղթելու այս անկեղծ և սուրբ կրթութեանց մէջ, կ'ապահովցընեմ զքեզ, թէ քիչ ժամանակուան մէջ շատ յառաջ կ'երթաս, և արդեամբք հոգևոր մարդ կ'ըլլաս, չէ թէ լոկ՝ անուամբ. բայց ուրիշ կերպով և ուրիշ կրթութեամբք՝ թէ և դատմանդ

համաձայն գերազանց սեպուին և անանկ քու քմացդ անուշ բերկրագոյն, ինչուկ անոնցմով կարծես թէ քու անձդ բոլորովին Աստուծոյ հետ քաղցր առանձնախօսութեան մէջ միաւորուած ըլլայ, պարապ տեղ մի՛ հաւատար թէ կը ստանաս առաքինութիւնը և ճշմարիտ հոգին։ Որն որ ինչպէս առջի գլխին մէջ ըսի, չի կայանար, և յառաջ չի գար հաճոյարար և բնութեան համաձայն կրթութիւններէն, այլ գործքով հանդերձ բնութիւնը 'ի խաչ հանող կրթութիւններէն, որով մարդը նորոգուելով աւետարանական առաքինութեանց ունակութեանց ձեռաք, գինքը կը միացնեն իր խաչելելոյն և ստեղծողին հետ։ Եւ երկրայող մը չիկայ թէ ինչպէս մոլեկան ունակութիւնները վերին կամաց շատ կերպով և երկարատև գործովք կ'ա-ճին, երբ՝ տեղ կուտայ և կը խանարհի զգայական ախորժակներուն, այդպէս ընդ հակառակն աւետարանական առաքինութեանց ունակութիւնք՝ աստուածային կամքին համաձայն շատ և բազմապատկեալ ներգործութիւններով կը ստացուին. որով երբեմն այս և երբեմն այն առաքինութեան կը կոչուինք կը հրաւիրուինք։ Ինչու որ ինչպէս մեր կամքը ո՛չ երբէք կրնայ ախտաւոր և երկրային ըլլալ, որչափ որ ստորին մասէն և ախտերէն զարնուի, քանի որ անոր չի հաւնի, և չի յօժարի, սանկ երբէք առաքինի և Աստուծոյ հետ միաւորեալ չըլլար, թէ և աստուածային ազդեցութիւններէն և շնորքէն սաստկապէս կոչուած և զարնուած ըլլայ, ինչուան որ ներքին ներգործութիւններով՝ ևս

և պէտք եղած ատենը արտաքին ներգործութիւններով ալ անոր գինքը չի համաձայնէ։

ԳԼՈՒԽ Ծ.Դ.

Թէ ինչ պէտք է ընել երբոր վերին կամքը յաղթուած կ'երևնայ և դոյդոյին ջնջուած ստորնագոյն կամքեն և դրնամիներեն։

Թէ որ երբեմն քեզի երևնայ թէ վերին կամքը ստորնագունին և իր թշնամեաց դէմ չի զօրեր բան մը ընելու, ինչու որ անոնց դէմ գործունեայ կամք մը յանձին չես զգար, այսու ամենայնիւ հաստատուն կեցի՛ր և գինքը վար մի՛ ձգեր, վասն զի միշտ քեզի յաղթող բռնելու ես, ցորչափ յայտնապէս յաղթուիլդ չի տեսնաս։ Ինչու որ ինչպէս որ մեր վերին կամքը իր ներգործութիւնները արտադրելու համար հարկաւորութիւն չունի ստորնագոյն կամքին, այդպէս եթէ նոյն կամքը գանոնք չուզէ, ամենևին չի կրնար անոնցմէ բռնադատիլ յաղթուելու, որչափ որ սաստիկ հետը կռուըտին։ Վասն զի Աստուած մեր կամքը ճոխացուց ազատութեան պարգևաք, և այնպիսի զօրութեամբ՝ որ եթէ բոլոր զգայութիւնները ամէն սատանաներու հետ մէկ տեղ, և միանգամայն բոլոր աշխարքը վառուէին և միարանէին անոր դէմ, իրենց ամէն զօրութեամբը կռուելով և նեղելով զանի, 'ի վերայ այսր ամենայնի ազատօրէն ինքը անոնց հակառակ կրնայ ուզել կամ

զայն քաշել, քաջալերես պիտի ան ատենը զայն մտքիդ մէջ յետագայ և կամ այլ նիւթեր որոճալով։

Նախ՝ մտմտա թէ դուն արժանի ես ան վիշտերուն զորս կը կրես, դի դու ինքնին անոնց առիթ տուիր, և արժանի ըլլալովդ՝ արդարութեան տակին սահմանը կը պահանջէ որ քաշես կամակար այն վէրքերը, զորս ձեռքովդ ըրիր։

Երկրորդ չունենալովդ յանցանք մը, դարձիր նայէ՝ անցեալ քու մեղքերդ, որոնց պատիժը տակաւին Աստուծմէ ընդունած չես, և ոչ ըստ արժանւոյն զանոնք քաւեր ես։ Եւ տեսնելով թէ Աստուծոյ ողորմութիւնը անոնց յաւիտենական կամ ժամանակաւոր քաւարանին պատիժը կը փոխէ առաջիկայ պզտիկ պատժով մը, պարտական ես ոչ միայն զանոնք յօժարութեամբ, այլ և շնորհակալութեամբ հանդերձ ընդունելու։

Երրորդ՝ երբոր քեզի երևնայ թէ շատ խիստ ապաշխարութիւններ ըրեր ես, և աստուածային մեծ վայելչութիւնը քիչ անգամ վշտացուցեր ես, (կարծիք մը որուն սանենին հաստատու չես), միտքդ բեր ան ատենը թէ երկնից արքայութեանը մուտք չիկայ, եթէ ոչ վշտաց նեղ և անձուկ դռնէն մտնողներուն։

Չորրորդ՝ թէ և դուն ուրիշ համբով կրնայիր մտնել, սիրոյն օրէնքէն պարտական չէիր և ոչ իսկ զայն մոռնալու, որովհետև Որդին Աստուծոյ իր ամէն սիրելիներուն և կենդանի անդամներուն հետ փչերուն և խաչերուն միջոցութեամբ հոն մտեր է։

չուզել իր ամէն ուզածը կամ չուզածը քանի անգամ և որչափ և որ եղանակով և որ նպատակին որ իրեն աւելի հաճոյական երևնայ։ Իսկ թէ որ այդ թշնամիները երբեմն խրոխտ արշաւանքով վրաղ վազեն և անանկ նեղը խօթեն որ կամքդ գրեթէ մարած՝ ալ կարող չըլլայ, ասանկ ըսեմ, չունչ առնուլ, հակառակ ներգործութիւն մը յառաջ բերելու համար, մի՛ վհատիր, և ձեռքդ զէնքերը վար մի՛ ձգեր, այլ ասանկ դիպուածին մէջ լեզուդ՝ի գործ դի՛ր և պաշպանէ զքեզ ըսելով. Տեղիք չեմ տար քեզի, չեմ ուզեր զքեզ. նման ան մարդուն որ թշնամիէն կապկրպած և ճզմուած ըլլալով, չի կրնալով ալ սրով խոցել, թրին կոթովը զանի կը զարնէ։ Եւ ինչպէս ասիկայ ջանք կ'ընէ ետ դառնալովն վրան յարձակիլ, որպէս զի սրին սուր ծայրովը կարող ըլլայ զանի վիրաւորել, այդպէս դուն ալ մէկդի քաշուած անձիդ ծանօթութեանը, թէ ո՛չ ինչ ես և ո՛չ ինչ կարող ես ընել, և յԱստուած վստահանալով՝ որ ամէն բան կրնայ ընել, զարկ և խորտակէ՛ ասոնց կիրքը կրկնելով Աղմոսդին խօսքը. Աստուած յոգնել ինձ նայեաց. Ցիսուս և Մարիամ օգնեցէք ինձի որ չյենամ։ Կրնաս ես թշնամին քեզի ժամանակ տայ նէ, կամքիդ տկարութեանը օգնել՝ վազելով մտքին զօրութեանը, զանազան կէտեր մըմըտալով, որով հոգին չունչ կ'առնու և կը զօրանայ թշնամւոյ դէմ։ Օրինակի համար, եթէ դուն հալածանքի կամ այլ վիշտերուն մէջ պաշարուած գտնուիս՝ անհամբերութենէն, անանկ որ կամքդ գրեթէ չի կրնար և կամ թէ չուզեր

Հինգերորդ՝ բայց այս կամ ուրիշ դիպուած-
ներուն մէջ դլխաւորաբար նկատելիքդ՝ քու
Աստուծոյդ կամքն է, որն որ քեզի ունեցած
սիրոյն համար անպատմելի կերպով հաճի պի-
տի՝ քանի անդամ որ տեսնէ թէ դուն առաքի-
նութեան գործքեր կ՚ընես, և կիրքերդ կը ղըս-
պես իրեն սիրոյն փոխարէնը հատուցանելուդ՝
և քաջ և հաւատարիմ զինուորի մը պէս պա-
տերազմելովդ։ Եւ ստոյգ գիտցիր թէ որչափ
յինքեան նեղութիւնը անկրաւ ըլլայ և աւելի
անարժան ան կողմանէ ուսկից որ եկաւ, ա-
նոր համար ալ քեզի աւելի դժար և ծանր տա-
նելու, այնչափ աւելի Աստուծոյ հաճելի կ՚ըլլաս
ընդունելով և սիրելով նաև յինքն ինքեան ան-
կարդ և քեզի աւելի դառն բաներուն մէջ՝ ա-
նոր աստուածային կամքը և տնօրէնութիւնը,
որով ամէն արկած որչափ և անկարդ ըլլայ՝
ամէն կերպով կատարեալ կարդ և կանոն
ունի։

ԳԼՈՒԽ ԺԵ.

*Պատերազմելու եղանակին վրայ քանի մի ծա-
ճուցմունք, և առանձինն թէ որոնց դէմ և որոնց
առաքինուրնամբ ընելու է։*

Արդէն, որդեակ իմ, տեսար դքեզ առաքի-
նութեամբք զարդարելու և անձիդ յաղթելու
համար պատերազմելուն կերպն ու եղանակը։ Ա-
տենն է հիմայ քեզի՚գիտնալու, թէ մեծ դիւրու-
թեամբ և արագութեամբ թշնամիներդ յաղ-

թելու համար՝ պէտք է որ պատերազմիս, մա-
նաւանդ ամէն օր պատերազմելու ես և ա-
ռանձինն անձնասիրութեանդ դէմ, վարժեցընե-
լով դքեզ աշխարքին հնարաւոր տուած արհա-
մարհանքը և նեղութիւնները սիրելի բարեկա-
մաց տեղ յարգելու։ Եւ այսպիսի կռուոյն ան-
մտադիր և անհոգ կենալէն՝ հանդիպեցաւ և կը
հանդիպի, ինչպէս որ վերը ըսի, որ յաղթու-
թիւնները դժուար կը ստացուին, շատ քիչ կ՚ե-
րևնան, ան ալ՝ անկատար և անհաստատ։ Եւ
ես միտդ կը ձգեմ թէ պատերազմիլդ հոգւոյ
արիութեամբ պէտք է որ ըլլայ, զոր դիւրաւ կը
տանաս եթէ Աստուծմէ զայն խնդրես, եթէ
թշնամեաց կատաղութիւնը և անհաշտ ատե-
լութիւնը և անոնց բազմութիւնը նկատելով՝
ընդհակառակն մտածես թէ յանսահմանս է
մեծագոյն Աստուծոյ բարութիւնը և սէրը՝ որով
դքեզ սիրեց, և թէ անոնցմէ աւելի բազմաթիւ
են երկնից հրեշտակները և սրբոց աղօթքը, ո-
րոնք մեզի պատերազմակից կ՚ըլլան։

Այսպիսի մտմտուքէն յառաջ եկաւ որ այնքան
տկար կանայք և մատաղ օրիորդներ առաքինա-
ցած՝ աշխարքին բոլոր իմաստութիւնը և զօրու-
թիւնը, մարմնոյ բոլոր յարձակմունքները, և
դժոխքի ամէն կատաղութիւնը ոտքի տակ ա-
ռին և խորտակեցին։ Ուստի ամենևին զարհու-
րելու չես, թէպէտև երբեմն սաստկացած ե-
րևնան քեզի թշնամեաց յարձակմունքները, և
թէ ցորչափ կենդանի ես նէ տևեն, և զա-
նազան կողմէն քեզի գլխմունքներ սպառ-
նան, ինչու որ վերը ըսածէս 'ի զատ գիտ-

նալու ես թէ թշնամեաց բոլոր զօրութիւնը և գիտութիւնը մեր աստուածային Զօրագլխին ձեռքն են, որուն պատուոյն համար կը պատերազմինք. որն որ անպատմելի կերպով զմեզ սիրելով և ինքնին զմեզ պատերազմի հանդիսին հրաւիրելով, ոչ միայն թոյլ չի տար որ պատերազմի բռնութիւն ըլլայ, հապա ինքնին մեզի հետ պատերազմելով՝ քեզի անոնց վրայ յաղթանակը ձեռք ձգել կուտայ, երբոր իրեն հաճոյ երևնայ նէ, և այն քու մեծագոյն օգտիդ համար, թէպէտև ինչուան քու կեանքիդ յետին շունչին ուշանայ:

Սա միայն քեզի կը վերաբերի, ասէ արիութեամբ պատերազմիլ, և թէ որ շատ անգամ հանդիպի որ վէրքեր ընդունիս, ամենևին ձեռքէդ զէնքը վար մի ձգեր, և մի արտորար փախչելու: Վերջապէս այս պատերազմին բազուկներդ ժրացնելու համար՝ գիտնալու ես որ երբէք ասկէ փախչելու ճար չիկայ, և չի պատերազմողը՝ հարկ է որ յաղթուի և մեռնի: Բայց ասկէ անանկ առելութեամբ լեցուած թշնամեաց հետ վարուելու է, որոնցմէ ոչինչ եղանակով՝ ոչ հաշտութիւն և ոչ պատերազմի դադարումն հնար է յուսալ:

ԳԼՈՒԽ ԺԶ.

Թէ ինչ կերպով Քրիստոսի զինուորը առաւօտեանց պատերազմին տեղը պիտի կայնի:

Զնէն արթննալուդ պէս ներքին հոգւոյդ աչուքներուն առջի դիտելիքը՝ փակուած չորս պատի մը մէջ ինք զինքդ ձեւացընելն է, այս սահմանով՝ թէ ով որ չի պատերազմիր՝ յաւիտեան կը կորսուի: Որուն մէջ երևակերպես պիտի տեսնալու աչքիդ առջևը մէկ կողմէն այն խրոխտ թշնամիդ և չար հակմանքդ՝ որուն արդէն փոյթ կը տանիս յաղթելու, զէնք հագած զքեզ վիրաւորելու և սպաննելու. և աջ կողմէն կայներ է քու յաղթող զօրագլուխդ Յիսուս Քրիստոս, իր ամենասուրբ մօրը կուսին Մարիամու հետ, և անոր ամենասիրելի փեսային սուրբ Յովսեփին, որոց և երկնքի հրեշտակաց բազմութեամբ հանդերձ, և՝ի մանաւորի Միքայէլ հրեշտակապետին հետ, և ձախ կողմէն դժոխքին սատանան իրեն սպասաւորներուն հետ կը ջանան վերը ըսած կիրքդ գրգռելու, դրդելով զքեզ անոր հաւանութիւն տալու: Ուր որ կարծես պիտի քու պահապան հրեշտակիդ ձայնը լսելու որ ասանկ խօսքեր քեզի կ'ուղղէ. Ահա դուն այսօր պիտոր պատերազմի մտնաս սրտոր և քու ուրիշ թշնամեացդ դէմ: Թող սիրտդ դող չիյնայ և չվհատի, բնաւ տեղիք մի տար անոր՝ վախէն կամ ակնածութենէն, վասն

զի մեր Տէրը և քու զօրագլուխդ հոս մօտ կայ-
ներ է քեզի հետ՝ իրեն ամէն երկնաւոր զօր-
քերովը, որոնք ամէնքը մէկտեղ քու թշնա-
մեացդ դէմ դնեն պիտի, թոյլ չի տալով որ զքեզ
զօրութեամբ և նենգութեամբ ոտքի տակ առ-
նեն։ Հաստատուն կեցիր, բուռն սրա՛ անձին,
և համբերութեամբ քաշէ նեղութիւնը՝ զոյն որ
երբեմն զգաս պիտի անձդ բռնադատելուն։
Շատ անգամ՝ի խորոց սրտէ աղաղակէ առ բա-
րեգութ տէրն և կոչէ ամենասուրբ աստուածա-
ծին կոյսը, ամէն սուրբերով մէկ տեղ օգնու-
թեան քեզի, և անշուշտ կը տնկես յաղթա-
նակը։

Իսկ թէ որ դու տկար և չար ունակացեալ ես,
և թշնամիներդ զօրաւոր և բազմութիւ, բայց
քու ստեղծողիդ և փրկչիդ նպաստները շատ
են, և քու Աստուածդ գերազանցապէս և ա-
ռանց բաղդատութեան զօրագոյն է, և ուրեմն
ինքը կ՚ուզէ քու փրկութիւնդ քան թէ թշնա-
մին քու դատապարտութիւնդ։ Հապա քաջու-
թեամբ պատերազմէ և բնաւ մի՛ ձանձրանար
նեղութիւն կրելէն, վասն զի աշխատանքէն և
չար յաժարութեանց ընդդիմութենէն, և չար
ունակութեանց համար զգացած կսկիծէն՝ յաղ-
թութիւնը կը ծնանի, և մեծ գանձը որով երկ-
նից արքայութիւնը կը ժառանգուի և հոգին
յաւիտեան կը միաւորի Աստուծոյ հետ։ Աչկից
ետև կը սկսիս պատերազմել անուամբ տեառն
զօրութեանց քու անձիդ չվստահանալու, և
յԱստուած ապաւինելու զէնքովն, աղօթքով և
կրթութեամբ, պատերազմի կանչելով չար թըշ-

նամիդ և յաժարութիւններդ, զոր վերի կանո-
նին համեմատ առաջադրեր ես նուաճելու, եր-
բեմն ընդդիմութեամբ, երբեմն ատելութեամբ,
և երբեմն ներհակ առաքինութեան ներգոր-
ծութիւններով, մահացու սաստիկ վէրք ստէպ
ստէպ անոր տալով քու Տեառնդ հաճոյանալու
համար, որ բոլոր յաղթանակող եկեղեցւոյն
հետ մէկ տեղ քու պատերազմիդ հանդէսը կը
դիտէ։

Դարձեալ կ՚ըսեմ քեզի թէ ձանձրանալու չես
պատերազմելէն, մտածելով մեր ամէնուն Ա-
ստուծոյ ծառայելու և հաճելու պարտաւորու-
թիւններս, և պատերազմին աս անհրաժեշտ հար-
կը, ուսկից առանց վերքի և ողջ հնարաւոր չէ
փախուստ տալ։ Այլ աւելի կ՚ըսեմ, թէ որ ուզես
ապստամբի պէս Աստուծոյ ձեռքէն փախչիլ, և
ինքզինքդ աշխարքին և մարմնոյ փափկութեանց
տալ, ուզես չուզես տեսակ տեսակ հակառա-
կութիւններուն դէմ պիտոր հարկադրուիս կը-
ռուելու, շատ անգամ քրտինքներ վազցնես
պիտի ճակտէդ, և սիրտդ հալի և մաշի պիտի
մահուան նման ցաւերով Ըսէ՛, կ՚աղաչեմ, ի՞նչ
անխելքութիւն կ՚ելլար այնպիսի աշխատութիւն
և այնպիսի նեղութիւն ընտրել և յանձն առ-
նուլ որ մեծագոյն մեզի աշխատանք և նեղու-
թիւն կը բերէ մահուամբ հանդերձ, անանկ
կ՚ըսեմ չարիքներ որ վերջ չ՚ունենան, և փախ-
չիլ այն աշխատանքէն, որ վաղանցուկ ելլալով
զմեզ կը միացնէ մշտնջենաւոր և անսահման
երջանիկ կենաց հետ յաւիտեան վայելելով
զԱստուածն մեր։

ԳԼՈՒԽ ԺԷ.

Մեր ախտաւոր կիրքերուն դէմ պատերազմելուն կարգին վրայ։

Շատ օգտակար է գիտնալ կարգը զոր պահել պէտք է ըստ արժանւոյն պատերազմելու համար, և ոչ թէ ըստ գիպուածոյն և վեր'ի վերանց ինչպէս որ շատերը կ'ընեն իրենց մեծ վնասովն։

Արդ թշնամեաց և չար յօժարութեանց դէմ պատերազմելուդ կարգը այս է, որ դուն որտիդ ներքին խորշերը մանալով մանր քննութեամբ մը փնտռելու ես, թէ որպիսի խորհրդներէն և բաղձանքներէն պատած և պաշարուած է, և ո՞ր ախտէն աւելի բռնուած և գերի եղած, և գլխաւորաբար ասոր դէմ զէնքեր ձեռքդ առած պատերազմէ։ Եւ թէ որ հանդիպի քեզի ուրիշ թշնամիներէն պաշարուելու, միշտ պարտական ես պատերազմելու ան ատեն ներգործութեամբ և մօտ քեզի հետ պատերազմ բացողին դէմ, բայց յետոյ դառնալով գլխաւոր գործքին։

ԳԼՈՒԽ ԺԸ.

Կրից յանկարծական շարժմանց դէմ դնելուն եղանակին վրայ։

Տակաւին վարժ չըլլալով նախատանաց և կամ այլ ներհական իրաց չըսպասուած հարուածներէն զքեզ պաշտպանելու, այս սովորութիւնը ընելու համար՝ վարժեցուր զքեզ անոնց յառաջատես ըլլալու և շատ անգամ բաղձալու և միանգամայն պատրաստ հոգւով անոնց սպասելու։ Այսոնց յառաջատես ըլլալուն եղանակն է մտմտալ քու կրիցդ հանգամանքը, ես և անձինքները և տեղը, ուր և որոնց հետ կը տեսնուիս, որով զիւրաւ քեզի պատահելիքը գուշակել կրնաս։ Եւ որ և իցէ մտքէ չանցած ներհակ բան մը առջեդ ելլելուն պէս, բաց 'ի նպաստէն զոր քեզի պատճառէ պիտի հոգւոյդ պատրաստ գտնուիլը այլ նախատեսած իրաց, կրնաս այս եղանակն ալ գործածել։

Երբոր կը սկսիս զգալ նախատանաց և կամ այլ նեղացուցիչ իրաց առջի խայթուածները, արթուն կեցիր, չանա՞ միտդ առ Աստուած վերցընել, անոր անպատմելի բարութիւնը և քեզի ցուցած սէրը մտածելով, որով կը խաւրէ քեզի այս վիշտը, որպէս զի իր սիրոյն համար համբերութեամբ կրելով, աւելի մաքրուիս, սրբուիս, իրեն քովը մօտիկնաս և միաւորիս հետը։ Եւ տեսնալով թէ ո՞րչափ ինքը կը հաճի համբերութեամբ զանի քաշելուդ, դարձիր քեզի և ինքնին զքեզ յանդիմանելով ըսէ ինքիրենդ. Ո՜հ, ինչո՞ւ չես ուզեր այս խաչը տանիլ, զոր ո՞չ այս ոք կամ այն, այլ քու երկնաւոր հայրդ կը ղրկէ քեզի։ Յետոյ խաչին դառնալով գրկէ զանի մեծ համբերութեամբ և ուրախութեամբ ձեռքէդ եկածին չափ և ըսէ. Ո՜վ խաչ, իմ ստեղծուելէս յառաջ աստուածային նախախնամութեամբ հրաշակերտեալ. ո՜վ խաչ, իմ խաչեցե-

լոյս քաղցր սիրոյը անուշցած, ալ գիս պինդ բևեռէ քեզի, որպէս զի կարող ըլլամ բոլորա-նուէր գիս ընծայել անոր որ 'ի քեզ մեռնելով գիս փրկեց։ Եւ եթէ սկիզբը զօրանալով վրադ կիրքը, մինդ առ Աստուած կարող չըլլաս վերցընել, և վերքեր ընդունիս, այսու ամենայնիւ շուտով ջանք ըրէ զայն կատարելու որպէս թէ վիրաւորուած չըլլայիր։

Բայց ազգու դեղ ու դարման մատուցանելու համար այս յանկարծ խլրտմանց դէմ, կանոնակեկ պատճառը կտրելու ես ուսկից որ յառաջ կուգան։ Ինչպէս եթէ բանի մը սիրադ կապուելով տեսնաս թէ երբոր անոր հանդիպիս՝ հոգւոյ յանկարծ վրդովման մէջ ինկալու սովորութիւն կ'ունենաս, ատենին ասոր դեղ ճարելուն եղանակն է, զքեզ կրթել որպէդ ան յաժարութիւնը հանելու։ Բայց եթէ ամբոխումը ոչ իրէն, այլ անձէ մը կը պատճառի, որուն անհամակիր բարքէն պզտիկ գործքերն անգամ քեզի ձանձրութիւն կը բերեն և կը տաղնապեն, դեղն ու դարմանը կամքդ մեղմացընելն է զանի սիրելու և յարգելու, իբր զի քեզի պէս արարած ըլլալէն 'ի զատ Աստուծոյ ճարտար ձեռքով ստեղծուած և նովին փրկական արեամբ քեզի պէս նորոգուած, քեզի նաև առիթ կուտայ, եթէ համբերութեամբ տանիս, նմանելու ամմենան բարերար և մարդասէր Տեառնդ։

ԳԼՈՒԽ ԺԹ.

Մարմնական ախտերուն դէմ պատերազմելուն եղանակին վրայ։

Այս ախտին դէմ մասնաւոր և ուրիշներէն տարբեր եղանակով պարտական ես պատերազմելու։ Ուստի ըստ կանոնի պատերազմիլ գիտնալուդ համար, երեք ժամանակ նկատելու ես. փորձութենէն յառաջ, փորձութեան ժամանակը, և փորձութեան անցնելէն վերջը։

Փորձութենէն յառաջ պատերազմը մղելու է պատճառներուն դէմ, ուսկից այս փորձութիւնը կը ծագի։ Նախ՝ դուն պատերազմելու ես ոչ ճակատ առ ճակատ, այլ ձեռքդ եկածին չափ փախչելով որ և իցէ առիթներէն, կամ անձէն, որմէ ամենափոքր ևս վտանգ մը կրնայ քեզի ծագիլ։ Եւ եթէ երբեմն անոր հետ հարկ ըլլայ տեսնուելու, կարճ կապէ՛ խօսքերդ համեստ դէմքով և ծանրութեամբ, և յաւէտ խօսքերը խստութիւն մը ունենալու են, քան թէ կակուղ, և աւելորդ քաղցրաբանութիւն մը։ Եւ մի ապաւինիր քեզի թէ չես զգար և թէ այսչափ տարիներ վարուելով հետը չըզգացիր ինաւ մարմնական խլրտմունքներ, ինչու որ այս անիծեալ ախտը շատ տարիներուն մէջ չըրածը մէկ ժամու մէջ կը գործէ, և յաճախ իր պատրաստութիւնները գաղտնի կը տեսնայ և կը կարգադրէ, և այնչափ վնասակար և անբժշկե-

լի կ'ըլլան անոր հարուածները, որչափ բարեկամաբար և անկասկած սղելով ներս կը մղեն: Եւ շատ անգամ աւելի վախնալու է (ինչպէս որ փորձը շատ անգամ ցուցուց և օր ըստ օրէ կը ցուցնէ) երբ գործը պատրուակաւ օրինաւոր իրաց կը շարունակուի, ինչպէս ազգականութեան և կամ պարտաւոր պաշտօնին, և կամ սիրած անձին գտնուած առաքինութեանը համար, վասն զի շատ անխոհեմ վարմունքէն զգայութեան թունաւոր ցանկութիւնը կ'երթայ կը խառնուի, որ անզգայարար քիչ քիչ կաթկըթելովն՝ և ինչուան հոգւոյն ներքին ըղեղը թափանցելով՝ միշտ աւելի միտքը կը մթնցնէ, ապանկ որ վտանգաւոր իրերը, սիրահարական հայեցուածները, երկու կողմէն փաղաքշական խօսակցութիւն, և ախորժելի կենցաղավարութիւնը, կը սկսին բանի տեղ չի դրուիլ, և ասանկ մէկ կողմէն միւս կողմը անցնելով՝ յետոյ կը կործանինք, կամ ուրիշ տգնապեցուցիչ և դըժուար յաղթուելիք փորձութեան մէջ կ'ինկնանք:

Դարձեալ կ'ըսեմ և կը կրկնեմ, փախիր փախիր, ինչու որ խծուծ մըն ես, և քեզի մի՛ ապաւինիր թէ լուացուած ես և բարի և հաստատուն կամոց ջրովն լեցուած, և առաջադրեր ես յաւէտ մեռնիլ քան թէ զԱստուած բարկացընել, վասն զի այս յաճախ վարմունքովն՝ քիչ քիչ կրաւ կը իր ջերմութեամբը բարի կամքին ջուրը ցամքեցընելով՝ չի կարծած ատենը անանկ կը բռընկի, որ ո՛չ ազգականութենէն և ոչ բարեկամներէն կը քաշուի, Աստուծմէ ևս ալ չի վախնար, չի յարգեր պատիւը, և ո՛չ կենաց կը խնայէ, մը-

տիկ ալ չը՝ներ բոլոր դժոխքին պատիժներուն: Հապա փախիր, փախիր, եթէ իրօք չուզես յանկարծ բռնուիլ, ոտքի տակ առնուիլ և սրէ անցնիլ:

Երկրորդ՝ դատարկութենէն փախիր, որ թուն կեցիր և հակէ խորհրդովք և վիճակիդ վայելուչ գործքերով:

Երրորդ՝ երբէք ընդդիմութիւն մ'ընէր, այլ քու մեծաւորացդ սիրով հնազանդէ, պատրաստ սրտով կատարելով ինչ որ կը հրամայեն, և աւելի յօժարութեամբ այն բաները որ գքեզ կը խոնարհեցընեն և կամացդ և բնական միտմանդ հակառակ կ'ելլեն:

Չորրորդ՝ ընկերոջդ վրայ ամենևին յանդուգն դատողութիւն մ'ընէր, մանաւանդ ըսուած ախտս նեթին մէջ, և եթէ յայտնապէս ինկաւ, անոր կարեկից եղիր, և անոր դէմ մի՛ բարկանար, մի՛ ծաղրեր գինքը, այլ քեզի խոնարհութեան և անձդ ճանչնալու օրինակ սա, ինք զինքդ հոգ և ոչինչ բռնելով, ազօթքով Աստուծոյ մօտիկցիր, և ամէնէն աւելի փախիր կենակցութենէն, ուր վտանգի ևս չուք մը տեսնուի: Ինչու որ եթէ դուն արագ ըլլաս ուրիշները դատելու և արհամարհելու, Աստուած տուժիւքդ գքեզ կը խելօքցընէ, թոյլ տալով նոյն յանցանքներուն մէջ սահելու, որպէս զի հպարտութենէ գքեզ զգուշացընես, և խոնարհեալ փոյթ տանիս այս երկու ախտերուն դեղը հոգալու: Եւ թէպէտև չյնաս, և միտքդ չի խախտի, այլ գիտցիր թէ մեծապէս կասկածելի է վիճակդ:

Հինգերորդ և միանգամայն վերջին, քաջ ծա-

նիր թէ պարզևի մը կամ հոգևոր քաղցրութեան ճաշակի մը հանիս նէ, ինքնահաւան մ'ըլլար բանի մը տեղ դնելով ինք զինքդ, և թէ թշնամիներդ ալ քեզի դէմ պատերազմի չի պիտի ելլեն, անոնց վրայ զգուանօք և զարհուրանօք և ատելութեամբ նայելու, զի եթէ այս բանիս մէջ անզգոյշ կենաս դիւրաւ կը կործանիս:

Փորձութեան ատենը քննէ և նայէ թէ անի ներքին թէ արտաքին պատճառէ մը կը ծագի: Արտաքին ըսելով հոս տեղ աչաց, ականջաց հետաքրքրութիւնը կ'իմանամ, զգեստներուն աւելորդ զարդարանքը, կենակցութիւնն և խօսակցութիւնն որոնք կը հրապուրեն այս ախտին: Այսպիսի դիպուածներուն մէջ դեղը՝ պարկեշտութիւն և չափաւորութիւնն է, չի փափաքելով ոչ տեսնալ, և ոչ այս ախտին գրգռեցուցիչ բաներ լսել, և վերը ըսածիս համեմատ փախուստն է: Ներքինը յառաջկուգայ կամ մարմնոյ կտրճութենէն կամ մտաց խորհրդներէն, որոնք մեր չար ունակութիւններէն յառաջ կուգան, և կամ սատանային գրգռութենէն: Մարմնոյ կտրճութիւնը ճնշելու է պաքով, ճաղկանօք, խարազաններով, հսկմամբք և նմանօրինակ ճգնութիւններով, ինչպէս որ խոհեմութիւնը և հնազանդութիւնը կը սորվեցընեն: Ըստ մասին խորհրդոց որ կողմէն որ գան նէ, ասոնք են դեղերը, վիճակին պատշաճ զանազան կրթութեամբք զբաղիլը, աղօթքը և մտածականը: Այս կերպով աղօթք ընել պէտք է. նայն ընդ նայն զգացածիդ պէս՝ չըսեմ այնպիսի խորհրդներուն, այլ անոնց յառաջապահ գլն-

ղին դալը, երապեա՛ մտացդ թեւօք խաչելեալ Յիսուսին ապաւինելու ըսելով. Օգնէ՛ ինծի ով քաղցրագութ Յիսուս իմ, օգնէ՛ շուտով, որպէս զի չի բռնուիմ թշնամեաց ժանիքէն: Եւ երբեմն գրկելով խաչը, որմէ կախուած կը կենայ քու բարեգութ տէրդ, համբուրէ՛ շատ անգամ անոր սուրբ ոտքերուն վէրքերը խանդաղատանօք ըսելով. Ո՛վ վէրք հրաշագեղ, վէրք մաքուր, վէրք սուրբ, վիրաւորեցէ՛ք աղաչեմ աս ողորմելի և անմաքուր սիրտս, աղատելով զիս որ ձեզի դէմ չի մեղանչեմ: Զեմ ախորժիր որ մարմնական հեշտութեանց աճելու ատենը մտածականը ան նիւթերուն վրայ ըլլայ, զոր շատ հեղինակներ կ'աւանդեն 'ի դեղ այս փորձութեան, որ է մտածել այս ախտին յածութիւնը, անյագութիւնը, ու անկէ հետեւած վիշտը ու դատութիւնը, ընչից, կենաց, պատուոյ և ուրիշ նման իրաց կորուստը և վտանգը: Վասն զի ասիկայ միշտ ապահով միջոց մը չէ ատ փորձութեանը յաղթելու, մանաւանդ թէ կրնայ վնաս հասցընել. իբր զի եթէ մէկ կողմէն միտքը աս խորհուրդները կը հերքէ, մէկալ կողմէն ասիթ կուտայ մեղի, և վտանգի մէջ կը ձգէ ուրիշներուն մէջ հեշտանալու և հանելու հեշտութեանը. ուստի բուն ճշմարիտ դեղը ոչ միայն բոլորովին անոնցմէ փախչիլն է, այլ նաև ան ամէն բանէն, որ թէ և ներհակ ըլլայ անոնց, այլ մեզի զանոնք կը ներկայացնէ: Բայց մտածականդ այսպիսի բաներուն մէջ մեր խաչելեալ փրկչին կենաց և չարչարանաց վրայ ըլլայ: Եւ թէ որ մտածականիդ ժամանակը նոյն խորհուրդները

քու կամքիդ դէմ առջևդ ելլեն, և սովորակա-
նէն աւելի նեղեն զքեզ (ինչպէս դիւրաւ քեզի
հանդիպի պիտի) ասոր համար չի զարհուրիս,
և մտածակոնը ձեռքէդ չի թողուս, և ոչ իսկ
անոնց դէմ դնելուդ՝ դառնաս անոնց նայիս,
այլ ջանսա մտածականդ առաջ տանելու որչափ
որ կրնաս աւելի մտադրութեամբ, փոյթ չընե-
լով այսպիսի խորհրդներուն, որպէս թէ քու-
կինեղդ չըլլային, վասն զի անորմէ լաւագոյն
կերպ մը չիկայ ասոնց դէմ դնելու համար, թէ
և չարունակ քեզի հետ պատերազմին։ Յետոյ
մտածականդ կը լմնցնես ասոնց կամ այլ նման
խնդրուածով. Փրկէ զիս Աստուած իմ և
փրկիչ իմ թշնամիներէս քու չարչարանքիդ և
անսահման բարութեանդ պատուոյն համար.
միտքդ չի դարձընելով չար մոլութեանը, վասն
զի զանի յիշելն անգամ ազատ չէ վտանգէ։ Մի
դրաղիր երբէք վէճի այսպիսի փորձութեանց
դէմ, թէ արդեօք հաւանութիւն տուիր թէ ոչ,
վասն զի ասիկայ բարւոյն պատրուակաւ՝ ստատ-
նային խարէութիւնն է զքեզ խռովելու, և թե-
բահաւատ կամ վատասիրտ ընելու, և կամ այս-
պիսի վէճերուն մէջ զքեզ զբաղեցնելով կը յու-
սայ հեշտութեան որոգայթին մէջ զքեզ բռնե-
լու։ Անոր համար այսպիսի փորձութեանց մէջ,
(երբոր հաւանութիւնը յայտնի չէ), պարտական
ես գոհ ըլլալ, ամէն բան համառօտ կերպով
հոգևոր հօրդ խոստովանելու, հանդարտ անկից
վերջը մնալով և ապահով անոր դատաստանովը
առանց աւելի բան մը մտածելու։ Եւ փոյթ տար
հաւատարմութեամբ քու սրտիդ բոլոր խոր-

հրդները անոր բանալու, և մի՛ ամչնար և
մի՛ քաշուիր անորմէն։ Եւ եթէ ամէն մեր
թշնամեաց կռիւներուն մէջ կարօտ ենք խոնարհ-
հութեան առաքինութեանը անոնց յաղթելու
համար, ասոր մէջ այլ բաներէն աւելի պէտք
է որ խոնարհինք, որովհետև այս ախտը գրեթէ
միշտ հպարտութեան պատիժն է։ Փորձութեան
ժամանակը անցնելէն վերջը որչափ որ կարծես
թէ ազատ և ապահով ես, այսու ամենայնիւ
ամէնէն յառաջ պէտք է որ այն փորձութիւնը
պատճառող առարկաները մտքէդ հեռացընես,
թէպէտ և առաքինութեան և կամ ուրիշ բա-
րիքի նպատակաւ ուրիշ կերպ ընելու տեսնայիր,
վասն զի ասիկայ ապականեալ բնութեան խա-
բէութիւնն է, և մեր թորամանդ հակառակորդն
որոգայթն է, որն որ լուսոյ հրեշտակ մը կը
ձևանայ մութ վիհը զմեզ ձգելու համար։

ԳԼՈՒԽ Ի.

Անհոգութեան դէմ պատերազմելուն եղանակին վրայ։

Որպէս զի անհոգութեան թշնամ ծառայ
չըլլաս, որ ոչ միայն կատարելութեան ճամբան
կ'արգիլէ, այլ և քու թշնամեացդ ձեռքը զքեզ
կը մատնէ, ամէն կերպ հեսաբրբութենէ և
երկրաքարշ բերմանէ, և վիճակիդ անվայել որ
և իսկ զբաղմունքէն փախչելու ես։ Այսրմէ
վերջը ջանալու ես որ ասիկայ ամէն բարի թե-

լադրութեան, և մեծաւորացդ որ և իցէ հրամանին համաձայնի, ամէն բան անոնց հաճոյ եղած եղանակին և ժամանակին համաձայն կատարելով։

Մենակին մի ուշանար, վասն զի ան առջի յապաղման ետև երկրորդը կը յաջորդէ, և սուրբ երրորդը, և ուրիշ մէկը մէկալէն ետև, որոնց զգայութիւնը կը հակի, և առջիններէն աւելի դիւրաւ անոնց կը հաւնի, արդէն հեշտութենէն հրապուրուած ըլլալով որուն համար աւեր էր։ Որուն համար գործը կամ շատ ուշ կը սկսի, կամ իբր ձանձրացուցիչ երբեմն մէկ դի բոլորովին կը թողուի։ Եւ ասանկ քիչ քիչ ներս խօթուելով կը մտնէ անհոգութիւնը, որն որ յետոյ ան սահմանին մեզի կը հասցընէ, մինչ զի նոյն վայրկեանը յորում անորմէ մենք կապուած ենք, կ'առաջադրենք ուրիշ անգամուն փութալն ըլլալու, իմանալով ան ատենը մեր ծուլութիւնը յամօթ մեր երեսաց։

Այս անհոգութիւնը կը տարածուի ամէն տեղ, և իր թունովը ոչ միայն կ'ապականէ կամքը, գործքէն զզուեցընելով, հապա միտքն ալ կը կուրցընէ, որպէս զի չի տեսնայ թէ քանի՛ չար և անտեղի են առաջադրութիւնները ջանքով և փութով առ յապայն գործելու այն բանը, զոր ան ատենը հարկ ըլլալով կատարել, կամաւորապէս բոլորովին զանց կ'ըլլուի, կամ ուրիշ ժամանակի կը ձգուի։ Եւ բաւական չէ՞ ընելիք գործքդ արագութեամբ վճարել, այլ գործքին որպիսութեան և էութեան պահանջած ժամանակին ընելու է, և իրեն վայել ամէն փութովն,

որպէս զի ըստ ամենայնի կատարեալ ըլլայ։

Ինչու որ ջանք չէ, այլ շատ նուրբ անհոգութիւն, ժամանակէն յառաջ գործքին կանխելը, և շուտով պրծիլ անկէ վեր 'ի վերոյ ընելով, զի յետոյ հանդարտ ծուլութեան հանգիստը վայելենք, որուն մեր միտքը կպած էր, մինչդեռ շուտիպոյթ արագութեամբ գործքը կը վճարուէր։ Այս ամէն ծանր չարիք հոնկից յառաջ կուգան, վասն զի չի մտածուիր ատենին բրած բարի գործքին յարգը, և հոգւոյ պատրաստութեամբ դժուարութեանց և աշխատութեանց առաջ նետուելու, զոր նոր կրթուած զինուորներուն անհոգութեան ախտը հետը կը բերէ։ Ուրեմն յաճախ մտածելու ենք թէ՞ առ Աստուած մտաց վերացում մը միայն և իրեն պատուոյն համար ծնրադրութիւն մը աւելի կ'արժէ, քան թէ բոլոր աշխարքին գանձերը, և թէ քանի անգամ որ մենք զմեզ կը ճնշենք, կը նուաճենք մեր ախտաւոր կիրքը, հրեշտակները երկնից արքայութենէն փառաւոր յաղթութեան պսակ մը մեզի կը բերեն։ Եւ ընդ հակառակն անհոգուն Աստուած քիչ քիչ իր տուած շնորհքները կը վերցընէ, և փութաջանից կ'աւելցընէ, յետոյ մոցընելով ևս ասոնք իր ուրախարար հանգիստը։ Սկիզբը թէոր դուն այնչափ արիասիրտ չըլլաս ինչուան յօժարութեամբ աշխատութեանց և դժուարութեանց առջևն ելլես, անանկ ծածկելու ես անոնց մեծութիւնը, որ վեհերոտնեռուն դատածէն փոքրագոյն երևնան։ Քու կըրթութիւնդ գուցէ շատ ներգործութիւններ և երկար օրեր ու աշխատանք կը պահանջէ առա-

քինութիւն մը ստանալու համար, և նուաճելիք թշնամիները զօրաւոր և բազմաթիւ քեզի եւ լինան պիտի։ Սկսիր դուն գործքեր ընելու, որպէս թէ քիչ ընելիք կայ քեզի, և քիչ օրերու համար աշխատիս պիտի, և թշնամիներէն մէկուն դէմ պատերազմէ՛, որպէս թէ ալ ուրիշին հետ պատերազմելիք չունիս. մեծապէս յոյսդ դնելով Աստուած թէ անոր ալ ձեռքին օգնականութեամբը անոնցմէ աւելի զօրաւոր ես, և այս կերպով անհոգութիւնը տկարանալու կը սկսի և կը տրամադրուիս կամաց կամաց ներհական առաքինութիւնը ստանալու։

Այն բանը աղօթքին համար ևս կ'ըսեմ։ Երբեմն կրթութիւնդ մէկ ժամ աղօթք կը պահանջէ, և ասի խիստ կ'երևնայ անհոգութեանդ. սկսիր աղօթքը, որպէս թէ քառորդ մը միայն աղօթել ուզելով, և այսպէս դիւրաւ ուրիշ քառորդի մը կ'անցնիս, և անկէ կը հանիս մեացած չափին։ Եւ թէ որ աղօթքին ընթացքին՝ երբեմն երկրորդ և կամ միւս քառորդներուն ուժգին ընդդիմութիւն մը զգաս և դժուարութիւն, միջահատէ կրթութիւնդ չի ձանձրանալու համար, շարունակելով յետոյ նորէն հանդարտութեամբ կրթութեանդ թողեալ կարգը։ Այս եղանակն ալ բռնելու ես ձեռագործ վաստակներուն մէջ, երբոր շատ բաներ ընելու ես, որոնք դժուարին երևնալով անհոգութեանդ, գլխովին դուն խռովիս. այսու ամենայնիւ սկսիր քաջասիրտ պնդութեամբ և հանդարտ գործ մը, որպէս թէ քու առջևդ ուրիշ ընելիք մը չիկայ. և այսպէս փութաջան գործելով ծուլ-

թեանդ երևցուցածէն նուազ՝ աշխատութեամբ ամէն բան կ'ընես։ Եւ թէ որ վերոյիշեալ եղանակին համեմատ չի վարուիս, և յոժարութեամբ աշխատանաց և դժուարութեանց առջևը չելլես, այնպէս քու վրադ ծուլութեան սիտը կը զօրանայ, որ չէ թէ միայն աշխատանաց և դժուարութեանց դալուն՝ զոր առաքինութեանց կրթութիւնը 'ի սկզբան հետը կը բերէ երբոր ներկայ ըլլայ նէ, հապա հեռուանց քեզի տառապանք և ձանձրութիւն բերէ պիտի. միտ վախցընելով թշնամեաց վրադ յարձակմունքէն և զքեզ ընկճելէն. և քեզի երևնայ պիտի տեսնալու մէկ մը վրադ կեցած՝ կռնակիդ վրայ ձիաւորի մը պէս, որ սպառուէր մը դնէ քեզի և հրամայէ, որով նոյն իսկ խաղաղութեան ատենը անմասն պիտի ապրիս խաղաղութենէն։ Ծանիր, որդեակ իմ, թէ այս անհոգութեան սիտը իր դաղտնի մանրամասն դեղով քիչ քիչ ոչ միայն կը ցամքեցընէ մատաղատունկ արմատները, ուսկից առաքինութեանց բողբոջները պիտոր ծլէին, այլ և արդէն ստացած ուսակութեանց արմատները ինչպէս ցեցը փայտին հետ կ'ընէ, այդպէս ինքը կը կրծէ անդդայարար, և հոգևոր կենաց ներքին ուղեղը կը մաշէ. և ստանան այս միջոցով ամէն մէկուն, մանաւանդ հոգևոր բաներուն ետևէ եղողներուն դարաններ և որոգայթներ կը լարէ։ Հապա արթուն կեցիր, և հսկէ. ատեպ աղօթքի և բարեգործութեան կանխելով, մի ուշանար հարստանաց զգեստին հանդերձը պատրաստելս, երբոր պէտք է զարդարուած

գոնուիս փեսայի առլեը եկլելու համար։ Եւ ամէն օր յիշէ՛ թէ քեզի առաւօտ տուօղը, իրիկունը չի խոստանար, և իրիկունը չնորհելով չի խոստանար առաւօտը։ Ինոր համար աշխատէ՛ իւրաքանչիւր ժամուն վայրկեանները Աստուծոյ փառքին և հաճոյիցն համար անցընելու, և որպէս թէ քեզի ուրիշ ժամանակ մը չնորհուած չէ՛, մանաւանդ թէ իւրաքանչիւր վայրկենին համար մանրամասն հաշիւ պիտոր տաս Աստուծոյ։ Խօսքս կը վերջացընեմ այս ազդարարութեամբ. իրը կորսուած համարէ՛ դուն այն օրը (թէ և շատ գործքեր տեսած ըլլաս) յորում յաղթած չըլլաս անկարգ յօժարութիւններդ և անձիդ կամքը, և ոչ չնորհակալութիւն մատուցած Աստուծոյ իր անբաւ բարերարութեանցն համար, և 'ի մասնաւորի դառնակսկիծ չարչարանացն՝ զորս քաշեց քեզի համար, և հայրական քաղցր պատժին համար, երբ զքեզ վչտերու և նեղութիւններու պատուական դանձին արժանի կ'ընէ։

ԳԼՈՒԽ ԻԱ.

Աստարին զգայարանքներդ կարգաւորելուն վրայ, և թէ ինչպէս անկէ աստուածային իրաց մտածողական հնար է անցնիլ։

Մեծ զգուշութիւն և շարունակ կրթութիւն կը պահանջուի մեր արտաքին զգայութիւնները աղէկ շտկելու և կարգի դնելու համար, վասն

զի ցանկութիւնը, որ մեր ապականած բնութեան զօրաղլխի մը պէս է, չափէ դուրս հեշտութիւններ և զուարճութիւններ փնտռելու՝ կը հակի, և ինքիրմով մինակ անկարող ըլլալով անոնց հասնելու, զգայարանքներով կը վարուի իրը իրեն զինուորներովն և բնական գործիքներովն՝ անոնց առարկաները ընդունելու համար, որոնց գաղափարները հանելով և իրեն քաշելով՝ 'ի հոգին կը տպաւորէ, ուսկից հեշտութիւնը կը հետևի, որն որ իրեն և մարմնոյ հետ ունեցած խնամութեանը համար՝ սիրած կը տարածուի բովանդակ այն զգայութեանց մասին վրայ, որոնք ընդունակ են այնպիսի հեշտութեան, ուսկից կը հետևի թէ՛ հոգւոյ և թէ՛ մարմնոյ ընդհանուր ժանտախտ մը, որ ամէն բան տակնուվրայ ընելով կ'ապականէ։ Տես դուն ինքդ, և դեղը պատրաստէ։ Զգոյշ կեցիր և մի թողուր զգայարանքներուդ համարձակ ախորժած տեղերնին ազդին անդին պտըտիլ, և զանոնք մի ծառայեցըներ քեզի, ուր միայն բերկրութիւն մը, և ոչ այլ բարի վախճան մը, կամ օգուտ մը, կամ հարկ մը ստիպէ զքեզ զայն ընելու. և եթէ առաջուց չիմանալովդ՝ շատ առաջ գնացած են, ետ դարձուր զանոնք, կամ թէ անանկ կանոն դիր անոնց, որ ուր առաջուց թշուառաբար գերի եղած էին մնոտի հաճոյքներու, հիմայ ամէն մէկ առարկայէն ազնիւաւար մը կորզեն, և ներս 'ի հոգին զայն բերեն, որով ինք զինքը ամփոփած՝ կարողութեանց թեևերը տարածէ դէպ 'ի երկինքը աստուածային բաներուն մտածութեանը. զորն որ

այս կերպով կրնաս ընել։ – Երբոր առարկայ մը արտաքին զգայարանքներուդ առջևը կ'ելլէ, դուն մտքիդ աչքովը անոր մէջ գտնուած հոգին ստեղծուած իրէն զատէ, և մտմտա թէ ինքիրմով զգայութիւններուդ տակը ընկածներէն բան մ'ալ չունի, այլ ամէնը Աստուծոյ անեղին գործքն է, որն որ իր հոգւովը աներևոյթ կերպով անոր կուտայ ան էութիւնը, բարութիւնը և գեղեցկութիւնը, և անոր մէջ բոլոր բարի գտնուածը. և հոս տեղ ուրախայիր, ինչու որ քու տէրդ այսպիսի անչափ և զանազան իրայ կատարելութիւններուն մինակ պատճառն և սկիզբն է, որն որ յինքն ինքեան գերազանց կերպով բոլորն ալ կը պարունակէ, որոնք ուրիշ բան մը չեն անոր քով՝ եթէ ոչ ամենատորին աստիճան մը իր անսահման գերազանցութեանը։ Երբոր կը տեսնաս որ աչուընիդ տեսակ մը աղնիւ առարկաներ գիտելու զբաղեր են, շուտով իրենց ոչ ինչ ըլլալուն վրայ աչքդ դարձուր, մտքդ վեր վերցնելով հոն ներկայ եղող գերագոյն Արարչին, որն որ տուաւ անոնց ան էութիւնը, և անոր վրայ միայն դնելով քու զուարճութիւնդ ըսէ. Ո՛վ աստուածային էութիւն անչափ բաղձալի, որչափ կ'ուրախանամ որ դուն ամէն ստեղծուած էութեանց միակ անսահման սկիզբն ես։ Նմանապէս ծառեր, խոտեր և ուրիշ նման բաներ տեսնալու ատենդ, մտացդ աչք նկատէ թէ ունեցած կենսական կեանքերնին իրենք իրենցմէ չունին, այլ անեղևոյթ հոգիէն՝ որ ինքն մինակ զանոնք կենդանի կը պահէ, և այս խօսքը վրայ բերելով ըսէ. Ա-

հա հոս է ճշմարիտ կեանքը, որմէ որուն մէջ և որով կ'ապրին և կ'ահին բոլոր ստեղծուածները. ով որքան մեծ ուրախութեանը։ Սանկ անբան անասուններուն տեսութենէն՝ մտոգդ առ Աստուած գքեզ վեր վերցնելով, որն որ անոնց զգայութիւն և շարժումն կուտայ, ըսէ. Ո՛վ ամենազօրէ շարժող, որ ամէն բան շարժելով՝ դուն 'ի քեզ անշարժ կը կենաս, ինչչափ ինծի ուրախութիւն է քու հաստատութիւնդ և անփոփոխութիւնդ։ Եւ ստեղծուածներուն գեղեցկութենէն զուարճութիւն մը զգալուդ՝ տեսածդ չտեսած հոգիէն զատէ, և մտածէ թէ բոլոր գրսուանց երևցած գեղեցկութիւնը, մինակ աներևոյթ հոգւոյն ձիրքն է, որմէ այդ արտաքին գեղեցկութիւնը յառաջ կուգայ, և ուրախ սրտով ըսէ. Ահա անստեղծ աղբեր առուները, ահա ամէն բարեաց անսահման ծովուն կաթիլները, ո՜հ, ինչչափ 'ի խորոց սրտէս կը խընդամ և կը ճխամ, յաւիտենական անբաւ գեղեցկութիւնը մտածելով, որն որ բովանդակ ստեղծուած գեղեցկութեան սկիզբն և պատճառ է։

Ուրիշներուն վրայ բարութիւն, իմաստութիւն, արդարութիւն, և այլ առաքինութիւններ գիտելով, վերը յիշուած զատումը ընելէդ վերջը, ըսէ. Ո՛վ ամենառատ զանձ առաքինութեանց, կը խնդամ որ քեզմէ և քեզմով կը բղխի ամէն բարիք, և ամէն կատարելութիւն քու կատարելութեանդ քով ոչ ինչ է։ Շնորհակալ եմ քեզմէ ով տէր, այս և ուրիշ ամէն բարեաց համար զոր ընկերոջս՝ ընդ. յիշէ, ով

տէր, աղքատութիւնս և մեծ կարօտութիւնս (այս ինչ) առաքինութեան։ Այս բանի մը ձեռք զարնելու ատենդ, մտածէ թէ Աստուած այն գործին առջի պատճառն է, և դուն ուրիշ բան չես եթէ ոչ անոր կենդանի գործիք մը, որուն միտքդ վերցընելով՝ այսպէս ըսէ. Ո՜րչափ մեծ է սրտիս ուրախութիւնը, տէր ամենակալ, առանց քեզի բան մը չկրնալուս ընել, մանաւանդ թէ դուն ես ամէն բանին առջի և գլխաւոր գործօղը։ Կերակուր կամ ըմպելիք մը առնելուդ՝ մտածէ թէ այն համը տուօղը Աստուած է, և անով միայն ամէն բանին մէջ ուրախանալով, ըսէ. Ուրախացէ՛ սնձն իմ, ինչու որ քու Աստուածդ դուրս չիկայ ճշմարիտ բերկրութիւն, և անով միայն կրնաս ամէն բանին մէջ բերկրութիւն վայելել։ Իսկ թէ որ հաճոյական անուշ հոտ մը հոտուրտալ ախորժիս, այն բերկրութեանը վրայ մի՛ կայնիր, այլ միտքդ առ Աստուած դարձուր, որմէ սկիզբն ունի այն անուշահոտութիւնը, և ատոր վրայ ներքին մխիթարութիւն մը զգալով ըսէ. Տուր ինծի ով տէր, զի ինչպէս որ ես կ'ուրախանամ քեզմէ քաղցրութիւն յառաջ գալուն համար, այդպէս հոգիս ամէն երկրային ցանկութիւնը մէկ զի թողլով, վեր քովդ երկինք ելլէ, անուշ հոտ բուրելով քու աստուածային հոտոտելեացդ։ Երբոր ներդաշնակաւոր երաժշտութեան քաղցր եղանակներ և երգեր լսես, միտքդ առ Աստուած վերցուցած ըսէ. Ո՜րչափ ուրախութիւն է սրտիս տէր իմ և Աստուած իմ անսահման կատարելութիւններուդ համար, որոնք ամէն-

քը մէկ տեղ ոչ միայն քեզի գերագոյն երկնաւորաց արհեստական երգերուն միաբանութիւն կը ձևացընեն, այլ նաև երկնից հրեշտակներուն, և ամէն արարածներուն՝ զարմանալի դաշնակութիւն մը կը մատուցանեն։

ԳԼՈՒԽ ԻԲ.

Թէ ինչպէս նոյն իսկ իրերը մեզի միջոց են մեր զգայարանքները կանոնի տակ դնելու, առաջ անցնելով մտածուրեան Բանին մարդեղութեանը, անոր կենաց և չարչարանաց խորհուրդներուն։

Ահա վերը քեզի ցուցուցի թէ ինչպէս մենք զգայական իրերէն մեր միտքը կրնանք վեր հանել աստուածային բաներուն խորհրդածութեանը։ Հիմայ եղանակ մը սորվէ նոյն իրերէն շարժաւիթ առնելու մարմնացեալ Բանին մտածութեանը, մոմոալով անոր կենաց և չարչարանաց ամենասուրբ խորհուրդները։ Այս վախճանին աշխարքին ամէն բաները կրնան ծառայել, անոնցմով մտածելով՝ ինչպէս որ վերը ըսի, զանսահմանն Աստուած, իբրև միակ և առաջին պատճառ անոնց բովանդակ ունեցած էութեանը, գեղեցկութեանը և աղնութեանը. և ատրմէ անցնելով յետոյ մտածելու թէ որչափ մեծ և անբաւ է անոր բարութիւնը, որ միակ սկիզբն և տէր ըլլալով բոլոր ստեղծուածոց՝ ուզեց խոնարհիլ, ծառայի կերպարանքը

յանձն առնելով և մարդուն համար չարչարե-
ցաւ և մեռաւ, թոյլ տալով որ նոյն իսկ իր ա-
ջոյն արարածները իրեն դէմ վառուին զի՛ք 'ի
խաչ հանելու համար: Տեսակ տեսակ բաներ
կան որ այս սուրբ խորհուրդները մեր մտաց աչ-
քերուն առջեւը կը նկարեն, ինչպէս զէնք, փէ-
չուններ, խարազաններ, եղէգներ, սիւներ,
պսակներ, դամբ, ուռեր և այլ այսպիսիներ՝
որոնք անոր չարչարանաց գործիքներ եղան: Ադ-
քատին իլեւանները յիշեցընեն պիտի մեզի Բեթ-
ղեհեմի այրը և տեառն մերոյ մուրը: Երբոր
անձրեւէ, մտքերնիս ձգենք այն աստուածային
արիւնոտ անձրեւը, որ Գեթսեմանի պարտիզին
մէջ իր ամենասուրբ մարմնէն կաթելով գե-
տինը ողողեց. քարերը տեսնալու ատենին՝
առջեւնիս բերենք պիտի իր մահուան ժամանա-
կը պատռուած վէմերը, երկիրը՝ որն որ ան ա-
տենը դղրդած ռասանեցաւ. արեւը՝ որն որ մը-
թընցաւ տխուր կերպով, և ջուրը տեսնալով՝
յիշենք պիտի զինուորին տէգով խոցուած անոր
ամենասուրբ կողէն ելած ջուրը: Ասանկ ալ կ'ը-
սեմ ուրիշ նման իրաց վրայ: Գինի խմելով և
կամ ուրիշ ըմպելիք մը, միտքդ բե՛ր քու տեառնդ
տրուած քացախը և լեղին: Եթէ հոտերուն ա-
նուշութիւնը զքեզ զուարթացընէ, մտացդ թե-
ւերովը արտորսա՛ Գողգոթա լեռը, մտածելով
մեռած գիակներուն գարշահոտութիւնը՝ զոր
ինքը ան ատեն զգաց: Զգեստդ հագնելով՝ յի-
շէ՛ թէ յաւիտենական Բանն մարդու մարմին
առաւ իր աստուածութիւնը քեզի հագցընելու
համար: Հանուելուդ՝ միտքդ բե՛ր բարեգութ-

թիւնդ, որ մերկ քեզի համար ձաղկանք քա-
շեց և խաչին վրայ գամուեցաւ: Յաղթվրդեան
շնկոց և աղաղակներ լսելուդ՝ յիշէ՛ ան մե-
լեզնեալ խուժադուժ ամբոխին ձայները, Ի
խաչ հան, 'ի խաչ հան, բարձ 'ի մէնջ, բարձ
'ի մէնջ, որոնք զոռալով անոր աստուածային
լսելիքները կը հնչեցընէին: Յամացուցին ամ-
մէն անգամ զարնելուն՝ յիշէ՛ Յիսուսի սրտին
ան խղճալի զարնուիլը. զոր յանձն առաւ
զգալու Գեթսեմանի պարտիզին մէջ, երբոր
սկսաւ վախնալ իր մտիկ չարչարանքէն և
մահուանէն. կամ թող երևնայ քեզի լսելու ու-
ռերուն զարնուածքը, որով գամուեցան խաչին
վրայ անոր ձեռաց և ոտից երկնատեղծ թա-
թերը: Որ և իցէ առթի մէջ որ թէ քուկին և
թէ այլոց տրտմութիւնը և ցաւերը ներկայացը-
նեն՝ մտածէ՛ թէ ոչինչ են բաղդատութեամբ ան-
լուսնդակելի վիշտերուն՝ որոնք քու տեառնդ
հոգին և մարմինը խոցեցին և վշտացուցին:

ԳԼՈՒԽ Ի Գ.

Ուրիշ եղանակներուն վրայ մեր զգայարանքները կանոնաւորելու համար դիմացնիա եղած զանազան առիթներուն համեմատ:

Ինչուան հոս տեսանք թէ ինչպէս զգայական
իրերէն՝ աստուածային իրաց և մարմնացեալ
Բանին խորհրդոյն մեր միտքը վերցընելու ենք.
հիմայ ուելցընենք պիտի քեզի հոս ուրիշ եղա-

նակներ զանազան մտածականներ քաղելու անկէ. վասն զի ինչպէս որ տարբեր են իրարու մէջ հոգւոց իմանալի ճաշակները, ասանկ շատ և զանազան կերակուրներ անոնց պատրաստուին: Աստիկայ պարզամիտ անձանց ծառայելէն 'ի զատ, նաև բարակ խելք ունեցողներուն և հոգւոյ ճամբուն մէջ առաջ գնացողներուն կ'օգտէ, որ յորում և իցէ վիճակի գտնուին, միշտ հաւասար տրամադրեալ չեն և պատրաստ բարձրագոյն հայեցողութեանց: Այսչափ տարբեր իրաց մէջ ամենեւին չփոթելու չես, թէ որ խոհեմութեան կանոններուն և ուրիշին խորհրդին հետեւիս, ինչպէս կը յուսամ թէ խոնարհութեամբ և վստահութեամբ կը հետեւիս, ոչ միայն ասոր, այլ ուրիշ ամէն խրատներուս մէջ զոր քեզի ուղղեմ պիտի: Աշխարքէն այնչափ յարգած և տեսութեան գեղեցիկ իրեր նկատելուդ, մտածէ՛ թէ ամէնքը անարգ են և կղզղանք համեմատութեամբ երկնաւոր ճոխութիւններուն, որոնց խորունկ սրտէդ հառաչէ մեծ փափաքով՝ արհամարհելով աշխարքին բոլոր բաները: Դէպ 'ի արեւը աչուընդ դարձնելով՝ մտմտա թէ անորմէ աւելի լուսաւոր և գեղեցիկ է հոգիդ՝ թէ որ ստեղծողին ընդքին մէջը ըլլայ, ապա թէ ոչ՝ դժոխքի խաւարէն աւելի մութ և գարշելի է: Հայելով վեր 'զքեզ ծածկող երկնից՝ հոգւոյդ իմանալի աչուընդով զննէ՛ վերնագոյն հրեղէն երկինքը, և հոն նկատէ՛ պատրաստուած տեղը քեզի օթարան յաւիտենական երջանկութեան, եթէ անմեղ կեանք մը անցընես այս աշխարքը: Թռչուններ-

բուն ճռուողելը լսելուդ՝ և կամ այլ երգեր, վերյուր միտքդ դէպ 'ի երկինքը, ուր հրեշտակները պար բռնած կ'երգեն Աստուծոյ Աթոռին, և աղաչէ զԱստուած որ արժանի ընէ զքեզ անոնց հետ խառնուելու, միշտ մէկտեղ անոր փառքը երգելու համար:

Իմանալու ատենդ թէ Աստեղծուածի մը գեղեցկութեան սիրոդ տարուեր է, մտոք նայէ հոն պահուըտած դժոխային օձը բոլորովին պատրաստ և մտադիր զքեզ սպաննելու, կամ զէթ վիրաւորելու, որուն դէմ ասանկ գոչէ. Ո՛վ անիծեալ օձ, ինչու նենգութեամբ զիս կլլելու պատրաստ կեցեր ես: Յետոյ առ Աստուած դառնալով ըսէ՝. Օրհնեալ տէր Աստուած իմ, որ թշնամւոյս նենգութիւնը խայտառակեցիր և անոր կատաղի ժանիքէն իմ անձս կորզեցիր: Եւ ան բերկրութենէն շուտով փախիր խաչեցելոյն վերքերուն, անոնց միտքդ սաստիկ սեւեռած, և մտածելով դառն չարչարանքները զորոնք քաշեց մեր տէրը իր ամենասուրբ մարմնոյն մէջ մեղքէն զքեզ ազատելու, և մարմնական հեշտութիւնները քեզի ատելի դարձնելու համար: Ուրիշ եղանակ մը կը յիշեցընեմ քեզի այս վտանգաւոր բերկրութենէն փախչելու համար, այս է՝ աղէկ մը խորունկը մտնել նայիլ թէ հիմայ քեզի այնչափ բերկրեցուցիչ երեւցած առարկան ի՞նչ պիտոր դառնայ մահուանէն վերջը: Ճամբան երթալուդ՝ յիշէ՛ թէ իրաքանչիւր ոտից քայլափոխին երթալով կ'երթաս և մահուան կը մօտիկնաս: Այսանկ ալ օդը ճախրող թռչուններն որ տեսնես, կամ

արընթաց ջուրերուն հոսանքը, մտածէ թէ աւելի արագութեամբ կենդ կ'երթայ կը թռչի իր վախճանին հասնելու։ Մրրկայոյզ հովեր փչելու որ ըլլան, կամ երբոր գուռացող ամպերուն մէջէն կայծակներ փայլատակեն, արթընցուր միտդ սարսափելի դատաստանին օրուան յիշատակովը, և չքած երկրպագութիւն ըրէ Աստուծոյ անոր գթութիւնը աղաչելով, որպէս զի քեզի շնորհք և ժամանակ պարգևէ ապէկ մը պատրաստուելու իր աստուածային ահեղ մեծվայելչութեան առջևը ան ատենը ներկայանալու համար։

Անձիդ դիմացը ելլող զանազան դէպքերուն մէջ, այս կրթութեամբ վարուելու ես, զոր օրինակ, ցաւէ մը կամ տրամութենէ մը բռնուելուդ, կամ տաքութիւն, պաղութիւն, և կամ ասոնց նման բաներ զգաս, ան յաւիտենական կամքին միտդ բարձրացուր, որն որ քու օգտիդ համար կը հաճի որ դուն այնպիսի վշտեր կրես այն չափով և այն ժամանակին։ Ուստի ուրախ ըլլալով Աստուծոյ քեզի ցուցցած սիրուն և պատեհ առթին վրայ անոր ծառայելու ամէն բաներին մէջ որ իրեն աւելի հաճոյական է, որտանց ըսէ. Ահա յիս Աստուծոյ կամքը կատարուեցաւ, որն որ 'ի յաւիտենից մեծ սիրով անօրինեալ սահմանեց որ ես հիմայ այս վիշտը կրեմ. միշտ գովեալ ըլլայ իմ ամենաբարի տէրս։

Երբոր մտքիդ մէջ բարեպաշտութեան խորհուրդներ կը յղանան, շուտով Աստուծոյ դարձիր և անորմէ միայն ձիրքը հանձնալով շնորհակալ եղիր։ Երբոր գիրքեր կարդաս, ան խօսքերուն տակ քու տէրդ տեսնելու երևնայ քեզի, և ընդունէ խօսքերը աստուածային բերնէն առանդած պատգամի մը պէս։ Սուրբ խաչը տեսնելուդ՝ մտածէ թէ անիկայ գինուորութեանդ դրօշակն է, որմէ եթէ հեռու կենաս՝ քու անգութ թշնամիներուդ ձեռքը կը մատնուիս. և եթէ հետևիս անոր, երկինքը կ'երթաս փառաւոր աւարով լեցուն։

Աստուածածին կուսին Մարիամու սիրուն պատկերը տեսնելուդ՝ սրտովդ դարձիր անոր որ վեր արքայութիւնը կը թագաւորէ, շնորհակալ եղիր անոր՝ միշտ քու Աստուածդդ կամքին ծառայելու պատրաստ գտնուելուն, որ ծնաւ, դիեցուց, և տիեզերաց փրկիչը սնուց, և մեր հոգևոր պատերազմին մէջ մեզի օգնելէն և բարերարութիւն ընելէն ետ չի կենար։ Սրբոց պատկերքները և արձանները թող ներկայացընեն քեզի այնքան քաջամարտիկ ախոյեաններ, որոնք անյաղթելի արիութեամբ ընթացքնին կատարելով քեզի ճամբայ բացին, որ դուն ալ նոյնը քալելով՝ հասնիս արքայութեան նահանգիստը, անոնց հետ մէկտեղ անթառամ փառաց պսակը ժառանգելու։ Եկեղեցիներ տեսնելուդ՝ ուրիշ ջերմեռանդ խորհրդածութեանց հետ, մտածելու ես թէ քու հոգիդ Աստուծոյ տաճար է, և անոր համար իրրև անոր ընակարան՝ պահելու ես սուրբ և անարատ։

Որ և իցէ ժամանակ հրեշտակային ողջունարութեան նշանին երեք զարնուածքը լսես նէ, կրնաս յետագայ համառօտ մտածութիւնները ընել, որոնք համաձայն են սրբազան խօսքե-

ր

րուն իմաստին՝ զոր սովորութիւն է ասել այս երկնային պզտիկ աղօթքներուն ամէն մէկէն առաջ։ Այլինչանը հնչելուն շնորհակալ եղէր Աստուծոյ ան պատգամաւորութեան համար, որ երկնքէն երկիր զրկեց, և մեր փրկութեան սկիզբը եղաւ։ Երկրորդ նշանին Մարիամ կուսին հետ ուրախակից եղէր իր գերազանցութիւններուն համար, որոնց՝ անզուգական խորին խոնարհութեանը պատճառաւ վեր ելած բարձրացաւ։ Երրորդ նշանին՝ ամենասուրբ Մօրն և Գաբրիել հրեշտակապետին հետ մէկտեղ խոնարհած երկրպագութիւն ըրէ յարգանդ Կուսին նորյղացեալ աստուածային մանկանն։ Եւ մի՛ մոռնար քիչ մը գլուխդ խոնարհեցընել 'ի նշան յարգութեան իւրաքանչիւր զանգակին զարնելուն, և երրորդին քիչ մը աւելի։ Այս մտածութիւնները բաժնուած և որոշուած զանգակին երեք անգամ զարկած նշաններուն համար, ամէն ժամանակի կը ծառայեն։ Յետագաները իրիկուն, առտու և կէս օրուան համար կը սահմանուին, և տեառն չարչարանաց կը վերաբերին, պարտական ըլլալնուս համար ստէպ յիշելու այն ցաւերը, զորոնք ան ատենը մեր տիրուհին քաշեց Որդւոյն ցաւոցն համար, և ապերախտ կը գլտնուինք եթէ զանց ընենք։

Իրիկունը միտքդ բեր ամենամաքուր Կուսին սրտին մորմոքուիլը՝ Որդւոյն արեան քրտինքին, պարտիզին մէջ բռնուելուն, և բոլոր ան գիշերը իր օրհնեալ Որդւոյն կրած ներքին ցաւերուն համար։ Առտուն անոր աղեղորով ցաւերուն ցաւակից եղէր, իր Որդւոյն Պիղատոսի և

Հերովդէսի ատեանը մատնուելուն համար, անոր մահապարտութեան վճռոյն, և խաչին ծանրաբեռն փայտը ուսը չալկելուն։ Կէս օրը խորունկ մտածէ ցաւոց սուրը որ թափանցած խոցեց անմխիթար մօրը սիրտը, Որդւոյն խաչելութեան և մահուան ատենը, և ամենասուրբ կողին զինուորէն սէգով անողորմ խոցուելուն համար։ Այս սրբոյ Կուսին ցաւոց մտածութիւնները կրնաս կատարել սկսելով հինգշաբթի օրուան երեկոյէն՝ ինչուկ շաբաթ օրուան կէս օրը, իսկ մնացածները ուրիշ օրերը։ Բայց ասի առանձին քու ջերմեռանդութեանդ կը յանձնեմ և պատեհ առիթներուն զոր թոյլ տան պիտի քեզի արտաքին իրերը։ Զգայարանքդ կանոնի տակ դնելու եղանակը քեզի համառօտելով, պատրաստ և արթուն կեցիր, անանկ որ բոլոր իրաց կամ դիպուածներուն մէջ, չէ՛ թէ զանոնք ախորժելուդ կամ անոնցմէ զզուելուդ, այլ միայն Աստուծոյ պարզ կամքէն յորդորուիս և շարժիս զանոնք զրկելու, կամ խորշելու անոնցմէ ինչպէս որ Աստուած կ'ուզէ։ Եւ գիտցիր թէ ըզգայարանքներդ կառավարելու վերը գրուած եղանակները քեզի չի տուի, որպէս զի անոնցմով զբաղիս, միշտ գրեթէ պարտական ըլլալդ միտքդ ժողված առ Աստուած վերցընելու, որն որ կ'ուզէ թէ յաճախ ներգործութիւններով թշնամիներուդ և մոլեկան կրիցդ յաղթելու փոյթ տանիս, թէ ընդդիմանալով անոնց, և թէ առաքինութեանց հակառակ կրթութիւններով. այլ քեզի ասոնք աւանդեցի, որպէս զի հարկը ստիպելուն՝ կարող ըլլաս գործադրել։

Վասն զի գիտնալու ես, թէ քիչ օգուտ կը քաղուի երբոր մէկ մը շատ կրթութեանց ձեռք զարնէ, թէպէտև իրենք իրենցմէ բարի և գովելի ըլլան, բայց իրր 'ի բազումս մտքի չիմաստութիւն, անձնասիրութիւն, փոփոխամտութիւն և սատանայի որոգայթ են։

ԳԼՈՒԽ ԻԴ.

Լեզուն կանոնելու եղանակին վրայ։

Արդուն լեզուն մեծապէս շտկուելու և սանձուելու կարօտ է, վասն զի ամէն մէկը հակամէտ է անի արձակ համարձակ արձրկելու և թողլու խօսելու մեր զգայութեանց յանէտ բերկրեցուցիչ բաներուն վրայ։ Շատախօսութիւնը շատ անգամ հպարտութենէ ծագումն ունի, որով մենք զմեզ կը համոզենք թէ շատ գիտենք. և հաճելով մեր անձնական գաղափարներուն, կը ջանանք աւելորդ կրկնաբանութիւններով զանոնք ուրիշներուն միտքը խօթելու, վարժապետի հեղինակութիւն մը անոնց վրայ ստանալ ուզելով, որպէս թէ անոնք մեզմէն դաս առնելու կարօտ են։ Հնարաւոր չէ քիչ խօսքերով շատախօսութենէն ծագած չարիքները բացատրել։ Շատախօսութիւնը ծուլութեան մայրն է, տգիտութեան և յիմարութեան հետևութիւն, ստութեանց պաշտօնեայ, և բամբասանքի դուռն և եռանդեան նուազութիւն։ Շատախօսութիւնը մոլեկան կրից այժ և

կարօղութիւն կ'ընծայէ, որով յետոյ լեզուն կը շարժի շարունակելու աւելի դիւրութեամբ անխոհեմ զուրցուածքը։

Մի երկնչիր խօսակցութիւնդ քեզի բռնի ականջ կախողին հետ՝ որպէս զի զինքը չի ձանձրացնես. և նոյն կերպով վարուէ քեզի ականջ դնողին հետ, որպէս զի չափաւորութեան սահմանն ու օրէնքը չանցնիս։ Խիստ և բարձր ձայնով խօսելէն փախիր, վասն զի երկուքն ալ պարսաւելի են և հպարտութեան և ոնայնասիրութեան ցոյց։ Ամենևին քու վրադ և կամ քու ազգականացդ գործերուն վրայ մի խօսիր, եթէ ոչ սոսկ առ հարկի, և որչափ որ ձեռքէդ կուգայ համառօտ և քիչ կապելով։ Երբոր տեսնաս թէ մէկ մը իրեն վրայ չափէ դուրսկը խօսի, ուշադրեցէ՛ անկից բարի օրինակ մը հանելու, բայց մի՛ հետևիր երբեք, թէ և անոր խօսքերը սեպհական խոնարհութեան և անձին ամբաստանութեան դիտումն ունենան։ Որչափ որ կրնաս կարճ կապէ՛ խօսքը քու ընկերոջդ և անոր վերաբերած բաներուն վրայ, 'ի բաց առեալ երբոր հարկը կը սափրէ վրան լաւ խօսելու։ Շերթունքդ յօժարութեամբ Աստուծոյ վրայ խօսին սիտի և լեզուդ մասնաւորապէս անոր սիրոյն և բարութեանը վրայ, այլ ասոր մէջ ալ վախով և զգուշութեամբ ջխալելու, և աւելի քեզի հաճելիըլլայ մտադիր կենալու ուրիշ մը խօսելու որ ըլլայ, ժողվելով սրտիդ շնչմսրանը անոր խօսքերուն արդիւնքը։ Իսկ ուրիշ խօսքերուն նկատմամբ՝ մինակ ձայնին հնչումը ականջդ հասնի, և միտքդ վերացեալ առ Աստուած, և եթէ

պէտք ըլլայ՝ խօսողին ականջ դնելու է հասկը-
նալու և պատասխան դարձընելու համար. ա-
սոր համար զանց մի՛ ըներ իմանալի աչքդ դէպ
'ի երկինք վերցընելու, ուր որ ստեղծողդ կը
բնակի, և գիտէ անոր բարձրութիւնը, ինչպէս
ինքը միշտ կը խնամէ քու նուաստութիւնդ։

Սիրոդ ընկած բաները ըսելու համար լե-
զուովդ դուրս հանելէն յառաջ, անոնք նախ ա-
ղէկ մը քննէ, ինչու որ շատերուն վրայ դիտես
պիտի որ լաւագոյն կ'ըլլար թէ դուրս յայտնած
չըլլայիր։ Բայց դարձեալ ազդ կ'ընեմ քեզի թէ
շատ հեղ խօսելու պատշաճ դատածդ՝ լաւագոյն
էր զայն լռութեան տակ պահելը, զոր խօսելու
առիթը անցնելէն վերջը ճանչնաս պիտի։

Որդեակ իմ, լռութիւնը հոգևոր պատերազ-
մին մէջ զօրաւոր ամրոց մըն է, և յաղթու-
թեան ատոյգ յոյս։ Լռութիւնը բարեկամ է ան-
ձին վրան վստահ չեղողին, և Աստուծոյ ապաւի-
նողին, և սուրբ աղօթից պահապան է և ա-
ռաքինութեանց կրթութեանը աքանչելի օգնա-
կան։ Լռութեան գաղտ վարժեցընելու համար,
ստէպ շատախօսութեան վնասները և վտանգ-
ները մտմտա, և լռութեան մեծամեծ բարիք-
ները. և սիրէ այս առաքինութիւնը, և միջոց մը
ժամանակ (վարժութեան համար) լռէ, նաև
ուր որ դէշ չէր խօսելը. միայն թէ ասիկայ ո՛չ
քեզի և ո՛չ այլոց 'ի վնաս ըլլայ։ Այսոր համար
օգուտ կ'ընէ քեզի ուրիշներուն կենակցութե-
նէն հեռու կենալը, վասն զի մարդիկներուն
տեղ հրեշտակները՝ սուրբերը և նոյն իսկ զԱ-
ստուած ընկերակից կ'ունենաս։ Վերջապէս յի-

չէ՛ զիմացդ կեցող ահռելի պատերազմը՝ ուր
տեսնալով թէ որչափ քեզի հարկ կայ գործելու,
ալ կը յօժարիս աւելորդ խօսքերէն հրաժա-
րելու։

ԳԼՈՒԽ ԻԵ.

*Թէ աղէկ պատերազմողս հանար դշնամիներուն
հետ՝ Քրիստոսի զօրականն պարտական է կրր-
ցաժին չափ խռովութիւններուն և սրտի ներդութիւնին
փախչիլ։*

Ինչպէս որ սրտի խաղաղութիւնը կորսնցընե-
լու ժամանակնիս, որչափ որ կարող ենք պար-
տական ենք ջանալ զայն նորէն ստանալու, այդ-
պէս գիտնալու ես թէ չի կրնար պատահար մը
հանդիպիլ աշխարքի վրայ որ օրինապէս կարող
ըլլայ մեզմէ անի վերցընել կամ խռովել։

Այո՛, մեր անձնական մեղաց վրայ ցաւելու
ենք, բայց հանդարտ ցաւով մը, վերը շատ տեղ
նշանակած եղանակին համեմատ. ասանկ ա-
ռանց հոգւոյ խռովութեան մը սիրով կարեկից
ըլլալու է որ և իցէ մեղաւորին, և գէթ սրտով
արցունք թափելու է անոր մեղքերուն վրայ։
Նկատմամբ ուրիշ ծանր և չքաշուելիք փորձանք-
ներուն, ինչպէս հիւանդութիւն, վերք, մերձա-
ւոր ազգականաց մահը, ժանտախտ, պատե-
րազմներ, հրդեհներ, և այլ նման չարիք, թէ-
պէտև հասարակօրէն աշխարհասէրներէն մեր-
ժուած են բնութեան տաղտկալի ըլլալուն,
այսու ամենայնիւ Աստուծոյ ներքովը ո՛չ միայն

ճանչնալ բուն չիտակ համբան և առաքինութեան ապահով շաւիղը։ Մեր թշնամին որ հոգւով չափ կ'ատէ այս խաղաղութիւնը, իբրև տեղ մը ուր հոգին սուրբ կը բնակի մեծամեծ սքանչելիք գործելու համար, շատ անգամ բարեկամաբար փորձ կը փորձէ մեզմէ հանելու զայն զանազան բաղձանքներուն ձեռքով ոլոնք բարւոյ երևոյթ մը ունին, որուն լարած խաբէութիւնը 'ի մէջ այլ նշանաց ասորմէ կը ճանչցուի եթէ մեր սրտին խաղաղութիւնը վերցընէ։ Ուստի այնպիսի վնասի առաջքը առնելու համար, երբոր դէտը քեզի նշան և ձայն տայ նոր ծագած բաղձանքին, անոր դիմացը սրտիդ դուռը փակէ և մի՛ բանար, ինչուան որ յառաջ ազատ որ և իցէ յատկութենէն և կամքէն՝ չիներկայացնես զայն Աստուծոյ, որուն խոստովանելով քու կուրութիւնդ և տգիտութիւնդ, թախանձագին աղաչէ՛ զինքը որպէս զի իր լուսովը քեզի ըլլս տայ գիտնալու թէ ասի իրմէ՞ այդեօք թէ հակառակորդէն յառաջ կուգայ, և երբ կրնաս նէ և զիմէ՛ քու հոգւոր հօրդ դատաստանին։ Եւ թէ և բաղձանքը Աստուծմէ ըլլայ, անի 'ի գործ դնելէն յառաջ ջանա՛ քու եռանդդ ճնշելու, վասն զի այդպիսի գործքին նախընթաց մահացուցումը աւելի հաճոյական է Աստուծոյ քան թէ բնութեան փափքովը եղած ըլլար, մանաւանդ երբեմն նոյն գործքէն աւելի հաճելի է իրեն մահացուցումը։ Այդպէս քեզմէ 'ի բաց մերժելով չար բաղձանքները, և 'ի գործ չի դնելով բարի յօժարութիւնները, ինչուան որ յառաջ չի զսպես բնական

զանոնք ուզել կրնանք, այլ նաև 'յարգել, իբրև արդար պատիժ չարագործներուն, և բարեբերուն առաքինութեանց պատճառ, վասն զի այս նկատման համար ևս մեր Տէրը կը հաճի, որուն կամքին մենք հետևելով այս աշխարքիս այնչափ դառնութեանց և հակառակութեանց մէջ կեանքերնիս անցնենք պիտի հանդարտ և անխռով։ Եւ ասոյդ գիտցիր թէ որ և իցէ մեր խռովութիւնը և նեղութիւնը անոր աստուածային աչաց անհաճոյ են. վասն զի ինչ որ ըլլայ անկատարութենէն անմասն չէ, և միշտ անձնասիրութեան դառն արմատ մը կը ծագի։ Բայց միշտ արթուն և պատրաստ դէտ մը կայնեցընելու ես, որ ճանչնալուն պէս թէ իր մը կարող է զքեզ խռովել և նեղել, շուտով քեզի նշան մը տայ, զէնքով զքեզ պաշտպանելու համար, մըտածելով թէ բոլոր այն չարիք և այլ ատանց նմանները, թէպէտև դրսանց ասանկ երևնան, բայց իսկապէս չարիք չեն, և մեզմէ հանել չեն կրնար ճշմարիտ բարիքները, և թէ բովանդակը Աստուած կը կարգէ և թոյլ կուտայ ըստուած ուղիղ վախճաններուն համար և կամ ուրիշ մեզի անծանօթ եղծղներուն, թէ և անարկայ արդար և սուրբ ըլլան։

Այսանկ որ և իցէ ևս ձախորդ դիպուածի մէջ հանդարտ և խաղաղ անցընելով մեր կեանքը՝ յառաջ կ'երթանք 'ի բարին. ապա թէ ոչ, ամէն մեր կրթութիւնը քիչ կամ բան մը չի պտղաբերէր։ Թող թէ անհանգիստ սիրտ մը՝ միշտ թշնամեաց զանազան նեռեր զարնելու նշանն է. և ասանկ վիճակի մը մէջ մենք չենք կրնար բու

շարժմունքները, խաղաղ և ապահով կը պահեն սրտիդ ամրոցը։ Եւ բոլորովին խաղաղ պահելու համար, պէտք է նաև պաշտպանել զանի և պահպանել յանդիմանութիւններէն և ինքիր դէմ խղճի տագնապէն, որոնք երբեմն ստատնայէն յառաջ կուգան, թէ և (վասն զի կ'ամբաստանեն քեզի յանցանք մը) կը կարծուին որ Աստուծմէ են։ Անոնց պտուղներէն իրենց ծագումը ճանչնաս պիտի։ Թէ որ դքեզ կը խոնարհեցընեն, բարեգործութեանց մէջ փութալան կ'ընեն, և քեզմէ չեն վերցներ Աստուծոյ վստահութիւնը, շնորհակալութեամբ հանդերձ պարտական ես իրրև Աստուծոյ ձեռքէն ընդունելու։ Բայց եթէ դքեզ տակնուվրայ կ'ընեն և կը վհատեցնեն, յոյսդ կը կըրեն, բարեգործութեանց մէջ դանդաղ և ծոյլ կ'ընեն, անուշտ բանէ որ ատոնք հակառակորդէն յառաջ կուգան, բայց անոնց անկամ չի կախելով ետ մի կենար սովորական կրթութենէդ։ Եւ որովհետև բայ 'ի վերը ըսածէս՝ հասարակորէն մեր սրտին մէջ ամբոխմունք կը պատճառեն ներհական պատահարներէն, այսպիսի հարուածներէն պատսպարուելու համար, երկու բանի կարօտութիւն ունիս։ Մէյմը մտածելու և տեսնելու ես թէ այն փորձանքները որոնն հակառակ են, հոգւոյ թէ անձնասիրութեան և սեպհական յաժարութենց։ Թէ որ անձնասիրութեանդ և սեպհական յաժարութենց հակառակ են, որոնք առաջին և գլխաւոր թշնամի են, հակառակ և թշնամի կանչելու չես զանոնք, այլ Աստուծոյ բարձրելոյ

շնորհացն և նպաստներուն տեղ բանելու ես, ուստի զուարթ սրտով և շնորհակալութեամբ ընդունելու ես զանոնք։ Իսկ հոգւոյ հակառակ ըլլանիլ, ատոր համար սրտի խաղաղութիւնը կորսնցնելու չէ, ինչպէս յետագայ գլխին մէջ քեզի պիտի սորվեցընեմ։ Երկրորդ՝ պէտք է որ առ Աստուած միտքդ վերցնես, և կուրօրէն և առանց ուրիշ բան մը գիտնալ ուզելու ամէն բան ընդունիս աստուածային նախախնամութեան գթած ձեռքէն, որպէս տուրք զանազան բարեաց լեցուն, և թէ դուն ան ատենը զայն չես ճանչնար։

Գ. ԼՕ. ԻԽ. ԻԶ.

Թէ ինչ ընկրուս ենք վերք ընդունիլս ժամանակին։

Երբոր վերք ընդունիս յանցանքի մը մէջ սահելուդ համար առ տկարութեան կամ գուցէ երբեմն կամաք և չարութեամբ, ատոր համար մի վհատիր և վրդովիր, այլ դարձիր շուտով առ Աստուած և անոր ըսէ. Ահա տէր իմ, ես յանցութեանս որպիսութեանը համեմատ գործեցի, և ինձմէ կինալէն 'ի զատ ուրիշ բանի սպասելու չէ։ Եւ հոս քիչ մը կանգ առած՝ աչացդ առջևնուաստացիր, յաւէտ զԱստուած վշտացնելուդ, և առանց խռովելու՝ քու մոլեկան սխտերուդդէմ բարկացիր, և գլխաւորապէս անկմանդ պատճառ եղողին. յետոյ վրայ բեր. Հոս ալ չէի

կայնիր եթէ դուն ով տէր, բարութեան աջվդ զիս չի բռնէիր։ Յայտնէ՛ հոս իրեն չնորհակալութիւնդ, և ամէն բանէն վեր սիրէ՛ զանի՛ անճառելի գթութեանը վրայ զարմանալով, վասն զի քեզմէ նախատուած՝ աչը կ՚երկընցնէ քեզի որպէս զի նորէն չգլորտըկիս, չ՚ինաս։ Վերջը վստահանալով իրեն անսահման ողորմութեանը վրայ ըսէ. Վարուէ՛, ով տէր, հետս քու ողորմութեանդ համաձայն, թողութիւն տուր ինծի, և ամենեւին մի՛ թողուր քեզմէ զատուած հեռու ապրելու, որպէս զի ալ զքեզ չբարկացնեմ։

Այս ընելով ալ մի՛ մոռցեր թէ Աստուած թողութիւն տուաւ քեզի թէ ոչ. վասն զի ասիկայ ուրիշ բան չէ՛, եթէ ոչ հպարտութիւն և մտաց չփոթութիւն, ժամանակի կորուստ, և սատանայի խաբէութիւն՝ զանազան բարի պատրուակներով գոյն առած։ Բայց Աստուծոյ գթած ձեռքին աներկեան քեզի յանձնելով՝ կրթութիւնդ շարունակէ՛ որպէս թէ ամենեւին ընկած չըլլայիր։ Եւ թէ որ օրը շատ անգամ դառնաս իյնաս և վերք ընդունիս, ըսածս ըրէ՛, ոչ նուազ վստահութեամբ մը՝ երկրորդ երրորդ նաև վերջին անգամն ալ առջինէն աւելի, և միշտ անձդ աւելի արհամարհելով և մեղքը ատելով ջանք ըրէ՛ աւելի զգոյշ ապրելու։

Այս կրթութիւնը շատ անհաճոյ է սատանային, ինչու որ կը տեսնէ թէ Աստուծոյ ամենահաճոյ է, և թէ ինքը անով խաղք խայտառակ կ՚երևնայ, յաղթուելով անորմէ՝ որուն առաջուց յաղթած էր։ Այսր համար զանազան խրամանկ հնարքներով կ՚աշխատի ետ կեցընելու

զմեզ անոր գործադրութենէն և շատ անգամ կը յաջողցընէ հնարքը մեր անհոգութեան պատճառաւ և մեր վրան քիչ հսկելնուս համար։ Ուստի եթէ դուն ասոր մէջ դժուարութիւն գտնես, ևս առաւել պարտական ես բռնութիւն ընել անձիդ, մէկ անգամէն աւելի այս կրթութիւնը կրկնելով, նաև մէկ անգամ իյնալուդ։ Եւ եթէ յանցանքէն վերջը անհանգստութիւն, չփոթութիւն և յուսահատութիւն զգաս, առջի ընելիքդ՝ նորէն խաղաղութիւնը և որտի հանդարտութիւնը և միանգամայն առ Աստուած վստահութիւնը ձեռքդ բերելն է, և այս զէնքով վառուած սրտանց առ Տէր դարձիր, վասն զի մեղայ համար կրած նեղութիւնը, չի դիտեր իր նպատակը Աստուծոյ անարգանքը, այլ անձնական վնասդ։ Իսկ նորէն այս խաղաղութիւնը ձեռք բերելուն եղանակը այս է. մէյմը բոլորովին ան պահեկէն մոռնաս այն անկումը՝ և ալ չյիշես, և միտք դնես մոռցելու Աստուծոյ անպատում բարութիւնը, և թէ ինչպէս գերագոյն օրինակով կը բաղձայ և պատրաստ կը կենայ թողութիւն տալու որ և իցէ ծանր մեղքերու, զանազան եղանակներով և շատ համբաներով մեղաւորը կանչելով՝ որ քովը գայ և հետը միաւորի աս աշխարքը իր որբարար շնորքովը զինքը սրբացնելու համար, և հանդերձեալին մէջ պսակելու համար յաւիտեան երանութեան փառքով։ Եւ այս կամ նման խորհրդածութիւններով միտքդ խաղաղելէն վերջը ան ատենը միտքդ դարձուր անկմանդ, վերը ըսածիս համեմատ վարուելով։ Յետոյ խորհրդական

խոստովանանքիդ ատենը (զոր կը յորդորեմ շատ անգամ ընելու) նորէն պատմէ ամէն իրողութիւնները, և նոր ցաւով և գղջումով զԱստուած վշտացնելուդ և հաստատուն առաջադրութեամբ ալ զինքը չի վշտացընելու՝ անկեղծութեամբ յայտնէ ամէն բան հոգւոր հօրդ։

ԳԼՈՒԽ ԻԷ.

Սատանային պատերազմելու և խաբելու եղանակին վրայ, զոր կը գործածէ քրիստոնէական եկեղեցիներուն՝ և քրիստոնեայ մեղաց ժառայութեան գերի եղածներուն հետ։

Գիտցիր որդեակ, թէ սատանան ուրիշ բանի ետևէ չէ՝ եթէ ոչ մեր կործանմանը, և ամէն մէնուն հետ նոյն կերպով չի պատերազմիր։ Ակնարկելով հոս նկարագրել քեզ անոր պատերազմներուն հանգամանքը, բռնած կարգը և խարէութիւնները, մարդուս զանազան վիճակը աչքիդ առջևը կը դնեմ։ Ոմանք գերի եղած են մեղաց՝ առանց մտածութեան մը անկից ազատուելու։ Այլք ազատութիւններն կ'ուզեն, բայց ձեռք չեն զարներ գործքին։ Կան ոմանք՝ որոնք կը կարծեն թէ առաքինութեան ճամբան կը քաշլեն, և իրաք շեղած անկէ կը հեռանան։ Վերջապէս ուրիշներն ալ՝ որոնք առաքինութիւններ ստանալէն ետքը չարագոյն կործանմամբ սահած կ'լինան։ Այսմէնուն վրայ մէկիկ մէկիկ պիտի խօսինք։

ԳԼՈՒԽ ԻԸ.

Սատանային՝ մեղաց գերուբեան մէջ բռնուածներուն հետ գործածած պատերազմին և խաբեութեանը վրայ։

Զարմանալի թշնամին ուրիշ բան մը չի փընտռեր, երբոր մէկ մը մեղաց լծին տակ գրաւէ նէ, եթէ ոչ աւելի զանի կուրցընել և իր թշուառ վիճակը ճանչցնող որ և իցը մտածութենէն ետ կեցնել։ Եւ չէ թէ միայն զինքն ետ կը քաշէ ուրիշ օտար խորհրդներով՝ ապաշխարութեան յորդորող խորհրդներէն և թելադրութիւններէն, հապա պատրաստ և արտաքսող առիթներով նոյն մեղքի մէջ սահիլ կուտայ, և կամ աւելի մեծամեծներուն մէջ։ Ուստի աւելի թանձր կուրութեան հանգիպելով՝ աւելի խորունկ մեղաց անդունդներուն մէջ դարուվար կ'լինան մեղքին ունակութիւնը ստանալով, և այդպէս կուրութենէ 'ի կուրութիւն երերալով, և մեղքէ մեղք քայլելով գրեթէ պտուտ շրջանի մը մէջ մինչև ցմահ թշուառ կեանք մը կ'անցընեն, եթէ Աստուած իր շնորքովը իրենց խնամք չի տանի։ Մեր կողմէն ասս չարիքներուն դեղը ասս է. ով որ այս թշուառ վիճակին մէջ կը գտնուի, շուտով պարտական է տեղ տալու սրտին մէջ ան խորհրդներուն և թելադրութեանց, որոնք խաւարէն լոյսը զինքը կը կոչեն, աղաղակելով 'ի խորոց սրտէ իր ստեղծողին.

խոստովանանքիդ ատենը (զոր կը յորդորեմ շատ անդամ ընելու) նորէն պատմէ ամէն իրնալներդ, և նոր ցաւով և զղջումով զԱստուած վշտացնելուդ և հաստատուն առաջադրութեամբ ալ զինքը չի վշտացընելու՝ անկեղծութեամբ յայտնէ ամէն բան հոգևոր հօրդ։

ԳԼՈՒԽ ԻԷ.

Սատանային պատերազմելու և խաբելու եղանակին վրայ, զոր կը գործածէ թէ առաքինուրեան ետևէ եղողներուն՝ և թէ արդէն մեղաց ծառայուրեան գերի եղածներուն հետ։

Գիտցիր որդեակ, թէ սատանան ուրիշ բանի ետևէ չի՛նար՝ եթէ ոչ մեր կործանմանը, և ամէնուն հետ նոյն կերպով չի պատերազմիր։ Ակսելով հոս նկարագրել քեզ անոր պատերազմներուն հանդամանքը, բռնած կարգը և խաբէութիւնները, մարդուս զանազան վիճակը աչքիդ առջևը կը դնեմ։ Ոմանք գերի եղած են մեղաց՝ առանց մտածութեան մը անկից ազատուելու։ Այլք ազատութիւններն կ'ուզեն, բայց ձեռք չեն զարներ գործքին։ Կան ոմանք՝ որոնք կը կարծեն թէ առաքինութեան ճամբան կը քայլեն, և իրաք չեղած անկէ կը հեռանան։ Վերջապէս ուրիշներն ալ՝ որոնք առաքինութիւններ ստանալէն ետքը չարագոյն կործանմամբ սահած կ'իյնան։ Այսմէնուն վրայ մէկիկ մէկիկ պիտի խօսինք։

ԳԼՈՒԽ ԻԸ.

Սատանային՝ մեղաց գերութիւնի մէջ բռնուածներուն հետ գործածած պատերազմին և խաբեութիւնը վրայ։

Զարմանալի թշնամին ուրիշ բան մը չի փընտռեր, երբոր մէկ մը մեղաց լծին տակ գրաւէնէ, եթէ ոչ աւելի զանի կուրցընել և իր թշուառ վիճակը ճանչցնող որ և իցը մտածութենէն ետ կեցնել։ Եւ չէ թէ միայն զինքն ետ կը քաշէ ուրիշ օտար խորհրդներով՝ ապաշխարութեան յորդորող խորհրդներէն և թելադրութիւններէն, հապա պատրաստ և արտորացող առիթներով նոյն մեղքի մէջ սահիկ կուտայ, և կամ աւելի մեծամեծներուն մէջ։ Ուստի աւելի թանձր կուրութեան հանդիպելով՝ աւելի խորունկ մեղաց անդունդներուն մէջ դարուվար կ'իյնան մեղքին ունակութիւնը ստանալով, և այդպէս կուրութենէ 'ի կուրութիւն երերալով, և մեղքէ մեղք քայլելով գրեթէ պատուտ շրջանի մը մէջ մինչև ցմահ թշուառ կեանք մը կ'անցընեն, եթէ Աստուած իր շնորհքովը իրենց խնամք չի տանի։ Մեր կողմէն ասոնց չարիքներուն դեղը ասոնք է. ով որ այս թշուառ վիճակին մէջ կը գտնուի, շուտով պարտական է տեղ տալու սրտին մէջ ան խորհրդներուն և թելադրութեանց, որոնք խաւարէն լոյսը զինքը կը կոչեն, աղաղակելով 'ի խորոց սրտէ իր ստեղծողին.

Ո՞հ տէր, արտորա՛ օգնելու ինծի, արտորա՛. ա՛լ մի՛ թողուր զիս մեղաց այս խաւարին մէջ պտըտելու։ Եւ մի՛ դադրիր կրկնելու շատ անգամ և աղաղակելու այսպիսի և այլ նման մաղթանքներով։ Եւ եթէ ժամանակը ներէ, շուտով վաղէ հոգևոր հօրդ քով, անորմէ խնդրելով օգնութիւն և խորհուրդ թշնամւոյն ժանիքներէն ազատուելու համար։ Բայց թէ որ չի կրնաս շուտով երթալ հոգևոր հօրդ քով, վաղէ՛ շուտով խաչեցելոյն ոտքը, գետինը ընկած խոնարհ կերպով անոր սրբազան ոտուըներուն առջևը տարածուէ, նաև Աստուածածնայ անարատ Կուսին դարձուր աչքդ, խնդրելով ողորմութիւն և օգնութիւն։ Եւ գիտցիր թէ ասոր արագութենէն կախուած է յաղթութիւնը, ինչպէս յետագայ գլխին մէջ տեսնաս պիտի։

ԳԼՈՒԽ ԻԹ.

Աստանային հնարքներուն և խաբէութիւններուն վրայ, որոնցմով կը կապկրպէ ան՝ որոնք իրենց չարութիւնը ձանչնալով կը խնդրեն ազատուիլ, և թէ ինչու մեր առաջադրութիւնները ստէպ իրենց արդիւնքը չեն ունենար։

Անոնք որ արդէն շար կեանքերնին ճանչնալով, 'ի լաւ փոխել զանի կը փափաքին, յետագայ գէնքերով սովոր են սատանայէն խաբուելու և յաղթուելու. վերջը, ետքը, վաղը, վաղը [1]։

1 Cras, cras, որ լատին հնչման համաձայն՝ ինչպէս ազգաներուն ձագերը կը կռկռան։

Ես, կ'ըսեն, յառաջ կ'ուզեմ այս գործքս վերջացընել և այս զբաղմունքս, և վերջը մեծ հանդարտութեամբ ինք զինքս Աստուծոյ տամ պիտի։

Որոգայթ մըն է այս, որ շատերը որսաց, և օր ըստ օրէ որսալու ետևէ է։ Որուն պատճառը մեր անհոգութիւնն է և վստահութիւնն, վասն զի ուր որ հոգւոյ փրկութիւնը և Աստուծոյ պատիւը նպատակն է, շուտով ձեռք չենք զարներ այն զօրաւոր զէնքին. Հիմայ հիմայ, և ինչու՞ վերջը. այսօր այսօր, և ինչու՞ վաղը, ինքիրենդ պատասխան տալով. բայց եթէ ինծի շնորհուի պիտի վաղը և վերջը, ուրեմն ասի՛ է փրկութեան և յաղթութեան համար, նախ ուզել վերքեր ընդունիլ, և նոր անկարգութիւններու մէջ իյնալ։ Հապա, որդեակ, տես, և լաւ միտք դիր թէ այս խաբէութենէն և նախընթաց գլխի մէջ ցուցցածէն՝ փախչելու և թշնամւոյն յաղթելու համար, դեղն է խորհրդոց և աստուածային թելադրութեանց պատրաստական հնազանդութիւնը։ Պատրաստականութիւնը կ'ըսեմ և ոչ առաջադրութիւնները, ինչու որ այս վերջինները շատ անգամ կը սպասեցընեն, և շատերը պէսպէս պատճառներուն համար ասոնցմէ խաբուեցան։

Առաջին պատճառն է, որուն վրայ վերը խօսեցանք. վասն զի մեր առաջադրութիւնները իրենց հիմը չ'ունին մեր անձանց վրայ չվստահութիւնը և յԱստուած ապաւինիլը։ Եւ մեծ հպարտութիւններս չի ներէր մեզի տեսնալու՝ թէ ուսկից այս խաբէութիւնը ու կուրութիւնը կը ծագի։ Անի ճանչնալուն լոյսը՝ և անոր դար-

ման տանելուն նպատը մեղի Աստուծոյ բարութենէն կը շնորհուի, որ թոյլ կուտայ մեր իյնալը, որով մեր անձանց ապաւինելէն իրեն միայն ապաւինութեանը դիմենք, ու մեր հպարտութենէն՝ դանք մեր անձին ծանօթութեանը։ Այդ ուզես նէ որ քու առաջադրութիւններդ գործունեայ ըլլան, պէտք է որ զօրաւոր ըլլան և ան ատենը զօրաւոր ըլլան պիտի, երբոր անոնց մէջ բնաւ բան մը չի խառնուի անձին վրայ ապաւինութենէն, և բոլորը խոնարհութեամբ հիմնուի աստուածային վստահութեանը վրայ։

Երկրորդ պատճառն է, երբոր մենք կը յորդորուինք առաջադրելու, ապշած կը զննենք առաքինութեան գեղեցկութիւնը և զօրութիւնը, որ իրեն կը քաշէ մեր կամքը որչափ որ մեղմ և տկար ըլլայ. յետոյ դժուարութիւն մը առջևը ելլելուն՝ զոր պէտք է կրել առաքինութիւնը ստանալու համար, տկար և նորափորժ ըլլալով կը պակսի, և ետ կը քաշուի։ Այլ դուն աւելի զքեզ կրթէ դժուարութեանց սիրովը վարուելու զոր առաքինութեանց ստացումը առաջ կը տանի՝ նոյն իսկ առաքինութիւններէն աւելի, և այսպիսի դժուարութիւններով միշտ մնուցանելով զարգացուր քու կամքդ, երբեմն քիչ և երբեմն աւելի, եթէ ճշմարտապէս կը խնդրես առաքինութիւնները ստանալ։ Եւ գիտցիր թէ այնչափ խիստ շուտ և սաստիկ ուժով քեզի և թշնամեացդ կը յաղթես, որչափ աւելի կորճութեամբ դժուարութիւնները գրկես, և սիրով դանենք յանձն առնուս։

Երրորդ պատճառն է, վասն զի երբեմն մեր առաջադրութիւնները չեն նկատեր առաքինութիւնն և Աստուծոյ կամքը, այլ անձին շահասիրութիւնը, որ սովոր է պատահել այնպիսի առաջադրութեանց ատեն, զոր սովորութիւն է դնել հոգւոյն ուրախութեան կամ զմեզ սաստիկ տաղնապող վշտաց ժամանակը, ուր ուրիշ մխիթարութիւն և անդորրութիւն չենք գտներ, բայց եթէ առաջադրել բոլորովին զմեզ նուիրելու Աստուծոյ և առաքինութեանց կրթութիւններուն։ Այդ որպէս զի դուն ասոր մէջ չիյնաս, հոգևորական ուրախութեանց ատեն առաջադրութիւններուն մէջ զգուշաւոր և խոնարհ եղիր, մանաւանդ խոստմունքներուն և ուխտերուն մէջ։ Եւ երբոր նեղութենէ մը պաշարուած կը գտնուիս, քու առաջադրութիւններդ դիտեն պիտի համբերութեամբ խաչը քաշելու Աստուծոյ կամացն համաձայն՝ ինչ և իցէ երկրաւոր մխիթարութիւններէն հրաժարելով, նաև երբեմն երկնաւորներէն։ Աս ըլլայ քու խնդրուածքդ, և աս քու սրտիդ բաղձանքը, Աստուծմէ օգնութիւն գտնել, որպէս զի ամէն ներհակ բաներու կարող ըլլաս դիմանալ, առանց արատ մը դնելու համբերութեան առաքինութեանը, և առանց զԱստուած սրդողցնելու։

ԳԼՈՒԽ Լ.

Անոնց խաբեռուբեանը վրայ՝ որոնք կը հաւատին թէ կատարելութեան ձամբուն կը դիմեն։

Արդէն թշնամին առջի և երկրորդ յարձակմանէն և վերոյիշեալ խաբէութենէն յաղթուելով, չար խորամանկը երրորդին ձեռք կը ձգէ, որ կը կայանայ մոռցընել տալու նոյն ատեն մեզի դէմ պատերազմող և հարստահարող թշնամեաց բանակը, և զրաղեցընելու կատարելութեան բարձրագոյն աստիճաններուն յառաջադրութեանց և բաղձանքներուն մէջ։ Այսրմէ յառաջ կուգայ մեր շարունակ վերք ընդունելնիս, և ապեղանի չի դնելնիս, և այսպիսի առաջադրութիւնները իբր գործ համարելով՝ շատ կերպով կը հպարտանանք։ Ուստի չուզելով քաշել թեթև գործք մը, կամ ներհակ խօսք մը, յետոյ մեր ատենը կ'անցընենք երկայն մտածականներով և առաջադրութիւններով՝ համբերութեամբ ծանր վշտեր քաշելու ինչուան քաւարանին և տանջանքները Աստուծոյ սիրոյն համար։ Եւ որովհետև ստորին մասը ասոր մէջ ընդդիմութիւն մը չի կրեր հեռաւոր ըլլալուն՝ ասոր համար մենք խեղճերս կը կարծենք հաւասարիլ անոնց որ իրաք ծանր դժուարութիւնները համբերութեամբ կը քաշեն։ Ուրեմն այս խարդախութենէն փախչելու համար, առաջադրէ և կուտէ քեզի դէմ իրաք և մտիկանց պա-

տերազմող թշնամիներուն հետ, որով ասանկ յայտնի կ'ըլլան թէ քու առաջադրութիւններդ ճշմարիտ են արդեաք թէ սուտ, հաստատուն թէ խախուտ, և արքունական շիտակ փողոցէն քայլելով՝ առաքինութեան և կատարելութեան ճամբան կը հասնիս։ Բայց ան թշնամիներուդ դէմ, որոնցմէ նեղութիւն քաշելու սովորութիւն չ'ունիս, խորհուրդ չեմ տար քեզի պատերազմը սկսելու, եթէ ոչ երբոր նախատես կ'ըլլաս հաւանաբար որ քիչ մը եռքը քու վրադ յարձակին պիտի, ան ատենը պատրաստ գտնուելու համար և դիմացկուն, արժան է առաջուց սկսիլ առաջադրութիւնները։

Բայց գործունեայ մի սեպեր առաջադրութիւններդ, թէպէտև միջոց մը ժամանակ պաստշտ կերպերով առաքինութիւններուն մէջ կը թուած ըլլաս. այլ անոնց մէջ խնարհ եղիր, քու անձէդ և ակարութենէդ վախցիր, և Աստուած ապաւինելով՝ ստէպ աղօթքով անոր դիմէ, որպէս զի զքեզ զօրացնէ, և վտանգներէն պահէ, և մասնաւորապէս ամէն պզտիկ հպարտութենէն և ինքիրենդ ապաւինելէն։ Եւ ասանկ դիպուածին մէջ թէպէտև հնարաւոր չէ քանի մը մանրագրիկ պակասութիւններուս յաղթել, որոնք երբեմն Աստուած մեզի թոյլ կուտայ մեր անձին խնարհ ծանօթութեանը համար, կամ բարիքի մը դիտամբ, այսու ամենայնիւ՝ մեզի կը վայլէ ան ատենը կատարելութեան ուելի բարձր աստիճանի վրայ առաջադրութիւններ ընել։

ԳԼՈՒԽ ԼԱ.

Սատանայիին մեզի առաքինութեան առաջնորդող ճանբան թող տարու հանար գործածած խաբեութեան և սատերազմին վրայ։

Վերոյիշեալ չորրորդ խաբէութիւնը, որով մեր վրայ կը յարձակի սատանան, երբոր կը տեսնէ թէ մենք չիտակ դէպ 'ի առաքինութիւնը կը քալենք, զանազան բարի բաղձանքներ 'ի մեզ կ'արծարծէ, որովք առաքինութեանց կրթութենէն՝ ախտերուն մոլութեան մէջ զմեզ ձգէ։ Ինչպէս մէկ մը հիւանդութենէ մը բրնուելով՝ կամակար համբերութեամբ քաշէ ցաւերը, խորամանգ թշնամին լաւ ճանչնալով թէ սատանկով համբերութեան ունակութիւնը ստանայ պիտի, անոր առջևը կը դնէ շատ բարի գործքեր, զորս ուրիշ վիճակի մը մէջ ընել կը-նար, և կը ջանայ զանի համոզել թէ առողջ ըլլար, լաւագոյն Աստուծոյ կը ծառայէր, անձին և ուրիշներուն ևս օգուտ ընելով։ Եւ անոր սիրտը այդպիսի բաղձանքներով զրգռելով ալ քիչ քիչ կ'աւելցընէ, անանկ որ անհանգստութեան մէջ զինքը կը ձգէ, ուզածին պէս անոնք 'ի գործ դնելու կարողութիւն չ'ունենալուն համար։ Եւ որչափ անոր սրտին մէջ աւելի մեծնան և աւելի զօրանան այն բաղձանքները, այնչափ կ'ածի սրտին անհանգարտութիւնը։ Այսով յետոյ կամայ կամայ թշնամին ճարպկութեամբ

մը առաջնորդելով անոր՝ անհամբերութեան մէջ կը ձգէ հիւանդութեանը վրայ՝ չէ թէ անոր հիւանդութեան մը պէս նայելով, այլ իբրև արդէք այնպիսի գործոց, զոր մեծագոյն օգտին համար փափաքով 'ի գործ դնել կը բաղձար։ Երբոր այս սահմանին կը հասցընէ, նոյն ճարպկութեամբ անոր մոքէն կը հանէ աստուածպաշտութեան և բարեգործութեանց վախճանը, հիւանդութենէն ազատուելու պարզ բաղձանք մը անոր թողլով։ Որն որ ուզածին պէս չ'յաջողելով, անանկ կը խռովի, ինչուան արդեամբք անհամբեր ըլլալու։ Եւ ասանկ առանց իմանալու գործածած առաքինութենէն՝ անոր ներհակ մոլութեան մէջ կ'իյնայ։

Այս խաբէութենէն զգուշանալու՝ և անոր ընդդիմանալու եղանակը այս է. երբոր նեղութեան վիճակի մը մէջ գտնուիս, զգոյշ կեցիր ամենևին տեղ չի տալու սրտիդ մէջ որ և իցէ բարի բաղձանքի մը, զոր դուն ան ատենը գործքով կատարելու կարողութիւն չունենալով, զքեզ հաւանարար տակնուվրայ կ'ընէր։ Եւ պարտական ես այս մասին մէջ ամենայն խոնարհութեամբ, համբերութեամբ և համակամութեամբ հաւատալ՝ թէ բաղձանքներդ այն կարծած արդիւնքդ չունին, կարծածէդ աւելի տըկար խախուտ ըլլալուդ։ Եւ կամ մտմտալ թէ Աստուած իր գաղտնի դատաստաններուն համաձայն՝ կամ քու անարժանութեանդ համար քեզմէ այն բարեգործութիւնը չ'ուզեր, այլ մանաւանդ որ աւելի նուաստ գտնուիս և խոնարհիս կամակար համբերութեամբ իր կամքին քաղցր

եւ հզոր ձեռքին տակ։ Դմանապէս արդիւնաւոր ըլ-
լալոյդ հոգեւոր հօրէն եւ կամ այլ պատճառէ մը,
ինչուկ կարող չըլլալ ըստ կամաց քու ջերմե-
ռանդութիւններդ շարունակելու, մանաւանդ
սուրբ հաղորդութիւնը, ասանկ փափաքելուդ
համար պէտք չէ որ դուն խռովիս եւ նեղուիս,
այլ մերկացած բոլորովին քու յատուկ կամքդ,
հաղիր տեառնդ հաճոյքը, ինքիրենդ ըսելով.
Թէ որ աստուածային նախախնամութեան ամե-
նատես աչքը վրաս ապերախտութիւն եւ յան-
ցանք չի տեսնար, ես հիմայ ամենասուրբ խոր-
հրդին ընդունելութենէն չէի զրկուիր, բայց
անձամբ ճանչնալով թէ ասով իմ տէրս երեսս
կը զարնէ իմ անարժանութիւնս, անոր անունը
միշտ գովեալ եւ օրհնեալ ըլլայ։ Տէր իմ, կ'ապա-
ւինիմ քու անբաւ բարութեանդ, որ կ'ուզես քե-
զի համար կրելովս եւ յամենայնի հաճոյ ըլլալովս՝
քեզի սիրտս բանամ պատրաստ ամէն քու ու-
զածիդ, որպէս զի դուն անոր գալով հոգեւորա-
պէս մխիթարես զանի եւ զօրացնես թշնամի-
ներուն դէմ, որոնք կը խնդրեն զանի քեզմէ
հանելու։ Ասանկ ամէն բան ըլլայ քու աչացդ
բարի երեւցածին համաձայն։ Ո՛վ արարիչ եւ
փրկիչ իմ, քու կամքդ հիմայ եւ միշտ իմ անունդս
եւ իմ զօրութիւնս ըլլայ։ Ցիսուս սէր իմ, այս
շնորհքը միայն քեզմէ կը խնդրեմ որ իմ հոգիս
մաքրուած եւ ազատուած քեզի որ եւ իցէ անհա-
ճոյ եղածէն, սուրբ առաքինութեանց զարդե-
րով միշտ զարդարուած կենայ պատրաստ քու
գալստեանդ եւ այն ամէն բանին՝ որ վրաս
հաճիս տնօրինելու։ Եթէ այս խրատները պրիդ

մէջ պահես, լաւ գիտցիր թէ որ եւ իցէ բարիք
մը բաղձալուդ զոր 'ի գործ դնել չես կրնար,
թէ եւ անիկայ ընութենէն պատճառի, և կամ
սատանայէն զրգռուի քեզի խռովելու և ա-
ռաքինութեանց ճամբէն ետ քաշելու համար,
և կամ նաև երբեմն Աստուծմէ անոր կամքին
հետ քու համակամութիւնդ փորձելու համար,
միշտ առիթ պիտի ունենաս Աստուծոյ փոխա-
րէնը հատուցանելու իրեն աւելի հաճոյական
կերպով մը։ Եւ ասոր վրայ կը հաստատուի Աս-
տուծոյ մեզմէ պահանջած ճշմարիտ ջերմեռան-
դութիւնը և ծառայութիւնը։ Դարձեալ ազդ
կ'ընեմ քեզի, որպէս զի անհամբեր չըլլաս նե-
զութիւններուն մէջ որ կողմէն որ պատճառին,
ինչու որ դուն գործածէ այն օրինաւոր միջոցնե-
րը, որոնցմով Աստուծոյ ծառաները սովորու-
թիւն ունին վարուելու, ոչ եթէ անոնցմէ ազա-
տուելու բաղձանքով մը և յարմամբ, այլ վասն
զի Աստուած կ'ուզէ որ գործածուին. ինչու որ
չենք գիտեր թէ կը հաճի՞ արդեօք անոր աս-
տուածային մեծվայելչութիւնը այս միջոցով
զմեզ փրկելու։ Եւ թէ որ ուրիշ կերպով վարուիս՝
շատ չարիքներու մէջ կ'ելնաս, ինչու որ դիւրաւ
անհամբերութեան մէջ կը սահիս, իրը բաղձան-
քիդ և յարմանդ համաձայն յաջող ելք չունե-
նալուն, և կամ համբերութիւնդ պակասաւոր
կ'ըլլայ, և ոչ ըստ ամենայնի Աստուծոյ հաճոյա-
կան, և քիչ արդիւնաբեր։ Վերջապէս քեզի հոս
տեղը ծանուցանեմ մեր անձնասիրութեան ծա-
ծուկ խաբէութիւն մը, որ սովորութիւն ունի
քանի մի դիպուածներուն մէջ ծածկել և պաշտ-

պանել մեր պակասութիւնները։ Ուստի զոր օրինակ հիւանդ մը հիւանդութեանը վրայ քիչ մը անհամբեր ըլլալով, իր անհամբերութիւնը դոց կը պահէ առերևոյթ բարւոյն բաղձանքին քօղին տակ, ըսելով թէ ան իր վիշտը ճշմարիտ անհամբերութիւն չէ հիւանդութեան երեսէն քաշած նեղութեանը համար, այլ բանաւոր տհաճութիւն մը, վասն զի ինքն անոր պատճառու

սպաննուիս, և կամ կը վիրաւորուիս։ Այդ ա-
ղէկ կրթելու համար զքեզ վերը ըսած ոչընչութեանդ ճշմարիտ ծանօթութեան դաշտին մէջ քալելու, այս կանոնով վարուէ։ Քանի անգամ քու անձիդ և գործքերուդ մոռածութեանը միտքդ դարձընես, միշտ զքեզ մոռածէ այն բանովը որ քեզմէն է, և ոչ թէ անով որ Աստուծոյ է, և անոր շնորհացն, յետոյ այնպէս զքեզ ճանչցիր, ինչպէս որ քուկին բանովդ զքեզ կը գտնես։

Եթէ քու ստեղծուելէդ յառաջ ժամանակը մոռածես, կը տեսնաս թէ բովանդակ ան յաւիտենականութեան անդունդին մէջ դուն սոսկապէս ոչինչ մըն էիր, և ոչինչ գործեցիր, և չէիր կրնար գործել գոյութիւնդ ունենալու համար։ Յետոյ այս միջոց ժամանակին մէջ՝ որով միայն Աստուծոյ բարութենէն գոյութիւնդ ունիս, տալով անոր իրեն պատկանածը, (որ է շարունակ վարչութիւնը որով ամէն վայրկեան զքեզ կը պահպանէ) դուն ինչ ես արդեօք քեզմով, բայց եթէ նմանապէս ոչինչ մը։ Վասն զի երբէք երկրայութիւն մը չիկայ որ մէկ վայրկենի մէջ քու առջի ոչնչութեանդ կը դառնայիր, ուսկից անոր ամենազօր ձեռքը քեզի հանեց, եթէ ինքը մէկ վայրկեան մը միայն թող տար զքեզ։ Ուրեմն յայտնի բան մի է թէ այս բնական կացութեան մէջ քու կողմէդ իրաւունք չունիս բանի մը տեր զքեզ դնելու. կամ թէ ուրիշներէն այս համարմունքը բաղձալու։ Իսկ շնորհք բարի ըլլալուն և բարիք գործելու կողմէն բնութիւնդ աստուածային օգնութենէն

մերկացած ինքիրմով ինչ կրնայ երբէք բարի և արդիւնաւոր գործ մը ընել։ Մէկալ կողմէն քու անցած բազմաթիւ մեղքերդ մոռածելով և ասոնցմէ 'ի զատ այլ ևս շատ չարիքներ զոր կը գործէիր, եթէ Աստուած իր գթած ձեռքովը զքեզ չի բռնէր, կը գտնես որ քու անօրէնութիւններդ ոչ միայն օրերու և տարիներու, այլ նաև գործքերու և չար ունակութեանց բազմապատկութեամբն (վասն զի մէկ մոլութիւնը իր ետևէն կը քաշէ ուրիշ մոլութիւն մը) գրեթէ անսահման թուոյ կը հասնէին, և անոնցմով դու կ'ըլլայիր միւս դժոխային Սաղայէլ մը։

Ուստի գող մի ըլլար Աստուծոյ բարութիւնները գողնալու, այլ իրեն հետ միշտ կեցիր օրէ օր զքեզ չարագոյն համարելով։ Եւ ալէկ զգուշացիր, որ այս քու վրադ ըրած դատողութիւնը, հետը ընկերակից ունենայ արդարութիւնը, ինչու որ ուրիշ կերպով քեզի ոչ փոքր վնասներու պատճառ կ'ըլլար։ Իբր զի եթէ չարութիւնդ ճանչնալուն նկատմամբ՝ անցնէիր մէկ մը որ իր կուրութեանը համար ինքը զինքը բանի մը տեղ կը սեպէ, բայց դուն մեծապէս կը տուժիս և անորմէ չարագոյն կ'ըլլաս կամքին գործքերուն մէջ, թէ որ այնպիսի մէկ մը համարուիլ և պատուիլ ուզես մարդիկներէն, մինչդեռ լաւ գիտես թէ այնպէս չես։ Ուստի թէ որ չարութեանդ և նուաստութեանդ ծանօթութիւնը կ'ուզես որ թշնամիներդ քեզմէ հեռացընէ և զքեզ Աստուծոյ սիրելի ընէ, հարկաւոր է որ, չէ թէ միայն անձդ արհամարհես իբր անարժան ամէն բա-

րիքի և արժանի ամէն չարեաց, հապա ուրիշներէն արհամարհուիլ սիրես, ատելով պատիւները, և նախատինքներու վրայ ուրախանալով և յօժարելով պատեհ առիթներուն՝ ուրիշներուն արհամարհածը կատարելու։ Որոնց դատաստանը, այս սուրբ կրթութեանը արդելք չըլլալու համար, պարտական չես բանի մը տեղ համարել, միայն թէ ասիկայ քեզմէ 'ի գործ դրուի դիտմամբ մինակ խնարհութեանդ և կրթութեանդ, և ոչ ինքնահաճութեան մը և կամ նուրբ ամբարտաւանութեան մը համար, որով երբեմն զանազան բարի պատրուակներով քիչ կամ ոչինչ յարգ կ'ընծայուի ուրիշներուն կարծիքին։

Եւ եթէ հանդիպի Աստուծոյ քեզի պարգևած բարիքի մը համար, ուրիշներուն քով բարի, և սիրելի և գովելի սեպուելու, աղէկ ինքզինքդ ժողված կեցիր, և ամենեին վերը ըսած ճշմարտութենէն և արդարութենէն մի՛ շեղիր, այլ նախ առ Աստուած դարձիր ըսելով իրեն բոլոր սրտէդ. Քաւ լիցի, Աստուած, յափշտակել քու պատիւդ և շնորհդ. քեզ գովութիւն, պատիւ և փառք և ինձ ամօթ երեսաց։ Յետոյ դէպ 'ի քու գովողդ դառնալով, սրտովդ ըսէ. Ուսկից է որ դիս բարի կը սեպէ, ուր ճշմարիտ բարին միայն Աստուած է, և անոր գործքերը։ Այս կերպ ընելով և ինչ որ Աստուծոյ կը պատկանի Աստուծոյ հատուցանելով, քեզմէ կը հեռացընես թշնամիներդ, և կը տրամադրուիս Աստուծմէ մեծ մեծ պարգևներ և շնորհքներ ընդունելու։

Իսկ երբ որ բարեգործութեանց յիշատակը

անտարաութեան վտանգին մէջ գլխիդ ձգէ, չատով նայելով ասոնք ոչ իբր քու բաներդ, այլ Աստուծոյ, իբր թէ անոնց հետ խօսելով սրտիդ մէջ ըսէ. Ես չեմ գիտեր ինչպէս դուք մտքիս մէջ երևցուք և գոյանալ սկսաք, ինչու որ ես ձեր սկզբնապատճառը չեմ, այլ բարին Աստուած՝ և անոր շնորքը զձեզ ստեղծեց, աճեցուց և պահպանեց։ Անի միայն ուրեմն ճանչնամ պիտի ճշմարիտ և գլխաւոր հայր, անոր շնորհակալ պիտոր ըլլամ, և զանի միայն իմ շրթունքներս պիտի գովեն։ Ամմա՛ յետոյ թէ բոլոր ըրած գործքերդ, ոչ միայն քիչ և պզտիկ երևցան լուսին և շնորքին քով, որ շնորհուեցաւ քեզի ա՛նոնք ճանչնալու և 'ի գործ դնելու համար, այլ նաև ուրիշ կողմէն շատ անկատար են, և հեռու այն պարզ դիտաւորութենէն և պատշաճ եռանդէն և փոյթէն, որոնք անոնց հետ զուգընթաց և գործակից ըլլալու պիտի։

Ուստի եթէ լաւ չափես, աւելի կ'ամչնաս քան թէ փուճ տեղ կը պարծենաս, ինչու որ շատ ստոյգ բան մըն է թէ Աստուծմէ ընդունած պարզ և կատարեալ շնորքները՝ անոնք գործադրելու ժամանակնիս մեր անկատարութիւններով կ'արատաւորին։ Դարձեալ գործքերդ սըրբոց և ուրիշ Աստուծոյ ծառաներուն գործքերուն հետ բաղդատէ, ինչու որ անոնց բաղդատութենէն յայտնապէս կը ճանչնաս թէ քու գործքերուդ ընտրելագոյն և մեծագոյն սեպուածները՝ շատ անարդ են և արժէք մը չունին։ Յետոյ բաղդատելով զանոնք Քրիստոսի գործքերուն հետ, զորս իր կենաց ընթացքին մէջ

շարունակ խաչը տանելով գործեց քեզի համար, և զանոնք նկատելով իրենք իրենց միայն՝ աստուածային անձէն զատ՝ և սիրոյն և բաղձանքին և մաքրութեանը համար՝ որով կատարուեցան, տեսնես պիտի թէ իրաք ոչինչ են բոլոր գործքերդ։

Եւ վերջապէս, թէ որ միտքդ աստուածային անսահման մեծվայելչութեանը վերցընես և մտմտաս ծառայութեան պարտքը՝ որուն արժանի է, հոն տեսնես պիտի յայտնապէս թէ ոչ անափառութիւն, այլ մեծ ահ ու դողի ակնկալութիւն քեզի կը մնայ ամէն մէկ գործքիդ մէջ։ Ուստի ամէն ընթացքիդ և գործքերուդ մէջ, որչափ որ սուրբ ըլլան, զայս 'ի խորոց սրտէ կրկնելու ես. Աստուած քաւեա զիս զմեղաւորս։ Նաև քեզի ազդ կ'ընեմ, թէ Աստուծոյ քեզի ըրած պարգևները դիւրին մ'ըլլար յայտնելու, ինչու որ ասիկայ գրեթէ միշտ Աստուծոյ անհաճոյ է, ինչպէս նոյն ինքն մեզի յայտնի կ'ընէ յետագայ վարդապետութեամբը։ Օր մը ինքնին տերը տղու մը կերպարանքով իր ջերմեռանդ աղախիններէն մէկուն երևցաւ՝ որ գրեթէ մաքուր ստեղծուած մըն էր, և անոր մէ միամտութեամբ խնդրուելով հրեշտակական ողջոյնը ըսելու, անոր խնդրուածքին համաձայն առանց ուշանալու Յիսուս սկսաւ ըսել. Ողջոյն քեզ Մարիամ, լի շնորհօք, տէր ընդ քեզ, օրհնեալ ես դու 'ի կանայս։ Հոս տեղ կանգ առաւ, վասն զի չուզեց հետևեալ բառերով ինքզինքը գովել։ Եւ երբոր Քրիստոսի աղախինը զանի կը թախանձէր պակասը լցնելու, ինքն անոր

մէ անարևոյթ եղաւ, իր աղախնոյն հիրաը թողլով լեցուն երկնային մխիթարութեամբ. իր օրինակովը անոր աւանդելով այս երկնային վարդապետութիւնը։

Հապա, սորվէ դուն ևս դքեզ խոնարհեցընելու, ոչինչ ճանչնալով դքեզ և միանգամայն քու բոլոր գործքերդ։ Այսկայ է տեղ բովանդակ այլ առաքինութեանց հիմը, Աստուած զմեզ ոչընչէն ստեղծեց՝ տակաւին մենք չեղած, և հիմայ անով կ'ապրինք, և ինքն կ'ուզէ որ այս մեր ոչնչութեան ճանաչմանը վրայ հիմնենք բոլանդակ մեր հոգևոր շինուածը։ Եւ որչափ որ մենք խարունկը փորենք, նոյնչափ տունը վեր կը բարձրանայ։ Եւ մեր թշուառութեան հողին համեմատութեան չափ զոր կը հանենք՝ երկնային ճարտարապետը չէնքին յառաջ երթալուն համար հաստատուն քարեր կը դնէ։

Եւ մի կարծեր, թէ կրնաս խոնարհիլ որչափ որ պէտք է. մանաւանդ այդպէս միտքդ բռնէ, որ եթէ հնարաւոր ըլլար ստեղծուածներուն անսահմանութիւն մը դնել, անշուշտ անի քու նուաստութիւնդ կ'ըլլար։ Այս կրթութեամբ ինչպէս որ կը վայլէ վարուելով՝ ամէն բարիք կը ստանանք. առանց ասոր՝ ոչընչէն քիչ մը աւելի կը գտնուինք, թէպէտև սրբոյ ամէն գործքերը կատարէինք, և մեր միտքը միշտ Աստուած յափշտակուէր։

Ո՛վ երջանիկ ծանօթութիւն. որ մեզի երկրի վրայ երանելի՝ և երկինքը փառաւորեալ կ'ընես, ո՛վ լոյս՝ որ խաւարէն ելելով մեր հոգին պայծառ և լուսաւոր կը կազմէ, ո՛վ չիճանչցուած

գոհար՝ որ մեր աղտեղութեանը մէջ կը փալ-
փլայ. ով ծանուցեալ ոչընչութիւն որ մեզի
տէր կ'ընէ ամէն բանին:

Աստ վրայ երբէք խօսելէն չեմ կշտանար. թէ
որ ուզես զԱստուած գովել և օրհնել, ամբաս-
տանէ՛ անձդ և բաղձա՛, որ ամէնքը զքեզ ամ-
բաստանեն: Ամէնուն հետ, և ամէնէն վար
խոնարհ եղի՛ր եթէ կ'ուզես զանի՛ ի՛ քեզ բարձ-
բացընել, և քեզի անով: Թէ որ կ'ուզես զանի
գտնել, մի՛ հպարտանար որ չկրնաս: Ըստ
կարօղութեանդ խոնարհ եղի՛ր, որ գայ խնդրէ
և գրկէ զքեզ: Եւ այնչափ սիրոյ սերտ կապով
իր հետը քեզի պինդ կը միացընէ, որչափ որ
դուն աչքիդ առջևը արհամարհ կը սեպուիս, և
ուրախանաս ամէնէն անարգանք ընդունե-
լուդ, և դուրս ձգուելուդ իբրև ձանձրանալի և
զզուելի բան մը: Եւ անարժան անձդ համարէ՛
Աստուծոյ քեզի ըրած այնչափ պարգևներու,
որն որ նախատինքը յանձն առաւ մեզի համար
իրեն հետ զմեզ միացընելու, և միշտ անորմէ
չնորհակալ եղի՛ր, և երախտապարտ անձդ խոս-
տովանէ որուն որ սկզբնապատճառ եղաւ նա-
խատինքին, մանաւանդ անոնց՝ որոնք որ զքեզ
ոտքերնուն տակը առին, և կամ ուելի անոնց
որոնք կը կարծեն թէ դուն զիրենք ակամայ
կամաք կը քաշես, և՛ չ՛ոչ յօժարութեամբ: Որն
որ թէպէտ ասանկ ըլլայ, պէտք չէ՛ դրսանց
ամենեին նշան մը տալ:

Եթէ աս ամէն մտածութիւններով հան-
դերձ՝ որոնք իրօք շատ ճշմարիտ են, դեռ սա-
տանային խորամանկութիւնը և մեր ոգիտու-

թիւնը և չար միտումը անանկ ի՛ մեզ զօրա-
նային, որ անապառութեան խորհուրդները չի
դադրին զմեզ նեղելէն և մեր սրտին վրայ աղ-
դեցութիւններն ներդործելէն, նաև ան ատենը
ուելի պարտական ենք խոնարհելու մեր աչքին
առջևը, քանի որ փորձով կը տեսնանք թէ մենք
հոգևոր ճամբուն և մեր անձանց ճշգրիտ ծանօ-
թութեանը մէջ քիչ յառաջադիմութիւն ըրած
ենք, վասն զի չենք կրնար զմեզ ազատել այս-
պիսի տագնապեցուցիչ գործքերէն, որոնք ար-
մատներն ունին մեր անապառութենէն: Այս
կերպով մահաբեր թիւնէն մեզի կը ժողվենք,
և վէրքերէն առողջութիւն:

ԳԼՈՒԽ ԼԳ.

Քանի մի ազդարարութիւնք վրայ սխալաւոր կիրքերը յաղթելու, և նոր առաքինութիւններ ստանալու համար:

Թէպէտ շատ բաներ քեզի զուրցեցի այն ե-
զանակին վրայ, զոր պարտական ես բռնելու
անձիդ յաղթելու և զքեզ առաքինութիւննե-
րով զարդարելու համար, բայց կը մնայ ինձի
դեռ մէկ քանի բաներու վրայ զքեզ զգուշա-
ցընել:

Նախ՝ ուզելով առաքինութիւն ստանալ, ա-
մենեին չի համարձակիս ընդունելու այն հոգևոր
կրթութիւնները, որոնք ըստ քմայ ինչպէս կ'ը-
սուի մէկ եօթնեկին օրերը սահմանեալ կ'սրս-

չեն՝ օր մը այս ինչ առաքինութեան, և միւս օր մը այլ առաքինութեան։ Այլ պատերազմելուն և կրթութեան կարգը ըլլայ պատերազմը մղել այն կիրքերուն դէմ, որոնք միշտ քեզի վնաս հասցուցին, և ստէպ յարձակելով վրադ՝ տա-կաւին կը կեղեքեն, և զքեզ զարդարել անոնց ներհակ առաքինութիւններով, և որչափ որ հնար է աւելի կատարեալ կերպով։ Վասն զի ստանալով դուն այս առաքինութիւնները, մի-կալ ամէնքը դիւրութեամբ և դուզնաքեայ ներ-գործութիւններով շուտով իրենց պատեհ առ-թին կը ստանաս, որ ամենևին չի պակսիր. ին-չու որ առաքինութիւնները իրարու հետ միշտ կապկըպած կը կենան, և ով որ կատարելապէս մէկը կը ստանայ, ուրիշ ամէնքը արտին դրան քով պատրաստ կ՝ունենայ։

Երկրորդ՝ առաքինութիւնները ստանալու հա-մար որոշ ժամանակ մը մի՛ սահմաներ, ո՛չ օրեր, ո՛չ շաբաթներ, և ո՛չ տարիներ, այլ միշտ և ամ-էն ատեն նոր ծնած տղու մը պէս, և իբրև նորակիրթ զինուոր մը կարճութեամբ պատե-բազմէ, և քայլէ անոնց կատարելութեան ծայրը հասնելու։ Եւ մի՛ ետ քաշուիր կանգ առնելու համար և ո՛չ վայրկեան մը ժամանակ, ինչու որ կանգ առնուլը առաքինութեանց և կատարե-լութեանց ճամբուն մէջ՝ հանգիստ և զօրու-թիւն առնուլ չէ, այլ ետ դառնալ է, և առա-ջինէն աւելի տկար ըլլալն է։ Հոս տեղ կանգ առ-նելով հակըցիր, լիով և ամբողջ առաքինութիւն-ները ստացած կարծելը, և երբեմն զանց ընել թէ ան առիթները, որոնք մեզի առաքինու-

թեանց նոր գործքերուն կը հրաւիրեն, և թէ պզտիկ պակասութիւնները արհամարհել։ Ուս-տի փութալն եղիր, եռանդնոտ և յաջողակ և ո՛չ փոքր իսկ առաքինութեան առիթ մը քեզ-մէ կորսնցնելու։ Հապա սիրէ՛ ամէն յարմար առիթները որոնք առաքինութիւնը կը հրաւի-րեն, մանաւանդ անոնք որ դժուարաւ կը յաղ-թուին, ինչու որ ան գործքերը որոնք կ՝ըլլան դժուարութեանց յաղթելու, աւելի շուտ և խոր-արմատ ունակութիւնները կը հաստատեն, և սիրէ՛ որոնք որ զանոնք առջևդ կը դնեն։ Ա-նոնցմէ միայն արագոտն ամենայն յաջողակու-թեամբ և շուտութեամբ ջանք ըրէ՛ փախչելու, որոնք մարմնական փորձութեան մէջ քեզի ձգե-լու կը ջանան։

Երրորդ՝ հոգ տար խոհեմ և չափաւոր ըլլալու ան առաքինութիւններուն մէջ, որոնք կրնան մարմնոյ առողջութեան վնաս մը հասցնել, ինչպէս ճաղկանքներով զանի չարչրկել, խա-բրան հագնելով, պաքով, հոկմամբ և մտածու-թիւններով և այլ նման ճգնութիւններով։ Ին-չու որ այս առաքինութիւնները հետզհետէ ստանալ պէտք է, և անոնց իւրաքանչիւր աս-տիճանին համաձայն, ինչպէս յետոյ պիտի ը-սենք։ Իսկ ուրիշ պարզապէս ներքին առաքի-նութիւնները, ինչպէս աստուածսիրութիւնը, ուխարքը արհամարհելը, իր աչքերուն անարգ համարիլը, մեղքը և ախտաւոր կիրքերը ատելը, հեզ և համբերող ըլլալը, սիրելը ամէնքը, և մե-զի դէմ անիրաւութիւն ընողները, և այլ ասոնց նման բաները, հարկ չկայ զանոնք կամաց կամաց

ստանալ, և ոչ աստիճաններով անոնց գագաթը ելլել, այլ ինքնք ըրէ կատարելու ամէն գործք որչափ որ աւելի կատարեալ կրնայ ըլլալ։

Չորրորդ՝ քու ամէն խորհուրդներդ բաղձանքներդ և սիրդ Թող չի մոռանէ, ու չի յօժարի և փափաքի ուրիշ բանի մը, բայց եթէ յաղթելու այն կիրքը՝ որուն դէմ կը պատերազմիս, և անոր ներհակ առաքինութիւնը ստանալու։ Այս ըլլայ քեզի բոլոր աշխարքը, աս երկինքը և երկիրը, ասիկայ քու գանձդ և բովանդակ մեծութիւնդ, և ամէն բան ըլլայ Աստուծոյ փառքին և հաճոյքը համար։ Թէ որ ուտես և պաք բռնես, թէ որ աշխատիս և հանգչիս, հսկես և քնանաս, թէ որ տունը նստիս, և տնէն դուրս ելլես, թէ որ ջերմեռանդութեան եռանդ լինաս, եթէ ձեռագործ բանելու, քու խորհուրդներդ ամէն կերպով ուղղին յաղթելու և նուաճելու ըսուած կիրքը, և անոր ներհակն առաքինութիւնը ստանալու։

Հինգերորդ՝ ընդհանրապէս երկրային հեշտութեանց և հանգստութեան թշնամի եղիր, ինչու որ աս կերպով նուազ զօրութեամբ կը յարձակին վրադ մոլութիւնները, որոնք բոլորը արմատ ունին զհեշտութիւն։ Ուստի կտրելով զայս անձնուրացութեամբ՝ ալ անոնք զօրութիւننին և ուժերնին կը կորսնցընեն։ Իսկ թէ որ մէկ կողմէն մոլութեան մը և մասնաւոր ցանկութեան մը դէմ պատերազմիլ ախորժիս, և մէկալ կողմէն զբաղիս ուրիշ երկրային հեշտութեանց, թէ և մահուշափ չըլլան, այլ նեռելի մեղք, պատերազմդ խիստ և արունոտ ըլ-

լայ պիտի։ Եւ յաղթութիւնը շատ անստոյգ և ցանցառ։ Անոր համար անկինչ միտքդ պահէ այս տէրունական վճիռները. «Որ սիրէ զանձն իւր՝ արձակէ զնա, և որ ատեայ զանձն իւր յաշխարհիս յայսմիկ, 'ի կեանսն յաւիտենական պահեսցէ զնա»[1]։ «Եղբարք այսուհետև պարտապան եմք ոչ մարմնոյ՝ ըստ մարմնոյ կեալ։ Զի եթէ ըստ մարմնոյ կեցէք՝ մեռանելոց էք. իսկ եթէ հոգւով զգործս մարմնոյ սպանանիցէք՝ կեցջիք.»[2]։

Վեցերորդ և վերջին ազգարարութիւն, լաւ կ'ըլլար և գուցէ հարկաւոր որ դուն նախ ընդհանրական խոստովանանք ըլլաս ըստ ամենայնի պատշաճ և վայելուչ կերպով, որպէս զի զքեզ ապահովցընես Աստուծոյ շնորհաց մէջ ըլլալու, որմէ բոլոր շնորհքները և յաղթութիւնները սպասել պէտք է։

ԳԼՈՒԽ ԼԴ.

Թէ կանաց կանաց պէտք է առաքինութիւնները ստանալ, անոնցմով վարուելով իրենց ատենաւանութիւնն հանաձայն, և միտք դնելով նախ մեկուն, և յետոյ մեկալին։

Թէպէտև Քրիստոսի զօրականը՝ որն որ կատարելութեան ծայրը հասնելու կը փափաքի, ամենևին սահման մը իր զարգացմանը չի պիտի

1 Յովհ. ԺԲ. 25։
2 Հռովմ. Ը. 12, 13։

դնէ, 'ի վերայ այսր ամենայնի պէտք է որ սան-
ձէ խոհեմութեամբ մը հոգւոյն բաղձանքները,
որոնք անդ 'ի սկզբան չափէ դուրս եռանդով
կը գրգռուին, և յետոյ կը նուազին և զմեզ կէս
ճամբան կը թողուն։ Ուստի բաց 'ի ըսածէս
զմեզ արտաքին կրթութեանց մէջ չափա-
ւորելուն վրայօք, գիտնալու է ևս թէ ներքին
առաքինութիւններն ալ քիչ քիչ ստանալու
ենք և իրենց աստիճանին համաձայն, որով
սանկ քիչը՝ շուտով շատ և երկարատև կ'ըլ-
լայ։ Ուստի զոր օրինակ ձախորդ բաներու
մէջ, հասարակօրէն պարտական չենք զմեզ կըր-
թելու, և անոնց վրայ ուրախանալու, և բաղ-
ձալու զանոնք, թէ որ յառաջ անցած չըլլանք
համբերութեան առաքինութեան ստորին աս-
տիճաններէն։

Դարձեալ խորհուրդ կուտամ ոչ ամէնուն և
ոչ իսկ շատ մը առաքինութեանց միանգամայն
ետևէ իյնալու, այլ սկիզբը միայն մէկուն, և յե-
տոյ ուրիշներուն, վասն զի ասով աւելի դիւրին
և պինդ առաքինական ունակութիւնը հոգւոյն
մէջ կը տնկուի, որովհետև մի միայն առաքի-
նութեան յարատև կրթութեամբը՝ ամէն առ-
թին յիշողութիւնը աւելի պատրաստ և կազմ
դէպ 'ի անոր կը վազէ, իմացողութիւնը ևս
միշտ զանի ստանալու համար նոր կերպեր և
պատճառներ հնարելու ետևէ կ'ըլլայ, և կամ-
քը դիւրագոյն և մեծ յօժարութեամբ կը հակի,
որոնք սանկ չէին ըներ՝ եթէ շատ մը առաքի-
նութեանց տարածուէին։ Եւ այսպիսի մէկ ա-
ռաքինութեան վրայօք միայն եղած ներգոր-

ծութիւնները՝ իրարու մէջ ունեցած համաձայ-
նութեանը պատճառաւ նուազ աշխատանքով
կ'ըլլան այս միակերպ կրթութեամբը. վասն զի
մէկ առաքինութիւնը իրեն նմանը կը կոչէ և
կ'օգնէ անոր, և իրենց այս նմանութեանը հա-
մար 'ի մեզ մեծագոյն ազդեցութիւն կը տպա-
ւորուին, գտնելով արդէն արտին բնակարանին
մէջ ամրոցը պատրաստուած և տրամադրեալ
նորէն յառաջ եկողները ընդունելու, ինչպէս
որ անոնց նմաններուն առաջուց տեղ տուաւ։

Այս փաստերը այնչափ ուժ ունին, որչափ որ
ստոյգ կը գիտցուի թէ ով որ մէկ առաքինու-
թեան մէջ լաւ կը կրթուի, կը սորվի ևս ուրիշին
մէջ կրթուելուն կերպը, և սանկով մէկուն ա-
ւելնալուն՝ ուրիշներն ալ անոր հետ կ'ուժին, ի-
րենց մէջ ունեցած անբաժանելի միաւորու-
թեանը համար, մի և նոյն աստուածային լու-
սէն ցաթած նշոյլներ ըլլալնուն։

ԳԼՈՒԽ ԼԵ.

Առաքինութիւնները առանալու միջոցներուն վրայ, և թէ ինչպէս պարտական ենք զանոնք գործածել միջոց մը ժամանակ մեր մէջ միայն զմեզ կրթելու համար։

Առաքինութիւնը ստանալու համար բաց 'ի
վերի ըսածէս՝ կը պահանջուի քաջասիրտ և մեծ
հոգի, կամք մը ոչ թէ տկար և թոյլ, այլ հաս-
տատուն և զօրաւոր. և ստոյգ ենթադրելով

թէ շատ ներհական և դժնդակ բաներէն անց-
նիլ պէտք է։ Բայց'ի անկէ պէտք է ունենալ և
անոնց մասնաւոր միտում և յօժարութիւն, զոր
հնար է ձեռք բերել, մտածելով թէ սրբոյ Աս-
տուծոյ հաճելի են, և ինչպէս ըստ ինքեան ազ-
նիւ և գերազանց են, և մեզի օգտակար և հար-
կաւոր, ըստ որում ասոնցմէ ամէն կատարե-
լութիւն ունի իր սկիզբը ու վախճանը։ Ամէն
ուստու գործունեայ առաջադրութիւններ դնե-
լու է կրթուելու ան օրուան հաւանօրէն պա-
տահելիք իրաց համաձայն, յորում շատ անգամ
քննելու ենք թէ զանոնք'ի գործ դրինք թէ ոչ.
նորոգելով յետոյ զանոնք աւելի ուժով։ Եւ այս
ամէնը կատարելու է'ի մասնաւորի ան ատե-
նը ձեռքերնիս առած առաքինութեանը վրա-
յօք։ Նմանապէս սրբոց օրինակը, մեր աղօթք-
ները և Քրիստոսի վարքին և չարչարանաց մը-
տածականները՝ ամէն հոգևոր կրթութեան
մէջ այնչափ հարկաւոր, բոլորը գլխաւորաբար
առաքինութեան ան նպատակին ուղղելու ենք
որուն մէջ զմեզ ան ատենը պիտի կրթենք։ Նոյն
բանը ընելու է և ամէն դիպուածներուն մէջ
թէպէտև զանազան ըլլան իրարու մէջ, ինչպէս
'ի մասնաւորի յետոյ ըսենք պիտի։ Առաքինու-
թեան ներքին և արտաքին գործքերուն մէջ ա-
նանկ պէտք է որ զմեզ վարժեցընենք, որ զա-
նոնք կատարենք այն պատրաստականութեամբ
և դիւրութեամբ՝ որով յառաջ սովորութիւն ու-
նէինք կատարելու բնական յօժարութեանց
համաձայն եղածները։ Որոնց որչափ աւելի
հակառակ ըլլան (ինչպէս ուրիշ տեղ ըսինք)

այնչափ աւելի շուտով մեր հոգւոյն մէջ բարի
ունակութիւնները կը մոցընեն։ Աստուածա-
շունչ գրքին սրբազան առածները ձայնով բա-
ցայայտեալ կամ գէթ մտաք, վայել և յարմար
եղանակով՝ առաջիկայ կրթութեան մէջ մեզի
օգնելու համար հրաշալի գօրութիւն մը ունին։
Ուստի պարտական ենք ամփոփել մեր մտաց
շտեմարանին մէջ անոնցմէ շատերը որոնք կը
վերաբերին ան առաքինութեան, որով զմեզ
կրթենք պիտի, և ստէպ օրուան ընթացքին մէջ
զանոնք որոճանք, մանաւանդ երբոր դիմացնիս
ներհական կիրքեր կ'ելլեն, ինչպէս օրինակի
համար, եթէ համբերութիւն ստանալու աղէկ
նպատակ, կրնանք յետագայ և կամ ասոր նման-
ները զուրցել. « Որդեակք, երկայնամիտ եղէ-
ք'ի վերայ բարկութեան հասելոյ ձեզ յԱս-
տուծոյ [1]։ Համբերութիւն տանկաց մի կորիցէ
'ի սպառ [2]։ Լաւ է այր երկայնամիտ քան զհզօր,
և որ յաղթէ բարկութեան, քան որ առնու-
ցու զքաղաք հզօր [3]։ Համբերութեամբ ձերով
ստացիք զոգիս ձեր [4]։ Համբերութեամբ ըն-
թացացք'ի պատերազմն որ առաջի կայ մեզ» [5]։
Նմանապէս նոյն դիտմամբ կրնանք ըսել յետա-
գայ պզտիկ մաղթանքները և կամ ասոնց
նմանները. Երբ ով Աստուած իմ, երբ սիրտս
համբերութեան վահանը հագնի պիտի, երբ

1 Բարոյ. Դ. 26։
2 Սաղմ. Թ. 19։
3 Առակ. ԺԶ. 32։
4 Ղուկ. ԻԱ. 19։
5 Եբր. ԺԲ. 2։

տեառն իմոյ սիրտը հաճեցընելու համար առանց տակնուվրայ ըլլալու հանդարտ սրտով ամէն վիշտերը քաշեմ պիտի։ Ո՛վ սիրելի նեղութիւնք, դուք դիս կը հասցընէք իմ տեառնս Յիսուսի նմանակից ըլլալու, որ ինձի համար չարչարանաց դառն բաժակը խմելու յանձն առաւ. ով ինձի կուտար միակ կեանք հոգւոյ իմոյ, գոհ սրտով կրելու քու փառքիդ համար ամէն վիշտերը։ Երնեկ ինձի, եթէ անձկութեանց հնոցին մէջ բաղձանքի կրակով մը վառուէի աւելի մեծ բաներ կրելու քեզի համար։

Գործածելու ենք այս համառօտ մաղթանքները, և կամ ուրիշ աղօթքներ՝ որոնք առաքինութեանց մէջ մեր առաջ երթալուն նպաստաւոր ըլլան, և ինչ որ մեզի ջերմեռանդութեան հոգին սրվեցընէ պիտի։ Այս մաղթանքները երկնասլաց կը կոչուին, ինչու որ նետի և սլաքի մը պէս են որ դէպ 'ի վեր երկինքը կ'արձակուին, և զմեզ առաքինութեան յորդորելու մեծ զօրութիւն մը ունին. և Աստուծոյ սիրտը թափանցած ներս կը մտնեն, թէ որ երկու բան իրրև կրկին թեւեր ընկերակից ունենան։ Առաջինը՝ առաքինութեանց մէջ մեր կրթուելուն համար՝ Աստուծոյ ունեցած ուրախութեան ճշմարիտ ծանօթութիւնը։ Երկրորդը՝ զանոնք ստանալու ճշմարիտ և եռանդուն բաղձանք մը, վախճանաւ միայն անոնցմով անոր աստուածային մեծվայելչութիւնը հաճեցընելու համար։

ԳԼՈՒԽ ԼԶ.

Թէ առաքինութեան կրթութեան մէջ յարատեւ ջանքով քալել պէտք է։

Առաքինութեանց ստացմանը համար իրաց մէջ ամէնէն կարեւորը և հաւկաւորը, բաց 'ի վերի սրվեցուցածէս՝ առաջին գործը այս է, որ մեր հոս տեղ առաջադրած նպատակին հասնելու համար՝ պէտք է յարատեւել միշտ յառաջադէմ երթալով, ապա թէ ոչ մինակ կանգ առնելովնիս՝ ետ կը դառնանք։ Վասն զի երբոր մենք առաքինական գործքերէն դադրինք նէ, հարկաւ կը հետեւի որ զգայական յօժարութեան և այլ իրաց բռնի մղմամբը որոնք արտաքուստ զմեզ կը գրգռեն, շատ անկարգ ախտեր 'ի մեզ ծնանին. որոնք կը ջնջեն կամ գոնէ առաքինութիւնները կը նուազեցընեն, թող թէ զուրկ կը մնանք շատ հնարքներէն և պարգևներէն զորոնք կրնայինք 'ի տեառնէ ընդունել յառաջադէմ երթալովնիս։ Այսոր համար հոգևորական ճամբան՝ ճամբորդին երկրիս վրայ ըրած ճամբէն տարբեր է, որովհետև ասոր մէջ մէկ մը կանգ առնելով՝ արդէն ըրած ճամբէն բան մը չի կորսընցներ, ինչպէս որ հոգևորին մէջ կը կորսընցընէ։ Այսկէ 'ի զատ երկրաւոր պանդխտին աշխատութիւնը մարմնոյ շարժման շարունակութեամբը կ'աւելնայ, ուր որ հոգւոյ ճամբուն մէջ որչափ առաջ դացած ճամբայ ըլլալ, այն-

չափ աւելի արուեստները կը սրին և ծունկերը կը զօրանան։ Ինչու որ առաքինական կրթութեամբը ստորին մասը, որն որ իր ընդդիմանալովը խիստ և աշխատալի առաքինութեան ճամբան կը գործէր, միշտ աւելի կը տկարանայ, իսկ վերին մասը ուր որ առաքինութիւնը կը բնակի աւելի կը հաստատուի և կ'ամրանայ։ Ուստի բարիքին մէջ առաջ երթալով՝ զգացած նեղութիւնը մարած կը մեղմանայ, և ներքին խնդում մը որ ատոր ածային ներգործութեան ձեռօք կը խառնուի նոյն նեղութեան հետ՝ օր ըստ օրէ աճելով կը մեծնայ։ Այս կերպ շարունակելով միշտ զիւրութեամբ և բերկրանօք առաքինութենէն յառաքինութիւն երթալու՝ վերջապէս լեռան գագաթը կը հասնինք, ուր հոգին կատարելութիւնը հագած՝ կը գործէ ալ առանց ճանձրանալու, մանաւանդ թէ բերկրութեամբ և ցնծութեամբ։ Վասն զի արդէն յաղթելով և տիրելով անկարգ կրիցն, և բովանդակ ստեղծուածներէն և անձէն իսկ աւելի վեր կեցած՝ երջանիկ կ'ապրի բարձրելոյն արտին մէջ, ուր քաղցրութեամբ աշխատելով իր հանգիստը կը գտնէ։

ԳԼՈՒԽ ԼԷ.

Թէ առաքինութեանց կրթութեան մէջ յարատևելով՝ պէտք չէ զանոնք ստանալու հանար առչև նիս ընծայուած առիթները զանց ընել։

Բացայայտ տեսանք թէ կատարելութեան դիտած ճամբուն մէջ մեզի կը վայլէ միշտ առաջ քալել, առանց երբէք տեղ մը կայնելու։ Այս բանը ընելու համար՝ լաւ զգոյշ և արթուն կենալու ենք ձեռքերնէս չի փախցընելու որ և իցէ առիթ մը, որ առաքինութիւններ ստանալու համար առջևնիս կը ներկայանայ։ Ուստի ասի աղէկ չէն հակընար որոնք որ կը հեռանան ըստ կարի ներհակ իրերէն, որք այդ գործքին մէջ իրենց ծառայել կրնային։ Այդ եթէ կը բաղձայ (սովորական բերած օրինակէս չի շեղելու համար) համբերութեան ունակութիւնը ստանալ, քեզի անհամբերութիւն պատճառող անձինքներէն, գործքերէն, և խորհրդներէն հեռու կենալու չես։ Այսոր համար քանի մի քեզի տարժանելի երևցած գործքերէն քաշուելու չես, այլ կենցաղավարելով և խօսակցելով քեզի ձանձրութիւն տուողներուն հետ՝ միշտ պատրաստ և տրամադրեալ կամք ունեցիր սիրով կրելու որ և իցէ վրդ եկող տաղտկալի և անախորժ իրերը, վասն զի ուրիշ կերպ վարուելով՝ երբէք համբերութեան չես վարժուիր։ Այնպէս եթէ գործ մը քեզի ձանձրութիւն

տայ, կամ ինքիրմէն, կամ տուօղին կողմէն, կամ վասն զի քեզի աւելի հաճոյ երևցած գործք մը կը խափանէ, այսու ամենայնիւ դուն նոյնը շարունակելէն մի՛ դադրիր, թէ պէտև վիշտ մը անկէ զգայիր, և մեկզի թողլէն զայն՝ հանգիստ գտնայիր. ապա թէ ոչ ամենևին կրել չես սորվիր, և ոչ իսկ ճշմարիտ հանգիստը կը գտնես, կիրքէ մաքրուած և առաքինութեամբ զարդարուած սրտէ մը չի բղխելուն:

Նոյնը կ'ըսեմ միտքդ երբեմն յոգնեցընող և վրդովող ձանձրալի խորհրդոց վրայ, զորոնք բոլորովին քեզմէ վռընտելու չես, որովհետև այն նեղութեամբ որով զքեզ կը նեղեն՝ միանգամայն ևս կ'օգնեն զքեզ վարժեցընելու ներհակ իրերը քաշելու: Եւ ով որ ուրիշ կերպ քեզի կ'ըսէ, այնպիսին յաւէտ քեզի կը սորվեցընէ զգացած նեղութենէն փախչելու, քան թէ բաղձացած առաքինութիւնդ ստանալու: Իրօք որ կը վայլէ երբեմն՝ մանաւանդ նոր կրթուող զինուորին, տընտընալ և կռուիլ ըսուած առիթներուն մէջ զգուշութեամբ և աչալրջութեամբ, երբեմն դիմացէ դիմաց զանոնք զարնելով, երբեմն անոնցմէ ետ քաշուելով, աւելի կամնուազ ստացած ուժին և քաջասրտութեանը համեմատ: Այլ պէտք չէ՛ բնաւ կռնակ դարձընել, և պատերազմին տեղը թողուլ, անանկ որ ետ քաշես բոլորովին դիմամարտութեան ամէն պատեհ առիթը, վասն զի թէպէտև ան ատենը իյնալու վտանգէն կը պրծինք, սակայն ապագան մեծագոյն վտանգով մը կը բռնուինք անհամբերութեան հարուածներէն, յառաջուց զէնք և զրահ հագած և զօրացած չըլլալնուս ներհական առաքինութեան պրթութեամբը: Բայց այս խրատները մարմնոյ ախտին չեն պատշաճիր, որուն վրայ արդէն առանձին խօսեցանք:

ԳԼՈՒԽ Լ.

Թէ առաքինութեանց ստացմանը համար պատերազմող ամենն պատեհ առիթները սիրել պէտք է, և աւելի դժուարութիւն հանօղները:

Որդեակ իմ, բաւական չեմ սեպեր որ դուն չըխորհիս առաքինութեան ստացմանը համար առջևդ ելած առիթներէն, այլ կ'ուզեմ ևս որ երբեմն զանոնք փնտռես մեծայարդ և մեծագին բանի մը պէս, և ընդդիմես միշտ ուրախութեամբ շուտով անոնց երևնալուն, և զանոնք աւելի պատուական և յարգի համարիս, որոնք աւելի քու զգայութեանցդ անհաճոյ են: Այս ամէնը Աստուծոյ օգնութեամբը կը կատարես, եթէ լաւ մտքիդ մէջ տպաւորես յետագայ մըտածութիւնները:

Նախ թէ առիթները յարմար միջոց են, մանաւանդ հարկաւոր առաքինութիւնները ստանալու համար: Ուստի երբոր 'ի տեսանէ ասոնք խնդրես, միանգամայն անոնք ալ խնդրէ, ապա թէ ոչ աղօթքդ պարապ կ'ելլէ, և դուն ինքիրմովդ քեզի դէմ կը վառուիս, ինչուան զԱստուած փորձելու ևս կը հասնիս, վասն զի հաստատակամ-

րէն ինքը համբերութիւնը չի տար առանց նեղութեանց, և ոչ իսկ խոնարհութիւնը առանց արհամարհանքի։ Այնպէս մնացած բովանդակ առաքինութեանց վրայ հնար է ըսել, որոնք անշուշտ ներհակ արկածներու ձեռքը կը ժառանգուին, և այս դիտմանը մեզի գործակից կ'ըլլան, անոր համար աւելի մեզի սիրելի ըլլալու են և հաճոյական, որչափ որ աւելի աշխատալի են. իբր զի այսպիսի դիպուածոց մէջ մեր ըրած գործքերը զօրաւոր և ազդու են, և առաքինութեան ճամբան մեզի աւելի դիւրին կերպով և շուտով կը բանան։ Սակայն նաև մանտրտիկ առիթները յարգելու ենք, և անոնց կրթութենէն ետ քաշուելու չենք, ինչպէս օրինակի համար նայուածքէ մը, կամ մեր կամքին դէմ խօսքէ մը, ըստ որում այսպիսի գործք աւելի յաճախ են, թէ և նուազ սաստիկ անոնցմէ՝ որոնք մեծամեծ դժուարութեանց մէջ մեզմէ կ'ըլլուին։

Իսկ երկրորդ խորհրդածութիւնը (զոր վերը ևս յիշեցի) մտածելն է թէ ինչ որ մեզի հանդիպի ան ամէնը Աստուծմէ յառաջ կուգայ մեր բարութեան և օգտին համար, և որպէս զի անկէ մենք պտուղ քաղենք։ Եւ թէպէտև առանց քանի մի հատին վրայ, որ մեր և կամ ուրիշներուն կողմանէ պակասութիւնք են, (ինչպէս ևս ուրիշ տեղ ըսինք), հնար չէ ըսել թէ Աստուծմէ կուգան, որն որ մեղքը կ'ատէ, 'ի վերայ այսր ամենայնի կ'ըսուին Աստուծմէ թոյլտուութեամբ եկեալ, ըստ որում զանոնք արգելել կրնալով չ'արգելեր, բայց մնացած ամէն

վիշտերը և տառապանքները որոնք մեր վրայ կուգան կամ մեր պակասութեանց համար և կամ այլոց չարութեան պատճառաւ Աստուծմէ և Աստուծոյ են. վասն զի ինքը անոնց հետ կը զուգընթանայ, և ինչ որ չ'ուզեր որ ըլլայ, իր ամենամաքուր աչացը չափէ դուրս դարձելի տգեղութիւն մը պարունակելուն համար, կ'ուզէ որ մենք զայն կրենք այն առաքինութեան օգտին համար զոր մենք անկէ քաղել կրնանք, և ուրիշ արդար ու մեզի անծանօթ պատճառներուն համար։ Ուստի ասոյդ գիտնալով մենք թէ Աստուած կ'ուզէ որ մենք կրենք յօժարութեամբ որ և իցէ նեղութիւն որ մեզի գայ ուրիշներէն և կամ մեր անօրէն գործքերէն, ըսել թէ Աստուած չ'ուզէր (ինչպէս շատերը իրենց անհամբերութիւնը ծածկելու համար կ'ըսեն) մանաւանդ թէ զէշ գործքերէն կը գանի, ուրիշ բան չէ եթէ ոչ ընդունայն պատրուակով ծածկել սեպհական յանցանքը, և խաչը մերժել, զոր որ չենք կրնար ուրանալ թէ Աստուած կը հաճի որ մենք տանինք։ — Ա՛լ աւելի կ'ըսեմ բաղդատելով մնացածը, թէ Աստուած աւելի կը հաճի որ մարդկանց անիրաւութենէն մեր վրայ հասած վիշտերը քաշենք, մանաւանդ եթէ առաջուց անոնք մեզմէ մեծապէս օգուտ և բարերարութիւն տեսած էին, քան թէ տարժանելի պատահարներէն յառաջ եկած վիշտերը, իբր զի հպարտ բնութիւնը հասարակօրէն աւելի առջիններէն քան թէ յետիններէն կը սանձուի, և դարձեալ վասն զի կամքոմիս մենք զանոնք կրելու ժամանակիս, գերազոյն կեր-

պով զոհ կ՚ընենք և կը բարձրացընենք մեր Աստուածը, հետը գործակից ըլլալով այն իրաց մէջ, ուր ծայրագոյն կը փայլէ անոր անպատում բարութիւնը և ամենակարողութիւնը, որ է չարութեան և մեղքի մահաբեր թիւնէն՝ առաքինութեան և բարիքներուն պատուական և համեղամաշակ պտուղ քաղել։ Այսոր համար գիտցի՛ր, որդեակ, թէ նոյն ատեն որ Աստուած՚ի մեզ արդեամբք զայն գործելու, և ըստ սրժանուցն փոյթ տանելու ասանկ առաքինութեանց փառաւոր ստացմանն կենդանի իղձ ու փափաքը տեսնէ, ինքը մեզի կը պատրաստէ սաստկագոյն փորձութեանց և աւելի խիստ ախիթներուն բաժակը, որպէս զի ատենին խմենք զայն. և մենք անոր սիրոյն և մեր բարիքին տեղեակ ըլլալով՝ կամօք և յօժարութեամբ պարտական ենք ընդունել զայն կոյր զկուրայն և բոլորը խմել պարպել վստահութեամբ և պատրաստ սրտով, վասն զի դեղ մըն է հարատար բժշկին ձեռօք որն որ չի կրնար սխալիլ, հոգւոյ այնչափ օգտակար նիւթերէն բաղադրեալ՝ որչափ որ աւելի լեղի են ըստ ինքեան։

ԳԼՈՒԽ ԼԹ.

Թէ ինչպէս կարող ենք զանազան առիթներով վարուիլ մի և նոյն առաքինութեան կրթութեանը համար։

Վերը տեսանք թէ ինչպէս աւելի պտղաւէտ է միջոց մը ժամանակ մինակ մէկ առաքինութեան՝ քան թէ միանգամայն շատերուն մէջ կրթուիլը. և թէ ըստ այնմ՝ կարգի դնելու ենք առջևնիս եղած առիթները թէ և զանազան ըլլան իրարու մէջ։ Հիմայ լաւ նայէ թէ ինչպէս այս բանը հնար է գործադրել ամենայն դիւրութեամբ։ Կը հանդիպի երբեմն որ մի և նոյն օր նաև մի և նոյն ժամ յանդիմանուինք գործքի մը համար թէ և բարի ըլլայ, կամ պատճառանքով մը մեր վրայ տրտունջ լսենք, և կամ երբեմն խստութեամբ մերժուի ինորհք մը զոր խնդրած էինք, կամ որ և իցէ մանաբրտիկ բան մը, և կամ թէ առանց պատճառի վրանիս կասկածին, կամ յանկարծ մեր վրայ մարմնական ցաւ մը գայ, կամ հրամայուի մեզի ձանձրացուցիչ գործք մը, կամ առջևնիս գնեն անհամ կերակուր մը, կամ ուրիշ աւելի ծանր և չի քաշուելիք բաներ հանդիպին, որոնցմով լի է մարդուս թշուառ կեանքը։ Այսպիսի և այլ նման դիպուածներու մէջ, թէպէտև հնար է յառաջ բերել առաքինութեան զանազան գործքերը, սակայն ցուցուցած կանոնին հե-

տակիլ ուղելով, կրթել պէտք է զմեզ այնպիսի գործքերով՝ որոնք բոլորովին համաձայն ըլլան ան ատենը ձեռքերնիս եղած առաքինութեանը: Ինչպէս օրինակի համար, եթէ ըսած աւիթներուն գալու ժամանակը համբերութեան մէջ կրթուինք, գործքեր ընելու ենք զանոնք յօժարութեամբ և սրտի խնդումով քաշելու համար: Եթէ մեր հրահանգը խանարհութեան վրայ ըլլայ, մենք զմեզ ճանչնալու ենք ան ամէն ներհակ պատահմանց մէջ արժանի ամէն չարիքի: Եթէ հնազանդութեան վրայ, մենք զմեզ պիտի ենթարկենք յօժարութեամբ Աստուծոյ ամենակարող ձեռքին, և զինքը հաճեցընելու համար (վասն զի ինքը ասանկ կ'ուզէ) բանաւոր արարածներուն՝ ինչուկ նաև անբաններուն, որոնցմէ մեզի կուգան կը հասնին այս նեղութիւնները: Եթէ աղքատութեան վրայ, պարտական ենք գոհ ըլլալ մերկ և զուրկ կենալու ամէն աշխարքի մխիթարութենէն, եղեր է մեծ, եղեր է պզտիկ: Թէ որ սիրոյ վրայ ըլլայ, պիտի ջանանք սիրոյ ներգործութիւններ ընելու թէ մեր ընկերոջ նկատմամբ իրրև գործք բարւոյն, զոր կրնանք ստանալ, և թէ՛ տեառն Աստուծոյ նկատմամբ՝ իրրև գլխաւոր և սիրուն պատճառ, որմէ յառաջ կը բղխին և կամ թոյլ կը տուին այն վշտակրութիւնները մեր կրթութեանը և հոգևոր օգտին համար: Այս մեր ըսածէն տարբեր պատահմանց վրայօք՝ որոնք օր ըստ օրէ կրնան հանդիպիլ, կը հասկըցուի միանգամայն թէ ինչպէս հիւանդութեան մի միայն ատթին մէջ և կամ այլ երկարատև նեղու-

թեան մէջ, կրնանք գործքեր ընել համեմատ այն առաքինութեան՝ որուն մէջ ան ատենը մենք զմեզ կը կրթենք:

ԳԼՈՒԽ Խ.

Իւրաքանչիւր առաքինութեան կրթութեան համար դնելիք ժամանակին, և մեր յառաջադիմութեան նշանակներուն վրայ:

Ինծի չի պատկանիր որոշել իւրաքանչիւր առաքինութեան կրթութեան մէջ յարատևելու ժամանակին չափը, վասն զի ասի կարգաւորելու է մասնաւորաց կարօտութեանը և վիճակին համաձայն, հոգևոր ճամբու մէջ եղած զարգացմանէն, և այն կրթութեանը մեզի առաջնորդողին դատաստանէն: Սակայն եթէ սըրտանց այն մեր ըսած եղանակներով և ջանքով մէկ մը մտադիր կենայ նէ, անշուշտ քիչ շաբաթներու մէջ շատ օգուտ կը տեսնէ:

Իսկ առաքինութեան մէջ առաջ երթալուն նշանն է, երբոր սրտի ցամաքութեան ատեն և հոգւոյ տառապանքին և նեղութեան մէջ, և հոգևորական ճաշակներու քաղցրութեանը պակսելուն, հաստատուն կը կայնինք առաքինական կրթութիւններնիս շարունակելով: Այսոր նաև շատ բացայայտ նշան կուտայ հակառակութիւնը, զոր որ ախորժական ցանկութիւնը մեզի դէմ կը մղէ առաքինութեան գործքերը յառաջ բերելուս ատենը, անանկ որ երբեմն ասիկայ

ուժէն կ'իյնայ, այնչափ բռնել պէտք է թէ ա-
նոր մէջ մենք առաջ գացած ենք։ Ուստի զգայա-
կան և ստորին մասին կողմէն հակառակու-
թիւն և ապստամբութիւն մը չզգալով, մանա-
ւանդ յանկարծական և անակնկալ շարժմունք-
ներու ատեն, ասի նշան պիտի ըլլայ թէ մենք
արդէն առաքինութիւնը ստացած ենք։ Եւ որ-
չափ որ մեր գործքերը հետերնին ընթացակից
ունենան մեծ պատրաստութիւն և պտի ուրա-
խութիւն մը, այնչափ աւելի կրնանք իմանալ
թէ այս կրթութեան մէջ առաջ դնացած ենք։

Սակայն աղէկ նայել պէտք է, երբէք չհա-
մարելու թէ մենք ստուգապէս առաքինութիւն-
ներ ստացեր, և բոլորովին յաղթեր ենք մեր
կրիցն. թէպէտև երկար ատեն և յարատև
պատերազմներէն վերջը չզգանք անոնց խլրտ-
մունքը, վասն զի հոս ալ կրնայ տեղ ունենալ
սատանային խորամանկութիւնը և հնարքը, և
մեր գիւրաբարոյ բնութիւնը, ուստի մոլու-
թիւն է երբեմն ան որ ծածուկ հպարտութեամբ
մը առաքինութիւն կ'երևնայ։

Այսոնցմէ 'ի զատ թէ որ կատարելութեան
աչքերնիս դարձընենք, որուն Աստուած զմեզ
կը կոչէ, թէ և առաքինութեան համբուն մէջ
շատ առաջ քայլած ըլլանք, պէտք է զմեզ հա-
մարել թէ տակաւին անոր սահմաններուն և
ոչ սկիզբը մտեր ենք։ Այնոր համար դուն նոր
դինուորի մը կամ նոր ծնած տղու մը պէս՝ պա-
տերազմին մէջ ձեռք զարկ կրթութիւններուդ
միշտ որպէս թէ նոր սկսած ըլլաս, և որպէս թէ
անցած ժամանակը բան մը ըրած չէիր։ Եւ կը

յիշեցընեմ քեզի, որդեակ, ջանք ընել աւելի ա-
ռաքինութեանը մէջ յառաջ երթալու, քան թէ
անձիդ զարգացման վրայ քննութիւն ընելու,
վասն զի տէր Աստուած մի միայն ճշմարիտ քըն-
նիչ երիկամանց մերոց, ոմանց զայն ճանչնալ
կուտայ և ոմանց ոչ, երբ կը տեսնէ թէ այնպիսի
ճանաչման հետևի պիտի հպարտութիւն մը կամ
խոնարհութիւն, և գթած հօր մը պէս մէկ քա-
նիէն վտանգը կը վերցընէ, և մէկ քանիին ա-
ռիթ կուտայ առաքինութեան մէջ աճելու։
Ուստի թէպէտև հոգին իր յառաջադիմու-
թիւնը չի տեսնէ, սակայն իր կրթութիւնները
պարտական է շարունակել, ինչու որ տեսնէ
պիտի զայն, երբ Աստուած հաճի անոր ցուցը-
նելու իրեն մեծագոյն օգտին համար։

ԳԼՈՒԽ ԽԱ.

*Թէ պէտք չէ թոյլ տալ մեզի բռնուելու վրոնդ-
ազատուելու յուժարարութենէն, զորոնք հաճե-
լարարութեամբ կը քաշենք, ուր և մեր անմեռ բաղ-
ձանքները կանոնաւորելու եղանակին վրայ,
որպէս զի առաքինի ըլլան։*

Երբ որ և իցէ նեղացուցիչ բանի մը մէջ գըտ-
նուիս, զոր համբերութեամբ կը քաշես, զգոյշ
կեցիր չխաբուելու երբէք սատանայէն կամ
անձնասիրութենէդ բաղձալով անկէ ազատուել-
լու, վասն զի ասրմէ երկու մեծամեծ վնասներ
քեզի կը ծագին։ Առջինը՝ եթէ այս բաղձանքը

ան տեսնը համբերութեան առաքինութիւնը քեզմէ չի վերցընէ նէ, դէթ կամաց կամաց գլեզ կը տրամադրէ անհամբերութեան։ Երկրորդը՝ քու համբերութիւնդ պակասաւոր կը դառնայ, և Աստուծմէն միայն կը վարձատրուէր այն միջոց ժամանակին քաշածիդ համար, ուր եթէ ազատուիլդ չի բաղձայիր, այլ բոլորովին անոր աստուածային բարութեանը ինքզինքդ յանձնէիր, թէպէտ և արդեամբք քաշածդ ժամ մը միայն և աւելի իսկ նուազ ըլլար, բարերար Տէրը երկար ժամանակի ծառայութեան մը պէս կ'ընդունէր։

Այս պատճառաւ թէ ասոր և թէ ամէն բաներուն մէջ ընդհանուր կանոն բռնէ՝ քեզ հեռացընելու քու բաղձանքներդ ուրիշ ամէն օտար առարկայէն, անանկ որ սոսկ պարզապէս նային իրենց ճշմարիտ և միակ նպատակնուն, որ է Աստուծոյ կամքը։ Ինչու որ այս կերպով արդար և ուղիղ ըլլան պիտի, և դուն որ և իցէ հակառակ պատահմունքներուն մէջ՝ չէ թէ միայն հանդարտ պիտի կենաս, հապա գոհ և ուրախ, որովհետև բան մը չի կրնալով պատահիլ առանց վերնագոյն կամքին, զայն ուզելուդ՝ ուզես պիտի և միանգամայն պիտի ունենաս ինչ որ բաղձաս և հանդիպի ամէն ժամանակ։

Այս բանը հնար չէ ըսել ուրիշին կամ քուկին մեղայ վրայօք, վասն զի Աստուած զանոնք չուզեր, սակայն տեղիք կ'ունենայ ամէն նեղութեանց մէջ, որոնք անոնցմէ և կամ ուրիշ տեղէն հասնին, որոնք թէպէտ այնչափ սաստիկ և ուժգին ըլլան և այնպէս ներս թափանցեն ինչուան սրտին կենդրոնը հասնելով՝ չարցընեն բնական կենաց արմատները, այսու ամենայնիւ առ ալ խաչ մըն է, որով Աստուած կը հաճի երբեմն իր սիրելի և հարազատ բարեկամները վարձատրել։ Եւ ինչ որ կ'ըսեմ համբերութեան վրայ, զոր ամէն դիպուածի մէջ ցուցընես պիտի, նոյնը իմացիր խրատանչիւր նեղութեան մնացեալ մասին նկատմամբ, և Աստուծոյ հաճութիւն է որ մենք կրենք, անկէ զմեզ ազատելու համար օրինաւոր միջոցները գործածելնէս ետքը։ Եւ ասանք ալ կանոնաւորել պէտք է Աստուծոյ անօրինմամբ և բարեհաճութեամբ, որ զանոնք կարգեց, որպէս զի անոնցմով վարուինք, վասն զի ինքն անանկ կ'ուզէ, և ոչ թէ չարաչար անոնց հակինք, և սիրենք և բաղձանք վիշտ քաշելէն ազատուիլ նիս, անոր հաճոյքը և ծառայութիւնը կատարելէն աւելի։

ԳԼՈՒԽ Խ Բ.

Սատանային դեմ կենալուն եղանակին վրայ երբոր կը խնդրէ անխոնարհութեամբ զմեզ խաբել։

Երբ խորագէտ սատանան կը տեսնէ թէ մենք վառվռուուն և լաւ կարգադրեալ բաղձանքներով չիտակ առաքինութեան ճամբան կը քալենք, որով յայտնի խաբէութիւններով չի կրնար զմեզ անկէ ետ դարձընել, լուսաւոր հրեշտակի կերպարանք մը կ'առնու և բարեզգած

խորհրդներով և սուրբ գրոց վերծանելով և սրբոց օրինակներով ստենչն դուրս զմեզ կը հրապուրէ կատարելութեան ծայրը անխոհեմութեամբ ընթանալու, որպէս զի յետոյ զմեզ դարուվար խորխորատը ձգէ: Ուստի զմեզ կը քաջալերէ խստիմարմինը ճաղկանքներով խոշտանգելու, ծոմերով, խարազն հագնելով, և այլ այսպիսի տանջանքներով, որպէս զի կամ հպարտանանք կարծելով (ինչպէս կը պատահի մանաւանդ կանանց) թէ մեծամեծ բաներ կը գործենք, և կամ հիւանդութիւն մը վրանիս գալով՝ ալ բարի գործքերուն անընդունակ ըլլանք, և կամ դիտմամբ որ շատ աշխատանքի և նեղութեան պատճառաւ հոգևոր կրթութիւնները մեզի ձանձրալի և զզուելի ըլլան, և ասանկ քիչ քիչ բարեգործութեան մէջ պաղելուինիս, առջինէն աւելի ցանկութեամբ մենք զմեզ յանձնենք յաւար երկրային հեշտութեանց և զբօսանքներու, ինչպէս որ շատերուն հանդիպեցաւ, որոնք հոգւոյ ամբարտաւանութեամբ անխոհեմ ուանդեան մը զրդմանը հետևելով՝ արտաքին անչափաւոր վիշտերով սեպհական զօրութեան չափը անցած, իրենց հնարքներուն մէջ կորսուեցան, և ծաղր եղան չարասէր ոտտանանեներուն: Այս իրենց չէր հանդիպէր եթէ ըսած բաներնիս աղէկ մտածէին, և թէ այս տեսակ վշտալի գործքերը թէպէտ և գովելի ըլլան և շահաւոր, սը որ մարմնոյ ուժ կայ, և անոր համեմատ հոգւոյ խոնարհութիւն, սակայն չափաւորութեան մը կարօտ է ամէն մէկուն բնութեանը և հանգամանացը համաձայն:

Եւ ալ որ այսպիսի խստակրօն վարքով չի կըրնար սրբոց չարչարակից ըլլալ, այնպիսոյն չեն պակսիր ուրիշ պատեհ առիթներ անոնց վարքին նմանելու մեծ և գործունեայ բաղձանքներով և ջերմեռանդն աղօթքներով Յիսուսի Քրիստոսի հշմարիտ նահատակաց փառաւոր պսակներու մենծ եռանդով փափաքելով, աշխարքը և իրենք զիրենք արհամարհելով, լռակացութեամբ և առանձնակեցութեամբ, ամէնուն հետ խոնարհ և հեզ ըլլալով, չարիք կրելով և աղէկութիւն ընելով աւելի իրեն հակառակ եղողին, զգոյշ կենալով ինչ և իցէ պակսութենէ՝ նաև թեթև ալ ըլլայ, որն որ աւելի հաճելի և ընդունելի է Աստուծոյ քան թէ մարմնոյ խոշտանգիչ կրթութիւնները, որոնց մէջ ես քեզի խորհուրդ կուտամ յաւէտ խոհեմաբար չափաւոր ըլլալու, որպէս զի պէտք ըլլայ նէ կարող ըլլաս զանոնք աւելցընելու, քան թէ չափազանցութեամբ հարկաւորիս զանոնք բաղդալին ձգելու, որովհետև ես կը համոզուիմ արդէն թէ դուն զքեզ չես ձգեր հոգևոր սեպուած ոմանց սխալանքին մէջ. որոնք հրապուրուելով և խաբուելով խարդախ բնութենէն, շատ փութաջան են իրենց մարմնական առողջութիւններն խնամելու: Եւ անանկ հոգ կը կրեն և նախանձախընդիր կը գտնուին՝ որ պզտիկ և դուշնաքեայ արկածի մը համար միշտ կսկածի կ'երթան և կը վախնան զայն կորսնցընելու: Եւ չկայ բան մը՝ որուն վրայ աւելի մտածեն կամ խօսին կամաք, ինչպէս այս իրենց կեանքին մասին խնամքին վրայ: Ուստի միշտ հոգ կ'ընեն աւելի իրենց քմնայ

պատշաճ կերակուրներ ճարելու քան թէ ստամոքսին, որն որ շատ անգամ աւելորդ զրգանոց պատճառաւ կը տկարանայ, ուր երբ այս ամէն բանին մէջ պատրուակ առնուի աւելի եռանդով կարող ըլլալ Աստուծոյ ծառայելու, ուրիշ բան չէ՛ ատիկայ, բայց եթէ ուղել առանց օգտի մը, մանաւանդ երկու կողմի վնասուք հանդերձ երկու գլխաւոր թշնամիները միկտեղ միաբանել, որոնք են հոգին և մարմինը, վասն զի այսպիսի խնամոց փութոյը մարմինը առողջութենէն կը զրկուի, և հոգին ջերմեռանդութենէն։

Եւ ասոր համար ամէն դիէն նկատեալ աւելի ապահով և աւելի օգտակար է այն ազատ ապրելուն եղանակը՝ որ ըստ խոհեմութենէս չի բաժնուիր՝ նկատմունք ունենալով ամէն մէկուն զանազան պայմաններուն և խառնուածքին, որոնք մէկ կանոնի տակ ամէնքը միանգամայն չեն իյնար։ Եւ կ՝աւելցնեմ թէ ուշ միայն արտաքին բաներուն մէջ, այլ նաև ներքին առաքինութիւնները ստանալու ատենը՝ պարտական ենք չափաւորութեամբ մը վարուելու, ինչպէս ցուցուցինք վերը աստիճան աստիճան առաքինութիւնները ստանալու համար։

ԳԼՈՒԽ ԹԳ.

Թէ որչափ զօրաւոր է՛ի մեզ մեր գէշ յօժարութիւնը, և ատտանայիւ հրապուրմունքը ընկերոջ վրայ յանդուգն դատողութիւնի մէջ զմեզ ձգելու, և ասոնց դէմ դնելու եղանակին վրայ։

Վերի ըսած սնափառութեան և անձին համարման մոլութենէն ուրիշ մը կը ծագի մեծապէս վնասակար մեզի, և այս է մեր ընկերաց վրայ յանդուգն դատողութիւն ընելնիս, որով դիրենք անարգ կը բռնենք, կ՝արհամարհենք և վար կը զարնենք։ Այս պակասութիւնը ինչպէս որ ծնունդ է գէշ հակման և հպարտութեան, նոյնպէս ալ անորմէ բորբոքումն և սնունդ ունի կամաւոր, վասն զի անով ինքն մէկ տեղ քանի կ՝երթայ կը մեծնայ և կ՝ուռի, առանց իմանալու հաճելով և խաբելով, ըստ որում առանց ուշ դնելու, այնչափ աւելի մենք զմեզ կը յանդգնինք բարձրացընելու, որչափ աւելի մեր մտքին և կարծիքին մէջ ուրիշները վար կը զարնենք, հեռու բռնելով զմեզ այն անկատարութիւններէն՝ զորոնք անոնց կը վերագրենք։

Իսկ իսրագէտ սատանան տեսնալով՝ի մեզ այդպիսի գէշ և զեղծ սրտի տրամադրութիւն մը, շարունակ զգաստ կը կենայ մեր աչուրները բանալ տալու, և զմեզ արթուն պահելու ուրիշին պակասութիւնները տեսնալու, քննելու,

և մեծցընելու համար։ Ձեն հաւատար և չեն հաս-
կընար անհոգ եղողները թէ սրչափ ինքը ջանք
և փոյթ կ'ընէ մեր մտքին մէջ ասոր կամ անոր
վրայ պզտիկ պակասութիւնները տպաւորելու,
չի կրնալով անանկ գործել մեծ պակասութեանց
վրայ։ Սակայն թէ որ ինքը քու միտդ կը հրա-
կէ, դուն ալ արթուն կեցիր, իրեն որոգայթնե-
րուն մէջ չկոնալու, և ընկերոջդ վրայ յանցանք
մը աչքիդ առջևը ներկայացընելուն պէս, շու-
տով անկէ մտքիդ խորհուրդը ետ դարձուր. և
թէ որ բերում մը զգաս դատողութիւն ընելու
անոր վրայ, անոր ետևէն մի երթար, և մտա-
ծէ թէ քեզի այդ իշխանութիւնը չի տրուեցաւ,
որ թէպէտ և արդեամբ ասանկ ըլլար, չեիր
կրնար անոր վրայ նաև չիտակ դատաստան մը
ընել՝ չորս կողմէն հաղարաւոր կիրքերէն պա-
տեալ պաշարուած ըլլալովդ, և շատ հակա-
մէտ առանց արդարացի պատճառի գէշ մտա-
ծելու։

Բայց ասոր աղդու և զօրաւոր դեղ ու դար-
մանն մատուցանելու համար կը յիշեցընեմ քեզի
որ քու սրտիդ պէտք եղած բաներուն զրաղե-
ցընես խորհուրդներդ, որով օրէ օր տեսնաս պի-
տի, թէ այնքան ընելու և աշխատելու գործ-
քեր ունիս 'ի քեզ և քեզի համար, որ քեզի
ժամանակ չի պիտի մնայ և ոչ կամք ուրիշին
գործքերը քննելու։ Բայց ասկէ միտք դնելով
այսպիսի կրթութեան մը ըստ պատշաճ եղա-
նակին, միշտ քու հոգւոյդ ներքին աչուքները
կը մաքրուին այն գէշ հիւթերէն, ուսկից այս
մահաբեր ժանտախտը յառաջ կուգայ։ Եւ գիա-

ցիր թէ երբոր ձախողակի գէշ բան մը մտածես
եղբօրդ վրայ, նոյն չարեաց արմատ մը սրտիդ
մէջ կը կենայ. որն որ չարութեամբ զգածեալ
ըլլալով՝ ասանկ իր մէջը կ'ընդունի նման ա-
ռարկաները՝ որոնք դիմացը կ'ելլեն։

Սակայն երբոր սիրտդ կ'ինայ ընկերդ դա-
տելու յանցանքի մը վրայ, քեզի դէմ բարկա-
ցած՝ որպէս թէ նոյն յանցանքին պարտական
ըլլաս, ըսէ սրտիդ մէջ. Ի՞նչպէս ես թշուառա-
կանս և եղկելիս աս և աւելի ծանր պակասու-
թեանց մէջ թաղուած ըլլալովս, յանդգնիմ պէտ-
տի գլուխս վերցընել տեսնալու և դատելու ուրիշ-
ներուն յանցանքը։ Եւ ասանկ ուրիշներուն դէմ
դարձուցած զէնքդ որ զքեզ վիրաւորէին պիտի,
քեզի դէմ գործածելովդ՝ վերքերդ կը բժշկես։

Այլ թէ որ գործած յանցանքը յայտնի է
և ծանուցուած, գթութեան սիրով անմեղադիր
ըրէ անի, և միտդ դիր թէ գաղտնի առաքի-
նութիւններ ունի քու այն եղբայրդ, որոնց պահ-
պանութեանը համար Աստուած թոյլ կուտայ
որ ինքն իյնայ, կամ քիչ մը ատեն այն պակա-
սութիւնը ունենայ, որպէս զի իր աչքին առջևը
ինք զինքն աւելի նուաստ բռնէ, և ուրիշին ևս
արհամարհութեամբ՝ խնարհելու պատուղ մը հանէ
և աւելի ընդունելի ըլլայ Աստուծոյ, որովհետև
շահը տուգանքէն մեծ ըլլայ։ Իսկ եթէ մեղքը
չէ թէ միայն յայտնի է, այլ ծանր և յամառ
սրտէ ծագած, մեղքովդ Աստուծոյ զարհուրելի
դատաստաններուն դիմէ, ուր տեսնաս պիտի թէ
ոմանք յառաջուց եղեռնագործ էին, յետոյ մեծ
արդութեան աստիճանին հասած են, և ոմանք

կատարելութեան բարձրագոյն վիճակէն որուն կ'երևնար թէ հասած ըլլայն, թշուառ խորխորատի մը մէջ կործանած ընկան։ Այսոր հասմար միշտ ահ ու դողի մէջ եղիր, ուրիշներէն աւելի՝ քու անձիդ վրայ։ Եւ ասոյդ գիտցիր թէ ընկերոջդ բարիքին վրայ բովանդակ զգացած ուրախութիւնդ՝ Հոգւոյն սրբոյ արդիւնքն է, և բոլոր անոր դէմ եղած նախատինքը, յանդուգն դատողութիւնը և դառնութիւնը մեր յատուկ չարութենէն և սատանայական թելադրութենէն յառաջ կուգան։ Սակայն թէ որ ուրիշներուն անկատարութիւնը վրդ ազդեցութիւն ըրած է, երբէք հանդարտ մի կենար, և ոչ աչքերուդ հանգիստ տուր ինչուան որ ըստ կարողութեանդ սրտէդ զայն արմատէն չ'խլես։

ԳԼՈՒԽ ԵԴ.

Աղօթքի վրայ։

Թէ որ մեր անձանց վրայ անվստահութիւնը, Աստուած ապաւինութիւնը և կրթութիւնը այս պատերազմին մէջ այնչափ կարևոր են, ինչպէս որ ինչուան հոս տեղ ցուցուեցաւ, սակայն ամէն բանէն աւելի աղօթքը հարկաւոր է (որ է չորրորդ պայման և զէնք զոր վերը գրինք), որով չէ թէ միայն վերը ըսուած բաները, հապա ուրիշ ամէն բարիք մեր Աստուծմէն կրնանք ստանալ։ Վասն զի աղօթքը գործիք մըն է ստանալու բոլոր այն շնորհները, ո-

րոնք այն բարութեան և սիրոյ աստուածային աղբիւրէն մեր վրայ առատ կը վազեն։

Աղօթքով (թէ որ լաւ կերպով ընելու ըլլաս) Աստուծոյ ձեռքը զէնք մը կուտաս քեզի համար պատերազմելու, և քեզի յաղթութիւնը տալու։ Եւ աղէկ կերպով աղօթելու համար պէտք է որ դուն անոր մէջ ունակացեալ ըլլաս, և կամ աշխատիս ունակութիւնը ստանալ հետագայ կերպով։

Նախ պարտական ես 'ի քեզ միշտ արժարծելու ամէն բանին մէջ աստուածային մեծվայելչութեան ծառայելուն ճշմարիտ բաղձանքը, որ կերպով որ իրեն աւելի հաճելի է։ Այս սուրբ բաղձանքը սրտիդ մէջ վառելու համար լաւ մտածէ, թէ Աստուած իրեն գերահրաշառաւելութիւններուն, բարութեան, մեծվայելչութեան, իմաստութեան, գեղեցկութեան և այլ անսահման իր կատարելութիւններուն համար մեծապէս արժանի է ծառայութեան և պատուոյ, և թէ ինքը քեզի ծառայելու համար չարչարանք և վիշտ կրեց երեսուն և երեք տարի, և քու նեխած հոգւոյդ մեղաց չարութենէն թունաւորուած վէրքերը՝ բժշկեց և առողջացուց, ոչ թէ ձիթով գինւով և ցնցոտի պատանքով, այլ իր ամենասուրբ երակներէն բղխած պատուական հիւթովը, և ձաղկանքներէն, փշերէն և դամերէն պատրաստած՝ անարատ մարմնովը։ Եւ սակէ 'ի զատ մտմտա թէ ինչչափ հարկաւոր է այս ծառայութիւնը, վասն զի մենք անով մեր անձանց վրայ կը տիրենք, յաղթանակող կ'ըլլանք սատանային վրայ, և Աստուծոյ սրդիները կը սեպուինք։

Երկրորդ պէտք է՛ էր որ կենդանի հաւատք և յոյս ունենաս թէ Աստուած կ՚ուզէ քեզի տալ ինչ որ իրեն ծառայութեանը և քու օգտիդ հարկաւոր է։ Այս սուրբ վստահութիւնը անօթ մըն է, զոր Աստուծոյ ողորմութիւնը իր շնորհաց գանձերովն կը լեցընէ, և որչափ աւելի մեծ և ընդունակ ըլլայ, այնչափ աւելի աղօթքը մեր սրտին մէջ աւելի ճոխ և հարուստ կը դառնայ։ Եւ ինչպէս կրնայ ժխտել անփոփոխելի ամենակարող Տէրը և իր պարգևացը մասնակից չընել զմեզ, քանի որ նոյն ինքն հրամայեց մեզի որ մենք խնդրենք անոնք, խոստանալով իսկ իր սուրբ հոգին, թէ որ հաւատով և յարատևութեամբ ան խնդրենք։

Երրորդ պէտք է որ աղօթքի կենաս՝ դիտաւորութեամբ ուզելու աստուածային կամքը միայն՝ և ոչ քուկինդ, թէ խնդրելուդ և թէ խնդրածդ ընդունելու ատենը, այսինքն է պէտք է որ դուն աղօթքի յորդորուիս ըստ ուրում Աստուած զայն կ՚ուզէ, և փափաքիս լսելի ըլլալու, վասն զի ինքն նաև ասանկ կը հաճի։ Մէկ խօսքով, դիտաւորութիւնդ պէտք է որ ըլլայ կամքդ միացընելու աստուածային կամաց հետ, և ոչ թէ աստուածայինը քուկինիդ քաշելու։ Վասն զի կամքդ շաղախած և ապականած ըլլալով անձնասիրութենէն, շատ անգամ կը վրիպի, և խնդրածը չի գիտեր, բայց աստուածայինը միշտ միացած է անպատում բարութեանը հետ, և ոչ երբէք կը սխալի, ուստի անիկայ կանոն է և թագուհի բովանդակ այլ ամենայն կամաց, և արժանաւոր է և կը

պահանջէ որ ամէնքը իրեն հետևին և հնազանդին։ Աստոր համար միշտ աստուածային կամաց հաճութեան համաձայն՝ շնորհքներ հայցելու է։ Եւ երբ երկրայիս թէ իր մը գուցէ անանկ չըլլայ, նոյնը խնդրէ՝ թէ ութեամբ ուզելու զայն՝ եթէ Աստուած ուզէ որ դուն նոյնը ունենաս։ Եւ ինչ որ ատոյդ գիտես թէ անոր հաճելի է, ինչպէս են առաքինութիւնները, յաւէտ դուն զանոնք խնդրես պիտի զինքը հաճեցընելու և պաշտելու համար, քան թէ ուրիշ ինչ և իցէ վախճանի կամ դիտման համար թէ և հոգևոր ըլլայ։

Չորրորդ՝ աղօթելու ժամանակդ խնդրուածներուդ համաձայն գործքերով զարդարուած ըլլալու ես, և աղօթքէն վերջը ջանք ըրէ՝ ընդունակ ըլլալու ան շնորհքներուն և առաքինութիւններուն՝ որոնց կը փափաքիս։ Վասն զի աղօթք ընելու կրթութիւնը անանկ պէտք է որ անձանց յաղթելու կրթութեանը զուգընթանայ, որ մէկը պատուա ընելով մէկային ետևէն գայ, ապա թէ ոչ առաքինութիւն մը խնդրել և անոր ստացմանը փոյթ չընել՝ յաւէտ ուրիշ բան չէր ըլլար եթէ ոչ զԱստուած փորձել։

Հինգերորդ՝ պէտք է որ խնդրուածներուն՝ հասարակօրէն ընդունած երախտեաց շնորհակալութիւնները կանխեն այս կամ այլ օրինակին համաձայն. Աստուած իմ, դուն ըստ անսահման բարութեանդ զիս ստեղծեցիր և փրկեցիր, և շատ անգամ առանց իմ գիտնալուս իմ թշնամեաց ժանիքներէն ազատեցիր, հիմայ օգնէ ինծի և խնդրուածս մի մերժեր, թէպէտ և ես միշտ ապստամբ և ապերախտ գըտ-

նուեցայ քեզի։ Եւ թէ որ մանաւոր առաքի-
նութիւն մը հանդիպի քեզի հայցելու, և ձեռքդ
հակառակ բան մը ունենաս անով զքեզ կրթե-
լու համար, մի մտն որ անոր շնորհակալ ըլա-
լու քեզի տուած պատեհ առթին համար, ինչու
որ աս ալ անոր ոչ փոքր բարերարութիւն մըն է։

Վեցերորդ՝ որպէս զի աղօթքը ստանայ իր
ուժը և կարողութիւնը զԱստուած գիջուցանե-
լու մեր աղերսին՝ անոր բնական բարութենէն
և ողորմութենէն, իր միածին որդւոյն շարչա-
բանաց և կենաց արդիւնքէն, և մեզի լսելու
անսուտ խոստմունքէն, կ'ուզես պիտի քու հայ-
ցուածներդ հետագայ մաղթանքներուն մէկովն
կամ աւելի. Շնորհէ՛ ինձի, Տէր, աս շնորհը
քու ծայրագոյն գթութեանդ համար։ Թո՛ւ մա-
ծին որդւոյդ արդիւնքները քու առջևդ զօրեն
քեզմէ խնդրածս ինձի համար ընդունելու։ Յիշէ՛
ով Տէր քու խոստմունքդ և կատարէ՛ իմ խնդ-
դրուածքս։ Երբեմն ալ իր շնորհը հայցէ՛ Մա-
րիամու Կուսին և այլ սրբոց արդեանցն համար,
որոնք գօրաւոր են Աստուծոյ առջևը և անորմէ
մեծապէս կը պատուին, ինչու որ այս կենաց
մէջ անոր աստուածային մեծվայելչութիւնը
փառաւորեցին։

Եօթներորդ՝ պարտական ես յարատևու-
թեամբ շարունակել աղօթքը, ինչու որ խոնարհ
յարատևութիւնը կը յաղթէ զանյաղթելին.
վասն զի թէ որ Աւետարանի մէջ յիշուած այր-
ւոյն փոյթը և յարատևութիւնը իր աղաչանքին
անիրաւ դատաւորը կակղեցուցին[1], ինչպէս գս-

1 Ղուկ. ԺԸ։

ութիւն չունենայ պիտի մեր հայցուածոց գի-
ջուցանելու զնոյն ինքն ամենայն բարեաց լու-
թիւնն։ Ուստի եթէ աղօթքդ վերջը Տէրը իր
այցելութիւնը ուշացընէ մաղթանքդ լսելու,
մանաւանդ հակառակ նշաններ ցուցընէ, դուն
շարունակէ՛ աղօթքդ անոր օգնականութեանը
վրայ յոյսդ հաստատուն և կենդանի պահելով,
վասն զի երբէք անոր չեն պակսիր, մանաւանդ
թէ անչափութեամբ առատ են ան ամէն բա-
ները՝ որ ուրիշներուն բարերարութիւն ընելու
համար հարկաւոր են։ Ուստի թէ որ քու կողմդ
արգելք չկայ, ապահով եղիր թէ միշտ կ'ընդունիս
ինչ որ խնդրես պիտի, կամ ուրիշ քեզի աւելի
օգտակար բան մը, և կամ երկուքն ալ մէկտեղ։
Եւ որչափ որ դուրս ձգուած աչքիդ երևնաս,
այնչափ աւելի խոնարհէ՛. և քու անարժանու-
թիւնդ մոռնալով՝ միտքդ անշարժ բռնէ՛ աս-
տուածային գթութենէն՝ քու վստահութիւնդ
օրէ՛ օր անոր վրայ աւելցընելով, որն որ կենդա-
նի և պինդ մնալովը, որչափ աւելի թշնամիները
զայն բաղխեն, այնչափ Աստուծոյ հաճելի կ'ելլայ։
Նմանապէս ամէն ատեն պէտք է որ ի-
րեն շնորհակալ ըլլաս, խոստովանելով զանի
բարի, իմաստուն, և սիրով լեցուն, ոչ ինչ
նուազ թէ մեր խնդրուածները շնորհելու ատե-
նը, և թէ մերժելուն. որ և իցէ դիպուածին
մէջ հաստատուն և ուրախ կենալով՝ խոնարհ
հպատակութեամբ անոր աստուածային նա-
խախնամութեանը։

Գ. ԼՈՒԽ ԽԵ.

Թէ ինչ է մոտաժական աղօթքը։

Մտաժական աղօթքը մտքի վերացում մըն է առ Աստուած ներգործութեամբ և զօրութեամբ խնդրելով զայն՝ որուն կը փափաքինք։ Ներգործականն է, երբոր մտաւորական խօսքերով շընորք մը կը խնդրուի այս կամ այլ կերպով. Ո՛վ Տէր Աստուած իմ, քու պատուդ համար շնորհէ ինձի այս շնորքը. և կամ այդպէս. Ո՛վ Տէր իմ, ես կը հաւատամ թէ քեզի հաճելի է և քու փառդիդ համար է որ ես քեզմէ խնդրեմ և ընդունիմ այս շնորքը, ուրեմն կատարէ իմ վրաս քու աստուածային բարեհաճութիւնդ։ Եւ երբոր գործքով թշնամիներէն հարստահարեալ ըլլաս, աղօթես պիտի այս կերպով. Արի, արտորա՛, ո՛վ Տէր, օգնէ՛ ինձի որպէս զի թշնամիներուն ձեռքը չի մատնուիմ. և կամ Ո՛վ Աստուած իմ, իմ ապաւէնս, հոգւոյս զօրութիւնը, արտորա՛ օգնելու ինձի որպէս զի չկնամ։ Եւ եթէ պատերազմը երկայն քչէ՝ շարունակէ դուն ես այս աղօթելուն կերպը, միշտ արիութեամբ դէմ դնելով հակառակորդիդ։ Յետոյ երբոր պատերազմին բռնութիւնը անցնի, դարձիր առ բարեգութին Աստուած, անոր առջևը դիր քեզի դէմ եղած թշնամին, և անոր դէմ դնելու տկար զօրութիւնդ ըսելով. Ահաւասիկ ո՛վ Տէր, բարութեանդ անարատ ձեռաց ստեղծուածը՝ զորն

որ քու պատուակոն արեամբդ նորէն գնեցիր. ահա թշնամիդ կը ջանայ քեզմէ անի հանելու և կլլելու։ Ես քեզի, ո՛վ Տէր, կը դիմեմ, քեզի միայն կ՚ապաւինիմ, զի դուն ամենակարող ես և բարի, և գիտես իմ տկարութիւնս և յոժարութիւնս կամքը անոր հետևելու, եթէ օգնութեան չի հասնիս. հապա օգնէ ինձի, ո՛վ յոյս իմ և հոգւոյս զօրութիւնը։

Զօրութենական խնդրուածքը կը հասկըցուի՝ երբոր մտքը առ Աստուած կը վերցուի, անորմէ շնորք մը ընդունելու համար, իրեն առջևը դնելով կարօտութիւնը առանց ուրիշ բան մը ըսելու կամ խօսելու։ Ինչպէս երբ մտքս կը վերցնեմ առ Աստուած, և հոն անոր ներկայութեանը առջև ինքզինքս անկարող կը ճանչնամ չարութենէն զիս պաշտպանելու և բարին ընելու, և անոր ծառայելու բաղձանքով մը վառուած՝ խոնարհութեամբ և հաւատքով ապասելով անոր օգնութեանը. կը համբերեմ և աչքս առնոյն ինքն Տէրն վեր կը վերցնեմ։ Այսպիսի ճանաչումը, վառուած բաղձանքը կամ հաւատքը՝ Աստուծոյ առջև աղօթք մըն է, որ զօրութեամբ կը խնդրէ ինձի պէտք եղածը. և որչափ որ ըսուած ճանաչումը բացայայտ և անկեղծ ըլլայ, և բաղձանքը եռանդագին, և հաւատքը կենդանի, այնչափ աւելի ազդեցութեամբ կը խնդրէ։

Կայ նաև այլ տեսակ մը զօրութենական աղօթքի աւելի համառօտ, որ պարզ հայեցուածով մը մտաց առ Աստուած կ՚ըլլայ, որպէս զի մեզի օգնէ. և այս հայեցուածքը ուրիշ բան չէ,

բայց եթէ լուսեայն դիմել մը և աղաչանք մը առաջուց մեր խնդրած շնորհին։ Արդ չանք ըրէ լաւ գործածելու աղօթքին այս տեսակը, և քեզի սովորական ըրէ, վասն զի (ինչպէս որ փորձէն յայտնի ըլլայ պիտի քեզի) սովկայ զէնք մըն է զոր դիւրաւ ամէն առթին և տեղւոյն կրնաս ձեռքդ պատրաստ ունենալ, և ամէն բանէն աւելի զօրաւոր և օգտակար է։

ԳԼՈՒԽ ԽԶ.

Մտածականի կերպով աղօթքին վրայ։

Մէջց մը ժամանակ աղօթել ուզելով՝ ինչպէս կէս ժամ մը և կամ ամբողջ ժամ մը և աւելի, աղօթքին վրայ աւելցընես պիտի Յիսուսի Քրիստոսի չարչարանաց և կենաց մտածութիւնը, միշտ մերձեցուցանելով անոր գործքերը ան առաքինութեանը զոր դուն կը բաղձաս։ Ինչպէս եթէ դուն կը փափաքիս ընդունելու համբերութեան առաքինութեան շնորքը, ըստ պարագային մտածելու ես ձաղկանաց խորհրդոյն քանի մի կէտերը։ Նախ թէ ինչպէս Պիղատոսին հրամանէն վերջը անօրէնութեան սպասաւորները աղաղակաւ և ծաղր ընելով քաշկըռտեցին մեր Տէրը սահմանուած տեղը զանի ձաղկելու համար։ Երկրորդ՝ թէ ինչպէս անհնարին կատաղութեամբ մը յարձակելով վրան՝ զինքը հանուեցուցին, և բոլոր անոր ամենամաքուր մարմինը բաց և մերկ կեցաւ։ Երրորդ՝ թէ

ինչպէս անոր անարատ բազուկները հաստատ չուանով կաշկանդեալ սեանը կապեցին։ Չորրորդ՝ թէ ինչպէս անոր մարմինը կը պատրաստէին անողորմ ձաղկանքներով, որով վտակի մը պէս անոր սատուածային արիւնը վազած գետինը կը թրջէր։ Հինգերորդ՝ ինչպէս հարուած հարուածի ետև կրկնելով մի և նոյն տեղ, արդէն առջի խոցուածոց վէրքի բերանը աւելի սաստիկ կը բացուէր պատուածներով։

Այսանկ համբերութեան առաքինութիւնը ըստանալու առաջադրութիւն դնելուդ ատենը՝ այս և ասոնց նման մտածութիւններով ըստ կարի զգայութիւններդ յորդորէ ցաւակից ըլլալու խիստ և անտանելի չարչարանացն՝ զոր ոգեսէր Տէրդ կրեց ամենասուրբ մարմնոյն իւրաքանչիւր անդամներուն՝ և մէկտեղ բոլոր մարմնոյն մէջ։ Յետոյ անոր ամենասուրբ հոգւոյն աչքդ դարձընես պիտի քննելով որչափ հնար է անոր համբերութիւնը և հեզութիւնը, որով կը կրէր այնքան վիշտերը. չդիտնալով յաղեցընել սրտին ծարաւը մեր օգտին և Հօրը փառքին համար աւելի մեծ և դժնդակ տանջանքներ քաշելէն։

Եղբը նայէ անոր սաստիկ փափաքին՝ որ դուն ուզես վիշտերդ կրել, և տես թէ ինչպէս աչքերը վերցընելով Հօրը՝ քեզի համար աղօթք կ'ընէ, որպէս զի քեզի շնորք տայ ան ատենը զքեզ չարչարող խաչը, և կամ այլ որ և իցէ նեղութիւն համբերութեամբ տանելու։ Ուստի դուն ստէպ նորոգելով առաջադրութիւնդ ուզելու յանձն առնուլ համբերութեամբ ամէն

բան քաշելու, վերցուր ետքը միտքդ առ Հայրն Աստուած, և անոր նախ շնորհակալ ըլլալով որ իր մեծ սիրոյն պատճառաւ աշխարք խաւրեց իր միածին Որդին՝ այսպիսի դառն չարչարանաց վիշտեր կրելու և քեզի համար աղօթելու, խնդրէ յետոյ անորմէ համբերութեան առաքինութիւնը իր Որդւոյն անօրէնութեան արդեանց և աղօթքին համար։

ԳԼՈՒԽ ԽԷ.

Մտածական կերպով աղօթելու ուրիշ եղանակի մը վրայ։

Կարող ես նաև ուրիշ կերպով աղօթել և մտածական ընել։ Մտադրութեամբ տեառն չարչարանքները մտմտալէդ, և մտքովդ տեսնալէն վերջը անոր սրտին յօժարութիւնը, որով ան ամէնը կրեց; անոր առ չարչարանաց մեծութենէն և համբերութենէն՝ առաջ անցնիս պիտի երկու այլ խորհրդածութեանց։ Մէկը անոր արդեանցը, միւսը յաւիտենական Հօր հաճութեանը և փառքին՝ իր չարչարեալ Որդւոյն կատարեալ հնազանդութեանը համար։ Այս երկու մտածութիւնները իր աստուածային մեծվայելչութեանը ներկայացընելովդ, անոնց արդեանցն համար անորմէ խնդրէ, ինչ շնորհք որ կը բաղձաս։ Այս բանն ալ կարող ես գործածել չէ թէ միայն փրկչին չարչարանաց իւրաքանչիւր խորհրդին մէջ, հապա ամէն մաս-



Io. Franciscus Barbieri pinx. — Aloisius Banze sculpsit

նաւոր արտաքին և ներքին գործքերուն մէջ, զոր ինքնին իւրաքանչիւր խորհրդին մէջ ըրաւ։

ԳԼՈՒԽ ԽԸ.

Երանելոյն Կուսին Մարիամու միջնորդութեան ձեռօք աղօթելու եղանակին վրայ։

Վերը ըսածներէս 'ի զատ՝ այլ կերպ մը կայ մտածելու և աղօթելու Կուսին Մարիամու միջնորդութեան ձեռքովը, միտքը վեր վերցնելով նախ առ Աստուած յաւիտենական, յետոյ քաղցրագութ Յիսուսին, և անկից վերջը ա-նոր փառաւորեալ Մօրը։ Աստուծոյ միտքդ վեր վերցուցած՝ երկու բան մտմտա, նախ՝ այն հաճութիւնը զոր 'ի յաւիտենից ունէր մտածելով Մարիամու վրան, դեռ ոչնչէն դուրս չգոյացած։ Երկրորդ՝ անոր առաքինութիւնները և գործքերը կենաց լուսոյն կանչուելէն ետքը։

Բարեհաճութիւնները ասանկ մտածէ։ Աստուծոյ մէն ստեղծական գոյութենէ և ժամանակէ վեր մտքովդ առաջ անցնելով, և մտնելով նոյն իսկ յաւիտենականութեան և Աստուծոյ մտքին մէջ, մտմտա այն բարեհաճութիւնները զոր Աստուած յանձին ունեցաւ Մարիամու Կուսին վրայ. և այս բարեհաճութենից մէջ գտնելով զԱստուած, անոնց արդեանցն համար խնդրէ շնորք և զօրութիւն թշնամիներդ հալածելու համար, մանաւանդ ան ատեն քեզի դէմ դնողները։ Ասկէ՝ յառաջ անցնելով ամե-

որ պէտպէս հրաշքներով հաստատուած է, թէ ոչ երբէք մէկ մը վստահութեամբ զանի կանչեց և գթութեամբ անոր մտիկ չընաւ։ Առջեւը դիր ա-նոր՝ միածին Որդւոյն չարչարանքները զոր մեր փրկութեանը համար յանձն առաւ կրելու, ա-զաչելով որ քեզի համար անորմէ շնորհք խնդրէ՝ որպէս զի 'ի փառս և 'ի բարեհաճութիւն իւր վրայ ան արդիւնքը ունենան՝ որուն համար ինքը զանոնք քաշեց։

ԳԼՈՒԽ Խ Թ.

Քանի մի մտածութիւններ առանձնաւորը Կոյս Մարիամու վստահութեամբ և հաւատքով դիմելու համար։

Ուզելով դիմել առ Կոյսն Մարիամ հաւատ-քով և վստահութեամբ ամէն քու կարօտու-թեանդ ատենը, կարօղ ես ընել հետեւեալ մտածութիւնները։

Նախ՝ արդէն փորձէն յայտնի է թէ բոլոր այն ամէնները ուր մուշկ և կամ այլ պատուա-կան հեղանիթ մը կը ժողովի՝ պարունակած կը պահեն ան իւղին հոտէն իրենց մէջ նաև պարպուելէն վերջը, և յաւէտ եթէ միջոց մը ժամանակ հոն մնացած էին, ևս առաւել եթէ տակաւին կերպով մը կաթիլ մը մնացած ըլլար, այսու ամենայնիւ մուշկը չափաւոր և սահմա-նեալ զօրութիւն մը ունի ինչպէս ևս մնացած ամէն պատուական հեղանիթները։ Նոյնպէս

նաստուրբ Մարն այնքան և այնպիսի խեղբէ վեր առաքինութեանց և գործքերուն մտածութիւ-նը, և երբեմն ամէնը մէկ տեղ՝ երբեմն ալ ա-նոնցմէ մէկը Աստուծոյ առջեւը դնելովդ, ա-նոնց արդիւնքովը խնդրէ՝ անոր անսահման բարութենէն ամէն քեզի պէտք եղածը։

Յետոյ միածին Որդւոյն միտքդ դարձընելով, միտքը ձգէ՝ կուսական արգանդը որ ինն ամիս զա-նի կրեց, ան յարգութիւնը որով անոր ծնանե-լուն՝ ամենաստուրբ Կոյսը խոնարհած անոր եր-կրպագութիւն ըրաւ ճշմարիտ մարդ դաւանե-լով զանի և ճշմարիտ Աստուած, իր որդին և արարիչը, այն մայրենի աչաց նայուածքը՝ ո-րոնք մեծ գթով և սիրով կը նայէին այրի մը մէջ աղքատ ծնածին, այն բազուկները՝ որոնք զանի կը գրկէին, սիրուն համբոյրները որով կը համ-բուրէր աստուածազարդ ճակատը, մայրական ծիծերուն ցողի պէս իջած կաթը՝ որով կը սնու-ցանէր, և այն աշխատանքը և նեղութիւնը զորս կենդանութեան և մահուան ատենը քաշեց ա-նոր համար։ Որոնց զօրութեամբը սեպէ թէ կը բռնադատես սիրելի Որդին քաղցրութեամբ քու աղաչանքիդ ականջ դնելու։

Անկից ետև նոյն ինքն ամենաստուրբ Կուսին աչքդ դարձուցած՝ յիշեցուր անոր թէ յաւիտե-նական նախախնամութենէ և բարութենէ ինք ընտրուեցաւ շնորհաց և ողորմութեան մայր ըլ-լալու և մեզի համար բարեխօս։ Որով իր օրհ-նեալ Որդիէն եաքը իրմէն ուրիշ ալ չունինք ապահով և ամուր ապաստան մը։ Յիշեցուր ևս իրեն վրայ գրուած այն ճշմարտութեան խօսքը,

մեծ կրակի մը քով մօտ կեցողը, շատ ժամանակ ինքնիրեն տաքութիւնը կը կրէ նաև կրակի քովէն քաշուելէն ետքը։ Սանկ ստոյգ ըլլալով այս բանը, տէս թէ որ սիրոյ կրակով, և ինչ ողորմութեան և գթութեան զգացմունքներով Մարիամու սիրտը վառեալ կը բորբոքուէր և կը լեցուէր, որն որ իր կուսական արգանդին մէջ ինը ամիս կրեց, և միշտ սիրով կը կրէ սրտին մէջ Աստուծոյ որդին, որ նոյն ինքն սէր, ողորմութիւն և գթութիւն է, ոչ թէ չափաւոր և սահմանեալ զօրութեամբ մը, այլ անսահման և անեզր։ Անանկ որ ինչպէս մեծ կրակի մը քով մօտ եղողը չի կրնար անոր տաքութիւնը իրեն չձգել, այդպէս ևս առաւել որ և իցէ կարօտեալ մը որ խնարհութեամբ և հաւատքով կը մօտիկնայ ողորմութեան և գթութեան սիրոյ կրակին, որ անդադար կայս Մարիամու սրտին մէջ արծարծեալ կը բորբոքի, պիտի ընդունի անշուշտ անորմէ օգնութիւն, նպաստներ և շնորհներ, և այնչափ աւելի՝ որչափ որ ինքը կենդանի հաւատքով և վստահութեամբ անոր մօտիկնայ։

Երկրորդ՝ ստեղծուածներէն ոչ երբէք մէկ մը սիրեց այնչափ զՅիսուս Քրիստոս, և ոչ այնչափ համաձայն գտնուեցաւ անոր կամացը, որչափ անոր ամենասուրբ մայրը։ Ուրեմն եթէ նոյն ինքն որդին Աստուծոյ որ բոլոր իր կեանքը և ինք զինքը դրաւ մեր մեղաւորներնուս կարօտութեանցն համար իր մայրը տուաւ մեզի մայր և բարեխօս, որպէս զի մեզի օգնէ և իրմէն վերջը ինքն ըլլայ մեր փրկութեան միջնոր-

դը, ինչպէս կրնայ երբէք նոյն մեր մայրը և բարեխօսը զմեզ երեսէ ձգել և որդւոյն կամքին հակառակ ելլել։

Հայպա՝ որդեակ իմ, ամէն քու կարօտութեանցդ մէջ վստահութեամբ դիմէ ամենասուրբ մօրն Մարիամու Կուսին գիրկը, ինչու որ այս վստահութիւնը ճոխ է և երջանիկ, և ապահով է անոր ապաւինիլը, վասն զի անդադար շնորհքներ և ողորմութիւններ կը բաշխէ։

ԳԼՈՒԽ Ծ.

Հրեշտակաց և ամենայն սրբոց միջնորդութեանը աղօթելու և մեռածներու հոգւոյն վրայ։

Սուրբ մէջ սրբոյութեան սրբերուն և հրեշտակներուն օգնականութեամբը և նպաստներովը վարուելու համար կրնաս երկու եղանակ գործածել։

Նախ՝ որ դուն յաւիտենական հօր աչքդ դարձնես, և անոր առջևը դնես սէրը և գովութիւնը, որով երկնային զօրքերէն կը փառաւորի, և աղօտատաքը և նեղութիւնը զոր անոր սիրուն համար երկրիս վրայ սուրբերը քաշեցին, և անոնց որդեամբքը անոր ստուգածային մեծվայելչութենէն քեզի ամէն հարկաւոր եղածը խնդրէ։ Երկրորդ՝ որ դիմես նոյն երկնային զօրակարգութիւններուն իրենց անունց՝ որոնք ոչ միայն մեր կատարելութիւնը կը բաղձան, այլ և կ'ուզեն որ մենք անոնցմէ

բարձրագոյն տեղ մը նստնք, խնդրելով անոնց օգնականութիւնը քու ամէն թշնամեացդ և ախտերուդ դէմ, նաև մահուանդ ատենը քեզի պաշտպանելու համար։ Եւ երբեմն մտմտա գերագոյն Արարչէն ունեցած շատ և անհամեմատ շնորհներնին. բարբաքելով 'ի քեզ անոնց վրայ սիրոյ և ուրախութեան եռանդուն բաղձանք մը, ինչու որ այնչափ պարգևներով ճոխացած են, որպէս թէ անոնք յատուկ քուկինդ ըլլային։ Մանաւանդ պարտական ես յաւէտ ուրախանալ եթէ կարելի ըլլայ, վասն զի անոնք ան պարգևները կը ժառանգեն և ոչ դուն, զի այս իսկ է Տեառն կամքը, որուն համար դովեալ և բարեբանեալ ըլլայ։

Եւ այս կրթութիւնը կարգով և գիւրութեամբ ընելու համար, կրնաս սրբոց դասերը շաբթուան օրերուն համեմատ բաժնել այս կերպ։ Կիրակի օրը կ'որոշես հրեշտակայ ինը դասակարգութիւնը. Երկուշաբթի սուրբ Յովհաննէս Մկրտիչը. Երեքշաբթի նահատակները և մարգարէները, Չորեքշաբթի առաքեալները, Հինգշաբթի մարտիրոսները, Ուրբաթ հայրապետները այլ ամենայն սրբոյք հանդերձ. Շաբաթ կուսանքը և ուրիշ ամէն սրբուհիները։ Բայց երբէք զանց մի՛ ըներ ամէն օր ասէպ դիմելու ամենասուրբ Կուսին Մարիամու՝ որ ամէն սրբերուն թագուհին է, քու Պահապան հրեշտակիդ, սուրբ Միքայէլ հրեշտակապետին, և ամէն քու պաշտպան սրբերուդ։

Եւ ամէն օր աղաչէ ամենասուրբ Կոյս Մարիամ Աստուածածինը, անոր Որդին, երկնաւոր

Հայրը, որպէս զի քեզի շնորք ընեն տալու քեզի առանձին բարեխօս և պաշտպան դաստուածահայրն Յովսէփ զմաքուր փեսայն Կուսին, անոր ալ դիմելով աղաչանաք և վստահութեամբ որ զքեզ իր պաշտպանութեան հովանիին տակը ընդունի։ Շատ բաներ կը պատմուին այս հրաշագործ Սրբոյս վրայ, և պէս-պէս շնորհներ անոր ձեռաք ընդունեցան որոնք որ անոր յարգութիւններին ցուցուցին, և անոր բարեխօսութեանը ապաւինեցան՝ ոչ միայն հոգևորական կարգութիւններուն՝ այլ նաև մարմնաւորներուն մէջ, և յատկապէս առաջնորդելուն համար իր ջերմեռանդներուն լաւ աղօթելու և մտածելու եղանակին մէջ։ Ինչու որ եթէ Աստուած ուրիշ սուրբերը այդչափ կը փառաւորէ, վասն զի 'ի մարմնի ապրելովնին, իրեն պատիւ և հնազանդութիւն մատուցին, հապա ո՞րչափ հաւատալ պարտական ենք թէ աւելի յարգէ պիտի և ընդունի այս ամենախնամարհ և ամենաերջանիկ սրբոյս խնդրուածները, որն որ նոյն իսկ Աստուածէն երկրիս վրայ անանկ փառաց պատուոյ արժանի եղաւ՝ ինչուան նոյն ինքն անոր հպատակել ուզեց, և իրրև հօր հնազանդիլ անոր և ծառայել։

ԳԼՈՒԽ ԾԱ.

Քրիստոսի չարչարանաց մտածմանին վրայ, անկէ սիրոյ զանազան ներգործութիւններ քաղելու համար։

Տեառն չարչարանաց վրայօք վերը ըսածներս յարմար կուգայ ապօթքին և մտածմանին խընդրուածքի ձեռքովը, հիմայ կ'աւելցընեմ թէ անկէ ինչպէս կրնանք զանազան սիրոյ ներգործութիւններ քաղել։ Օրինակի համար, Քրիստոսի խաչելութիւնը մտածելու կ'առաջնորդես. այս խորհրդին այլ մասանց մէջ հեռագաներն ալ կրնաս մտածել։

Նախ՝ թէ ինչպէս Տէրն Գողգոթա լեռը ելլելով՝ անհնարին կատաղութեամբ մը այն անօրէն ժողովուրդը զինքը դգեստներէն մերկացուց, անոր մարմինը՝ պատռտեց, որուն նախկին հարուածներէն պատմուճանը կըպած էր։

Երկրորդ՝ թէ ինչպէս գլխէն վերցուցեալ փշեղէն պսակը՝ որ յետոյ նորէն դրուելով՝ անոր նոր վէրքերու պատճառ եղաւ։

Երրորդ՝ թէ ինչպէս անողորմ ուռերու և դամերու զարնուածքով խաչին խիստ փայտին վրայ գամուեցաւ։

Չորրորդ՝ թէ ինչպէս անոր ոտքը բաղուկները, և ոտքերը չի հասնելով խաչին բացուած ծակերուն, որոնք այս գործին որոշուած էին, անանկ բռնութեամբ այն կատաղի ձեռքերէն քաշուեցան՝ որ բոլոր ոսկրները խախտուելով մէկիկ մէկիկ կը համրուէին։

Հինգերորդ՝ թէ ինչպէս տէրը մերկ կախուելով խաչէն, և չունենալով ուրիշ յենարան մը խիստ գամերէն զատ, մարմնոյն ծանրութենէն որ դէպ 'ի վար կը հակէր, անոր ամենաստուերը վէրքերը անպատմելի ցաւով մը լցնցան և չարաչար սատակցան։

Այս և այլ նման մտածութիւններէն դուն 'ի քեզ սիրոյ ներգործութիւն մը արծարծելուդ սորվէ՝ նոյն մտածութեանց ձեռքովը տեառնըդ անսահման բարութեան և քեզի ունեցած սիրոյն գերազոյն ծանօթութեանը հասնելու, որն որ քեզի համար այսչափ չարչարանքներ յանձն առաւ և կրեց, և որչափ 'ի քեզ այս ծանօթութիւնը կ'աւելնայ, այնչափ ալ կ'ածի աստուածային սէրը։

Նոյն տեառն քեզի ցուցուցած անսահման բարութեան և սիրոյն այսպիսի ծանօթութենէն, դիւրաւ կրնաս զղջման և ցաւոց ներգործութիւնը հանել. շատ անգամ ոյնչափ ապերախտութեամբ զԱստուած բարկացնելուդ, որ քու մեղքերուդ համար այնքան կերպով նախատուեցաւ, և չարչարանք քաշեց։ Քու սրտիդ մէջ յոյսը տպաւորելու համար՝ մտածէ թէ այսպիսի և այնքան չարչարանաց մէջ ընկղմեցաւ քու բարեգութ տէրդ քենէ մեղաց խայթոցը մարելու համար, և ստանալոյն որոգայթներէն, և քու յատուկ յանցանքներդ դքեզ խալըսելու համար, երկնաւոր Հօրէն քեզի համար թողութիւն ընդունելու, և քեզի վստահութիւն տա-

լու անոր դիմելու քու ամէն կարօտութեանդդ ատեն։ Խնդա և ուրախ եղիր շարչարանաց հետ մտածելով ալ անոնց արդիւնքը, որ անոնցմով բոլոր աշխարքը մեղքերէն լուաց, Հօր Աստուծոյ բարկութիւնը լիցեցուց, խաւարային իշխանը ամչցուց, մահը լուծեց և ընկած հրեշտակներուն տեղը լեցուց։ Խնդակից եղիր և ան հաճութեանը համար՝ զոր ընդունեցան ամենասուրբ Երրորդութիւնը, ամենասուրբ կոյս Մարիամը, և յաղթանակող և զինուորեալ եկեղեցին։

Մեղացդ ատելութեան բոցը 'ի քեզ վառելու համար՝ ամէն մտածելիք մասունքները այս վախճանին միայն ուղղէ, իբր թէ Քրիստոս ուրիշ բանի մը համար չի չարչարուեցաւ եթէ ոչ քեզի յորդորելու համար ատելու քու չար յօժարութիւններդ և յաւէտ վրդովաւելի տիրողը, և անոր աստուածային աչաց շատ անհաճոյ եղողը։

Զքեզ զարմացման բերելու համար՝ մտմտա թէ սակէ աւելի ի՞նչ մեծ կրնայ ըլլալ, տեսնալ երկնից և երկրի արարիչը՝ որմէն ամէն արարածները կեանքերնին ունին, նոյն արարածներէն մահուան դատապարտուած, արհամարհուած և նախատուած անոր աստուածային մեծվայելչութիւնը, արդարութիւնը դատապարտուած, փաւաց հօր պատկերին թուքումբ տալով՝ գեղեցկութիւնը մնարգուած, երկնային հօր սէրը ատելի եղած, անմատոյց լոյսը խաւարին իշխանութեան տակը ճգուած, նոյն ինքն փառքը և երանութիւնը՝ մարդկան որդւոցը ամօթ և նախատինք համարուած և մինչ խպաւ խոնարհած։

Քու ցաւագին տեառնդ կարեկից ըլլալու համար՝ անոր չարչարանաց արտաքին հանդէսը մտածելէդ ետքը, մտացդ աչքովը թափանցէ ուրիշները՝ որոնք անհամեմատ առաւելութեամբ մեծագոյն են, և ներսէն զինքը կը չարչարէին։ Ինչու որ եթէ մէկալներուն կարեկցութեամբը ցաւակից կ'ըլլաս, ասոնց համար զարմա՞նք է թէ սիրտդ կոտրած չի խորտակի ցաւէն։ Քրիստոսի հոգին ան ատենը կը տեսներ աստուածային էութիւնը, ինչպէս որ հիմայ երկինքը կը տեսնէ, կը ճանչնար զանի դերօրինակ արժանի ամէն պատուոյ և ծառայութեան, և ասոր համար անպատուամ սիրուն պատճառաւ դէպ 'ի նա՝ կը փափաքէր որ բոլոր արարածները իրենց ամէն զօրութեամբը սիրէին։ Ուստի հակառակը տեսնալով՝ որդւոց մարդկան անհամար մեղաց և գարշելի եղեռնութեանց պատճառաւ մեծապէս նախատուած և արհամարհուած, մի և նոյն ատեն անոր սիրտը ցաւերուն սաստկութենէն կարեվէր կը խոցուէր։ Որոնք այնքան սաստիկ կը տագնապէին և կը չարչարէին զինքը, որքան մեծ էր անոր սէրը և բաղձանքը որով կը փափագէր որ ամէնքը աստուածային անսահման մեծվայելչութիւնը պատուեն և պաշտեն։

Եւ ինչպէս որ հնարաւոր չէ հասկնալ այս սիրոյն մեծութիւնը և փափաքը, այդպէս նաև հնար չէ իմանալ թէ ինչչափ գառն եղաւ խաչեցեալ տեառն ներքին վիշտը։ Դարձեալ անպատմելի սիրուն համեմատութեանը չափ, որով անիկայ մարդիկները կը սիրէր, մեծապէս

կը ցաւէր և կը վշտանար անոնց մեղքերուն վրայ, որոնցմով անորմէ բաժնուէին պիտի, վասն զի ամէն մահուշտի մեղքին համար՝ զոր գործած էին, և գործէին պիտի անցեալ և գալիք մարդիկները, որոնց ամէն մէկը քանի անգամ որ մեղանչէր, այնքան Քրիստոսի հոգիէն կը բաժնուէր, որուն հետը սիրով միաւորուած էր: Բաժանում մը մարմնական անդամներուն բաժանմանէն աւելի դժնդակ, երբոր իրենց բնական տեղերէնէն կը կտրին, վասն զի հոգին ոգեղէն ըլլալով և մարմնէն աւելի ազնիւ և կատարեալ՝ աւելի ցաւոց ընդունակ էր:

Այս տանջանքներուն մէջ զորոնք մարդիկներուն համար քաշեց հեզահամբոյր փրկիչը՝ ամէնէն աւելի դժնդակը դատապարտելոց ամէն մեղքերուն համար կրածն էր, որոնք նորէն հետը չի կրնալով միաւորիլ՝ յաւիտեան տանջանաց անվճարելի պատիժները պիտոր կրէին: Եւ թէ որ հոգին իր Յիսուսի փրկչին սիրովը խանդաղատեալ, մոքովը աւելի առաջ երթայ, ՝ի նա գտնէ պիտի յիրաւի կարեկցութեան արժանի ծանր ծանր տանջանքներ, չէ թէ միայն գործեալ մեղքերուն համար, այլ նաև երբէք չի գործուածներուն, ինչու որ տարակոյս չկայ թէ անոնց քաւութիւնը և անոնցմէ պահպանուիլը մեր բարեգութ տէրը ստացաւ մեզի իր պատուական չարչարանաց գնովը:

Զեն պակսիր քեզի, սրդեակ, այլ մտածութիւններ չարչարեալ խաչեցելոյն կարեկից ըլլալու: Վասն զի մահկանացուաց մէկուն չեղաւ և չըլլայ պիտի ցաւ մը, որուն ինքնին չափը

առած չըլլայ: Անիրաւութիւնները և փորձութիւնները, վատահամբաւութիւնները, ապշխարութիւնները և այլ ամէն մարդիկներուն անձկութիւնները և տառապանքները առ հասարակ Քրիստոսի հոգին ստաւել դժնդակ կերպով վշտացուցին քան թէ իրականապէս զանոնք կրողները: Ինչու որ անիկայ՝ անոնց բոլոր վիշտերը թէ մեծ եղեր են և թէ պզտիկ, թէ մարմնոյ և կամ հոգւոյ, ինչուան թեթեւ գլխու ցաւ մը, և ասեղի խայթուած մը անգամ կատարելապէս տեսաւ, և իր անսահման սիրուն համար մեր բարեգութ տէրը ուզեց մեր ամէնքիս կարեկցիլ, և իր գորովալիր սրտին մէջ դրոշմած ունենալ:

Այլ թէ ինչպէս իր փրկիչ մորը ցաւերը զինքը տրամեցուցին, չկայ լեզու մը որ կարող ըլլայ նոյնը բովանդակել: Ինչու որ ամէն կերպերով և ամէն պատճառներուն համար՝ որովքը մեր տէրը ցաւեցաւ և չարչարուեցաւ, այնչափ ամէնուն մէջն ալ սրբուհի կոյսն անոր չարչարակից գտնուեցաւ, թէ և ոչ հաւասար աստկութեամբ, բայց ասկայն չարաչար կսկծցնող եղանակաւ: Եւ նոյն իսկ այս իր ցաւերը իրեն սիրելի որդւոյն ներքին վէրքերը նորոգեցին, և որպէս թէ նեռերուն մէյմէկ սիրով կրակ կտրած սլաքներէն անոր անուշիկ սիրտը խոցուեցաւ, այն սիրտը կ'ըսեմ, որ այնքան յիշեալ ցաւերուն համար և ուրիշ գրեթէ անհամարներուն որոնք մեզի անծանօթ են, հնար է կոչել զանոնք սիրով լեփլեցուն կամաւոր պատիժներուն հնոց մը. ինչպէս որ ՝ներմուանդ անձի մը վրայ

կը գրուի, թէ սովորութիւն ունէր սուրբ պարզմտութեամբ այսպէս զանի կանչելու։

Արդ, որդեակ իմ, թէ որ մեր խաչեալ փրկիչն կրած այս դառնագին ցաւերուն սկզբնապատճառը գիտնալ խնդրես, ուրիշ բան մը չես գտներ, եթէ ոչ մեղքը։

Ուստի յայտնապէս կը հետևի թէ հշմարիտ և գլխաւոր կարեկցութիւնը և շնորհակալութիւնը զոր անիկայ մեզմէ կը պահանջէ, և որուն չափէ դուրս պարտական ենք, ցաւին է մինակ անոր սիրոյն համար զանի բարկացնելնուս, ամէն բանէն աւելի սատակ մեղքը ատելը, և իր թշնամեաց և չար յօժարութեանց դէմ քաջութեամբ պատերազմիլը, որպէս զի հին մարդը իր գործքերով հանդերձ հանելովին՝ նորը հագնինք աստուածանական առաքինութիւններով զարդարելով մեր հոգին։

ԳԼՈՒԽ ԾԲ.

Թէ-ինչ օգուտ կրնանք քաղել խաչելեալին մտածողութենէն, և անոր առաքինութիւններուն նմանելուն վրայ։

Տեսակ տեսակ օգուտներէն՝ զոր այս սուրբ մտածութենէն պիտի քաղես, մէկն ալ ԸՍՍՍ, որ դուն չէ թէ միայն անցած մեղքերուդ վրայ ցաւիս, հապա նաև վշտանաս, վասն զի քու մէջդ անկարգ կիրքերդ՝ որ զբարեգութ փրկիչդ խաչ հանեցին, տակաւին կենդանի կը կենան կոր։

Verlag von Gebr C u N Benziger in Einsiedeln

Երկրորդ՝ որ անորմէ խնդրես քու մեղքերուդ թողութիւնը, և կատարեալ անձնուրացութեան շնորքը նորէն զանի չի բարկացնելու, մանաւանդ 'ի փոխարէն այնքան քեզի համար տարած դառն վշտերուն՝ ապագան զանի սիրել և ըստ արժանւոյն պաշտել, զոր հնարաւոր չէ կատարել առանց աս սուրբ անձնուրացութեանը։

Երրորդ՝ պարտական ես գործքով բոլոր չար յոժարութիւններդ մեռցընել, որչափ որ ալ պզտիկ ըլլան։

Չորրորդ՝ Ջանք ընես պիտի կարողութեանդ համեմատ քու փրկչիդ առաքինութիւններուն նմանելու, որն որ յանձն առաւ չարչարանքը ոչ միայն զմեզ փրկելու համար, մեր մեղաց պարտիքը վճարելով, այլ և մեզի օրինակ տալու համար, որպէս զի անոր սուրբ ճամբանեբուն հետևինք։

Ահա հոս քեզի կը դնեմ մտածութեան եղանակ մը, որ այս նպատակին շատ յարմար է։ Բաղձալով օրինակի համար Քրիստոսի նմանելու համար համբերութիւնը ստանալու, հետագայ կէտերը մտածէ։

Նախ՝ թէ ինչ ըրաւ Քրիստոսի չարչարուած հոգին դէպ 'ի Աստուած։

Երկրորդ՝ թէ ինչ ըրաւ Աստուած Քրիստոսի հոգւոյն։

Երրորդ՝ ինչ ըրաւ հոգին Քրիստոսի իրեն և իր կուսական մարմնոյն։

Չորրորդ՝ թէ ինչ ըրաւ մեզի հետ։

Հինգերորդ՝ թէ մենք ինչ պարտական ենք ընելու Քրիստոսի։

Առդ՝ նախ մտածէ՛ թէ ինչպէս Քրիստոսի հոգին յԱստուած ընկղմած՝ կը աքանչանայ տեսնելով այն անսահման անբովանդակելի մեծութիւնը, որուն քով բոլոր ստեղծուածները ոչինչ են, խոնարհած (այլ յաթոռ փառաց անշարժ մնալով) երկրի վրայ հողածին մարդուն յանցանքին համար անարժան նախատինքներ կրելու, որմէ ուրիշ բան մը չընդունեցաւ, բայց եթէ ապերախտութիւն և նախատինք, և թէ ինչպէս յարգանաց և շնորհակալութեան պաշտօնը՝ ինքնանուէր անոր կը մատուցանէ։

Երկրորդ՝ տե՛ս թէ Աստուած Քրիստոսի հոգւոյն ինչ կ՚ընէ, ինչպէս կ՚ուզէ և կը տիպէ զանի մեղի համար ապտակ, թուք, հայհոյութիւն, ձաղկանք, փուշ, և խաչ կրելու, յայտնելով անոր իր հաճութիւնը ամէն կերպ նախատինքով և չարչարանքով լցուած զանի տեսնելու։

Երրորդ՝ հոսկից անցած՝ Քրիստոսի հոգւոյն պիտի դաս, մտածելով թէ ինչպէս ինքնին աստուածահրաշ մտաք տեղեկանալով այս հաճութեան մեծութեանը յԱստուած, և եռանդնոտ բաղձանքով վառուած աստուածային մեծվայելչութիւնը սիրելով ամէն չափէն և սահմանէն վեր, թէ անոր անսահման արժանեացը համար, թէ անչափ պարտաւորութեանցն որով կը կապուէր անոր, 'ի սէր մեր և յօրինակ անորմէ չարչարանաց բաժակը խմելուն հրաւէրը ընդունելով, գոհ և զուարթ սրտով անոր ամենասուրբ կամքին կը հպատակի։ Եւ ով կը-նայ թափանցել այն խորին բաղձանքները, որով Քրիստոսի ամենամաքուր սիրով լեցուած

հոգին կը բաղձար այն խաչը։ Հոս կարծես թէ ինքն տանջանաց լաբիւրինթոսի մը մէջ կը գտնուի, միշտ փնտռելով և չգտնելով իր բաղձանքին համեմատ չարչարանաց նոր տեսակներ և ճամբաներ։ Եւ սակայն կամաւ բոլորովին անձնատուր կ՚ըլլայ անմեղ մարմնովը ամբարիշտ մարդիկներուն և դժոխային սատանաներուն ձեռքը զինքը չարչարելու ինչպէս որ ուզեն։

Զորրորդ՝ ասորմէ վերջը քու քաղցրագութ փրկչիդ նայէ՛, որն որ գթութեան գորովալիր աչքովը դարձած քեզի հետ կը խօսի և սիրողաբար կ՚ըսէ. Տե՛ս, սրդեակ իմ, ո՞ւր քու անկարգ ախորժակներդ զիս հասցուցին, ինչու որ չ՚ուզեցիր քիչ մը անձդ զսպել։ Տե՛ս թէ որչափ յօժար կամքովս կը կրեմ, քու սիրուդ և իմ համբերութեանս ճշմարիտ օրինակը քեզի տալու համար։ Հիմայ այս իմ ամէն ցաւերուս համար, ով սրդեակ, քեզմէ կը խնդրեմ որ համբերութեամբ կամակար տանիս այս խաչը և ուրիշ ամէն բան զոր քեզի դրկելու կը հաճիմ. բոլորովին հլաժողներուն ձեռքը անձնատուր ըլլալովդ, որոնք վրադ պիտի բերեմ, որչափ ալ տմարդի և անգութ ըլլան քու պատուոյդ և մարմնոյդ դէմ։ Ո՜հ թէ որ գիտնայիր անկէ զգացած մխիթարութիւնս։ Բայց դուն զայն կրնաս լաւ նկատել այս իմ վէրքերուս մէջ, զորս ես յանձն առի պատուական գոհարներու պէս ընդունելու, խելքէդ վեր ամէնէն աւելի ինծմէ սիրուած հոգիդ պատուական աւաքինութիւններով զարդարելու համար։ Եւ թէ որ ես սա սահմանին հասայ քեզի համար,

ինչո՞ւ ով սիրելի որդեակ իմ, չես ուզեր որտիս փոխարէնը հատուցանելու համար քիչ մը կրել և վերջերս ամաչել, զորս անհամբերութիւնդ պատճառեց, որն որ նոյն իսկ վերջերէս աւելի դէշ դիս տանջեց։

Հինգերորդ՝ յետոյ ազէկ մտմտա թէ ասանկ քու հետդ խօսողը ով է, և տեսնաս պիտի թէ ան փառաց թագաւորն է, Յիսուս Քրիստոս՝ ճշմարիտ Աստուածը և ճշմարիտ մարդը։ Խորհէ իր տանջանքին և արհամարհանաց մեծութիւնը, որոնք աշխարքին ամէնէն եղեռնագործ աւազակի մը անգամ անարժան են։ Տե՛ս քու բարեգութ տէրդ որն որ այնքան չարչարանաց մէջ ոչ միայն աքանչելահրաշ համբերութեամբ անշարժ կը կենայ, այլ և ցնծալից կ'ուրախանայ իր հարանիքի օրուան պէս։ Եւ ինչպէս որ քիչ մը ջուր կրակին ձգելով՝ ալ աւելի կը վառէ զայն, այդպէս ցաւոց ա՛ելումը, որոնք իր սիրոյն առաւելութենէն անոր պղտիկ կը սեպուէին, միշտ աւելի կ'ուժէր մեծագոյն ցաւեր կրելուն խնամքը և փափաքը։ Մտածէ թէ այս ամէնը գորովագութ փրկիչը յանձն առաւ և կրեց ոչ թէ բանի կամ իր անձնական շահուն համար, այլ (ինչպէս որ ինքը քեզի ըսաւ) դէպ 'ի քեզ իր ունեցած սիրոյն համար, և որպէս զի դուն քեզ կրթես համբերութեան առաքինութեան մէջ անոր օրինակին համեմատ, և ազէկ հասկընալով ինչ որ քեզմէ կը պահանջէ, և հաճութիւնը զոր անոր պիտի ընծայես այս առաքինութեան մէջ գքեզ կրթելուդ ատենը, եւ անդեամբ բաղձա տանելու ոչ միայն համբերութեամբ, այլ նաև խնդութեամբ որտի՝ ներկայ խաչդ, և զայն ամենայն որ վրադ գայ, որչափ որ ծանրագոյն ըլլայ, որպէս զի լաւագոյն քու տեսանդ նմանիս և անոր սիրոյը մխիթարես։

Եւ ուշացդ առջև նկարելով անոր նախատինքները, և քեզի համար ճաշակած դառնութիւնները, և անոր անասան համբերութեան հաստատութիւնը, ամչցիր քու կիսկնդ համարելու ստուեր անգամ համբերութեան, և կրածդ ճշմարիտ ցաւ և նախատինք բռնելու։ Եւ վախցիր և դողա չըլլայ թէ նաև պղտիկ խորհուրդ մը չուզելու նեղութիւն կրելու տեսանդ սիրոյն համար՝ տեղիք գտնայ թէ և քիչ ատեն քու սրտիդ մէջ։

Այդ, ով որդեակ, աս քու խաչեցեալ տէրդ այն գիրքն է զոր քեզի կ'ուսանիմ կարդալու, որուն մէջ գտնես պիտի ամէն առաքինութեանց ճշմարիտ պատկերը։ Ասն զի ինքնին կենայ գիրքը ըլլալով, չէ թէ միայն վարդապետութեան խօսքով կը հրահանգէ միտքը, այլ նաև կենդանի օրինակով կամքը կը բորբոքէ։ Այդպէս աշխարքը լի է գրքերով, այսու ամենայնիւ ամէնքը մէկ տեղ անանկ կարող չեն կատարեալ ուսանիլ ամէն առաքինութիւնները ստանալուն եղանակը, ինչպէս 'ի խաչ ելեալ Աստուած մը մտածելու ատենը։

Եւ գիտցիր, որդեակ, թէ անոնք որ չատ ժամեր կը վատնեն Քրիստոսի տեսան մերոյ չարչարանաց վրայ լալու, և անոր համբերութիւնը նկատելու, և յետոյ առջևնին եղած ձախող արդ-

կածներուն մէջ անանկ անհամբեր կ'երևնան, որպէս թէ աղօթքին մէջ ուրիշ բան սորված ըլլան, այսպիսիները վատ զինուորներուն կը նմանին, որոնք բանակին մէջ պատերազմէն յառաջ մեծամեծս կը ջարդեն, այլ յետոյ թշնամւոյն երևնալուն՝ շուտով զէնքերնին վար ձգած կը փախչին։ Եւ ինչ բան ասորմէ աւելի անմիտ և աղէտալի կրնայ ըլլալ, զնեալ և նկատել իբր մաքուր հայելի մը մէջ Քրիստոսի առաքինութիւնները և սիրել զանոնք և անոնց վրայ զարմանալ, և յետոյ բոլորովին մոռնալ զանոնք կամ բանի տեղ չի դնել, երբոր աւելիներ կ'ընծայուին զանոնք գործածելու։

ԳԼՈՒԽ ԾԳ.

Ամենասուրբ Հաղորդութեան խորհրդոյն վրայ։

Ինչուան հոս տեղս սրդեակ իմ (ինչպէս որ արդէն տեսար) չորս զէնքերով գքեզ սպառազինեցի, որոնց պէտք ունէիր թշնամիներուդ յաղթելու համար, և քեզի շատ խրատներ աւանդեցի՝ որովք լաւ վարուիս, կը մնայ ինծի հիմայ քեզի ուրիշ զէնք մը առաջարկելու, որ է ամենասուրբ խորհուրդն Հաղորդութեան։ Վասն զի ինչպէս որ այս խորհուրդը մէկալ բոլոր խորհրդներէն գերագոյն է, այդպէս այս հինգերորդ զէնքը բոլոր մէկալներէն աւելի զօրաւոր է։

Վերը միշտ չորս զէնքը իրենց արժէքը կ'առնուն արդիւնքներէն և շնորհէն՝ որոնց արժա-

նի եղանք Քրիստոսի սուրբ արեամբը. բայց այս զէնքը է նոյն իսկ արիւն և մարմին Քրիստոսի հոգւով և բոլոր աստուածութեամբն։ Անոնցմով դէմ կը դրուի թշնամւոյ՝ Քրիստոսի զօրութեամբը, ասով կը պատերազմինք անոնց դէմ Քրիստոսի հետ մէկ տեղ, և Քրիստոս մեզի հետ մէկ տեղ անոնց դէմ կը վառուի, ինչու որ ով որ Քրիստոսի մարմինը կ'ուտէ, և անոր արիւնը կը խմէ՝ Քրիստոսի հետ կը բնակի, և Քրիստոս անոր հետը կը բնակի։

Եւ որովհետև այս ամենասուրբ խորհուրդը և այս զէնքը երկու կերպով հնար է գործածել խորհրդարար մէկ անգամ օրը, և հոգևորապէս ամէն ժամ և ամէն վայրկեան. զանոնց մ'ըներ ստէպ ստէպ երկրորդ եղանակին համեմատ հաղորդուելու, և միշտ ըստ առաջին եղանակին՝ երբ քեզի կը շնորհուի։

ԳԼՈՒԽ ԾԴ.

Հաղորդութեան ամենասուրբ խորհուրդը ընդունելու կերպին վրայ։

Զանազան վախճաններով կրնանք մենք մօտենալ այս աստուածային խորհրդոյն, որոնց ստացմանը զանազան գործքեր պարտական ենք յանձն առնուլ երեք ժամանակի համեմատ բաժնուած, հաղորդութենէն առաջ, հաղորդուելու ժամանակին, և հաղորդութենէն ետքը։

Հաղորդուելէն առաջ (որ դիտմամբ որ ընդունինք նէ) պարտական ենք մեր խիղճը մաքուր չափ մեղաց արատէն լուալու և սրբելու ապաշխարութեան խորհրդովը, թէ որ զմեզ բանով մը ստգտանէ, և սրտի յաժարութեամբ բոլորովին անձնատուր ըլլանք պիտի Յիսուսի ամենայն հոգւով և ամէն մեր զօրութեամբը և կարողութեամբը, և որչափ որ իրեն հաճոյ է, ինչու որ ինքը այս ամենասուրբ խորհրդին մէջ մեզի կը պարգևէ իր մարմինը և արիւնը, իր հոգին և աստուածութիւնը, և բովանդակ արդիւնքները, և մտմտալով թէ մեր ընծան անոր նուէրին քով գրեթէ ոչ ինչ է և շատ քիչ, պարտական ենք բաղձալ ունենալու որչափ որ անոր ամէն արարածները, այս է մարդիկները և երկնաւորները ընծայեցին և տուին՝ անոր մեծվայելչութեանը նուիրելու համար:

Ուստի զանիկայ ընդունել ուզելուդ՝ դիտմամբ քու և անոր թշնամիները յաղթելու և իսպառ խորտակելու, հաղորդուելէդ յառաջ նախընթաց իրիկուընէ կամ քիչ մը առաջ սկսիր մտածել որդւոյն Աստուծոյ սրտին ունեցած բաղձանքը, որպէս զի դուն անոր սրտիդ մէջ տեղ մը պատրաստես աս ամենասուրբ խորհրդոյս միջոցաւը, քու հետդ միանալու համար և քեզի օգնելու բոլոր պատակիր յաժարութիւններդ յաղթելու: Այս բաղձանքը այնչափ մեծ և անբաւ է 'ի տէրն մեր, ինչուան ստեղծեալ միտք մը չի կրնար զանի հասկնալ:

Դուն ըստ մասին անի հասկնալու համար՝ այս երկու բանը միտդ պահէ: Նախ՝ ամենաբարի Աստուծոյ անպատմելի հաճութիւնը, որով մեր հետը կենալ կը հաճի, ինչուան զայն կոչելու իր խնդութիւնը: Երկրորդ՝ մտածելթէ կարգէ դուրս անի մեղքը կ'ատէ, իբրև արգելք և խոչընդոտն անոր մեզի հետ միաւորութեանը՝ որուն մեծ փափաքով կը փափաքի, և իբրև ամէն բանին մէջ անոր աստուածային կատարելութեանց հակառակող. վասն զի ինք ծայրագոյն բարի ըլլալով, պարզ լոյս և անսահման գեղեցկութիւն՝ չի կրնար չ'ատել մեղքը և յանհունս անորմէ չխորշիլ, որ ուրիշ բան չէ, եթէ ոչ խաւար և անտանելի պակութիւն և մեր հոգւոյն արատը: Եւ այնչափ մեծ է Աստուծոյ ատելութիւնը մեղաց դէմ, ինչուան սոր եղծմանը և ջնջմանը՝ սահմանեալ կարգի դրուեցան ամենայն գործք հին և նոր կտակարանաց, և մանաւորապէս անոր միածնի որդւոյն չարչարանաց գործքերը, որն որ (Աստուծոյ լուսաւորեալ ծառայից խօսքին համեմատ), ամէն մէկ փոքր յանցանք անգամ 'ի մեզ ջնջելու համար, նորէն (եթէ պէտք ըլլար) հազար անգամ կամակար մեռնելու յանձն կ'առնուր: Այս մտածութիւններէն հասկնալով դուն ինքնին թէպէտև անկատար կերպով բաղձանքին մեծութիւնը՝ զոր ունի տէրը քու սրտիդ մէջ մտնելու համար, անկէ քու և իր թշնամիները բոլորովին վռընտելու և խորտակելու համար, արծարծես պիտի 'ի քեզ բաղձանք մը զանի ստէպ այս վախճանով ընդունելու: Այսպէս արիութեան հոգւով վառուած՝ և քու երկնաւոր զօրագլխիդ գալուն յուսալը քաջալե-

բուած՝ ստէպ կանչէ պատերազմին տապարէ-
ղը այն կիրքը որուն դէմ ձեռք զարկեր ես զայն
յաղթելու և նուաճելու ստելութեան կամքը
բազմապատկելով՝ և անոր հակառակ առաքի-
նութեան գործքերը յանձին բերելով. և աս
կերպով ամենասուրբ հաղորդութենէն յառաջ
իրիկունը և առտուն շարունակես պիտի։

Իսկ երբոր կը պատրաստուիս ամենասուրբ
հաղորդութիւնը ընդունելու, քիչ մը յառաջ
դարձիր նայէ մտացդ աչքով պակասութիւննե-
րուդ՝ զորանք նախընթաց հաղորդութենէն՝ ին-
չուան այն ժամը անանկ համարձակ գործեցիր,
որպէս թէ Աստուած չըլլար, և ոչ այնքան խա-
չին վրայ քեզի համար չարչարուած ըլլար, նա-
խամեծար ընտրելովդ քու անարգ յօժարու-
թիւններդ և հաճոյքդ՝ քան թէ Աստուծոյ կամ-
քը և անոր պատիւը, և այսպէս պատկառան-
քով և զգաստութեան վախով մը ճանչցիր ա-
պերախտութիւնդ և անարժանութիւնդ։

Բայց մտածելով յետոյ թէ Աստուծոյ անհուն
բարութեան խորքն՝ քու ապերախտութեանդ
և անհաւատարմութեանդ խորերուն ձայն կու-
տան, վստահութեամբ մը անոր մօտիկցիր, քու
սրտիդ մէջ անոր ընդարձակ տեղ մը պատրաս-
տելով, որով անոր բոլորովին տէր ելլէ։ Եւ ան
ատենը անոր ընդարձակ տեղ մը տաս պիտի,
երբոր քու սրտէդ ստեղծուածներուն որ և իցէ
սէրը դուրս կը վռընտես դուռը դոցելով, որ-
պէս զի բաց 'ի քու տեառնէդ ուրիշ օտար մը
մուտ չի գտնէ անոր մէջ։

Իսկ հաղորդուածիդ պէս՝ քու սրտիդ սե-

նեակը քաշուած մտիր, և նախ խոնարհած
անոր երկրպագութիւն ըրէ ամենայն խոնար-
հութեամբ և յարգանաք, և քու տեառնդ հետ
մտքովդ այսպէս խօսէ. Ահա դուն կը տես-
նես զմ միակ բարիդ իմ, թէ ես ինչ գիւրու-
թեամբ գքեզ կը վշտացընեմ, և օրշավ զօրա-
ւոր և բռնացած է իմ վրաս այս կիրքը, և
ինքիրմովս անձս հաղորդելու կարող չեմ։ Բայց
աս պատերազմը գլխաւորապէս քուկդ է, և
քեզմէ միայն յաղթութիւնը կը սպասեմ, թէ-
պէտև պէտք է ինձի որ դուն պատերազմիս։
Յետոյ յաւիտենական հօր դառնալովդ անոր
ընդհակալութեանը և գքեզ յաղթելուդ համար՝
ընծայէ անոր միածին որդին, զոր որ ինքնին
քեզի պարգևեց, և զոր արդէն սրտիդ մէջ կը
կրես, և վերը յիշած կրքին դէմ քաջութեամբ
պատերազմելովդ, հաւատքով Աստուծմէ ակն-
կալած սպասէ յաղթութիւնը, որն որ գքեզ ե-
բեսի վրայ չի ձգեր, թէ որ դուն քու կողմդ
ձեռքդ եկածը ընես, թէպէտ և զայն ուշացընէ։

ԳԼՈՒԽ ԾԵ.

Թէ ինչպէս հաղորդուրեան պատրաստուելու
ենք 'ի մեզ Աստուծոյ սէրը արծարծելու
համար։

Քու Աստուածդ սիրելու՝ գքեզ յարգելու հա-
մար այս երկնապարգև խորհրդովը, մտաքդ նայէ
քու վրադ Աստուծոյ սփռած սէրը, մտածելով

նախընթաց իրիկուընէ թէ ինչպէս այն մեծա-
զօր և ամենակալ տէրը գոհ չըլլալով զքեզ ը-
տեղծելու իր պատկերին նմանութեանը, և
աշխարք ղրկելու իր միածին որդին երեսուն ու
իրեք տարի քու անօրէնութեանդ համար չար-
չարանք կրելու, և դժնդակ վիշտեր և խաչին
անողորմ մահը յանձն առնելով զքեզ փրկելու
համար, ուղեց նաև թողու անի քեզի 'ի կերա-
կուր և 'ի դարման՝ հաղորդութեան ամենա-
սուրբ խորհրդին մէջ։

Աղէկ մտածէ որդեակ այս սիրոյն անբաւան-
դակելի գերազանցութիւնը, որ ըստ ամենայն
մասանց կատարեալ և անզուգական զանի կ'ը-
նեն։

Նախ՝ վասն զի թէ որ ժամանակին աչքեր-
նիս դարձընենք, մեր Աստուածը 'ի յաւիտենից
ամէն սկզբէն յառաջ մեզի սիրեց, և ինչպէս
որ անոր աստուածութիւնը յաւիտենական է,
նոյնպէս յաւիտենական է անոր սէրը, որով
ամէն դարերէ յառաջ սահմանեց իր մտքին
մէջ մեզի իր որդին տալու այսպիսի զքանչելի
կերպով։ Որուն համար զուարթանալովդ սըր-
տիդ մէջ ներքին ուրախութեամբ ասանկ գո-
չէ. Հայա այս յաւիտենականութեան ան-
դունդին մէջ նուաստութիւնս այնչափ մեծա-
բուած և սիրուած էր ծայրագոյն Աստուծոյ
աչքին առջև, որն որ իմ վրաս կը մտածէր, և
կը բաղձար անճառելի սիրոյ կամքն նոյն ինքն
իր միածին որդին ինծի 'ի կերակուր տալու։

Երկրորդ՝ բովանդակ այլ ստեղծուածոց սէ-
րը որչափ որ մեծ ըլլայ, սահման և կոպար

մը ունի որմէ անդին չեն կրնար անցնիլ. բայց
մինակ այս մեր տեառն սէրը ոչ սահման և ոչ
չափ ունի։ Եւ սակայն ուզելով լիովին սէրը
կատարել՝ տուաւ մեզի իր սեպհական որդին
իրեն հաւասարակիցը մեծավայելչութեամբը և
մի և նոյն էութեամբը և բնութեամբը։ Որով
այնչափ է սէրը, որչափ է նուէրը, և այնչափ է
նուէրը՝ որչափ է սէրը. երկուքն ալ անանկ մե-
ծութեամբ առաւելեալ՝ ինչուան միտք մը չի-
կայ՝ որ կարող ըլլայ զայն երևակերպել։

Երրորդ՝ Աստուած զմեզ սիրելու համար ոչ
երբէք ստիպուեցաւ հարկէ մը կամ բռնադա-
տութենէ, այլ միայն իր ներքին բնական բա-
րութիւնը շարժեց զինքն ասանկ և այնչափ ան-
համեմատ սիրով մեզի սիրելու։

Չորրորդ՝ և ոչ իսկ գործ մը կամ արդիւնք մը
մեր կողմէն կանխեցին՝ որպէս զի այն անսահ-
մանն տէրը մեր նուաստութեանը ասանկ գերա-
զանց սէր մը ցուցընէ, այլ մինակ իր առատա-
ձեռնութեամբը բոլոր բովանդակ ինքզինքը ընտ-
ծայեց մեզի իր անարժան ստեղծուածներուն։

Հինգերորդ՝ թէ որ աչք դարձընենս այս սի-
րոյն մաքրութեանը, կը տեսնաս թէ նման չէ
շահով խառնուած աշխարհային սիրոյն, վասն զի
մեր տէրը կարօտ չէ մեր բարիքներուն՝ ինքն յին-
քեան և առանց մեր միակ երանեալ և փառա-
ւորեալ ըլլալով, ուստի իր անպատմելի բարու-
թիւնը և սէրը սոսկ մեզի համար 'ի գործ դրուե-
ցան ոչ իրեն՝ այլ մեր օգտին համար։ Զոր ըստ
պատշաճի լաւ մտածելով՝ ըսէ դուն 'ի ներքս
'ի քեզ. Բաբէ, և ինչպէս կարելի է ասանկ

բարձրագոյն տեառն իր սէրը գնել այսպիսի անարդ ստեղծուածի մը. ի՞նչ կը խնդրես դուն փառաց թագաւոր. ի՞նչ կը սպասես ինծմէ, որ ուրիշ բան չեմ բայց եթէ հող և մոխիր։ Ո՛վ Աստուած իմ, ես աղէկ կը տեսնամ քու բարձրագոյն սիրոյդ իմանալի լուսովը, թէ մի միայն խորհուրդ մը ունիս որ աւելի բացայայտ կ'ընէ քու սիրուդ մաքուր գիւտերը ինծի համար, ինչու որ ուրիշ բանի մը համար բովանդակ անձդ ինծի 'ի կերակուր չես տար, բայց եթէ բոլորովին զիս քեզի ձգելու, ո՛չ իբր թէ կարօտ ըլլալով ինծի, այլ որպէս զի ես 'ի քեզ ապրիմ և դուն իմ մէջս անձուկ միաւորութեամբ 'ի քեզ փոխարկեալ, և այս երկրաքարշ և նուաստ սիրտս քու աստուածային սրտիդ հետ միաւորի։

Ուստի դուն զարմանքով և խնդութեամբ լեցուն տեսնալով անձդ ասանկ տեսնէ պատուեալ և սիրուած, և իմանալով թէ ինքն իր ամենազօր սիրովը ուրիշ բան չի գիտեր և չի խնդրեր քեզմէ, բայց եթէ քու բովանդակ սէրդ իրեն քաշելու, նախ հեռացընելով քու անձդ ամէն ստեղծուածներէն, և յետոյ նաև քու անձէդ՝ դուն ալ ստեղծուած ըլլալով, ընծայէ ինքզինքդ բոլորովին յողնակէզ Աստուծոյ, որպէս զի ասկից վերջը մինակ անոր սէրը և հաճութիւնը շարժէ քու միտդ և կամքդ և յիշողութիւնդ, և քու զգայարաններդ ուղղէ։

Եւ տեսնելով թէ բան մը չի կրնար 'ի քեզ այսպիսի աստուածային գործքերը յառաջ բերել, ինչպէս որ զանի ընդունելը ըստ արժանւոյն ամենասուրբ հաղորդութեան խորհրդին ձեռքը-

վը, անոր սիրտդ բաց, և ըսէ աս երկնային գոթքերը ու եռանդուն հառաչանքները. Ո՛վ երկնային կերակուր. երբ պիտոր ըլլայ այն ժամը, որուն մէջ ոչ այլ կրակով, բայց եթէ քու սիրոյդ կրակովը անձս ողջակէզ քեզի պատարագեմ պիտի, երբ արդեօք. երբ սէր անստեղծ. ո՛վ կենդանի հաց երբ ինծի ըլլայ պիտի 'ի քեզ և քեզմով և քեզի համար ապրիլ. երբ արդեօք կեանք իմ, գեղեցիկ կեանքս, կեանք զուարթագին և յաւիտենական։ Ո՛վ մանանայ երկնային, երբ արդեօք որ և իցէ երկրային կերակուրներէն զզուած քեզի միայն պիտի փափագիմ, և քեզմով միայն կերակրիմ և պարարիմ։ Երբ արդեօք ըլլայ պիտի քաղցրութիւն իմ, երբ միակ բարիդ իմ։ Աղէ ո՛վ գորովագութ և ամենակալ տէր իմ, հիմակուընէ ազատէ սիրտս բոլոր երկրաքարշ և անմաքուր կիրքերէն։ Զարդարէ անի քու սուրբ առաքինութիւններովդ, և այն մաքուր դիտաւորութեամբը՝ ամէն բան ընելու զուտ քու հաճոյիցդ համար. վասն զի այս կերպով քեզի սիրոս բանամ պիտի, դքեզ հրաւիրեմ պիտի և գորովալիր բռնութիւնով մտցընեմ պիտի, ուր յետոյ առանց արգելքի ո՛վ տէր գործես պիտի այն արդիւնքը՝ որուն միշտ քու անձդ կը փափաքէր։ Ասանկ խանդաղատական բաղձանքներ կրնաս իրիկունը և առտուն կրկնել հաղորդութեան պատրաստութեանը համար։

Յետոյ հաղորդութեան ժամը մօտենալուն՝ մտածէ թէ ի՞նչ բան կը պատրաստուիս ընդունելու. Աստուծոյ որդին անբովանդակելին մեծ-

վայելչութեամբը, որուն առջևը երկնքին սիւ-
ները կը դողան, բոլոր զօրութիւնները կը սա-
սանին, արբոց սուրբը, անարատ հայելին, ան-
համեմատ մաքրութիւնը՝ որուն քով անարատ
արարած մը չի կայ. ան որ իբրև որդն և ժողո-
վըրդեան արհամարհանք քու սիրոյդ համար
յանձն առաւ մերժուելու, կոխկրտուելու, կա-
տակներուն ծաղր երևնալու, երեսը թուք ընդ-
ունելու, և մարդիկներուն չարութենէն և անօ-
րէնութենէն խաչը ելլելու: Ընդունիս պիտի
կ՚ըսեմ այն Աստուածը, որուն ձեռքն է ամէն
ստեղծուածներուն կեանքը և մահը:

Եւ դուն ընդհակառակն ոչ ինչ ես և քու չա-
շութեանցդ և մեղքերուդ համար ամէն ան-
բան արարածներէն ցած եղար. արժանա-
ւոր ամէն դժոխքի սատանաներէն խաղք ու
խայտառակ ըլլալու. և անանկ գերագոյն և
անհամար երախտիքներուն շնորհակալութեան
տեղը՝ քու ցանկութիւններովդ և յօժարու-
թիւններովդ անանկ գորովագութ Տէր մը ար-
համարհեցիր, և անոր պատուական արիւնը
ոտքի տակ առիր: Իսկ ինքը՝ 'ի վերայ այսր
ամենայի մշանջենաւոր սիրովը և իր անփո-
փոխելի բարութեամբը իր երկնային սեղա-
նին զքեզ կը հրաւիրէ, և երբեմն ևս կը ստի-
պէ անոր մօտենալու մահուան սպառնալիքով:
Եւ քու դէմդ իր ողորմութեան դուռը չի փա-
կեր, և ոչ քեզի իր աստուածային կենակը կը
դարձընէ, թէպէտ և ըստ բնութեան բորոտ,
կաղ, ջրդողած, կոյր և դիւահար ըլլաս, և անձդ
մատնած բազմաթիւ և գարշելի պղծութիւնե-
րուն: Այս միայն քեզմէ կը խնդրէ:

Նախ՝ ցաւիլդ զանի վշտացնելուդ համար:

Երկրորդ՝ որպէս զի ամէն բանէն վեր մեղքը
ատես, եղեր է մեծ, եղեր է պղտիկ:

Երրորդ՝ որ բոլորովին ինք զինքդ նուիրես
միշտ բաղձանքով և գործքով պատեհ դէպքե-
րուն մէջ անոր կամքին հնազանդելու:

Չորրորդ՝ որ յետոյ հաստատուն հաւատքով
յուսաս, թէ անիկայ քեզի պիտի ներէ և մե-
ղացդ արատէն պիտի սրբէ, և ամէն թշնամի-
ներէդ պահպանէ պիտի:

Արդ քու տեառնդ այս անպատմելի սիրովը
քաջալերուած՝ հաղորդուելու մօտեցիր սուրբ և
սիրով կարօտցած վախով, ըսելով. Տէր արժանի
չեմ զքեզ ընդունելու, այնչափ անգամ ծանրա-
պէս զքեզ վշտացնելուս, և ինչպէս որ պէտք է
քեզի դէմ ըրած անօրէնութիւններուս վրայ դեռ
չի լացի: Տէր չեմ բաւական չեմ արժանի զքեզ
ընդունելու, ինչու որ տակաւին սիրտս ներելի
մեղայ յօժարութիւններէն չէ՛ սրբուած: Տէր
արժանի չեմ զքեզ ընդունելու, ինչու որ դեռ
յօժարութեամբ սրտի քու սիրուդ, կամքիդ և
հնազանդութեանդ ինքզինքս չեմ նուիրած:
Հապա ով Տէր իմ ամենակալ և ծայրագոյն
բարի, քու բարութեանդ և խօսքիդ արդեամբքը
արժանի ըրէ զիս զքեզ ընդունելու, սէր իմ,
այս հաւատքով և եռանդեամբ:

Երբոր հաղորդուիս՝ շուտով քու սրտիդ սե-
նեակը առանձնայիր, և մոռնալով ամէն ըս-
տեղծուածները՝ այս կամ այլ նոյնպիսի խօս-
քերով սկսիր քու տեառնդ հետ խօսելու. Ո՛վ
մեծազօր փառաց թագաւոր, ով բերաւ զքեզ

խոնարհեցուց ներս իմ մէջս, ես որ թշուառա-
կան, աղքատ, կոյր և մերկ եմ։ Եւ անի կը պա-
տասխանէ թէ Սէրը։ Եւ դուն կրկնելով ըսէ.
Ո՛վ սէր անստեղծ, սէր քաղցր, ինծմէ ի՞նչ կը
խնդրես։ Ուրիշ բան չըսէր անիկայ, բայց եթէ
սէր, և չեմ ուզեր որ ուրիշ կրակ վառուի քու
սրտիդ սեղանին մէջ, քու նուէրներուդ մէջ և
ամենայն գործքերուդ մէջ, բայց եթէ իմ սիրոյս
կրակը, որ այրելով 'ի քեզ ուրիշ ամէն օտա-
րական սէր, և բոլոր քու յատուկ կամքդ՝ ինծի
հանէ պիտի անուշ խնկի հոտ մը։ Այս խնդրեցի
և միշտ կը խնդրեմ, ինչու որ ես կը բաղձամ որ
բոլորովին քեզի ըլլամ և դուն ինծի, որ երբէք
չ'ըլլար՝ քանի որ կամքիս հետ մէկ սիրտ մէկ հո-
գի չ'եղած՝ որով այնչափ կը զուարճանամ, անձ
նասիրութեանդ, յատուկ կարծեացդ, և ամէն
ուզածիդ և համարմանդ վրայ յարեալ կենաս
նէ։

Քեզմէ կը խնդրեմ անձիդ ատելութիւնը՝ իմ
սէրս քեզի տալու համար. սիրտդ կը խնդրեմ
զանի միաւորելու համար իմ սրտիս հետ, որն
որ ասոր համար խաչին վրայ բացուեցաւ, և
ղքեզ բոլորովին կը խնդրեմ, որպէս զի ես ալ
բովանդակ քուկդ ըլլամ։ Գիտես դուն ինքնին
թէ ես արժէքով անսահման եմ, և սակայն իմ
բարութեանս համար այնքան կ'արժեմ որչափ
դուն։ Հապա սիրելիդ իմ գնէ զիս զքեզ տալով
ինծի։

Սիրելի՛ որդեակ իմ, քեզմէ կը խնդրեմ որ
բան մը չ'ուզես, չմտածես, չիմանաս և չտես-
նաս ինծմէ և կամքէս դուրս, որպէս զի ես 'ի

քեզ բոլորովին ուզեմ, մտածեմ, իմանամ և
տեսնեմ, անանկ որ ոչընչութիւնդ բոլորովին
իմ անսահման մեծութեանս խորերը ընկղմած՝
անոր փոխարկուի, սանկ դուն ինծմով երջա-
նիկ ըլլաս պիտի, և ես քեզմէ յամենայնի զոհ
պիտի ըլլամ։

Եւ վերջը նուիրէ՛ հօր Աստուծոյ անոր որդին
նախ 'ի շնորհակալութիւն անոր երախտեացը,
յետոյ քու կարօտութիւններուդ՝ և բովանդակ
Եկեղեցւոյն համար, ազգականներուդ համար
և որոնց որ պարտական ես, և քաւարանի հո-
գւոց համար, և աս նուէրը ընծայես պիտի 'ի
յիշատակ կամ 'ի միաւորութիւն այն ընծային՝
որով ինքն հօր Աստուծոյ ընծայեց իր անձը բո-
վանդակ արիւնլուայ խաչին վրայ կախուելով։
Եւ այս կերպով կրնաս ալ նուիրել հռովմէա-
կան սուրբ Եկեղեցւոյ մէջ ան օրը մատուցուած
բոլոր պատարագները։

ԳԼՈՒԽ ԾԶ.

Հոգևորական Հաղորդութեան վրայ։

Թէպէտև հնար չէ՛ խորհրդաբար Յիսուսը ընդ-
ունիլ օրուան մէջ մէկ անգամէն աւելի, այլ
հոգևորապէս (ինչպէս որ ըսի) ամէն ժամ և
ամէն վայրկեան հնար է ընդունիլ, և այս բա-
նը ո՛չ երբէք արարած մը մեզմէ կրնայ վերցը-
նել, բայց եթէ մեր անհոգութիւնը և կամ մեր

յանցանքը։ Եւ երբեմն այնչափ պղտաւէտ և հաճելի է Աստուծոյ այս հաղորդութիւնը, որչափ երբեմն շատ խորհրդական հաղորդութիւնները օգտակար չեն ըլլար, զանոնք ընդունողներուն պակասութենէն։

Ուստի քանի անգամ որ դուն տրամադրուիս և պատրաստուիս այսպիսի հաղորդութեան, պատրաստ կը գտնես Աստուծոյ որդին, որ իր սեպհական ձեռքովն հոգևորապէս իր պատուական մարմնովն և արեամբն զքեզ կը կերակրէ։ Աստոր պատրաստուելուդ՝ մտաք դարձիր անոր այս վախճանով, և կարճ նայուածքով մը քու պակասութիւններուդ վրայ, անոնցմով զինքը վշտացընելուդ համար ցաւէ, և ամենայն խոնարհութեամբ և հաւատքով խնդրէ որ հաճի դալու քու աղքատիկ սիրտդ նոր շնորքով զանի բժշկելու և թշնամեայ դէմ զօրացնելու համար։

Եւ կամ երբոր անձիդ բռնութիւն ընելով մահացընել ուզես անկարգ ախորժակ մը 'ի քեզ, և կամ առաքինական գործք մը ընել, ամէն բան ըրէ դիտաւորութեամբ սիրտդ պատրաստելու քու տեառնդ, որ շարունակ զայն քեզմէ կը խնդրէ։ Եւ յետոյ իրեն դառնալովդ՝ կանչէ զանիկայ բաղձանքով որ իր շնորքովը դայ զքեզ բժշկելու և թշնամիներէն ազատելու, որպէս զի ինքն միայն քու սիրտդ ժառանգէ։ Եւ կամ՝ յիշելով քու անցած հաղորդութիւնդ զոր խորհրդաբար ընդունեցիր, ըսէ եռանդուն սրտիւ. Երբ, տէր իմ, երբ պիտոր ընդունիմ զքեզ ուրիշ անգամ ալ, երբ արդեօք երբ։

Իսկ թէ որ կը փափաքիս պատրաստուիլ և հոգևորապէս հաղորդուիլ աւելի պատշաճ եղանակով, նախընթաց երեկոյէն ուղղէ բոլոր մտացուցումներդ, առաքինական գործքերդ և բովանդակայլ բարեգործութիւնդ դիտաւորութեամբ հոգևորապէս ընդունելու քու փրկիչդ։ Եւ առաուն կանուխ մտածելով թէ ինչ բարիք և ինչ երջանկութիւն է այն հոգւոյն՝ որ արժանապէս կ'ընդունի ամենասուրբ հաղորդութեան խորհուրդը (որովհետև անով կորսուած առաքինութիւնները նորէն կը ստացուին, հոգին իր առջին գեղեցկութեանը կը դառնայ, և կը հաղորդի որդւոյն Աստուծոյ շարչարանաց պտուղներուն և արդիւնքներուն) և թէ ինչչափ Աստուծոյ հաճոյական է, որ մենք զանի ընդունինք և ըսուած բարիքները վայելենք. ջանք ըրէ սրտիդ մէջ մեծ բաղձանք մը վառելու զանի ընդունելու իրեն հաճելի ըլլալու համար։

Այս բաղձանքով վառուածիդ պէս՝ դարձիր անոր ըսելով. Որովհետև, ո՛վ տէր, շնորհուած չէ՛ ինծի այսօր խորհրդաբար զքեզ ընդունելու, շնորհէ՛ ինծի ո՛վ բարութիւն և կարողութիւն անստեղծ, իմ բոլոր մեղքերս քաւելէդ և հոգւոյս վէրքերը բժշկելէդ վերջը, արժանապէս զքեզ ընդունելու հոգևորապէս հիմայ, ամէն ժամ, և ամէն օր, տալով ինծի նոր շնորք և զօրութիւն բոլոր թշնամեայս դէմ, և 'ի մասնաւորի այս ինչ մոլութեանս, որուն դէմ կը պատերազմիմ քեզի հաճելի ըլլալու համար։

ԳԼՈՒԽ ԾԷ.

Շնորհակարդութեան վրայ.

Որովհետև մեր ամէն ունեցած և ըրած բարիքը Աստուծոյ տուրք է և անոր համար կ'ինչնայ, ասնոր համար պարտական ենք իրեն շնորհակալութիւն մատուցանելու ամէն մեր բարի կըրթութեանը և յաղթութեանը և բոլոր իր գըթած ձեռքէն ընդունած երախտիքներուն համար, թէ մանաւոր ըլլան և թէ ընդհանուր։ Եւ աս բանը պատշաճ եղանակով հատուցանելու համար, մտածել պէտք է վախճանը, որով Աստուած կը շարժի մեզի հաղորդելու իր շնորքը. վասն զի այսպիսի մտածութենէ և ծանօթութենէ կը սորվուի թէ Աստուած որպիսի՛ շնորհակալութիւն կը պահանջէ մեզմէ։

Եւ որովհետև ամէն բարերարութեան մէջ Աստուած գլխաւորապէս կը դիտէ իր պատիւը, և զմեզ իր սիրոյն և ծառայութեանը քաշելու, ասոր համար յառաջ ինքիրենդ մտածէ այսպիսի կերպով. որպիսի կարօղութեամբ, իմաստութեամբ և բարութեամբ իմ տէրս շնորհեց և ըրաւ ինծի այս երախտիքը և շնորքը։

Յետոյ տեսնալով թէ անոր երախտեացն արժանաւոր 'ի քեզ բան մը չունիս, բայց եթէ անարժանութիւն և ապերախտութիւն, խորին խոնարհութեամբ ըսէ անոր. Եւ ի՞նչպէս, ա՛ռ տէր, յանձն կ'առնուս նայելու մեռեալ շան

մը, այնչափ բարերարութիւններ ինծի ընելով։ Քու անունդ օրհնեալ ըլլայ յաւիտեանս յաւիտենից։

Եւ վերջապէս տեսնալով թէ ինքը քեզմէ բարերարութեամբը կը պահանջէ որ դուն զանի սիրես և պաշտես, վառուէ՛ սիրով այնպիսի գոյովագութ տեսան, և հարազատ փափաքով իրեն արժանեացն համեմատ ծառայելու։ Եւ ասոր համար աւելցնես պիտի անոր լիուլի ընծայումը, զոր հետևեալ կերպով կատարէ՛։

ԳԼՈՒԽ ԾԸ.

Ընծայման վրայ։

Որպէս զի անձիդ ընծայումը ըստ ամենայն մասանց Աստուծոյ ընդունելի և հաճոյական ըլլայ, երկու բանի պէտք ունի։ Առջինն է միաւորումն ընծայման հետ՝ զոր Քրիստոս հօր Աստուծոյ ընծայեց։ Երկրորդ որ կամքդ ազատ ըլլայ արարածներուն ամէն բերմունքէն։ Ըստ առաջնոյն գիտնալու ես թէ որդին Աստուծոյ երբոր այս արտասուաց հովիտը կը պանդխտէր, չէ՛ թէ միայն ինքզինքն և իր գործքերը՝ հապա մեզի և միանգամայն մեր գործքերը երկնաւոր հօրը նուիրեց։ Անանկ որ մեր նուէրներն ալ պէտք է որ անոր նուիրմանց հետ միաւորութեամբ և ապաւինութեամբ ըլլան։

Ըստ երկրորդին՝ անձդ նուիրելէդ յառաջ քննէ՛ և տես, թէ կամքդ յարում մը ունի. թէ

որ ունի նէ, պարտական ես զայն զատելու ամ-
մէն օտար բաղձանքէն, անոր համար Աստու-
ծոյ վաղէ, որ ինքնին իր ամենակարող աջովը
դքեզ անկէ հեռացընէ, որով կարող ըլլաս դուն
անձդ նուիրել անոր աստուածային անսահման
մեծվայելչութեանը զերծ և ազատ այլ ամմէն
բաներէն:

Եւ ասոր պէտք է լաւ մտադրութիւն ընես,
ինչու որ եթէ անձդ Աստուծոյ նուիրես՝ սիրտդ
կապուած ունենալով արարածներուն, քուկինդ
չես նուիրեր, այլ ուրիշներունը, դուն անձիդ
չ'ըլլալով այլ ան արարածներուն, որոնց սիրտդ
տարուեր է, և ասիկայ մեծապէս Աստուծոյ
անհաճոյ է, և իբր թէ վրան ծիծաղիլ է: Ա-
բանէն կը պատահի որ մեր անձանց համար
Աստուծոյ նուիրած շատ նուիրմունքները, չէ
թէ միայն պարապ և անպտուղ կ'ելլեն, հա-
պա նաև անոնցմով զանազան պակսութեանց
և մեղաց մէջ կը սահինք կ'ինկնանք:

Կրնանք մենք զմեզ Աստուծոյ նուիրել, թէ-
պէտև արարածներուն տարուած ըլլանք, այլ
դիտաւորութեամբ որ անոր բարութիւնը զմեզ
լուծէ, որպէս զի յետոյ կարենանք զմեզ նուի-
րել բոլորովին անոր աստուածային մեծվայել-
չութեանը և ծառայութեանը. և ասի ստէպ
ընելու ենք մեծարաղձ փափաքով:

Ուրեմն քու ընծադ պէտք է որ ըլլայ առանց
քու կամքիդ յարում մը ունենալու, չնայելով ոչ
երկրաւոր և ոչ երկնային բարիքներուն, այլ
միայն Աստուծոյ կամքին և նախախնամութեա-
նը, որուն բոլորովին պարտական ես հպատակել

և անոր անձդ զոհել 'ի մշտնջենաւոր պատա-
րագ, և ամմէն ստեղծուածները մոռցած՝ ըսէ.
Ահա, տէր իմ և արարիչ իմ, բովանդակ կամքս
բոլորովին քու կամքիդ և յաւիտենական նա-
խախնամութեանդ ձեռքն է, ինչ որ աչքիդ առ-
ջևը հաճելի երևնայ՝ ան ըրէ վրաս, կենացս և
մահուանս ժամանակը և մահուանէս ետքը և
յաւիտեան:

Թէ որ այս կերպով վարուիս անկեղծու-
թեամբ (զոր առջևդ ելած ներհակ իրաց մէջ
իմանաս պիտի), երկրաւոր ըլլալէդ կ'ըլլաս
գործունեայ վաճառական և երջանիկ աւետա-
բանին համեմատ, վասն զի դուն Աստուծոյ
կ'ըլլաս, և Աստուած քուկդ կ'ըլլայ. ինքն միշտ
անոնց ըլլալով, որոնք արարածներէն և իրենց
անձէն զատուելով՝ բոլորովին անոր աստուա-
ծային կամացն կ'ընծայուին:

Ա՛ոդ՝ կը տեսնես հոս տեղ սրդեակ իմ, ամմէն
թշնամիներուդ յաղթելու զօրաւոր եղանակ մը,
ինչու որ եթէ այսպէս զքեզ Աստուծոյ հետ միա-
ւորէ ըսած նուիրումը, ինչուան անով դուն
բոլորովին Աստուծոյ ըլլաս, և Աստուած բոլո-
րովին քուկդ ըլլայ, ո՞ր թշնամին, և ո՞ր զօրու-
թիւնը կրնայ երբէք քեզի վնասել: Եւ երբոր կ'ու-
զես անոր ընծայել անձնական գործ մը, ինչ-
պէս պահք, աղօթք, համբերութեան գործ, և
այլ այսպիսի բարեգործութիւնք, վերցուր նախ
միտքդ այն ընծային՝ զոր Քրիստոս իր երկ-
նաւոր հօրը մատոյց իր պաքը և աղօթք և ուրիշ
գործքերը, և ասոնց արժէքին և զօրութեան
յուսովն՝ յետոյ քուկինդ ընծայէ:

Եւ եթէ ուզես երկնաւոր հօր ընծայել անոր որդւոյն Քրիստոսի գործքերը քու մեղքերուդ պարտեացը տեղ, այս կերպով պարտական ես ընել։

Դարձիր միանգամ նայէ՛ ընդհանրապէս և երբեմն որոշակի քու մեղքերուդ, և անկարելի տեսնալով որ դուն քեզմով կարենաս Աստուծոյ բարկութիւնը դադրեցնել և անոր աստուածային արդարութեանը փոխարէնը տալ, վազէ՛ անոր Որդւոյն կենաց և չարչարանքներուն, անոր մէկ ըրածը մտածելով, ինչպէս զոր օրինակ երբոր պաք կը բռնէր, կ՚աղօթէր, կը չարչարուէր, և արիւն կը թափէր, ուր տեսնաս պիտի թէ քու հետդ Հայրը հաշտեցնելու և քու մեղացդ պարտիքը վճարելու համար՝ կ՚ընծայէր անոր ան գործքերը, չարչարանքը և արիւնը, որպէս թէ անոր ըսէր. Հայր յաւիտենական, ահաւասիկ ես կամացդ համեմատ արդարութեանդ կը հատուցանեմ առատապէս այս անուն ծառայիդ մեղաց պարտիքը. թող հաճի աստուածային մեծվայելչութիւնդ անոր ներելու, և քու ընտրեալներուդ թիւը զանիկայ ընդունելու։

Ուստի դուն ան ատենը այս նոյն ընծադ և այս աղաչանքները միանգամայն նուիրէ՛ քեզի համար յաւիտենական հօրը, անոր գթութիւնը աղաչելով որպէս զի անոնց արժանեաց զօրութեամբը քեզի թողուս քու յանցանքներուդ պարտիքը։ Եւ աս ալ կրնաս ընել ոչ միայն տնօրինականաց մէկ խորհրդէն միւս խորհրդին անցնելուդ, այլ նաև մէկ ներգործութենէ՛ մէկալ

ներգործութեան ամէն մէկ խորհրդին. և չէ թէ միայն քեզի համար, հապա ուրիշներուն օգտին համար ալ կրնաս այս ընծայմամբ վարուիլ։

ԳԼՈՒԽ ԾԹ.

Զգայական ջերմեռանդութեան և գաղջութեան վրայ։

Զգայական ջերմեռանդութիւնը յառաջ կուգայ մերթ բնութենէն, մերթ սատանայէն և մերթ շնորքէն։ Անոր պատուղներէն կրնաս որոշել թէ ուսկից իր ծագումը ունի, իբր զի քեզի վարուց ուղղութիւն մը չի յաջորդելուն՝ երկարելու ես թէ գուցէ սատանայէն, կամ բնութենէն է, և յաւէտ երբոր հետը զուգընթաց կ՚ունենայ մեծ ճաշակ մը, քաղցրութիւն մը և յարում մը և անձիդ վրայ համարում մը։ Ուստի երբոր հոգևոր ճաշակներէն միտքդ ամբուած կը զգաս, կանկ մ՚առներ քննելու թէ անոնք ուստի՞ յառաջ կուգան, և անոնց մի՛ կութենիր, և քու ոչնչութեանդ ծանօթութիւնը մէկ դի մի՛ թողուր, և մեծ փութով և անձնուրացութեամբ աշխատէ՛ սիրտդ ազատ պահելու որ և իցէ հակմունքէն, թէ և հոգևոր ըլլայ, և միայն զԱստուած խնդրէ՛ և անոր հաճոյքը, ինչու որ այս կերպով ան քաղցրութեան ճաշակը թէ բնութենէն ըլլայ և կամ թէ սատանայէն, շնորհքէն քեզի կը փոխարկի։

Նոյնպէս գաղջութիւնը եկ եք ըսուած պատ-
ճառներէն կրնայ յառաջ գալ։ Աստանայէն՝
պաղեցնելով միտքդ, և հոգևոր գործքերէն՝ աշ-
խարհական զբաղմանց և ցանկութեանց դար-
ձընելով։ Մեզմէ՝ մեր մեղաց, արարածներուն
հակման և մեր անհոգութեանը համար։ Շնոր-
քէն՝ կամ ազդ ընելով մեզի որպէս զի ջանք ը-
նենք թողու ամէն երկրաւոր յարում և զբա-
ղում որ Աստուած չէ, և կամ Աստուած չի
հանգչիր, կամ թէ փորձով գիտանք՝ թէ մեր
ամէն բարիքը անորմէն է, կամ թէ յապոյն
մեծարգի սեպենք անոր պարգևները, և խոնարհ
և արթուն ըլլանք զանոնք պահպանելու, և կամ
մեր անձանց կատարեալ ուրացութեամբը, ա-
ւելի սերտ միաւորելու անոր աստուածային
մեծվայելչութեանը հետ, նաև հոգևոր բեր-
կրութեանց մէջ, որպէս զի չ'ըլլայ թէ ասոնց
բաղձանքնիս հակած՝ մեր սիրտը բաժնենք, զոր
Աստուած մեզմէ ամբողջ իրեն համար կը պա-
հանջէ, կամ թէ վասն զի կը հաճի մեր օգտին
համար տեսնել որ մենք կը՝պատերազմինք ամ-
մէն մեր՝զօրութեամբը անոր՝ շնորհին գործակ-
ցութեամբը։

Անոր համար երբոր եռանդէն պաղած զբեղ
կը զգաս, մտիր դունքդ սրտիդ սենեակը տես-
նալու, թէ որպիսի՞ յանցանքի համար ատ զգա-
յական ջերմեռանդութիւնը քեզմէ վերցուե-
ցաւ. և ան կողմը դարձուր պատերազմդ, չէ
թէ միւսանգամ շնորհաց զգայականութիւնը
ստանալու համար, հապա քեզմէ Աստուծոյն-
հաճոյ եղածը խափանելու։ Եւ չգտնելով յան-

ցանքը, սնի քեզի համարէ զգայական ջերմե-
ռանդութիւն՝ որն որ է տիրապէս ջերմեռան-
դութիւն, որ է աստուածային կամաց հետ
պատրաստական միաբանութիւնը։ Եւ սակայն
ջանա երբէք մէկդի չ'թողու քու հոգևորական
կրթութիւններդ, այլ անոնք շարունակէ՛ ամէն
փութով, որչափ ալ անպտուղ և անախորժ քե-
զի երևնան, կամքովդ խմելով դառնութեան
բաժակը, զոր գաղջութեան ատեն քեզի մար-
դասէր Աստուծոյ կամքը կը մատակարարէ։

Եւ թէ որ գաղջութիւնը երբեմն հետը ու-
նենայ ընկերակից մտաց թանձրամած խաւար
մը, ինչուան չի գիտնալ թէ ո՞ր դառնաս, կամ
ո՞ր կողմը բռնես, այսու ամենայնիւ սիրտդ թող
չի վհատի, այլ առանձինն կեցիր և հաստատուն
խաչը կրելու, հեռու և անմասն ամէն երկրա-
ւոր մխիթարութենէ, որ աշխարքէ կամ արա-
բածներէ քեզի ընծայուի։ Կրածդ գաղտուկ
պահէ՛ որ և իցէ անձէն, բաց 'ի հոգևոր հօրէդ,
որուն միայն յայտնես պիտի չէ՛ թէ վշտաց և
անձկութեան թեթևութեանը համար, այլ ա-
ւելի եղանակը սորվելու համերութեամբ զայն
կրելու Աստուծոյ կամաց հաճութեանը համե-
մատ։

Մի՛ գործածեր հաղորդութիւնները, աղօթ-
քը և ուրիշ կրթութիւնները ուսերէդ խաչը
թօթվելու համար, այլ որպէս զի զօրութիւն
ընդունիս նոյն խաչը շալկելու խաչեցելոյն մե-
ծադոյն փառքին համար։ Եւ մտացդ չփոթու-
թեանը պատճառաւ չի կրնալով ըստ սովորու-
թեանդ մտածականդ ընել և աղօթել, դուն
հնարաւոր եղածին չափ մտածէ։ Եւ ան որ չես

կրնար մոռք կատարել՝ ջանք ըրէ կամքով և խօսքերով զայն կատարելու, քու հետդ և Աստուծոյ հետ խօսելով, որմէն հրաշալի արդիւնքներ տեսնաս պիտի, և այս կերպով սիրտդ խրախուսած՝ քաջալերութիւն հագնի պիտի։

Ուրեմն այսպիսի դէպքին մէջ կրնաս ըսել. Ընդէր տրտում ես անձն իմ կամ ընդէր խռովես զիս, յուսա առ Աստուած, խոստովանեա նմա փրկիչ երեսաց իմոց Աստուած է. ընդէր տէր հեռի եղեր յինէն, մի թողուր զիս մինչ խպառ։

Եւ յիշելով ան սրբազան վարդապետութիւնը՝ զոր Աստուած Նեղութեանց ժամանակ աւանդեց Տովբիթին կնոջը իր Սառայ աղախնոյն, դուն ալ նոյն վարդապետութեամբ վարուէ ըսելով կենդանի ձայնիւ. Ամէն մէկ քեզի ծառայողը աս բանը ստուգութեամբ կը հաւատայ, ինչու որ անոր կեանքը թէ որ փորձութեան մէջ ըլլայ կը պահուի, թէ որ խռովութեան մէջ՝ կ'ազատուի, և թէ որ խրատուի նէ՝ արժանի կ'ըլլայ հանդիպելու քու ողորմութեանդ, վասն զի մեր կորստեանը վրայ չես ուրախանար, ինչու որ ալէկոծութենէն վերջը խաղաղութիւն կ'ընես, և արցունքներէն և ողբերէն վերջը մխիթարութիւն կուտաս, քու անունդ ո՛վ Աստուած Իսրայէլի յաւիտեան օրհնեալ ըլլայ [1]։

Ցիշէ՛ Եւ քու բարեգութ տէրդ, որն որ Գեթսեմանի պարտիզին մէջ և խաչին վրայ, որպէս

[1] Ըստ Վուլկագայ Տովբ. գ. 21։

զի աւելնայ իւր չարչարանքը, զգայական մասին մէջ երկնաւոր Հօրէն երեսի վրայ ձգուեցաւ, և անոր հետ խաչը շալկելով սրտանց ըսէ. Եղիցին կամք քո։ Ինչու որ ասանկ ընելով՝ քու համբերութիւնդ և պաղատանքդ՝ քու սրտիդ ողջակիզին բոցը կը հանեն ինչուան երկինքը Աստուծոյ քով, ճշմարիտ ջերմեռանդ մնալովդ։ Վասն զի ճշմարիտ ջերմեռանդութիւնը (ինչպէս որ քեզի ըսի) արթուն և հաստատ կամքի պատրաստականութիւն մըն է Քրիստոսի հետևելու խաչը ուսը շալկած որ ճամբով որ հրաւիրէ և առաջնորդէ, և կը կայանայ զԱստուած սիրելուն վրայ, վասն զի սիրուելու արժանի է, նաև երբեմն զԱստուած թողլուն վրայ եթէ հարկ ըլլայ՝ Աստուծոյ համար։

Եւ թէ որ ասկէ՝ և ո՛չ թէ զգայական ջերմեռանդութենէն հոգևորի միտ դնող շատ անձինքները՝ մանաւանդ կնկտիք իրենց օգուտը չափէին, չէին խաբուիր իրենք իրենցմէ և ո՛չ սատանայէն, և պարապ ձեռքով չէին մնար, մանաւանդ թէ պարտական չէին ըլլար այնչափ բարիքներուն՝ զորոնք տերը անոնց ըրաւ, և մեծ եռանդեամբ մտադրութիւն կ'ընէին անոր աստուածային մեծվայելչութեանը ծառայելու, որն որ ամէն բան կը տնօրինէ կամ թոյլ կուտայ իրեն փառքին և մեր օգտին համար։

Եւ ասոր մէջ ալ կը խաբուին կանայք՝ որոնք վախով և խոհեմ դատմամբ մեղաց առիթներէն կը փախչին, և երբեմն դարձեալ և անմաքուր և զարհուրելի խորհրդներէն չարչարուելով նաև երբեմն ամենատգեղ սեսիլքներէն՝ կը շփոթին

և կը վհատին, և կը կարծեն ալ թէ երեսի վրայ ձգուած և հեռու են բոլորովին Աստուծմէն, չի-կրնալով հաւատալ թէ այնպիսի խորհրդնե-րով լեցուն սրտի մը մէջ՝ կարող ըլլայ իր աս-տուածային հոգին բնակիլ։

Ամենք սաստիկ խորհրդոց յուզմանց մէջ մնալով, գրեթէ յուսահատութիւն մը կը հանի վրանին, և մէկ դի թողլով իրենց ամէն բա-րի կրթութիւնները՝ նորէն Եղիպտոս դառնա-լու կը յուժարին։ Եւ ասոնք լաւ չեն ըմբռներ Աստուծոյ իրենց ըրած շնորքը, որ թոյլ կուտայ որ այսպիսի փորձութեան խորհուրդները վրա-նին յարձակին, զանոնք իրենց անձանց ծանօ-թութեանը բերելու համար, և որպէս զի իրեն մօտենան՝ օգնութեան կարօտ ըլլալովնին։ Ուս-տի ապերախտ մտքով կը ցաւին ան բանին վրայ, որուն համար պարտական էին իրենց անձը ե-բախտաւորտ խոստովանելու անոր անբաւ բա-րութեանը։

Այսպիսի դէպքերու մէջ քու պարտքդ է չար հակմանդ մտածութեան խորունկը մտնալ, զոր Աստուած քու բարեւոյդ համար կ'ուզէ, որպէս զի ճանչնաս մեծամեծ գէշութիւններու պատ-բաստ ըլլալդ, և թէ առանց անոր օգնութեանը խորը ընկղմած յետին կործանման մէջ կ'ին-նայիր։ Եւ ահա ասկէ դուն սիրտ առ, և ապա-հով եղիր թէ անիկայ պատրաստ է քեզի ձեռք երկնցնելու, որովհետև քեզի կը ցուցնէ վը-տանգը, և կ'ուզէ աւելի մօտեցնել դքեզ իրեն՝ աղօթքով և իրեն դիմելովդ, որուն համար դուն պարտական ես մեծապէս շնորհակալ ըլլալու։

Եւ ստոյգ գիտցիր, թէ այսպիսի փորձութիւն-ները և զաղրալի խորհուրդները լաւագոյն կը վանտուին վրայ համբերելու ներգործու-թեամբ մը, և շուտով կռնակ դարձնելով, քան թէ քրտնաջան ընդդիմութեամբ։

ԳԼՈՒԽ Կ.

Խղճմտանքի քննութեան վրայ։

Երեք բան մտմտում խղճմտանքի քննութեանը վրայօք. նախ՝ ան օրուան անկումները. եր-կրորդ՝ անոնց պատճառը. և երրորդ՝ յաժարու-թիւնդ և պատրաստականութիւնդ անոնց դէմ դնելու, և անոնց ներհակ առաքինութիւնները ստանալու։

Անկմանց վրայօք ըրէ՛ ինչ որ քեզի ըսի սրտի վերաւորուելուն վրայ գլխին մէջ։

Անոնց պատճառը ճիգն ըրէ՛ նուաճելու և գետինը կործանելու։

Այս բաները կատարելու և առաքինութիւն-ները ստանալու համար՝ զօրացնես պիտի կամքդ անձէդ յոյսդ կտրելով, Աստուծոյ ապա-ւինելովդ, աղօթքով, և մոլութեան դէմ և ներ-հակ առաքինութեանն փափաքելու յաճախ ներգործութիւններով։

Տարակոյս և վախ ձգեն սիրտդ ըրած յաղ-թութիւններդ և բարի գործքերդ։ Իրաւամբ հոս խորհուրդ չեմ տար քեզի զանոնք շատ անգամ

խորհելու, գրեթէ անփախուստ վտանգին պատ-
ճառաւոր՝ դէթ փառասիրութեան և հպարտու-
թեան գաղտնի առթի մը համար։ Ուստի անոնք
ամէնքը ինչ որ ըլլան՝ թողով Աստուծոյ ողոր-
մութեան ձեռքը, քու մտացդ խորհուրդը յա-
ւէտ ուղղէ մնացած ընելիքիդ վրայ։

Յետոյ նկատմամբ շնորհակալութիւնդ մա-
տուցանելու ան օրը Աստուծոյ քեզի ըրած պար-
գևներուն և շնորքներուն համար, ճանչցիր անի
ամէն բարեաց պատճառը, և շնորհակալ եղիր
անոր, վասն զի զքեզ ազատեց այնչափ երևելի
թշնամիներէն, ևս առաւել աներևոյթներէն,
և քեզի բարի բարի խորհուրդներ տուաւ, և ա-
ռաքինութեանց առիթներ, և այլ ամէն բա-
րերարութիւններուն համար՝ զորս դուն չես
ճանչնար։

ԳԼՈՒԽ ԿԱ.

*Թէ ինչպէս այս պատերազմիս մէջ պէտք է միշտ
յարատևել ինչուան մահը։*

Այս պատերազմիս մէջ պահանջուած այլ բա-
ներուն մէջ՝ մէկն է յարատևութիւնը, որով
պարտական ենք ջանալ միշտ մեր կիրքերը
մահացընելու, որոնք այս կենաց մէջ երբէք չեն
մեռնիր, մանաւանդ դէշ խոտի մը պէս ամէն
ժամ կը ծլին։ Եւ որովհետև այս պատերազմս
չ'աւարտիր եթէ ոչ մեր կենաց հետ, անոր հա-
մար սքոր ձեռքէն ամենևին փախուստ մը չի-

կայ, և չի պատերազմողը 'ի հարկէ գերի կը
բռնուի թշնամեաց ձեռքը կամ կը մեռնի։

Այսէ 'ի զատ պատերազմելու ենք յարատև
մեզի ատելութիւն ցուցնող թշնամեաց հետ.
որոնցմէ հնար չէ խաղաղութիւն սպասել և կամ
երբէք զինադադար, վասն զի ատելի անգթու-
թեամբ կը սպաննեն անի՝ որն որ ատելի կը փնտ-
ռէ բարեկամութիւններն։

Այլ անոնց զօրութենէն և բազմութենէն
վախնալու չես, ըստ որում այս ճակատամար-
տին մէջ չի յաղթուիր եթէ ոչ ուզողը։ Եւ մեր
թշնամեաց բովանդակ ուժը զօրագլխին ձեռքն
է, որուն պատուոյն համար պարտական ենք
պատերազմելու։ Ինք ոչ միայն թոյլ չի տար որ
տիրեն վրադ թշնամիները, այլ քեզի համար
նաև զէնքով վառուած անպարտելի վահանի
պէս բոլոր քու թշնամիներուդ դէմ՝ ձեռքդ կա-
տարեալ յաղթութիւնը տայ պիտի, միայն թէ
դուն ևս անոր հետ մէկ տեղ կտրճութեամբ
պատերազմելով՝ ոչ քու վրադ, այլ անոր հզօր
պաշտպանութեանը և բարութեանը ապաւի-
նիս։

Իսկ թէ որ Տէրը անանկ փութով յաղթա-
նակը քեզի չի շնորհէ՝ մի յուսահատիր, ինչու
որ դուն ասով ատելի ստոյգ բռնելու ես (ասա
լ քեզի օգնէ պիտի ատելի վստահութեամբ
պատերազմելու) որ ամէն քեզի դէմ ըլլալիք-
ները ևս և քեզի հեռու երևցածները, մանա-
ւանդ թէ բաղձացած յաղթութեանդ հակառակ
եղածները (որևիցէ տեսակ որ ըլլան) քու բա-
ւոյդ և օգտիդ դարձնէ պիտի, եթէ դուն հա-

ւատարիմ և քաջ պատերազմողի մը պէս ինք զինքդ ընծայես։

Ուրեմն որդեակ իմ, երկնային զօրագլխիդ հետևելով, որ քեզի համար աշխարքը յաղթեց և իր անձը մահուան մատնեց, արիասիրտ հոգւով այս պատերազմին և բովանդակ թշնամեացդ ջնջմանը մտադիր կեցիր, ըստ որում եթէ անոնցմէ կենդանի մէկ մը մնայ նէ, անի աչքիդ փուշի մը պէս, և կողերուդ տեղի մը պէս կ'ելլայ, այսպիսի փառաւոր յաղթութեան ընթացքը արգիլելու։

ԳԼՈՒԽ ԿԲ.

Մահուան ատեն մեր վրայ յարձակող թշնամեաց դեմ պատրաստուելու կերպին վրայ։

Թէպէտ և բովանդակ մեր կեանքը այս երկրիս վրայ յարատև պատերազմ մըն է, բայց գլխաւոր և աւելի նշանաւոր օրը՝ ան մեծ ճամբորդութեան վերջին կէտն է, վասն զի այն ատենը իյնողը ալ ոտք չ'ելլեր։

Ինչ որ պարտական ես գործածել ըստ արժանւոյն պատրաստ գտնուելու համար ան ժամանակը՝ այս ինչ է, պէտք է որ կարճութեամբ պատերազմիս այս քեզի չնորհուած ժամանակը, որովհետև ով որ լաւ կը պատերազմի կենաց ատենը, դիւրաւ բարի ըրած սովորութեանը համար, մահուան կէտին կ'ստանայ յաղթութիւնը։ Բայց ասկէ յաճախ մոռնա մտադիր քննու-

թեամբ մահը, վասն զի երբոր վրադ հասնի՝ անկէ շատ չի վախնաս, և միտքդ ազատ և պատրաստ ըլլայ պատերազմին։ Աշխարհասէրները այս մտածութենէն կը փախչին, իրենց հաճութիւնը երկրաւոր իրայ մէջ չ'ընդհատելու համար, որոնց կամքով և սիրով հակած ըլլալուին, ծանր ցաւ մը կը կրեն երբոր մտածեն թէ թողուն պիտի զանոնք։ Այդպէս անոնց անկարգ բաղձանքը չի մարիր, մանաւանդ թէ միշտ աւելի ուժ կ'ստանայ. որով այս կեանքէն և այնչափ սիրած բաներէն բաժնուիլնին՝ չի քաշուելիք դառնութիւն մըն է, և երբեմն աւելի զօրաւոր է անոնց՝ որ աւելի երկար ատեն վայելեցին զանոնք։

Կրնաս և այս հարկաւոր պատրաստութիւնը լաւագոյն կերպով տեսնալու համար՝ երևակերպել երբեմն միամինակ առանց երբէք ուրիշին օգնութեանը՝ մահուան տագնապին մէջ գտնուելու, և միտքդ բերել հետևեալ իրերը՝ որոնք կրնային այնպիսի ատեն զքեզ շարչրկել, և հոս ալ մտածես պիտի դարմանները, որոնք առջևդ դնեմ պիտի, որպէս զի ան վերջին տագնապին ժամը կարող ըլլաս անոնցմով լաւ վարուիլ. վասն զի հարուածը՝ որ մէկ հեղ միայն տանք պիտի, կը պահանջէ որ յառաջ լաւ վարժուած ըլլանք նոյնին մէջ չսխալելու՝ ուր դարմանի տեղիք չիկայ։

ԳԼՈՒԽ ԿԴ.

Մահուան առենիս մեր թշնամիները չորս յարձակումաց վրայ, և նախ հաւատքի դէմ յարձակմանը, և զմեզ պաշտպանելու Եղանակին վրայ:

Չորս են գլխաւոր և աւելի վտանգաւոր յարձակումները, որով մեր թշնամիները սովորութիւն ունին մահուան ատենիս մեզի պատահելու, և սոնք են, հաւատքի փորձութիւնները, յուսահատութիւնը, անփառութիւնը, և զանազան խաբէութիւնները, և սատանաներուն լուսոյ հրեշտակ ձևանալը:

Առջի յարձակման նկատմամբ, թէ որ թշնամին զքեզ փորձել սկսի՝ սուտումուտ փաստերովը, շատով մտքէդ՝ վազէ կամքիդ, ըսելով. Երթ յետս իմ սատանայ, ատութեան հայր, ես քեզի և ոչ իսկ մտիկ ընել կ'ուզեմ, հերիք կը սեպեմ հաւատալ՝ ինչ որ Հռովմէական սուրբ եկեղեցին կը հաւատայ: Եւ որչափ որ ձեռքէդ կուգայ, տեղիք մի տար հաւատքի խորհրդոց, թէ և իբր բարեկամներէն քեզի թելադրեալ երևնան, զանոնք սատանայի գործիքի մը պէս բռնելով քեզի դէմ կռիւ բանալու համար:

Իսկ թէ որ ատենին չի կրցար միտքդ քեզի ժողվելու, պինդ կեցիր և հաստատ երբէք խօսքով չբռնուելու որպիսի և իցէ պատճառներու, կամ սուրբ գրոց վկայութեան դէմ, զորն որ հակառակորդը յառաջ բերէր քեզի. վասն զի անոնք ամէնքը կրճատ են կամ նենգութեամբ աւելցուցած, կամ չարաչար մեկնուած, թէ և աչքիդ դեղեցիկ պարզ և բացայայտ երևնան:

Եւ թէ որ խորամանկ օձը քեզի հարցնէ թէ Հռովմէական Եկեղեցւոյն հաւատացածը ի՞նչ է, պատասխան մի՛ տար, այլ անոր խաբէութիւնը տեսնելով և թէ ինչպէս կը ջանայ քեզի վէճի բռնելու, ներքին կենդանի հաւատքի ներգործութիւն մը ըրէ, կամ աւելի զանի բարկացնելու համար՝ պատասխան տուր իրեն, թէ Հռովմէական սուրբ Եկեղեցին ճշմարտութիւնը կը հաւատայ. և թէ որ չարասէրը կըրկնէ. Ո՞րն է այս ճշմարտութիւնը, դարձեալ ըսէ. Այն՝ զոր անիկայ կը հաւատայ:

Ամէն բանէն աւելի սիրտդ դէպ 'ի խաչելեալն վերցուցած բռնէ՛ ըսելով. Ո՛վ Աստուած արարիչ և փրկիչ իմ, մի՛ ուշանար ինծի օգնելու, և հեռու մի՛ կենար ինծմէն, որպէս զի ես ալ ուղղափառ և սուրբ հաւատքիդ ճշմարտութենէն չի հեռանամ, և քեզի հաճոյ ըլլայ, ինչպէս որ քու շնորհովդ անոր մէջ ծնայ, այսպէս քու փառքիդ համար անոր մէջ այս մահկանացու կեանքս կատարեմ:

ԳԼՈՒԽ ԿԴ.

Յուսահատութեան յարձակման և անոր դեղին վրայ։

Մէկալ յարձակումը՝ որով չարասէր սատանան ջանք կ'ընէ բոլորովին զմեզ կործանելու, վախն է, զոր առջևնիս կը դնէ մեր յանցանքներուն յիշատակովը, որպէս զի զմեզ տանի ձգէ գահավէժ յուսահատութեան փոսին մէջ։ Այս փորձութեան ատենը միտ դիր այս ճշմարիտ կանոնին, քու մեղքերուդ վրայ մտածութիւնները՝ շնորքէն են և քու փրկութեանդ համար, երբոր'ի քեզ խոնարհութիւն և ցաւ մը ազդեն զԱստուած վշտացնելուդ, և անոր բարութեանը վրայ վստահութիւն մը։ Բայց երբ ըզքեզ կը տագնապեն, և անյուսութեան և փոքրոգութեան մէջ կը ձգեն, թէ և քեզի երևնայլն ստոյգ և կարօղ դատապարտութեանդ վրայօք կարծիք տալու, և որպէս թէ ալ քեզի համար փրկութեան ժամանակ չի կայ, ճանչցիր նաև զանոնք իբրև գործք խաբօղին, աւելի խոնարհեցուր ինք զինքդ, և աւելի Աստուծոյ վրայ յոյսդ դիր, վասն զի այս ճամբով կը յաղթես զթշնամին նոյն իսկ իրեն զէնքովը՝ և Աստուծոյ փառքը կ'աւելցնես։

Այո՛, զղջա՛ զԱստուած վշտացնելուդ՝ քանի անգամ որ միտդ բերես նէ, բայց միշտ ապաւինելով Յիսուսի չարչարանաց արդիւնքին թողութիւն խնդրէ։

Այլ աւելի ևս կ'ըսեմ քեզի, թէ որ քեզի երևնար թէ նոյն ինքն Աստուած քեզի ըսէր թէ դուն իմ ոչխարներէս չես, այսու ամենայնիւ դուն ո՛չ երբէք թողուս պիտի դէպ'ի անոր վստահութիւնը, այլ խոնարհութեամբ ըսէ անոր. Իրաւունք ունիս ո՛վ տէր իմ մեղացս համար զիս անարգելու, բայց ես դթութեանդ վրայ մեծագոյնը ունիմ, որով դուն ինծի թողութիւն տաս։ Ուստի կը խնդրեմ քեզմէն այս աղքատիկ ստեղծուածոյդ փրկութիւնը, որն որ իրօք իրեն չարութեանը համար դատապարտուած է, այլ գնեալ է գնով պատուական արեանդ։ Ո՛վ փրկիչ իմ քու փառքիդ համար փրկուիլ կ'ուզեմ, և քու անչափ ողորմութեանդ վստահանալով՝ բոլորովին զիս կը յանձնեմ քու ձեռքդ։ Ինչպէս որ քեզի հաճոյ է ըրէ ինծի հետ, ինչու որ դուն անձիս միակ տէրն ես, և թէ սպաննես ևս զիս, չիպիտի դադրիմ կենդանի ունենալու քեզի իմ յոյսս։

ԳԼՈՒԽ ԿԵ.

Սնափառութեան յարձակմանը վրայ։

Երրորդ յարձակումը սնափառութիւնն և յանդգնութիւնն է։ Անոր մէջ ևս պարտական ես ջանք ընել, որ ամենևին որևիցէ համբով մը մուտ չի գտնէ անձիդ և գործոցդ վրայ նաև փոքրիկ հաճութեան խորհուրդ մը։ Այլ քու հաճութիւնդ միայն 'ի տէրն քո ըլլայ պիտի, անոր

գթութեան և կենաց և չարչարանաց գործքերուն վրայ։

Աչքիդ առջևը ինչուան ցյսմին ունիդ միշտ աւելի զքեզ խոնարհեցուր, և զԱստուած միայն ճանչցիր հեղինակ բոլոր բարի գործքերուդ, որոնք առջևդ պիտի ելլեն իբրև ձեռացդ գործ։ Անոր օգնականութեանը վրայ, բայց մի սպասեր անոր քու արդիւնքներուդ համար, և քու շատ և մեծամեծ պատերազմներուդ՝ որոնց յաղթեր ես։ Եւ միշտ սուրբ վախով մը կեցիր, պարզ մտքով խոստովանելով թէ ընդունայն կ'ըլլայն բոլոր քու հոգացողութիւններդ, թէ որ Աստուած իր թևերուն շուքին տակը զքեզ չի ժողվեր նէ, որուն մինակ պաշտպանութեանը պիտի վստահիս։

Այս խրատներուն ետևէ երթալով թշնամիներդ քեզի չկարենան պիտի յաղթահարել։ Եւ ասանկ համբայ պիտի բանաս քեզի ուրախութեամբ երկնային Երուսաղէմը անցնելու։

ԳԼՈՒԽ ԿԶ.

Մանուսան կիտին սուտ երևուրից և խաբեուրեանց յարձակմանց վրայօր։

Եթէ յամառ մեր թշնամին որ ոչ երբէք կը յոգնի զմեզ նեղելէն, վրադ յարձակի սուտ երևոյթներով և հրեշտակի լուսոյ կերպարանքով, հաստատուն և պինտ կեցիր տակաւին քու ոչընչութեանդ ծանօթութեանը վրայ, և համարձակութեամբ անոր ըսէ. Այ թշուառական, դարձիր քու մութ բնակութիւնդ, վասն զի ես տեսիլքներու արժանի չեմ, և ուրիշ բանի մը կարօտ չեմ, բայց եթէ իմ Յիսուսիս ողորմութեանը և կուսին Մարիամայ բարեխօսութեանը և Աստուածահօր սուրբ Յովսեփայ և այլ սրբոց աղօթքին։

Եւ եթէ նաև երևնային քեզի՝ թէ երկնքէ իջած են գրեթէ շատ յայտնի նշաններնուն համար, տակայն դուն մերժէ զանոնք, և հեռացիր քեզմէ որչափ որ կրնաս, և մի վախնար թէ այս ընդդիմութիւնդ՝ որն որ քու անարժանութեանդ վրայ հաստատուած է, Աստուծոյ անհաճոյ ըլլայ. վասն զի եթէ ան գործը իրմէն է, ինքն լաւ գիտնայ պիտի քեզի զայն բացայայտելու, և դուն բան մը չի պիտի կրնանցնես, որովհետև խոնարհներուն ընդդէմ տուողը, չի վերցներ զայն խոնարհութեան համար եղած գործքերուն պատճառաւ։

Ահա ասոնք են աւելի հասարակ զէնքերը՝ որոնք թշնամին սովորութիւն ունի գործածելու մեզի դէմ այն վերջին վայրկենին։ Կը փորձէ ամէն մէկը մասնաւոր հակմանցը համեմատ՝ որոնց աւելի զանի ենթակայ կը տեսնէ։ Այսոր համար մեծ ճակատամարտին ժամը մօտենալէն յառաջ, պէտք է որ լաւ զէնք հագնինք և քաջութեամբ պատերազմինք մեր աւելի զօրաւոր կրից դէմ, և անոնց՝ որոնք աւելի մեր վրայ կը տիրեն, որպէս զի յաղթութիւնը դիւրինայ այնպիսի ժամանակ մը, որ մեզմէ կը յափշտակէ այլ ամէն ժամանակ կարենալու նոյնը 'ի գործ դնել։

« Տացես ընդ նոսա պատերազմ մինչև վախճանեացես զնոսա »։
(Ա. Թագ. ԺԵ. 18)

ՎԱԽՃԱՆ

ՅԱՆԿ

Առաջ թարգմանչին 5
Գլ. Ա. Թէ ինչ բանի վրայ կը կայանայ քրիստոնէական կատարելութիւնը, և թէ զանի ձեռք բերելու համար հարկ է պատերազմիլ, և առ պատերազմին՝ չորս կարևոր իրաց վրայ 9
„ Բ. Ինքիրեն-չվստահանալուն վրայ . . . 16
„ Գ. Առ Աստուած վստահութեանը վրայ . . 20
„ Դ. Թէ ինչպէս հնար է դիտնալ թէ մարդը կը գործէ ինք իրեն չապաւինելով, և վստահանալով յԱստուած 23
„ Ե. Շատերուն սխալին վրայ, որոնք երկչոտութիւնը առաքինութիւն կը համարին . 24
„ Զ. Ուրիշ աղջարարութեանց վրայ մեր անձին չապաւինելը և առ Աստուած վստահութիւնը ստանալնուս համար . . . 25
„ Է. Կրթութեան վրայ և նախ մանքին՝ զոր տը-գիտութիւնէն և հետաքրքրութենէն ըղդուշացնենք պիտի 27
„ Ը. Թէ ինչու համար իրերը մեզմէ ուղիղ չեն քննուիր, և զանոնք աղէկ ճանչնալու համար գործածելիք եղանակին վրայ։ . 30
„ Թ. Միւս բանի մը վրայ՝ որմէ միտքը զգուշացընելու է, որպէս զի կարող ըլլայ քարի ընտրողութիւն ընելու 32

ԳԼ. Ժ. Կամքին կրթութեանը վրայ և վախճանին՝ որուն մեր ամէն ներքին և արտաքին գործքերը ուղղել պէտք է . . . 35
„ ԺԱ. Մէկ քանի խորհրդածութեանց վրայ, որոնք կամքը կը յորդորեն ամէն բանին մէջ Աստուծոյ հաճութիւնը ուզելու . . 41
„ ԺԲ. Ի մարդն գտնուած զանազան կամաց վրայ, և իրարու հետ ունեցած պատերազմին վրայ 42
„ ԺԳ. Զգայութեան շարժմանց դէմ պատերազմելու եղանակին վրայ, և կամաց ընելիք ներդործութեանց վրայ առաքինութեանց ունակութիւնները ստանալու համար 46
„ ԺԴ Թէ ինչ պէտք է ընել երբոր վերին կամքը յաղթուած կ'երևնայ և բոլորովին ջնջուած ստորնագոյն կամքէն և թշնամիներէն 53
„ ԺԵ. Պատերազմելու եղանակին վրայ քանի մի ծանուցմունք, և առանձինն թէ որո՞ւն դէմ և որո՞վ առաքինութեամբ ընելու է 56
„ ԺԶ. Թէ ո՞ր կերպով Քրիստոսի զինուորը առաւօտանց պատերազմին տեղը պիտի կայնի 59
„ ԺԷ. Մեր ախտաւոր կրից դէմ պատերազմելուն կարգին վրայ 62
„ ԺԸ. Կրից յանկարծական շարժմանց դէմ զբաղելուն եղանակին վրայ . . . . . —
„ ԺԹ. Մարմնական ախտերուն դէմ պատերազմելուն եղանակին վրայ 65
„ Ի Անհոգութեան դէմ պատերազմելուն եղանակին վրայ 71
„ ԻԱ. Արտաքին զգայարանքները կարգաւորելուն վրայ, և թէ ինչպէս անկէ աստուծածային իրաց մտածութեան հնար է անցնիլ: 76

ԳԼ. ԻԲ Թէ ինչպէս նոյն իսկ իրերը մեզի միջոց են մեր զգայարանքները կանոնի տակ դնելու, առաջ անցնելով մտածութեան Բանին մարդեղութեանը, անոր կենաց և չարչարանաց խորհրդներուն 81
„ ԻԳ. Ուրիշ եղանակներուն վրայ մեր զգայարանքները կանոնաւորելու համար դիմացնիս եկած զանազան առիթներուն համեմատ 83
„ ԻԴ. Լեզուն կանոնելու եղանակին վրայ . . 90
„ ԻԵ. Թէ աղէկ պատերազմելու համար թշնամիներուն հետ՝ Քրիստոսի զօրականն պարտական է կրցածին չափ խուսափելուն և սրտի նեղութենէն փախչիլ . 93
„ ԻԶ. Թէ ինչ ընելու ենք վերք ընդունելու ժամանակին 97
„ ԻԷ. Սատանային պատերազմելու և խաբելու եղանակին վրայ, զոր կը գործածէ թէ առաքինութեան եռեռէ եղջիներուն՝ և թէ արդէն մեզաց ծառայութեան գերի եղածներուն հետ 100
„ ԻԸ. Սատանային՝ մեզաց գերութեան մէջ բռնուածներուն հետ գործածած պատերազմին և խաբէութեանը վրայ . . . 101
„ ԻԹ. Սատանային հնարքներուն և խաբէութիւններուն վրայ, որոնցմով կը կապկրպէ անոնք՝ որոնք իրենց չարութիւնը ճանչնալով կը խնդրեն աղաւաղել. և թէ ինչո՞ւ մեր առաջադրութիւնները առեպ իրենց արդիւնքը չեն ունենար . . . 102
„ Լ. Անոնց խաբէութեանը վրայ՝ որոնք կը համարին թէ կատարելութեան ճամբուն կը դիմեն 106

ԳԼ. ԼԱ. Սատանային մեղմ առաքինութեան ա-
ռաջնորդող ճամբան թող տալու համար
գործածած խաբէութեան և պատերազ-
մին վրայ 108
„ ԼԲ. Սատանային վերջին յարձակմանը և վե-
րոյլեալ խաբէութեանը վրայ, որով կը
ջանայ ստացած առաքինութիւնները մե-
ղի կործանման աւիթ դարձնելու . . . 113
„ ԼԳ. Քանի մի ազգարարութեանց վրայ սխ-
տաւոր կիրքերը յաղթելու, և նոր առա-
քինութիւններ ստանալու համար . . 121
„ ԼԴ. Թէ կամաց կամաց պէտք է առաքինու-
թիւնները ստանալ, անոնցմով վառուե-
լով իրենց աստիճաններուն համաձայն,
և միտք դնելով նախ մէկուն, և յետոյ
մէկալին 125
„ ԼԵ. Առաքինութիւնները ստանալու միջոց-
ներուն վրայ, և թէ ինչպէս պարտական
ենք զանոնք գործածել միջոց մը ժամա-
նակ մէկուն մէջ միայն զմեզ կրթելու
համար 127
„ ԼԶ. Թէ առաքինութեան կրթութեան մէջ
յարատև ջանքով քալել պէտք է . . 131
„ ԼԷ. Թէ առաքինութեանց կրթութեան մէջ
յարատևելով պէտք չէ զանոնք ստանա-
լու համար առջևնիս ընծայուած աւիթ-
ները զանց ընել 133
„ ԼԸ. Թէ առաքինութեանց ստացմանը համար
պատերազմելու ամէն պատեհ առիթնե-
րը սիրել պէտք է, և աւելի դժուարու-
թիւն հանօղները 135
„ ԼԹ. Թէ ինչպէս կարող ենք զանազան ա-
ռիթներով վարուիլ մի և նոյն առաքի-
նութեան կրթութեանը համար . . . 139

ԳԼ. Խ. Իւրաքանչիւր առաքինութեան կրթուելու
համար ընելիք ժամանակին, և մեր յա-
ռաջադիմութեան նշաններուն վրայ . . 141
„ ԽԱ. Թէ պէտք չէ թոյլ տալ մեղի բունուելու
վշտերէ ազատուելու յոժարութենէն,
զորոնք համբերութեամբ կը քաշենք, ուր
և մեր ամէն բաղձանքները կանոնաւո-
րելու եղանակին վրայ, որպէս զի առա-
քինի ըլլան 143
„ ԽԲ. Սատանային դէմ կենալուն եղանակին
վրայ երբոր կը խնդրէ անխոհեմութեամբ
զմեզ խաբել 145
„ ԽԳ. Թէ որչափ զօրաւոր է Ի մեզ մեր դէմ
յոժարութիւնը. և սատանային հրապուր-
մունքը ընկերոջ վրայ յանդուգն դատա-
զրութեան մէջ զմեզ ձգելու, և ասոնց
դէմ դնելու եղանակին վրայ 149
„ ԽԴ. Աղօթքի վրայ 152
„ ԽԵ. Թէ ինչ է մտածական աղօթքը . . . 158
„ ԽԶ. Մտածականի կերպով աղօթքին վրայ . 160
„ ԽԷ. Մտածականի կերպով աղօթելու ուրիշ
եղանակի մը վրայ 162
„ ԽԸ. Երանուհւոյ Կուսին Մարիամու միջնոր-
դութեան ձեռօք աղօթելու եղանակին
վրայ 163
„ ԽԹ. Քանի մի մտածութիւններ ամենասուրբ
Կոյս Մարիամու վստահութեամբ և հա-
ւատքով զիմելու համար 165
„ Ծ. Հրեշտակաց և ամենայն սրբոց միջնորդու-
թեամբը աղօթելու և մտածելու եղանա-
կին վրայ 167
„ ԾԱ. Քրիստոսի չարչարանաց մտածականին
վրայ, անկէ սիրոյ զանազան ներգործու-
թիւններ քաղելու համար 170

ԳԼ. ԾԲ. Թէ ինչ օգուտ կրնանք քաղել խաչեցեալ ոգոյն մտածութենէն, և անոր առաքինութիւններուն նմանելուն վրայ . . . 176
„ ԾԳ. Ամենասուրբ Հաղորդութեան խորհրդոյն վրայ 182
„ ԾԴ. Հաղորդութեան ամենասուրբ խորհուրդը ընդունելու կերպին վրայ 183
„ ԾԵ. Թէ ինչպէս հաղորդութեան պատրաստուելու հնգ 'ի մեղ Աստուծոյ սէրը արծարծելու համար 187
„ ԾԶ. Հոգևորական Հաղորդութեան վրայ . 195
„ ԾԷ. Շնորհակալութեան վրայ 198
„ ԾԸ. Ընծայման վրայ 199
„ ԾԹ. Զգայական Ջերմեռանդութեան և դաղջութեան վրայ 203
„ Կ. Խղճմտանքի քննութեան վրայ 209
„ ԿԱ. Թէ ինչպէս այս պատերազմիս մէջ պէտք է միշտ յարատևել ինչուան մահը 210
„ ԿԲ. Մահուան ատեն մեր վրայ յարձակող թշնամեաց դէմ պատրաստուելու կերպին վրայ 212
„ ԿԳ. Մահուան ատեննիս մեր թշնամեաց չորս յարձակմանց վրայ և նախ հաստատի դէմ յարձակմանը, և զմեզ պաշտպանելու եղանակին վրայ 214
„ ԿԴ. Յուսահատութեան յարձակման և անոր դեղին վրայ 216
„ ԿԵ. Անախառութեան յարձակմանը վրայ . 217
„ ԿԶ. Մահուան կէտին ատա երևութիս և խաբէութեանց յարձակմանց վրայօք . . 219

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ՀԱՅԿԱԶՆ ՍՈՒՐԲ ԴԱՒԹԻ ՃԳՆԱՒՈՐԻՆ

ՎԱՐՈՒՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ԳԼ. ԾԲ. Թէ ինչ օգուտ կրնանք քաղել խաչեցեալ-
ին մտածութենէն, և անոր առաքինու-
թիւններուն նմանելուն վրայ . . . 176
„ ԾԳ. Ամենասուրբ Հաղորդութեան խորհուրդ-
ին վրայ 182
„ ԾԴ. Հաղորդութեան ամենասուրբ խորհուրդ-
ը ընդունելու կերպին վրայ 183
„ ԾԵ. Թէ ինչպէս հաղորդութեան պատրաստ-
ուելու ենք 'ի մեզ Աստուծոյ սէրը արթ-
ծարծելու համար 187
„ ԾԶ. Հոգևորական Հաղորդութեան վրայ . 195
„ ԾԷ. Շնորհակալութեան վրայ 198
„ ԾԸ. Ընծայման վրայ 199
„ ԾԹ. Զգայական ջերմեռանդութեան և դաղ-
ջութեան վրայ 203
„ Կ. Խղճմտանքի քննութեան վրայ 209
„ ԿԱ. Թէ ինչպէս այս պատերազմիս մէջ
պէտք է միշտ յարատևել ինչուան մահը 210
„ ԿԲ. Մահուան ատեն մեր վրայ յարձակող
թշնամեաց դէմ պատրաստուելու կեր-
պին վրայ 212
„ ԿԳ. Մահուան ատեննիս մեր թշնամեաց չորս
յարձակմանց վրայ և նախ հաւատքի դէմ
յարձակմանը, և զմեզ պաշտպանելու
եղանակին վրայ 214
„ ԿԴ. Յուսահատութեան յարձակման և անոր
դեղին վրայ 216
„ ԿԵ. Անախառութեան յարձակմանը վրայ . 217
„ ԿԶ. Մահուան կէտին տուա երևութիւց և խա-
բէութեանց յարձակմանց վրայօք . . 219

2241
2242

2183